1/697

491.99-5

# ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՅԱՒԵԼԵԱԼ ԵՒ ՍՐԲԱԳՐԵԱԼ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Տպագրութիւն Յ. Գալֆայեան 1893։

---

ՎԵՐԱԾԵՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԱՐԲԱՌԻ

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱՅ ԵՐԿԱՐԱԿԵՑԵԱՆ

---

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

---

ՆՈՐ ՋՈՒՂԱ

ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՈՒՑ

1900

ԱՀ

ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՄԱՐ 1-697

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՂԱՍԻ ԱԶԻԶԵԱՆ

---

Այս Քերականութեան ընթացքը տարբեր է մինչև ցարդ հրատարակուած քերականութիւնների ընթացքից։ Սորա գլխաւոր տարբերութիւնն՝ և ինչպէս կ՚յուսանք առաւելութիւնն ևս զոր պէտք է ունենայ, գէթ ՚ի մասին գործնական կրթութեան՝ նրանումն է, որ այս քերականութիւն պարունակում է գործնական հրահանգներ։ Սրանով աշակերտն այն օրից որ սկսում է անունը և բայը ճանաչել պիտի սկսի նաև վարժուիլ նրանց ի գործ ածել։

Դարձեալ այս քերականութեան ընթացքում աշակերտըն ոչ թէ, որպէս մինչև ցարդ գրեթէ առհասարակ կ՚լինէր, պիտի նեղանայ ՚ի միտ առնուլ, միանգամայն և տեսականապէս միայն, իւրաքանչիւր մասին բանի այլ և այլ ձևերը և բոլոր գիտելիքը, և համաձայնութեան կանոններուն երկայն շարքը, կամ թէ ասենք, քերականական ուսման երկայն ճանապարհը պէտք է գնայ ծայրից ծայր վազելով առանց զկայ և ոգի առնլոյ ուրեք, այլ իւրաքանչիւր հրահանգ պէտք է լինի աշակերտին, այն երկայն ընթացքում, իբրև մէն մի օթևան, թէ՛ շունչ և հանգիստ առնել տալու նրան, և թէ՛ առէպ դառնալով նայելու կարճ ճանապարհին վերայ զոր արաւ, և աւելի լաւ ճանաչելու զայն քան զոր ճանաչած էր երբ անցկենում էր առաջին անգամ։

Զոր օրինակ, քերականութեան բոլորովին անտեղեակ աշակերտն այստեղ ոչ թէ 'ի բերան քան թէ 'ի միտ պէտք է առնու անուանց բոլոր հոլովները և հոլովումները միանգամայն և ոչ թութակօրէն, այլ՝ երբ ուղղականը սովորում է, պիտի չ'նեղանայ հասկանալ միանգամայն սեռականը, տրականը, բացառականը, ընդհակառակն ուսանելուց յետոյ և լաւ ի միտ առնելու նոցա մինը և անելու նորա գործնական կրթութիւնը, պէտք է անցկենայ միւսին։ Այսպէս քերականութիւնը խառն և տեսական լինելուց դադարելով, լինի լաւ ուսանելի և տակաւ գործնականապէս։

Որովհետև այս քերականութիւնը մասնաւոր կերպով գրաւած է շատերի ուշադրութիւնը և բարւոք ընդունելութիւն գտած է յաջողակ ուսուցիչներից, աւելացնում ենք այս իններրորդ և նոր տպագրութիւնը, և մեր այս աշխատութեան գործնական օգուտը համարում ենք լումն մեր փափաքների։

Աշխատասէրն։

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

## ԴԱՍ Ա.

### ԼԵԶՈՒ, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ.

Հարցում. Ի՞նչ է լեզու։

Պատասխան. Լեզու ասւում են այն արտաքին նշաններն՝ որով մարդիկ յայտնում են իրանց գաղափարները, խորհուրդներն և զգացումները։

Հ. Ո՞րոնք են այս արտաքին նշանների գլխաւորները։

Պ. Այս արտաքին նշանների գլխաւորներն են ձայն և գիր։

Հ. Ձայնով կամ գրով բացատրութիւնն ի՞նչ է կոչւում։

Պ. Ձայնով կամ գրով բացատրութիւնը խօսք է կոչւում։

Հ. Խօսքը ի՞նչ բաներից է շինւում։

Պ. Ամեն խօսքը շինւում է բառերից. զոր օրինակ՝ ամէն մարդ երջանկութեան է ձգտում, բայց շատ քիչեր հասնում են նրան. այս խօսքը կազմուածէ ինն բառից, որ են՝ ամէն, մարդ, ձգտել, երջանկութիւն, բայց, շատ, քիչ, հասնել, նրան։

Հ. Բառերը ի՞նչպէս են շինում խօսքը։

Պ. Բառերը խօսքի մէջ օրէնքով միմեանց մօտ գալով կազմում են խօսքը։ Եթէ այս օրէնքի համաձայն չշինուին կամ չշարուին, նոցա միմեանց

մօտ գալով բան չիմացւում։ Այս օրէնքը Հնչման օրէնքն է։

Հ. Ի՞նչ է Քերականութիւն։

Պ. Քերականութիւնն այն գիտութիւնն կամ արուեստըն է, որ ուսուցանումէ այս օրէնքների կանոնները։ Այսինքն քերականութեամբ սովորումենք թէ բառերն ինչպէս են շարուելու, որ իմաստ կամ նշանակութիւն ունեցող խօսք կազմուի։

Հ. Քանի՞ տեսակի են վերածւում բառերը։

Պ. Լեզուի մէջ հազարաւոր բառեր են գտնւում, բայց ամենքը վերածւում են ինը տեսակի։

Հ. Այս ինը տեսակ բառերը ի՞նչ են կոչւում։

Պ. Այս ինը տեսակ բառերը կոչւում են Մասունք բանի և են՝ Անուն կամ Գոյական, Ածական, Բայ, Յօդ, Դերանուն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ, Միջարկութիւն։

## ԴԱՍ Բ.

## ԱՆՈՒՆ ԵՒ ԱԾԱԿԱՆ.

### ԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է անուն։

Պ. Անուն կամ Գոյական ասւում են այն տեսակ բառեր որ իրերի անուններ են. ինչպէս՝ ծառ, ծաղիկ, շուն, մարդ, ևլն։

Անուններից ոմանք կոչւում են յատուկ, այսինքն մարդերի և տեղերի անունները, ինչպէս՝ Մովսէս, Երուսաղէմ։ Սրանք գլխատառով են գրւում։

Հ. Անունը քանի՞ բան ունի։

Պ. Անունն ունի 1. Հոլով և 2. Թիւ։



Հ. Ի՞նչ է Հոլովն և քանի՞ս է։

Պ. Հոլովն անուան վերջաւորութեան փոփոխումն է և վեց է. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական և Գործիական։ Ներգոյական

Հ. Ի՞նչ է Թիւն և քանիս է։

Պ. Թիւն անուան մի կամ աւելի իր ցոյց տալն է և երկուք է, Եզակի և Յոգնակի. Զոր օրինակ մարդ եզակի է, մարդեր՝ յոքնակի։ Այն անունները որոց եզակին չի գործ ածւում՝ անեզական են կոչւում, ինչպէս՝ երկինք, դժոխք, կամք, միտք։

Հ. Ի՞նչպէս են հոլովւում Հայերէն անունները։

Պ. Հայերէն անունների մի մասը հոլովւում է, բացի ուղղականից և հայցականից, միւս հոլովներում վերջից աւելցնելով մի գիր կամ մի վանկ, զոր օրինակ.

### Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | Բան | Բան-ք | Քաղաք | Քաղաք-ք |
| Սեռ. | Բան-ի | Բան-ից | Քաղաք-ի | Քաղաք-աց |
| Տրակ. | Բան-ի | Բան-ից | Քաղաք-ի | Քաղաք-աց |
| Հայց. | զԲան | զԲան-ս | զՔաղաք | զՔաղաք-ս |
| Բաց. | ի Բան-է | ի Բան-ից | ի Քաղաք-է | ի Քաղաք-աց |
| Գործ. | Բան-իւ | Բան-իւք | Քաղաք-աւ | Քաղաք-օք |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս հոլովման վերայ։

Պ. Այս հոլովման եզակի գործիականն է, ոմանց՝ իւ, և ոմանց՝ աւ. իսկ յոքնակի սեռականը, տրականը և բացառականը, ոմանց՝ ից, և ոմանց՝ աց. գործիականը՝ ոմանց՝ իւք, և ոմանց՝ օք։

Պէտք է գիտենալ 2. որ ամեն անուան հայցականին վերայ սովորաբար դրւում է (զ) նախդիրը, և բացառականին վերայ՝ (ի) նախդիրը։

Պէտք է գիտենալ 3. որ ք գիրը յոքնակի ուղ-

ղականի նշանն է, ս գիրն էլ յոքնակի հայցականի նշանն է, հոլովելու ժամանակ չպէտք է անուշադիր լինել։

| | Բ. ՀՈԼՈՎՈՒՄ | | Գ. ՀՈԼՈՎՈՒՄ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
| Ո. | Գետ | Գետ-ք | Ծով | Ծով-ք |
| Ս. | Գետ-ոյ | Գետ-ոց | Ծով-ու | Ծով-ուց |
| Տ. | Գետ-ոյ | Գետ-ոց | Ծով-ու | Ծով-ուց |
| Հ. | զԳետ | զԳետ-ս | զԾով | զԾով-ս |
| Բ. | ի Գետ-ոյ | ի Գետ-ոց | ի Ծով-է | ի Ծով-ուց |
| Գ. | Գետ-ով | Գետ-ովք | Ծով-ու | Ծով-ուք |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Գ. հոլովման վերայ։

Պ. Գ. հոլովման անուններից մի քանիսների բացառականը լինում է ուէ, զոր օրինակ՝ զարդ, ի-զարդ-ուէ։

Դ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Եզակի |
|---|---|---|
| Ո. | Մակար | Հռիփսիմէ |
| Ս. | Մակար-այ | Հռիփսիմ-եայ |
| Տ. | Մակար-այ | Հռիփսիմ-եայ |
| Հ. | զՄակար | զՀռիփսիմէ |
| Բ. | ի Մակար-այ | ի Հռիփսիմ-եայ |
| Գ. | Մակար-աւ | Հռիփսիմ-եաւ |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս հոլովման վերայ։

Պ. Այս հոլովման տակով են գնում յատուկ անունները, այսինքն՝ մարդոց կամ տեղերի անուններ, որոց յոքնակին ընդհանրապէս չի գործածւում։

---



## ԱԾԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է ածական։

Պ. Ածական ասւում են այն տեսակ անունները, որոնք իրի յատկութիւնները, այսինքն՝ նրա որպիսութիւնը ցոյց են տալիս. զոր օրինակ՝ բարձր (ծառ), անուշահոտ (ծաղիկ), կատաղի (շուն), կենդանի (մարդ)։

1. Հրահանգ։

Աշակերտները հետևեալ անուններում գոյականը և ածականը որոշեն։

Ընծայ, ժամանակ, նշան, գործ, մեծ, քաջ, հողմ, մեղմ (կամաց), մարդ, աղայ, չար, գգօն (խոհեմ), կարգ, ձագ, հող, լի, ունայն (դատարկ), հաց, հոտ, հօտ, (ոչխարների խումբ), լայն, նեղ, ոչխար, արջառ, (եզ, կով), հրաման, դատարկ, հրապարակ, ամբոխ, աղքատ, թշուառ, աղտ, երկաթ, արծաթ, զգեստ, զարդ, Գնէլ, Տիրան, Միհրան, զոհ, հաճոյ, տգեղ, կանաչ, յօդ (կապ), ազգ, զօրաւոր, տկար, ժամագործ, ժամ, ծառ, արդար, հեզ, ցեղ, քահանայ, մահ, ծեր, լեզու, թաւ (մազոտ), շքեղ, վատ, աւազան, խրատ, Արամ, Վահան, Գայիանէ, Եսայի, ծայր, իր, ուս, ուխտ, գանձ, զօր, ճրագ, լուսաւոր, աղօտ, պայծառ, պատերազմ, գայլ, գեղ, որթ (հորթ), որթ (խաղողենի), սան (կաթսայ, պղինձ), սան (աշակերտ), փող (շեփոր, արծաթ), փող (կոկորդ, բուկ, կուլ), աղօթք, խօսք, միտք, պարտք, կամք, դժոխք, մեղք։

2. Հրահանգ։

Աշակերտները թող հոլովեն վերևի անունները։

## ԴԱՍ Գ.

### ԲԱՅ

Հ. Ի՞նչ է բայը։

Պ. Բայ են ասում այն բառերը, որ մի բան անել կամ մի բան լինել են ցոյց տալիս, ինչպէս՝ գրել, խօսել, քաշել, ննջել, որ մի բան անել են ցոյց տալիս և ուշաթափիլ, մեռանել, զօրանալ, որ մի բան լինել են ցոյց տալիս։

Հ. Քանի՞ բան ունի Բայը։

Պ. Բայն ունի եղանակ, ժամանակ, դէմք, և թիւ։

Հ. Քանի՞ս է եղանակը։

Պ. Եղանակը չորս է՝ սահմանական, հրամայական, ստորադասական, և աներևոյթ։

Հ. Ժամանակը քանի՞ս է։

Պ. Ժամանակը բուն երեք է՝ ներկայ, անցեալ, և ապառնի։

Ներկան ցոյց է տալիս այն որ հիմա է, ինչպէս գրում եմ. անցեալը ցոյց է տալիս այն, որ արդէն եղաւ, ինչպէս՝ գրեցի. ապառնին ցոյց է տալիս այն, որ դեռ պէտք է լինի, ինչպէս՝ պէտք է գրեմ։

Անցեալը կրկին է (երկուք է), անկատար, անցեալ, և կատարեալ։ Գրում էի՝ անկատար անցեալ է. գրեցի՝ կատարեալ անցեալ։ Դարձեալ ժամանակներն երկու տեսակ են, պարզ և բաղադրեալ։ Պարզ ժամանակը նա է, բաղադրեալն ուրիշ (Եմ) բայով շինուած է։ Զոր օրինակ սիրեմ, սիրեցի, պարզ են. սիրեալ եմ, սիրեալ էի, սիրեալ իցեմ բաղադրեալ են։

Հ. Քանի՞ս է դէմքը։

Պ. Դէմքն երեք է, առաջին, երկրորդ և երրորդ։ Ես՝ առաջին դէմք է, դու՝ երկրորդ, նա (այն)՝ երրորդ։

Հ. Քանի՞ս է թիւը։

Պ. Թիւը երկուք է, եզակի, որ ցոյց է տալիս միայն գործող, ինչպէս՝ սիրում եմ, սիրում ես, սիրում է (սիրեմ, սիրես, սիրէ), և յոգնակի, որ ցոյց է տալիս աւելի գործող, ինչպէս՝ սիրեմք (սիրում ենք), սիրէք (սիրում էք), սիրեն (սիրում են)։



Հ. Քանի՞ տեսակ են բայերը։

Պ. Բայերը երկու տեսակ են՝ գոյական կամ էական բայ, և ածական բայ։ Էական բայն է Եմ բայը. ուրիշ բոլոր բայերն ածական բայ են։

Հ. Ի՞նչպէս է խոնարհւում էական բայը։

Պ. Էական բայն խոնարհւում է այսպէս։

Սահմանական եղանակ:

Եզակի — Յոքնակի

Ներկայ ժամանակ. Եմ, ես, է. Եմք, էք, են.
(Եմ, ես, է. Եմք էք են)։

Անկատար անցեալ. Էի, էիր, էր. Էաք, էիք, էին.
(Էի, էիր, էր. Էաք, էիք, էին)։

Կատարեալ „ Եղէ, եղեր, եղև. Եղաք, եղէք, եղեն.
(Եղայ, եղար, եղաւ. և այլն։

Ապառնի. Եղէց, եղիցիս, եղիցի. Եղիցուք, եղիջիք, եղիցին. (Պէտք է լինեմ, և այլն.)։

Հրամայական եղանակ:

Եզակի. Լեր, մի՛ լինիր. Եղի՛ր մի՛ լինիր։
Յոգնակի. Լերուք, մի՛ լինիք. Եղէ՛ք մի՛ լինիք։

Ստորադասական եղանակ:

Եզ. Իցեմ, իցես, իցէ. Եմ կամ լինիմ, լինիս, լինի, և այլն։
Յոգ. Իցեմք, իցէք, իցեն. Լինիմք, լինիք, լինին, և այլն։

Անորոշ դերբայ։

Աներևոյթ. Անց. ընդունելութիւն. Ապ. ընդունելութիւն.
Լինել, լինել. Լեալ, եղեալ, եղած. Լինելոց, լինելոց։

Բաղադրեալ ժամանակներ՝

Յարակ. Եղեալ եմ, եղեալ ես, եղեալ է. Եղեալ եմք, եղեալ էք, եղեալ են, Եղած եմ ևլն։

Գերակ. Եղեալ էի, եղեալ էիր, եղեալ էր. Եղած էի ևլն
Եղեալ էաք, եղեալ էիք, եղեալ էին, Եղած էի, ևլն։

Ստոր. անցեալ. Եղեալ իցեմ, եղեալ իցես, եղեալ իցէ
Եղեալ իցեմք, եղեալ իցէք, եղեալ իցեն. Եղած լինեմ կամ եղած եմ, ևլն։

Ներկայ ապ. Լինելոց եմ, լինելոց ես, լինելոց է.
Լինելոց եմք, լինելոց էք, լինելոց են. Պիտի լինիմ, պիտի լինիս, ևլն։

Անկատար ապ. Լինելոց էի, լինելոց էիր, լինելոց էր.
Լինելոց էաք, լինելոց էիք, լինելոց էին. Պիտի լինէի, պիտի լինէիր, ևլն։

Ստոր. ապառնի. Լինելոց իցեմ. լինելոց իցես, լինելոց իցէ. Լինելոց իցեմք, լինելոց իցէք, լինելոց իցեն. Պիտի լինեմ, ևլն։

ԴԱՍ Դ.

ԼՈՒԾՈՒՄՆ ԵՒ ՅՕԴ

ԼՈՒԾՈՒՄՆ

Հ. Ի՞նչ է Նախադասութիւնը։

Պ. Նախադասութիւն ասւում է մի խօսքի, որի մէջ դիմաւոր եղանակ բայ, տէր բայի և ստորոգելի կայ։ Բանտը մթին է, Նախադասութիւն է. Է՝ դիմաւոր էական բայ է, բանտ՝ տէր բայի է, մթին ստորոգելի է։

Հ. Ի՞նչ է Դիմաւոր և անդէմ բայ։

Պ. Բայի այն ժամանակներն, որ եզակի և յոգնակի երեք դէմքը ցոյց են տալիս՝ դիմաւոր են ասւում. այսպէս են ներկայ, անցատար, կատարեալ, ապառնի ժամանակները և դերբայները ու ստորադասականը. իսկ անորոշ դերբայը, այսինքն՝ աներևոյթը և անցեալ և ապառնի ընդունելութիւնը, որք դէմք չեն ցոյց տալիս՝ անդէմ են։



Հ. Նախադասութեան մէջ, բայը, տէր բային և ստորոգելին ինչպէս են իմացւում։

Պ. Բայը միշտ յայտնի է, որ է եմ բայը։ Տէր բային՝ ո՞վ կամ ի՞նչ հարցումով գտանւում է։ Ստորոգելին ի՞նչպէս, ո՞րպիսի հարցումով։ 3. Հրահանգին առաջին խօսքում կամ Նախադասութեան մէջ, բանտը մթին է, այս հարցումներն անենք։ Է.—ո՞վ կամ ի՞նչ է. — բանտն է. — բանտն ի՞նչպիսի է. — մթին է։ Ապա բանտը տէր բային է ին. մթին էլ ստորոգելին է բանտ ին։

Այսպէս պէտք է լուծել ամենայն Նախադասութիւն։ Տէր բային գրեթէ միշտ գոյական է. այսինքն մի անձ կամ մի իր։ Ստորոգելին ևս գրեթէ միշտ ածական է։

---

ՅՕԴ

Հ. Ի՞նչ է յօդը։

Պ. Յօդ կոչւում է ն գիրը՝ հին լեզուի մէջ կամ գրաբարում, իսկ արդի լեզուի մէջ կամ աշխարհաբարում ն կամ ը գիրը. ինչպէս, աշխարհաբար՝ տունը, կինը. գրաբար՝ տունն, կինն։

Հ. Ո՞ւր է դրւում յօդը։

Պ. Յօդը թէ գրաբարում և թէ աշխարհաբարում դրւում է անուան ծայրին։

Հ. Մի բառ գրաբարում երբ յօդ չի առնում։

Պ. 1. Երբ մի անուն սեռ կամ սեռական է ցոյց տալիս, գրաբարում յօդ չի առնում, աշխարհաբարում առնում է։ Մի անուն սեռ է ցոյց տալիս, երբ ամենայն բառ զօրութեամբ է իմացւում, զոր օրինակ՝ Բանտը մթին է, Շունը հաւատարիմ է, Ձին արագ է,

Մարդը մահկանացու է, նշանակում են՝ ամենայն բանտ, ամենայն շուն, ամենայն ձի, ամենայն մարդ. սեռ են ցոյց տալիս, ուստի և գրաբարի մէջ յօդ չեն առնում, թէպէտ աշխարհաբարում առնում են, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Բանտը մթին է | Մթին է բանտ. |
| Շունը հաւատարիմ է | Հաւատարիմ է շուն. |
| Մարդը մահկանացու է | Մահկանացու է մարդ. |
| Առաքինութիւնը սիրելի է. | Սիրելի է առաքինութիւն. |

2. Երբ անունով նշանակուած իրը բնութեան մէջ մէկ է, նոյնպէս գրաբարում յօդ չի առնում, բայց աշխարհաբարում՝ առնում է։ Աստուած բարի է, Արեգակը լուսատու է, Լուսինն աղօտ է, Երկիրը գնդաձև է, խօսքերում՝ Աստուած, Արեգակ, Լուսին, Երկիր, որ միակ առարկաներ են, գրաբարում յօդ չեն առնում, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Աստուած բարի է. | Բարի է Աստուած. |
| Արեգակը լուսաւոր է. | Լուսաւոր է արեգակն. |
| Երկիրը գնդաձև է. | Գնդաձեւ է երկիր. |
| Լուսինն աղօտ է. | Աղօտ է լուսին. |

### 3. Հրահանգ (*)

Բանտը մթին է. Լուսինն աղօտ է. Ձիւնը թանձր է. Անձրևը լոյծ է. Շունը հաւատարիմ է. Ձին արագ է. Երկիրը գնդաձև է. Ծովն ընդարձակ է. Մարդը մահկանացու է. Ջուրը սառն է. Օդը թեթև է. Առաքինութիւնը սիրելի է. Արեգակը լուսատու է. Աստուած բարի է. Հոգին անմահ է. Մարմինը նիւթեղէն է. Քարը կարծր է. Ցամաքը պինդ (պիրկ) է. Թանաքը սև է. Ձիւնը ճերմակ է. Խոտը կանանչ է. Յակինթը կարմիր է. Երկինքը կապոյտ է. Անիւը կլոր է. Խաղողը քաղցր է. Ագոխը թթու է. Թռչունը թևաւոր է. Ձուկը թեփոտ է. Ոչխարը չորս ոտքով է. Հաւը երկու ոտքով է. Աւիւծը հպարտ է. Վագրը անգութ է. Որդը գարշելի է. Նապաստակը շուտ վազող է. Եղէգը հեշտ կոտրուող է. Աղիւսը փռում եփած է. Աստուած վարձատրող է. Շնորհքը ձրի է։

| | |
|---|---|
| Ճերմակ, սպիտակ. | Սառն, ցուրտ. |
| Սև, սեաւ. | Կանանչ, կանաչ. |
| Թեփոտ, ընթածորթ | Կլոր, բոլորակ. |
| Ձուկ, ձուկն | Շուտ վազող, արագոտն |
| Չորս ոտքով, չորքոտանի | Եղէգ, եղէգն |
| Երկու ոտքով, երկոտանի | Հեշտ կոտրուող, դիւրաբեկ |
| Անգութ, անագորոյն | Փռում եփած, թրծուն |
| Որդ, որդն | Վարձատրող, պարգեւատու |

Շնորհք, շնորհ

## ԴԱՍ Ե.

### ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՍԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ՑՕԴ

#### ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Գրաբարում անեզական տէր բայիներին ինչ բայ է տրւում։

Պ. Անեզական տէր բայիներին տրւում է յոգնակի բայ։

| | |
|---|---|
| Երկինքը բարձր է, | Բարձր են երկինք |

(*) Այս հրահանգում այն բառերը, որ ստորև գրուած բառերում չկան՝ գրաբարեն հետ նոյն են։ Աշակերտը թո՛ղ վերև հրահանգը դարձնէ գրաբարի, ստորոգելին բայից առաջ և յետոյ տէր բային դնելով։ Թո՛ղ աշակերտները չմոռանան այս կանոնը, այսինքն ստորոգելին բայից առաջ դնել. այս կերպը գրաբարում սովորական և հեշտ է։

Աշակերտները կարող են այս հրահանգին ամենայն խօսքը (նախադասութիւնը) վերև լուծման կանոնին համեմատ լուծել։

Աղօթքը զօրաւոր է. Հզօր են աղօթք
Ապարանքը (պալատ) փառաւոր է. Շքեղ են ապարանք

Հ. Բայը եզակի՞ թէ յոքնակի է դրւում երբ երկու կամ աւելի եզակի տէր բայեր կան:

Պ. Երբ երկու կամ աւելի եզակի տէր բայեր կան, բայը յոքնակի է դրւում:

Շոգին և ծուխը թեթև են. Թեթև են շոգի և ծուխ
Քարն ու երկաթը ծանր են. Ծանր են քար և երկաթ

---

ՅՕԴ

Հ. Վերը (Դաս Դ.) ասացիր թէ, երբ մի անուն սեռ կամ տեսակ է ցոյց տալիս, յօդ (ն գիրը) չի առնում. բայց ե՞րբ մի անուն յօդ է առնում գրաբարում:

Պ. Երբ մի անուն ցոյց է տալիս ո՛չ թէ սեռ, այլ որոշեալ անհատ կամ անհատներ, այն ժամանակ առնում է յօդ գրաբարում: Մի անուն որոշեալ անհատ ցուցած է ասւում, երբ նշանակում է ոչ թէ ամէն, այլ այս ինչ, այս անուն. զոր օրինակ. Աստղերը լուսաւոր են, խօսքում, աստղերը բառով իմացւում է ամէն աստղ. բայց դռները բաց էին, ճանապարհները նեղ էին, դատաւորն անաչառ է. խօսքերում, դռները, ճանապարհները, դատաւորը ասելով՝ չի իմացւում ամէն դուռն, ամէն ճանապարհ, ամէն դատաւոր, այլ՝ նշանակում է այս ինչ դռները, այս ինչ ճանապարհները և այս ինչ դատաւորը:

| Սեռ ցոյց տուող | Որոշեալ անհատ ցոյց տուող |
|---|---|
| Օդը բարակ է, Նուրբ է օդ. | Օդն ապականած է. Ապականեալ է օդն. |
| Ջուրը վազուն է. Հոսանուտ է ջուր. | Ջուրը պղտոր է. Պղտոր է ջուրն. |
| Ձին չորքոտանի է. Չորքոտանի է ձի. | Ձին կաղ է. Կաղ է ձին. |



Այս և նախընթաց դասի կանոններին համեմատ աշակերտները գրաբարի թող վերածեն հետևեալ հրահանգները:

4. Հրահանգ

Երկինքը բարձր է. Աստղերը լուսատու են. Դռները բաց էին. Ճանապարհները նեղ են. Փողոցները շիտակ են. Ապակին ջինջ է. Ջուրը յստակ է. Աղբիւրն առատ է. Սովը սաստիկ է. Հիւանդութիւնը ծանր է. Կրակը այրող է. Դատաւորն անաչառ է. Իշխանը խիստ է. Պալատը շքեղ է. Շինութիւնները փառաւոր են. Պարտէզը գեղեցիկ է. Ժողովուրդը շատ է. Զինուորները քիչուոր են. Մարդը հարուստ է. Աստուած ստեղծող է. Հրեշտակները հոգի են. Սատանաները չար են. Դրախտը երանաւէտ է. Տղայք անմեղ են. Իմաստութիւնը յարգի է. Գիտութիւններն օգտակար են. Եզը, ձին և էշը պիտանի են. Որդիներ ժառանգ են. Ծառաները հնազանդ լինին. Թագաւորն յաղթող է. Զօրավարը քաջ է. Զինուորները հաւատարիմ են. Առիւծը զօրաւոր է. Գետինը խոնաւ է. Փայտը չոր էր. Հիւանդութիւնը մահացու է. Բեռը ծանր է. Զգոյշ եղիք. Վստահ եղիր. Ժողովուրդն աղքատ է. Իշխաններն հարուստ են. Մարդը ո՞վ է. Դրանք ո՞վքեր են. Տղան ո՞վ է. Ուսումն օգտակար է. Մոլութիւնն ատելի է. Աղքատներն հարուստ եղան. Պատմութիւնը ճշմարիտ է. Վկայութիւնները սուտ են. Ճանապարհը երկայն է. Ժամանակը կարճ է:

Աստղ, աստղ, Յ. աստեղք Կրակ, հուր
Դուռ, դուռն, Յ. դրունք Այրող, կիզիչ
Ճանապարհ, ճանապարհ Պալատ, ապարանք
Շիտակ, ուղիղ (հարթ) Շէնք, շինութիւն, շինուած
Հիւանդութիւն, ախտ Յ. շինուածք

| | |
|---|---|
| Փառաւոր, հոյալըղ | Տղայ, ճօճուգ, Յգ. ճօճուգլար |
| Շատ, չօգ | Յարգի պատուական, |
| Քիչուոր, ուշագ | Եզ, էօքիւզ, Յգ. էօքիւզլէր |
| Մարդ, ադամ | Զօրաւոր, հզօր |
| Հարուստ, զէնկին, մալտար | Բեռ, եիւք, Յգ. եիւքլէր |
| Ստեղծող, արարիչ | Նրանք, օնլար |
| Սատանայ, դէվ | Ուսում, օգումագ |

Մոլութիւն, յարամազլըգ։

## ԼՈՒԾՈՒՄՆ

Բայ էն ըստուգ. Են՝ Եակ. բայ. սահմ. Ներկ. յոք. գ. դէմք. — Ո՞վքեր են.— Դըրուգ, դուները. Դրուանքն տէր բայի է էն ին. այս բառին ն գիրը յօդ է, վասնզի գումը այստեղ ոչ թէ ամէն դուռն է նշանակում, այլ՝ այս ինչ որոշեալ դուները։ —Դըռները ինչպիսի են։— Լայ են. բաց՝ ածական, ստորոգելի է ըստուգ ին։

### 5. Հրահանգ

Գրագիրը շուտ գրող է. Եզը, ոչխարը և այծը եղջերաւոր են. Պատմուճանը ծիրանի է. Բնակիչները սև են. Քաջ եղի՛ք. Հնազանդ եղի՛ր. Ճռայլ մի՛ լինիր. Հաւատարիմ լինի. Զգոյշ եղի՛ք. Եղևինը բարձր է. Եղէգը դիւրաբեկ է. Տօսախը (չինշար) ցած է. Ձիւնն և եղեամն ճերմակ են. Գետինը սահուն է (չայչարան). Խեղճ եմ. Ողորմելի է. Երանելի ես. Նապաստակը շուտ քալող է. Ապերախտ մի՛ լինիր. Մարդը բարերար է. Երամակը (խողէրի խումբ) մեծ էր. Ես վկայ եմ. Դու երաշխաւոր (զամէն) ես. Նա ամբաստանող է. Նրանք դատաւոր են. Նա դահիճ է. Տէրը վրէժխնդիր է. Պարգևը ձրի է. Այս շնորհք է. Գիրքը պարգև է. Պտուղներն ընծայ են։

| | |
|---|---|
| Գրագիր, գատիբ | Շուտ գրող, արագագիր |



| | |
|---|---|
| Եղէգ, էշէգն էշէգան | Ապերախտ, երախտամոռաց, |
| Ցած, խոնարհ | ապաշնորհ. |
| Ճերմակ, սպիտակ | Բարերար, երախտաւոր |
| Սահուն, սայթաք | Ամբաստանող, դատախազ |
| Խեղճ, եղուկ | Շնորհք, չէր |
| Շուտ քալող, արագագնաց | Գիրք, մատեան։ |

## ԴԱՍ Զ.

Հ. Վերևը (Դաս Բ.) ասացիր թէ անուններն մի մասը հոլովւում է վերջից մի գիր կամ վանկ առնելով։ Կա՞ն ուրիշ անուններ, որ ուրիշ կերպ հոլովւում են։

Պ. Կան անուններ որ հոլովելու ժամանակ փոխում են իրանց վերջին վանկը. այսպէս են՝ ի, ին, իւն և ըր կամ ըղ վերջաւորած անուններ։

### Ե. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Եկեղեցի | Եկեղեցի-ք |
| Ս. | Եկեղեց-ւոյ | Եկեղեց-եաց |
| Տ. | Եկեղեց-ւոյ, ւոջ | Եկեղեց-եաց |
| Հ. | զԵկեղեցի | զԵկեղեցի-ս |
| Բ. (*) | յԵկեղեց-ւոյ, ւոջէ | յԵկեղեց-եաց |
| Գ. | Եկեղեց-եաւ | Եկեղեց-եօք |

Հ. Այս հոլովման վերայ ինչ դիտելիք կայ։

Պ. 1. Այս հոլովման տակով են գնում բազմավանկ (որ աւելի քան մի վանկ ունին) ի վերջաւորած անուններ, ինչպէս գօտի, նշխարհ, գինի ևլն։

(*) Զայնաւորով սկսած անունների վերայ փոխանակ ի ի՝ յ նախդիրը դրւում է։

2. Հոգի և որդի բառերին, և ցի վերջաւորած տեղի կամ ազգի վերաբերեալ անձն ցոյց տուող անուններին, ինչպէս՝ Խորասանցի, Հռովմայեցի, և այլն, գործիականը լինում է ով և եաւ. և յոքնակին փոխանակ եաց, եօք լինելու, լինում է ոց ովք. Զոր օրինակ՝ որդի, որդւոյ. գործիական որդւով. որդիք, որդւոց, որդւովք:

## Ժ. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հիմն | Հիմ-ունք | Գառն | Գառ-ինք |
| Ս. | Հիմ-ան | Հիմ-անց | Գառ-ին | Գառ-անց |
| Տ. | Հիմ-ան | Հիմ-անց | Գառ-ին | Գառ-անց |
| Հ. | զՀիմն | զՀիմ-ունս | զԳառն | զԳառ-ինս |
| Բ. | ի Հիմ-անէ | ի Հիմ-անց | ի Գառ-անէ | ի Գառ-անց |
| Գ. | Հիմ-ամբ | Հիմ-ամբք | Գառ-ամբ | Գառ-ամբք |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս Հոլովմանց վերայ:

Պ. 1. Կան անուններ, որ ըն չեն վերջաւորւում, բայց այս Հոլովման պէս կը լինին, ինչպէս, Տուն, տան. Շուն, շան. Մանուկ, մանկան. Աղջիկ, աղջկան. Անուն, անուան. Պաշտօն, պաշտաման. և այլք:

2. Կան միքանի ըն (*) վերջաւորուած անուններ, որոց սեռականը և տրականը լինում են ին. և յոքնակի ուղղականն ինք, ինչպէս, Գառն, գառինք: Այս զարտուղութիւնները վարժութեամբ սովորում են:

(*) Մի քանի ըն վերջաւորած անուններին յոքնակի ուղղականը՝ անք, և հայցականը՝ անս վերջաւորւում են, ինչպէս՝ սերմն, սերմանք, զսերմանս. Ակն, ականք, զականս (գոհար) և այլք:



## Ի. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Նեղութիւն | Նեղութիւն-ք |
| Ս. | Նեղութ-եան | Նեղութ-եանց |
| Տ. | Նեղութ-եան | Նեղութ-եանց |
| Հ. | զՆեղութիւն | զՆեղութիւն-ս |
| Բ. | ի Նեղութ-ենէ | ի Նեղութ-եանց |
| Գ. | Նեղութ-եամբ | Նեղութ-եամբք |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Ի. Հոլովման վերայ:

Պ. Շատ իւն վերջաւորուած անուններ այսպէս են հոլովւում, ինչպէս. արիւն, կորիւն, անկիւն, որ կը լինին արեան, կորեան, անկեան, ևլն. Նաև ուրիշ մի քանի բառեր, ինչպէս. Ծնունդ, ծննդեան. Խորհուրդ, խորհրդեան. Ժողովուրդ, ժողովրդեան. Գալուստ, գալստեան:

## Ը. ՀՈԼՈՎՈՒՄՆ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տարր | Տար-երք |
| Ս. | Տար-եր | Տար-երց կամ երաց |
| Տ. | Տար-եր | Տար-երց » » |
| Հ. | զՏարր | զՏար-երս |
| Բ. | ի Տար-երէ | ի Տար-երց » » |
| Գ. | Տար-երբ | Տար-երօք » երբք |
| Ո. | Աստղ | Աստ-եղք |
| Ս. | Աստ-եղ | Աստ-եղաց կամ եղց |
| Տ. | Աստ-եղ | Աստ-եղաց » » |
| Հ. | զԱստղ | զԱստ-եղս |
| Բ. | յԱստ-եղէ | յԱստ-եղաց » եղց |
| Գ. | Աստ-եղբ | Աստ-եղօք » եղբք |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ ըր վերջաւորուած անուններից ոմանց վերայ։

Պ. Ըր վերջաւորուած անուններից ոմանք հետեւեալ կերպով են հոլովւում։

| | Եզակի | Յոքնակի |
| --- | --- | --- |
| Ո. | Փոքը | Փոք-ունք |
| Ս. | Փոք-ու | Փոք-ունց |
| Տ. | Փոք-ու | Փոք-ունց |
| Հ. | զՓոքը | զՓոք-ունս |
| Բ. | ի Փոք-ուէ | ի Փոք-ունց |
| Գ. | Փոք-ումբ, կամ Փոք-ու | Փոք-ումբք |

Այսպէս են հոլովւում՝ Մանր, Ընանջր, Բարձր, ածականները, և Մեղր, ասր, ծաղր, գոյական անունները։ Վերջին երեք բառերին գործիականը կը լինի՝ մեղու, ասու, ծաղու. և յոքնակին չի գործածւում։ Բարձր բառին յոքնակի սեռականը, տրականը և բացառականը կը լինին Բարձանց. և գործիականը՝ Բարձամբք։

6. Հրահանգ

(*) Գօտի, ձիթենի, հոգի, ոսկի, ատամն, բեռն, կողմն, տուն, լսութիւն, կոճղ, մեծատուն, վերնատուն, ճշմարտութիւն, տարի, անձն, տարր, արկղ, խաշն, դաշն, ուստր (արու զաւակ), դուստր, կղզի, փարիսեցի, սադուկեցի, Անեցի, ասր (բուրդ), մեղր, եզր (ծայր), ափն (ծայր՝ ծովու, գետի), ձմեռն, ամառն, ձեղուն, տտուն (ոտք օձի, ձկան ևլն.), ագի (ոտք ձիու ևլն.), մասն, մրջիւն, սիւն, կորիւն (յաջ գազանի), թոռն, համր։

---

(*) Աշակերտք թո՛ղ հոլովեն նշանակեալ անուններն։



# ԴԱՍ Է.

## ՀՈԼՈՎՄԱՆ ՄԻՋՈՒՄ ՁԱՅՆԱՒՈՐ ԳՐԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հ. Հոլովման միջում անունների ձայնաւոր գրերը մնո՞ւմ են միշտ անփոփոխ։

Պ. Բաղաձայնով վերջաւորուած անունների վերջին վանկին է, եա, ոյ, ի, և ու գրերը, խոտորնակ հոլովներում, այսինքն՝ բացի ուղղականից և հայցականից՝ ուրիշ հոլովներում փոխւում են։

Հ. Ի՞նչ բանի է փոխւում է գիրը։

Պ. Է փոխւում է ի ի. ինչպէս՝ Հանդէս, հանդիսի, հանդիսիւ. Հանդէսք, հանդիսից, հանդիսիւք. Պարտէզ, պարտիզի, պարտիզիւ. Պարտէզք, պարտիզից, պարտիզիւք։ Էշ, իշոյ, իշով. Էշք, իշոց, իշովք։ Ջէն, զինու. Ջէնք, զինուց, զինուք։

Հ. Ի՞նչ բանի է փոխւում եա։

Պ. Եա փոխւում է է ի, ինչպէս՝ Սենեակ, սենեկի, սենեկաւ. Սենեակք, սենեկաց, սենեկօք։ Մատեան, մատենի, մատենիւ. Մատեանք, մատենից, մատենիւք։

Հ. Ի՞նչ բանի փոխւում է ոյ։

Պ. Ոյ փոխւում է ու ի, ինչպէս՝ Ողջոյն, ողջունի, ողջունիւ. Ողջոյնք, ողջունից, ողջունիւք։ Թոյն, թունոյ, թունով. Թոյնք, թունոց, թունովք։

Հ. Ի՞նչ բանի փոխւում է ի և ու։

Պ. Ի և ու փոխւում է ըի (*), ինչպէս՝ Գիծ, գըծի, գըծիւ. Գիծք, գըծից, գըծիւք։ Բուն, բընոյ, բընով. Բունք, բընոց, բընովք։ Ինձ, ընձու. Ինձք ընձուց, ընձուք։

---

(*) Այս ը սովորաբար չի գրւում։

## ՈՒՐԻՇ ԳԻՏԵԼԻՔ

Հ. Ուրիշ ի՞նչ գիտելիք կայ ձայնաւորների փոփոխութեան վերայ:

Պ. 1. Իւ վերջաւորուած անուններին իւ մասնիկը խոտորնակ հոլովներում ու ի փոխւում է, ինչպէս՝ Հովիւ, հովուի (կարդա՛ հովվի), հովուաւ. Հովիւք, հովուաց, հովուօք:

Թիւ թուոյ, թուով. Թիւք, թուոց, թուովք:

2. Դեւ, դիւի, դիւաց, դիւօք:

3. Աստուած բառի վերջին ա գիրը կորչում է. ինչպէս՝ Աստուած, Աստուծոյ, Աստուծով:

Հ. Եայ մասնիկը ի՞նչ բանի է փոխւում:

Պ. Եայ վերջաւորուած անունների եայ մասնիկը փոխւում է է ի, ինչպէս՝ Փախստեայ, փախստէի, փախստէիւ. Փախստեայք, փախստէից, փախստէիւք, և այլն:

Բայց եայ վերջաւորուած տեղացի ցոյց տուող անունների նոյն մասնիկը (եայ) ւոյ ի է փոխւում, ինչպէս՝ Ասորեստանեայ, Ասորեստանւոյ, Ասորեստանւով կամ եաւ: Սրանց յոքնակին լինում է եայք. Ասորեստանեայք, Ասորեստանեայց, Ասորեստանեօք:

### 7. Հրահանգ

(*) Թուղթ, սէր, պատիւ, թիւ, անիւ, գրիչ, հուր, մատուռն, թռչուն, մատեան, ատեան, շունչ, մարմին, մուկն, շուրթն, հովիւ, ջուր, պանիր, հունձ, պտուղ, երէց, սղինձ, զէն, կոչումն, գալուստ, շէն, լոյս, յոյս, ամիս, վայրկեան, սուրբ, մեհեան, հանդէս, ողջոյն, էշ, մանուկ, աղջիկ, դուստր, ծեր, խունկ, ինձ (ղափլան), խոստումն, ուսումն, սկիզբն, քիրտն, աշուն, գարուն, մարդիկ, ձեղուն, սենեակ,

(*) Աշակերտները թող հոլովեն այստեղ նշանակեալ անունները:



գլուխ, փոքրիկ, տնիկ, հանգիստ, փախուստ, թաքուստ, իղձ, ունչ, ունդ, քրիստոնեայ, փախստեայ, աշտեայ (խշտ), ծնունդ, ժողովուրդ, խորհուրդ:

### 8. Հրահանգ:

Տունը նոր է. Եկեղեցին հին է. Շոգին և ծուխը թեթև են. Անձրևն և կարկուտը ծանր են. Հոգին զգայող, իմացող և գործող է. Կինը տրտում է. Մայրը վշտագին էր. Քոյրը զուարթ է. Մարդիկ և կենդանիներ քայլող են. Հողը խոնաւ է. Երկիրը բարեբեր է. Դաշտը բերքով լիքն է. Արտն և պարտէզը պտղաբեր են. Հրեշտակները հոգի են. Ձին կրակոտ է. Շունը հաւատարիմ է. Վարժապետը հմուտ և փորձ է. Աշակերտները կրթեալ են. Կառավարը (կառք վարող) վարժ է. Էշը դանդաղ է. Նապաստակն արագ է. Քացախը սաստիկ և կծու է. Իւղը լոյծ է (հեղուկ). Կարագը թանձր է. Փայտը պինդ է. Քարն և երկաթը կարծր են. Նարինջը գնդակերպ է. Սկաւառակն և անիւը կլոր են. Թաթը կակուղ է. Սմբակն և կճղակը կարծր են. Լեմոնը թթու է. Թևերն և ոտքերը շարժող են. Լեզուն և աչքերն այս կողմ այն կողմ դարձող են. Ատամները հաստատ են. Պատանին հասուն է. Տղան տհաս է. Թռչունները թռչող են: Չորքոտանիները քայլող են. Եղջերուն և նապաստակն արագընթաց են. Առիւծն ուժով է. Վագրը փարատող և անգութ է. Ոչխարը հեզ է. Ուղտը հանդարտ է. Էշը համբերող է. Դաւիթ հովիւ էր և թագաւոր եղաւ. Հայկը դիւցազն էր. Արամ քաջ էր. Աստուած կարող է. Պաշտօնեայն հաւատարիմ է. Լեառը դժուարին է:

| | |
|---|---|
| Զգայող, զգայուն | Կենդանի, անասուն |
| Իմացող, իմաստուն | Քայլող, գնայուն |
| Գործող, գործօն | Բարեբեր, բերրի |

| | |
|---|---|
| Բերքով լիքն, յուռթի | Այս կողմ այն կողմ դարձող, յեղյեղուկ |
| Կրակոտ, ջէր՛մարդամ | Ատամն, ատամ, յք. ատամունք |
| Վարժապետ, վարժապետ | Հաստատ, հաստ |
| Կրթեալ, կիրթ | Ուժով, հզօր |
| Սաստիկ, բարկ | Տհաս, խակ |
| Կարագ, կոգի | Թռչուն, հաւ |
| Կլոր, բոլորշի | Թռչող, թռչուն |
| Լեմոն, կիտրոն | Փարատող, գիշատիչ |
| Շարժող, շարժուն | |

Անգութ, անագորոյն

---

## ԴԱՍ Ը.

### ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Հ. Ամէն անուն վերև յիշուած հոլովմանց պէս հոլովւում են:

Պ. Կան մի քանի սովորական անուններ, որոց հոլովմունքը բոլորովին տարբեր են:

Հ. Ո՞րոնք են այս անունները և ինչպէս են հոլովւում:

Պ. Այս անուններն են՝ այր, տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, օր, գիւղ, տուն, և սա պէս են հոլովւում:

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Այր | Արք |
| Ս. | Առն. | Արանց. |
| Տ. | Առն. | Արանց. |
| Հ. | զԱյր. | զԱրս. |
| Բ. | յԱռնէ. | յԱրանց. |
| Գ. | Արամբ. | Արամբք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Տէր. | Տեարք. |
| Ս. | Տեառն. | Տերանց, տեարց. |



| | | |
|---|---|---|
| Տ. | Տեառն. | Տերանց, կամ տեարց. |
| Հ. | զՏէր. | զՏեարս. |
| Բ. | ի Տեառնէ. | ի Տերանց. |
| Գ. | Տերամբ. | Տերամբք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Հայր. | Հարք. |
| Ս. | Հօր. | Հարց, կամ հարանց. |
| Տ. | Հօր. | Հարց, ,, հարանց. |
| Հ. | զՀայր. | զՀարս. |
| Բ. | ի Հօրէ. | ի Հարց, կամ ի հարանց. |
| Գ. | Հարբ. | Հարբք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Քոյր. | Քորք. |
| Ս. | Քեռ. | Քերց. |
| Տ. | Քեռ. | Քերց. |
| Հ. | զՔոյր. | զՔորս. |
| Բ. | ի Քեռէ. | ի Քերց. |
| Գ. | Քերբ. | Քերբք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Կին. | Կանայք. |
| Ս. | Կնոջ. | Կանանց. |
| Տ. | Կնոջ. | Կանանց. |
| Հ. | զԿին. | զԿանայս. |
| Բ. | ի Կնոջէ. | ի Կանանց. |
| Գ. | Կնաւ, կամ կանամբ. | Կանամբք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Օր. | Աւուրք. |
| Ս. | Աւուր. | Աւուրց. |
| Տ. | Աւուր. | Աւուրց. |
| Հ. | զՕր. | զԱւուրս. |
| Բ. | յՕրէ. | յԱւուրց. |
| Գ. | Աւուրբ. | Աւուրբք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Գիւղ. | Գիւղք. |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. |
| Տ. | Գեղջ. | Գիւղից. |
| Հ. | զԳիւղ. | զԳիւղս. |
| Բ. | ի Գեղջէ. | ի Գիւղից. |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տիւ. | Տիւք. |
| Ս. | Տուընջեան. | Տուընջեանց. |
| Տ. | Տուընջեան. | Տուընջեանց. |
| Հ. | զՏիւ. | զՏիւս. |
| Բ. | ի Տուէ, ի Տուընջենէ. | ի Տուընջեանց. |
| Գ. | Տուընջեամբ. | Տուընջեամբք. |

Հայր ին պէս հոլովւում են մայր և եղբայր. կին ին պէս հոլովւում են տիկին և ամուսին:

---

## ԴԱՍ Թ.

### ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հ. Սեռական հոլովն ի՞նչ է ցոյց տալիս:

Պ. Սեռական մի անուան մօտ դրուելով ցոյց է տալիս նրա որին վերաբերելը. զոր օրինակ՝ Պարտիզին դուռը, խօսքում՝ պարտիզին է վերաբերում կամ պարտիզինն է:

Սեռական հոլովն է պատասխան, ո՞րին՝ հարցման, ո՞րին դուռը պարտիզին:

Հ. Ի՞նչ է կոչւում սեռական հոլովը:

Պ. Սեռական հոլովը Հայերէն կոչւում է յատկացուցիչ, նրա վերաբերեալ բառը ասւում է յատկացեալ:

Հ. Յատկացեալից առա՞ջ թէ յետոյ դրւում է յատկացուցիչը:

Պ. Գրաբարում յատկացուցիչը դրւում է սովորաբար յատկացեալից յետոյ, թէպէտ աշխարհաբարում սրա հակառակն է, զոր օրինակ.



| Աշխարհաբար. | Գրաբար. |
|---|---|
| Պարտէզին դուռը | Դուռն պարտիզին |
| Թագաւորին եղբայրը | Եղբայր Թագաւորին |

Հ. Գրաբարում յօդը (ն գիրը) յատկացուցչի՞ն թէ յատկացելոյն վերայ է դրւում:

Պ. 1. Գրաբարում յօդը դրւում է յատկացուցչին վերայ. աշխարհաբարում՝ երկուքին վերայ ևս, զոր օրինակ.

| Աշխարհաբար. | Գրաբար. |
|---|---|
| Թագաւորին որդին | Որդի Թագաւորին |
| Մարգարէին խօսքը | Բան Մարգարէին |

2. Բայց եթէ յատկացուցիչը յատուկ անուն է, գրաբարում յօդը յատկացելոյն վերայ միայն դրւում է. աշխարհաբարում երկուքին վերայ էլ, ինչպէս.

| Աշխարհաբար. | Գրաբար. |
|---|---|
| Յոյներին պատերազմը | Պատերազմն Յունաց |
| Դաւթին թագաւորութիւնը | Թագաւորութիւնն Դաւթի |

3. Գրաբարում ո՛չ յատկացուցչին և ո՛չ յատկացելոյն վերայ յօդ է դրւում, եթէ երկուքն էլ յօդ առնող անուններ չեն, զոր օրինակ երբ [illegible] են ցոյց տալիս (տես Դաս Դ.) կամ բնութեան մէջ միակ գտնուող մի բանի անուն են ինչպէս՝ Աստուած, Արեգակն, Լուսին, Երկիր, և այլն. իսկ աշխարհաբարում երկուքին վերայ էլ դրւում է յօդ, զոր օրինակ.

| Աշխարհաբար. | Գրաբար. |
|---|---|
| Աստուծոյ դատաստանները | Դատաստանք Աստուծոյ |

| | |
|---|---|
| Արև՝ ճառագայթները | Ճառագայթք արեգական |
| Լուսնի՝ լոյսը | Լոյս լուսնի |
| Երկրի՝ շուքը | Ստուեր երկրի |
| Մարդու՝ հոգի՝ | Հոգի մարդոյ (ա՛նձ՝ մարդի) |
| Դպրոցներին՝ տղերքը | Մանկունք դպրոցաց (ա- նձ՝ դպրոցի: |

9. Հրահանգ

ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉՈՎ.

Պարտէզին դուռը բաց է. Տանը պատուհանները փակ են. Երկրին բնակիչները վայրենի էին. Ծառին պտուղը գեղեցիկ էր. Արևին լոյսը պայծառ է. Լուսնին լոյսն աղօտ է. Տղուն հայրը ծեր է. Թագաւորին գործերը հաւատարիմ են. Տիրոջը կամքն այս է. Քրոջը տունը մօտ է. Կնոջը որդիքը ստահակ են. Մարդուն խօսքերը խիստ էին. Հօրը բարկութիւնը սաստիկ էր. Օրուան հանդէսը մեծ էր. Ցերեկուան ժամերը կարճ են. Գիշերուան ժամերն երկայն են. Կէս օրուան տաքն աւել է. Գարնան օրերը զով են. Ամառուան օրերը տաք են. Գեղին բնակիչները մարդասէր են. Թագաւորին հրամանը սաստիկ էր, սախպողական էր. Քաղաքին դըռները պղնձից էին. Դետին ջրերը քաղցր են. Ծերերին խօսքերը խելքով են. Սրանք քաղաքներին իշխաններն են. Ծովին ձուկերը տեսակ տեսակ են. Գինիին կարասը ծակ է. Եղին սրուակը լիքն է. Կաթին ամանները պարապ են. Տեղւոյն դիրքը բարձր է. Որդիներին պարծանքը հայրերն են. Մայրերը աղջիկների պաշտպանն են. Արդարներին հոգիներ երանելի են. Հռովմայեցւոց պետութիւնն ահագին էր. Իսրայէլացւոց ազգը ընտրեալ էր. Իրատին խօսքերն ազդու էին. Նոյի որդիներն և թոռներ քաջ էին. Դաւթի պատմութիւնը զարմանալի է. Հռիփսիմէի ընկերները կուսանք էին. Ձեռների և ոտների



մատները հինգ հինգ են. Այսօր ուրախութեան տօն է. Ձիթենին հաշտութեան նշան է. Այս տնկուած քարը քաջութեան յիշատակ է. Շաբաթը հրէից հանգստեան օրն էր. Նրա արիւնին հեղումը փրկութիւն եղաւ. Աստղերին թիւը անհամար է. Կայսրին իշխանութիւնը ատելի էր. Աղբիւրին ջուրը դառն էր. Նա անկիւնի քար եղաւ. Տղամարդկանց և կինարմատների թիւը շատ էր:

| | |
|---|---|
| Գոց, փակեալ | Պարապ, թափուր |
| Արև, արեգակն | Աղջիկ (զաւակ). դուստր |
| Մօտ, մերձ | դստեր |
| Ցերեկ, տիւ, տուընջեան | Թոռ, թոռն յոք. թոռունք |
| Կէս օր, միջօրեայ, միջօրէի | թոռանց |
| Տաք (գոյ.) տապ. (ած.) ջերմ | Ձեռք, ձեռն, ձեռին. յք. ձեռք, |
| Աւել, աւաւել | ձեռաց |
| Սախպողական, ճոխական | Ոտք, ոտն, ոտին. յք. ոտք, ոտից |
| Պղնձէ, պղնձի | Մատ, մատն յք. մատունք |
| Խելքով, հանճարեղ | Նշան, նշանակ |
| Սրանք, սոքա | Տնկուած քար, արձան |
| Տեսակ տեսակ, ազգի ազգի | Հանգիստ, հանգիստ, հանգըս- |
| Եղ, իւղ կամ եւղ, իւղոյ | տեան |
| Կաթ, կաթն, կաթին | Քար, վէմ |

ԱՂԱՍԻ ԱՅՐԶԵԱՆ

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Բաց է դուռն պարտիզին. Է, բայ էակ. սհմ. ներկ. եզ. գ. դէմք: Ո՞վ է — Դուռը. Դուռն՝ գոյ. անուն. ուղղ. հոլով. տէր բայի է ին: Ո՞րի կամ ի՞նչ բանի դուռը — Պարտիզին. Պարտիզին՝ գոյ. ան. սեռ. հոլ. յատկացուցիչ դուռն ին: Դուռն է՝ ի՞նչպիսի. — բաց. Բաց ածակ. ստորոգելի դուռն ին:

---

10. *Հրահանգ*

### ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉՈՎ

Յովհաննէսի եղբայրն իմաստուն է. Արշակայ որդին չար է. Պետրոսի զոքանչը հիւանդ էր. Յովսեփայ աները ծեր է. Սաւուղի որդին կաղ էր. Դաւթի զօրավարները քաջ և հաւատարիմ էին. Դեկոսի կեանքը կարճ եղաւ. Յակոբայ որդիքը նախանձոտ էին. Երուսաղէմի պարիսպները ամուր (անառիկ) էին. Պարսից երկիրը պտղաբեր է. Հնդկաց լեռները բարձր են. Շապհոյ թագաւորութիւնը երկար եղաւ. Եփրատայ ջրերը յորդ են. Սոդոմայ բնակիչներն անըզգամ (չար, անօրէն) էին, Աբրահամու ծառաները հաւատարիմ էին. Արեգական ճառագայթներն այրող էին. Լուսնին լոյսը աղօտ է. Աստուծոյ դատաստաններն արդար են. Քամու զօրութիւնը ուժով է. Ծովին ալիքներն ահագին են. Լոյսին բնութիւնը բարակ է. Արդարների ճանապարհները ուղիղ են. Առիւծին մռնչիւնը սոսկալի է. Աստուծոյ խօսքը ճշմարիտ է. Երկրիս կողմերը չորս են. արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ. Ծովին ջուրն աղի է. Լեռներին գլուխները բարձր են. Երկրիս անդունդները խորունկ են. Աստղերին հեռաւորութիւնն անբաւ է. Տիեզերքին ընդարձակութիւնն անհուն է. Անձրևին, Ձիւնին և Քամիներին օգուտը մեծ է. Արևին լոյսը և տաքութիւնը շատ կարևոր են։

| | |
|---|---|
| Լեռ, *լերան*, յոգ. *լերինք*, *լերանց* | Այրող, *կիզիչ* |
| | Քամի, *հողմ*, *հողմոյ*, |
| Ուժով, *բուռն* | Խօսք, *բան* |
| Բարակ, *նուրբ* | Խորունկ, *խոր* |
| Ճանապարհ, *ճանապարհ* | Տիեզերք, *տիեզերք* |
| Ուղիղ, *ուղիղ* | Տաքութիւն, *ջերմութիւն* |
| Սոսկալի, *ահեղ* | Շատ (մակբայ) *յոյժ* |



## ԴԱՍ Ժ.

### ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ. Վերևը (Դաս Բ.) ասացիր թէ ածական ասւում է մի անուան, որ մի իրի *որպիսութիւնը* կամ *ինչպէս լինելը* ցոյց է տալիս. ամեն ածականն որպիսութի՞ւն է ցոյց տալիս։

Պ. Մի իրի որպիսութիւնը ցոյց տուող ածականներին ասւում է *որակական* ածական. *Մեծ*, *փոքր*, *իմաստուն*, *գեղեցիկ*, *բարի*, *չար*, *ողորմած*, *սեւ*՝ որականականներ են։ Բայց կան *Թուական* ածականներ, որ մի բանի *թիւը* կամ *քանի հատ լինելը* ցոյց են տալիս, ինչպէս են *մի*, *երկու*, *երեք*, *տասն*, *հարիւր*, *հազար* եւլն։

Հ. Մի բանի ում լինելը ցոյց տուող ածականներն ի՞նչպէս են կոչւում։

Պ. Կան մի տեսակ ածականներ էլ որ մի բանի *ում լինելը* են ցոյց տալիս, ինչպէս են *իմ*, *քո*, *մեր*, *ձեր*, *իւր*, և կոչւում են *ստացական* ածական։

Հ. Ուրիշ ի՞նչ ածականներ կան։

Պ. Կան 1. ցուցական կոչուած ածականներ էլ, որ են. *այս*, *այդ*, *այն*. *սոյն*, *դոյն*, *նոյն*։ 2. կան մի տեսակ ածականներ էլ, որ *անորոշ* ածական են կոչւում, և սրանք են՝ *ամենայն*, *այլ*, *իւրաքանչիւր*, *միւս*, *ոմն*, *ոք*, *իմն*, *ինչ*։ 3. կան վերջապէս՝ *հարցական* կոչուած ածականներ, սրանք են՝ *ո՞վ*, *ո՞*, *ո՞ր*, *ի՞նչ*։

Հ. Ուրեմն քանի՞ տեսակ ածականներ կան։

Պ. Վեց տեսակ. 1. Որակական. 2. Թուական. 3. Ստացական. 4. Ցուցական 5. Անորոշ և 6. Հարցական։

### 2. ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Քանի՞ տեսակ են Թուական ածականները։

Պ. Թուական ածականներն երեք տեսակ են՝ 1. Բացարձակ, 2. Դասական և 3. Անձներական։

Հ. Ո՞րոնք են Բացարձակ Թուականներն և ի՞նչպէս հոլովւում են։

Պ. 1. Բացարձակ Թուականներն են՝ մի, երկու, երեք, և լն. մինչև հազար, բիւր, և հոլովւում են անունների հոլովման պէս որ վերևը դրուեցան։

Հ. Մի ի՞նչպէս է հոլովւում։

Պ. Մի եզակի է հոլովւում միայն, այսպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Մի | Հ. | զՄի |
| Ս. | Միոյ, միոջ | Բ. | ի Միոջէ |
| Տ. | Միում | Գ. | Միով |

Հ. Երկու, երեք, չորք ի՞նչպէս են հոլովւում։

Պ. Երկու, երեք, չորք՝ յոքնակի միայն ունին և հոլովւում են այսպէս. Հինգից վերևը թէ եզակի ունին և թէ յոքնակի։

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Երկու | Երեք | Չորք |
| Ս. | Երկուց | Երից | Չորից |
| Տ. | Երկուց | Երից | Չորից |
| Հ. | զԵրկուս | զԵրիս | զՉորս |
| Բ. | յԵրկուց | յԵրից | ի Չորից |
| Գ. | Երկուք | Երիւք | Չորիւք |

Հ. Հինգ և վեց ի՞նչպէս են հոլովւում։

Պ. Հինգ և վեց հոլովւում են այսպէս.

| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հինգ | Հինգք | Վեց | Վեցք |
| Ս. | Հնգի | Հնգից | Վեցի | Վեցից |
| Տ. | Հնգի | Հնգից | Վեցի | Վեցից |
| Հ. | զՀինգ | զՀինգս | զՎեց | զՎեցս |
| Բ. | ի Հնգէ | ի Հնգից | ի Վեցէ | ի Վեցից |
| Գ. | Հնգիւ | Հնգիւք | Վեցիւ | Վեցիւք |



Հ. Վեցից վերև մնացեալ Թուականներ ի՞նչպէս են հոլովւում։

Պ. Վեցից վերև մնացեալ Թուականներն այսպէս են հոլովւում։

| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Եօթն | Եօթանք | Ութ | Ութք |
| Ս. | եօթան | եօթանց | ութի | ութից |
| Տ. | եօթան | եօթանց | ութի | ութից |
| Հ. | զեօթն | զեօթանս | զութ | զութս |
| Բ. | յեօթանէ | յեօթանց | յութէ | յութից |
| Գ. | եօթամբ | եօթամբք | ութիւ | ութիւք |
| Ո. | Ինն | Ինունք | Տասն | Տասունք |
| Ս. | ըննի | ըննից | տասին | տասանց |
| Տ. | ըննի | ըննից | տասին | տասանց |
| Հ. | զինն | զինունս | զտասն | զտասունս |
| Բ. | յըննէ | յըննից | ի տասնէ | ի տասանց |
| Գ. | ըննիւ | ըննիւք | տասամբ | տասամբք |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Մետասան | Մետասանք |
| Ս. | մետասանի | մետասանից |
| Տ. | մետասանի | մետասանից |
| Հ. | զմետասան | զմետասանս |
| Բ. | ի մետասանէ | ի մետասանից |
| Գ. | մետասանիւ | մետասանիւք |

Այսպէս են հոլովւում երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան։

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Եօթնևտասն | Եօթնևտասանք |
| Ս. | եօթնևտասին | եօթնևտասանց |
| Տ. | եօթնևտասին | եօթնևտասանց |

| | | |
|---|---|---|
| Հ. | զեօթնևտասան | զեօթնևտասանս |
| Բ. | յեօթնևտասանէ | յեօթնևտասանից |
| Գ. | եօթնևտասամբ | եօթնևտասամբք |

Այսպէս են հոլովւում ութևտասան և իննևտասան.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Քսան | Քսանք | Հարիւր | Հարիւրք |
| Ս. | քսանի | քսանից | հարիւրոյ | հարիւրոց |
| Տ. | քսանի | քսանից | հարիւրոյ | հարիւրոց |
| Հ. | զքսան | զքսանս | զհարիւր | զհարիւրս |
| Բ. | ի քսանէ | ի քսանից | ի հարիւրոյ | ի հարիւրոց |
| Գ. | քսանիւ | քսանիւք | հարիւրով | հարիւրովք |

Երեսուն, քառասուն ևլն. մինչև իննսուն հոլովւում են քսանի պէս:

Երկերիւր, երեքհարիւր, ևլն. մինչև իննհարիւր հոլովւում են հարիւրի պէս:

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հազար | Հազարք | Բիւր | Բիւրք |
| Ս. | հազարի | հազարաց | բիւրու | բիւրուց |
| Տ. | հազարի | հազարաց | բիւրու | բիւրուց |
| Հ. | զհազար | զհազարս | զբիւր | զբիւրս |
| Բ. | ի հազարէ | ի հազարաց | ի բիւրէ | ի բիւրուց |
| Գ. | հազարաւ | հազարօք, ովք | բիւրու | բիւրուք |

Հ. Ո՞րոնք են դասական թուականները, և ինչպէս են հոլովւում:

Պ. 2. Դասական թուականները ցոյց են տալիս գոյականին կարգը կամ ուրիշների միջին քանիորդ լինելը:

| | |
|---|---|
| Առաջին կամ առաջներորդ | Չորրորդ |
| Երկրորդ | Հինգերորդ |
| Երրորդ | Վեցերորդ |



| | |
|---|---|
| Եօթներորդ | Քսաներորդ |
| Ութերորդ | Երեսներորդ |
| Իններորդ | Քառասներորդ |
| Տասներորդ | Յիսներորդ |
| Մետասաներորդ | Վաթսներորդ |
| Երկոտասաներորդ | Եօթանասներորդ |
| Երեքտասաներորդ | Ութսներորդ |
| Չորեքտասաներորդ | Իննսներորդ |
| Հնգետասաներորդ | Հարիւրերորդ |
| Վեշտասաներորդ | Երկերիւրերորդ |
| Եօթնևտասաներորդ | Հազարերորդ |
| Ութևտասաներորդ | Բիւրերորդ |
| Իննևտասաներորդ | Վերջին |

Սրանք բացի առաջին և վերջին բառերից, հոլովւում են քաղաք բառին պէս. իսկ առաջին և վերջին հոլովւում են գետ բառին պէս:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Երկրորդ | Երկրորդք |
| Ս. | երկրորդի | երկրորդաց |
| Տ. | երկրորդի կամ երկրորդում | երկրորդաց |
| Հ. | զերկրորդ | զերկրորդս |
| Բ. | յերկրորդէ | յերկրորդաց |
| Գ. | երկրորդաւ | երկրորդօք |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Առաջին | Առաջինք |
| Ս. | առաջնոյ | առաջնոց |
| Տ. | առաջնոյ կամ առաջնում | առաջնոց |
| Հ. | զառաջին | զառաջինս |
| Բ. | յառաջնոյ կամ յառաջնմէ | յառաջնոց |
| Գ. | առաջնով | առաջնովք |

Հ. Ո՞րոնք են անձներական թուականներ և ի՞նչպէս են հոլովւում:

Պ. Անձներական են կոչւում եքին կամ եքեան վերջաւորուած թուականներն, որ այս ինչ թուոյն ամէնն էլ նշանակում են, ինչպէս՝ Ամենեքին, ամէնն էլ, երկոքին, երկուսն էլ և այլն: Սրանք յոքնակի միայն հոլովւում են հետևեալ կերպով. Երկոքին կամ երկոքեան, երկոցունց կամ երկոցուն, երկոցունց կամ երկոցուն, զերկոսին կամ զերկոսեան, յերկոցունց, երկոքումբք:

### 3. ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս են հոլովւում ստացական ածականները:

Պ. Ստացական ածականներ, իմ, քո, մեր, ձեր, իւր, հոլովւում են գետ բառին պէս փոքր տարբերութեամբ այսպէս.

Եզ. իմ, իմոյ, իմում, զիմ, յիմմէ, իմով. Յոգ. իմք, իմոց, իմոց, զիմս, յիմոց, իմովք: Իմ ին պէս հոլովւում են քո, մեր, ձեր, իւր:

### 4. ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս են հոլովւում ցուցական ածականներ:

Պ. Ցուցական ածականներ այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն. հոլովւում են այսպէս.

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Այս | Այսք, այսոքիկ |
| Ս. | այսր, այսորիկ | այսոց, այսոցիկ |
| Տ. | այսմ, այսմիկ | այսոց, այսոցիկ |
| Հ. | զայս | զայս, զայսոսիկ |
| Բ. | յայսմ, յայսմանէ | յայսոց, յայսցանէ |
| Գ. | այսու, այսուիկ | այսու այսոքիւք |

Այսպէս են հոլովւում նաև այդ, այն:



| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Սոյն | Սոքին |
| Ս. | սորին | սոցին, սոցունց |
| Տ. | սմին | սոցին, սոցունց |
| Հ. | զսոյն | զսոսին |
| Բ. | ի սմին, ի սմանէ | ի սոցունց |
| Գ. | սովին, սովիմբ | սոքիմբք, սոքումբք |

Այսպէս են հոլովւում նաև դոյն, նոյն:

### 5. ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս են հոլովւում անորոշ ածականներ, ամենայն, այլ, միւս, իւրաքանչիւր:

Պ. Անորոշ ածականներ ամենայն, այլ հոլովւում են այսպէս.

| | Եզակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|
| Ո. | Ամենայն | Այլ | Այլք |
| Ս. | ամենայնի | այլոյ | այլոց |
| Տ. | ամենայնի | այլոյ, այլում | այլոց |
| Հ. | զամենայն | զայլ | զայլս |
| Բ. | յամենայնէ | յայլմէ | յայլոց |
| Գ. | ամենայնիւ | այլով | այլովք |

Ամենայն ածականին յոքնակին սովորական չէ:

Միւս, իւրաքանչիւր հոլովւում են այլին պէս:

Հ. Ի՞նչպէս են հոլովւում ոմն, ոք, իմն և ինչ:

Պ. Ոմն, ոք, իմն և ինչ հոլովւում են այսպէս:

| | Եզակի | | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն | Ոք | Ոմանք | Իմն | Ինչ |
| Ս. | ուրումն | ուրուք | ոմանց | իրիք | |
| Տ. | ումեմն | ումեք | ոմանց | իմիք | |
| Հ. | զոմն | զոք | զոմանս | զիմն | զինչ |
| Բ. | յումեմնէ | յումեքէ | յոմանց | յիմեքէ | |
| Գ. | ոմամբ | ոմամբ | ոմամբք | իւիք | |

### 6. ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Հ. Ի՞նչպէս են հոլովւում հարցականները՝ ո՞վ, ո՞ չի՞նչ։

Պ. Ո՞վ, ո՞, զի՞նչ հարցականներ հոլովւում են այսպէս.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Ո՞վ, ո՞ | Ո՞յք | Ո՞ր | Ո՞րք | Զի՞նչ |
| Ս. | ո՞յր | ո՞յց | որո՞յ | որո՞ց | է՞ր |
| Տ. | ո՞ւմ | ո՞յց | որո՞յ | որո՞ց | ի՞մ |
| Հ. | զո՞վ, զո՞ | զո՞յս | զո՞ր | զո՞րս | զի՞նչ |
| Բ. | յո՞ւմմէ | յո՞յց | յորմէ՞ | յորո՞ց | յիմմէ՞ |
| Գ. | որո՞վ | որո՞վք | որո՞վ | որո՞վք | ի՞ւ |

## ԴԱՍ ԺԱ.

### ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԱԾԱԿԱՆԱՑ

Հ. Գոյականից առաջ թէ յետոյ է դրւում ածականը և ի՞նչպէս է համաձայնում նրա հետ։

Պ. Ածականն աշխարհաբարում գոյականից առաջ է դրւում. Գրաբարում սովորաբար յետոյ է դրւում, և գոյականին հետ համաձայնում է թւով և հոլովով. զոր օրինակ իմաստուն որդի, որդի իմաստուն հոլովւում է այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Որդի իմաստուն | Որդիք իմաստունք |
| Ս. | որդւոյ իմաստնոյ | որդւոց իմաստնոց |
| Տ. | որդւոյ իմաստնոյ | որդւոց իմաստնոց |
| Հ. | զորդի իմաստուն | զորդիս իմաստունս |
| Բ. | յորդւոյ իմաստնոյ | յորդւոց իմաստնոց |
| Գ. | որդւով իմաստնով | որդւովք իմաստնովք |



11. Հրահանգ

### ԳՈՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Խաբեբայ մարդը խորշելի է. Հնազանդ որդին սիրելի է. Վատ գինուորն անարգ է. Չափաւոր աշխատութիւնն օգտակար է. Շատ հարստութիւնը վտանգաւոր է. Սաստիկ բարկութիւնը վնասակար է. Մազերը ճերմկած մարդը պատկառելի է. Արդար օրէնքը մեծարոյ է. Խօսք մտիկ չ'անող աշակերտը պատժելի է. Խօսք խառնող մարդն անարգ է. Համատարած ծովն ահագին է. Մատակ առիւծը կատաղի է. Գիշակեր թռչունները յափշտակող են. Իմ միածնունդ աղջիկս այստեղ է. Քո Աստուածավախ մայրդ հիւանդ է. Վախկոտ զինուորը վնասակար է. Մեծ որդին խելացի է. Խելօք տղան սիրելի է. Պզտիկ եղբայրս խոհեմ է. Մահուցից վերարկուս պատառոտած է. Վերևի սենեակը մութ է. Ներսի սրահն ընդարձակ է. Անմարդի տեղերը վտանգաւոր են. Մեր տունը շատ հանգիստ է. Խօսք մտիկ անող տղան յառաջադէմ է. Պարապ խօսքերն ի՞նչ են. Անառիկ լեռները մեր ապաւէնն են. Ծովեզերեայ երկիրը բարեօդ է. հասուն պտուղները համով են, տհասներն անհամ. Երկայն ճանապարհը խորտուբորտ է։

| | |
|---|---|
| Անարգ, խոտան | Միածնունդ, միամօր |
| Չափաւոր, համեստ | Այստեղ, աստ |
| Հարստութիւն, մեծութիւն | Աստուածավախ, երկիւղած |
| Բարկութիւն, ցասումն | Վախկոտ, երկչոտ |
| Մազերը ճերմակ, ալեւոր | Մեծ (որդի), երէց |
| Խօսք մտիկ չանող, [illegible] | Խելացի, հանճարեղ |
| Խօսք խառնող, [illegible] | Խելօք, մտավարժ |
| Աղջիկ (զաւակ), դուստր | Տղայ, մանուկ |
| Յափշտակող, յափշտակիչ | Պզտիկ (եղբայր), կրտսեր |
| Խոհեմ, զգօն | Մահուցից, [illegible] |

| | |
|---|---|
| Պատառոտած, պատառատուն | Խօսք մտիկ անող, հլու |
| Վերևի, վերին | Պարապ, ունայն |
| Ներսի, ներքին | Խօսք, բան |
| Անմարդի, ամայի | Ի՞նչ, զի՞նչ |
| Տեղ, տեղի | Անառիկ, ամուր |
| Շատ, յոյժ | Բարեօդ, հովասուն |
| Հանգիստ, անդորր | Տհաս, խակ |
| Համով, ախորժելի | Խորտուբորտ, դժուարին |
| | Անհամ, անախորժ |

---

## ԼՈՒԾՄՈՒՄՆ

Խաբեբայ մարդը խորշելի է. Խորշելի է այր խաբեբայ։ Ի. էական բայ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք.— Ո՞վ է։— Խաբեբայ մարդը, այր խաբեբայ. մարդը, այր՝ տէր բայի է. Խաբեբայ ածական է և մարդի որպիսութիւնն է ցոյց տալիս։ Խաբեբայ մարդն ի՞նչ է.— Խորշելի է. Խորշելի՝ ստորոգելի է. խաբեբայ մարդին։

Հ. Գրաբարում ածականը գոյականից առաջ կարո՞ղ է դրուիլ։

Պ. Կարող է դրուիլ և այն ժամանակ անփոփոխ է մնում եթէ բազմավանկ է, իսկ եթէ միավանկ է, առաջ դնելով էլ կարող է համաձայնիլ. զոր օրինակ.

| Բազմավանկ ածական առաջ դրուած | Միավանկ ածական առաջ դրուած |
|---|---|
| Իմաստուն որդի. | Քաջ որդի. |
| Իմաստուն որդւոյ. | Քաջ որդւոյ. |
| Իմաստուն որդւոյ. | Քաջ որդւոյ. |
| զԻմաստուն որդի. | զՔաջ որդի. |
| յԻմաստուն որդւոյ. | ի Քաջէ որդւոյ. |
| Իմաստուն որդւով. | Քաջիւ որդւով. |

Հ. Ի՞նչպէս համաձայնում են թուական ածականներ գոյականին հետ։



Պ. Թուական ածականներ կարող են գոյականից թէ առաջ և թէ ետև դրուելով համաձայնիլ նրա հետ, բայց ուզում են յոքնակի գոյական, բայց մի-ից, որ միշտ եզակի գոյական է ուզում, զոր օրինակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այր մի. | կամ | Մի այր. |
| Ս. | առն միոջ, միոյ. | » | միոյ առն. |
| Տ. | առն միում. | » | միում առն. |
| Հ. | զայր մի. | » | զմի այր. |
| Բ. | յառնէ միոջէ. | » | ի միոջէ առնէ. |
| Գ. | արամբ միով. | » | միով արամբ. |

Ո. Արք երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն,
(ոչ հինգք, վեցք, եօթանք).
Ս. արանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.
Տ. արանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.
Հ. զարս երկուս, երիս, չորս, հինգ, վեց, եօթն.
(ոչ հինգս, վեցս, եօթանս).
Բ. յարանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.
Գ. արամբք երկուք, երիւք, չորիւք, հնգօք, վեցիւք, եօթամբք։

Կամ

Ո. Երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն արք.
Ս. երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց արանց.
Տ. երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց արանց.
Հ. զերկուս, զերիս, զչորս, զհինգ, զվեց, զեօթն արս
Բ. յերկուց, յերից, ի չորից, ի հնգից, ի վեցից, յեօթանց արանց.

Գ. երկուք, երիւք, չորիւք, հնգօք, վեցիւք, եօթամբք արամբք.

12. Հրահանգ.

ԳՈՅԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Երեք որդիների հայր եմ. Մէկ մարդու որդիներ ենք. Այսօր քառասուն մանկանց տօն է. Հինգ մարդու բաժին էր. Երկու եղբայրների ժառանգութիւն է. Տասուերկու որդւոց հայր էր. Այնտեղ կար բիւր գործերի բանակ. Տասը ծառայի տէր էինք. Եօթը քաղաքի իշխան էր. Երեք մարդով եկաւ. Չորս սպասաւորներով գնացին. Տասն ընկերներով ընկաւ. Չորս կողմից վազեցին. Յիսուն մղոն գնացին. Ջուրը քառասուն կանգուն բարձրացաւ. Երեսուն օրից յետոյ տեսանք. Հինգ հազար մարդ կերակրեց. Երկու հարիւր մարդով եկաւ մեր վերայ. Վեց մարդ սպանեցին. Այնտեղ տասն արմաւենիներ կային. Մէկ բանով պակաս եմ. Նա ութսուն տարեկան էր. Աշտարակը եօթը տարիներից յետոյ եօթը տարի-ով եղաւ. Տարւոյն մէջ տասուերկու ամիս կայ. Երեք որդին էլ մէկ օրում մեռան. Տասնումէկ աշակերտներին երևեցաւ. Այս են տասուերկու մարգարէից անունները. Ահա չորս մարգարէների գրքերը. Երկրի չորս ծայրերից պիտի գան. Երկու աւազակների միջում խաչուեցաւ. Եօթանասուն ծերերի ժողով էր. Երկրորդ ամսի վերջանալու ժամանակը. Վեցերորդ տարւոյն լրացած ժամանակը. Առաջին տղայի անունն ի՞նչ էր. Առաջին տղայի անունն էր Արշակ:

Մարդ, այր
Կար, էր
Այնտեղ, անդ
Եկաւ, եկն
Ընկաւ, անկաւ
Կողմ, կողմն, կողման



Վազեցին, ընթացան
Յետոյ, յետ (սեռականով)
Կերակրեց, կերակրեաց
Մեր վերայ, ի վերայ մեր
Սպաննեցին, սպանին
Կային, էին
Մէկ բանով, միով իւիք
Տարի, ամ
Երեքն . . . էլ, երեքին
Լրացած ժամանակը, ի լրումն
Ծայր, ծագ
Մէջտեղ, ի մէջ
Վերջանալու ժամանակ, ի կատարել
Տարւոյն մէջ, ի տարւոջ
Մէկ օրում, ի միում աւուր
Գիրք, մատեան
Պիտի գան, եկեսցեն
Խաչուեցաւ, խաչեցաւ
Տղայ, մանուկ

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Երեք որդիների հայր եմ. Հայր եմ որդւոց երից. Եմ բայ էական. սահմ. ներկ. եզ. ա. դէմ. Ո՞վ է.— Ես եմ, ես էակ. դեր. ա. դէմ. եզ. ուղղ. տէր բայի եմին: Ես եմ, ի՞նչ.— Հայր. հայր գոյ. ան. եզ. ուղղ. ստորոգելի եմին: Ես եմ հայր. որի՞. որդւոց երից. որդւոց գոյ. ան. յոգ. սեռ. յատկացուցիչ հայրին. երից թուական ածական որդւոցն:

Հ. Ի՞նչպէս են համաձայնւում իրանց գոյականների հետ ստացական ածականները:

Պ. Ստացական ածականները գոյականից թէ առաջ և յետոյ դրուելով համաձայնւում են նրա հետ թուով և հոլովով, զոր օրինակ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ (ոչ իմք) |
| Ս. | տան իմոյ. | տանց իմոց. |
| Տ. | տան իմում. | տանց իմոց. |
| Հ. | զտուն իմ. | զտունս իմ (ոչ իմս). |
| Բ | ի տանէ իմմէ. | ի տանց իմոց. |
| Գ. | տամբ իմով. | տամբք իմովք |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Իմ տուն. | Իմ տունք. |
| Ս. | իմոյ տան. | իմոց տանց. |
| Տ. | իմում տան. | իմոց տանց. |
| Հ. | զիմ տուն. | զիմ տունս. |
| Բ. | յիմմէ տանէ. | յիմոց տանց. |
| Գ. | իմով տամբ. | իմովք տամբք. |

Հ. Նրա, նրանց, նրանց կամ նրէնց բառերի գրաբարն ինչպէս է:

Պ. Նրա, նրանց, նրանց կամ նրէնց բառերի գրաբարն է նորա, նոցա, նոցին. սրանք յատկացուցիչ (սեռական) են և միշտ անփոփոխ են մնում, գոյականն ինչ հոլովով էլ որ լինի. ուստի ասւում է, տուն նորա, տան նորա, ի տանէ նորա, տամբ նորա, տունք նորա, տանց նորա և այլն:

Հ. Ստացական ածական ունեցող գոյականը յօդ առնում է.

Պ. Երբ մի անուն ունի ստացական ածական, յօդ այսինքն ն գիրը աշխարհաբար գրաբարում չի առնում. ուստի՝ Տուն իմ, Եղբայր քո, ասել բաւական է, փոխանակ ասելու, տունն իմ, եղբայրն քո:

13. Հրահանգ.

ԳՈՅԱԿԱՆ ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Տունս (*) մեծ է. Ձեր քաղաքն ընդարձակ է. Մեր փողոցը լայն է. Քո ճանապարհդ ուղիղ է.

(*) Աշխարհաբարում էլ իմ, քո, մեր, ձեր, նրան, ստացականները գործածւում են, ս, դ, ը, գրերն ևս գոյականին վերջից աւելացնւում են, կամ եզակիին մէջ մանաւանդ, ս, դ, ը, միայն գործածւում են, առանց իմ, քո, նրան, նրա բառերին, ինչպէս իմ տունս, քո տունդ, նրան կամ նրա տունը և կամ լոկ տունս, տունդ, տունը: Բայց գրաբար իմ, քո, մեր և այլն,



Նրանց որդիքը յիմար են. Նրանց երկիրը պտղաբեր է. Եղբայրներս գիտուն են. Ձեր որդիքը յիմար են. Ք.ո ծառաներդ՝ անմիտ են. Բարեկամներդ տգետ են. Մեր տները բարձր են. Իմ որդիս անուշահոտ է. Քո աղջիկդ տգեղ է. Մայրս աստուածավախ է. Եղբայրդ վախկոտ է. Իմ աշակերտս ծոյլ է. Մեր կեանքը կարճ է. Ձեր խօսքերն երկայն են. Մեր նոր տունը գեղեցիկ է. Ձեր հին հանդերձները պատառոտած են. Քո մեծ որդիդ խոհեմ և խելօք է. Իմ պզտիկ եղբայրը զուարթ է. Մեր վերևի սրահը լուսաւոր է. Նրա ներսի սենեակը խաւարին է. Նրա աղջիկը միածնունդ է. Ձեր գիրքը լաւ է. Քո քոյրդ պարկեշտ է. Մեր տղան խելօք է. Նրանց որդին անառակ էր. Մեր գրքերն օգտակար են. Իմ բարեկամս աղքատ է. Մեր շունը հաւատարիմ է. Նրա լեռները բարձր են. Քո դասդ դժուարին է. Մեր ծառան հիւանդ է. Իմ անձս տրտում է. Մեր ճանապարհը կարճ է. Քո փողդ շատ է. Նրանց գինին լաւ է. Իմ հարստութիւնս անչափ է. Որդիս արի և ժրաջան է. Մեր կեանքը երանելի է. Ձեր հանդերձները նոր են. Քո գոհարներդ մեծագին են. Քո կինդ ապերախտ է. Նրանց հանդերձները սև էին:

| | |
|---|---|
| Նրանց, նոցա | Պատառոտած, պատառատուն |
| Եղբայր, եղբայր, յք. եղբարք | Մեծ (որդի), երէց |
| Աղջիկ (զաւակ), դուստր | Խելօք, ճարտար |
| Աստուածավախ, երկիւղած | Խոհեմ, զգօն |
| Վախկոտ, երկչոտ | Պզտիկ (եղբայր), կրտսեր |
| Խօսք, բան | Վերևին, վերին |

միայն դնել բաւական է, ս, դ, ն, գրեր գոյականին վերջն աւելացնելը հարկաւոր չէ ուստի չասուիր տունս իմ, կամ տունս, տունդ քո կամ տունդ և այլն: Այս ս, դ, ն, գրերն ուրիշ նշանակութիւն ունին գրաբարում ինչպէս յետոյ պէտք է տեսնենք

| | |
|---|---|
| Հանդերձ, զգեստ | Փող, արծաթ |
| Ներսի, ներքին | Հարստութիւն, մեծութիւն |
| Միածնունդ, միամօր | Արի, քաջ |
| Գիրք, մատեան | Ժրաջան, ժիր |
| Լաւ, ազնիւ | Գոհար, ակն, յ.ք. ականք |
| Դաս, ուսումն | Մեծագին, պատուական |

Ապերախտ, ապաշնորհ

---

## ԼՈՒԾՈՒՄՆ

Տունս մեծ է. Մեծ է ստոր. իմ. Է բայ էակ. սահմ. ներ. եզ. գ. դէմ: Ո՞վ է.—Տուն իմ է. ստոր. գոյ. անուն եզ. ուղղ. տէր բայի է ին. ստացական ածական ստոր. ին: Տուն իմ է՝ ի՞նչ.—Մեծ, մեծ որակ.ած. ստորոգելի ստոր. ին:

Հ. Ցուցական ածականներն ի՞նչպէս են համաձայնւում իրանց գոյականների հետ:

Պ. Ցուցական ածականներ այս, այդ, այն, գոյականից թէ առաջ և թէ յետոյ կարող են դրուիլ: Եթէ առաջ դրուին, չորս հոլովները գործածւում են (տես Դաս Ժ. Ցուցական ածականների հոլովմանց օրինակը). իսկ եթէ (ինչպէս սովորաբար է) գոյականից յետոյ կդրուին, երկրորդ հոլովները գործածւում են և գոյականին վերջից ս, դ, ն, գրերը աւելացնւում են, այսինքն՝ եթէ ցուցականն այս է, ս գիրը աւելացնւում է գոյականի վերջից, եթէ ցուցականն այդ է, դ գիրը. եթէ այն է ն գիրը, և նախդիրները եթէ գոյականին և եթէ ածականին վերայ կրկնւում են:

| Ցուցական առաջ դրուած | | Ցուցական յետոյ դրուած |
|---|---|---|
| | Եզակի | Յոքնակի |
| Ո. | Այս տուն. | Տունս այս. |
| Ս. | այսր տան. | տանս այսորիկ. |
| Տ. | այսմ տան. | տանս այսմիկ. |
| Հ. | ըայս տուն. | ըտունս ըայս. |
| Բ. | յայսմ տանէ. | ի տանէս յայսմանէ. |
| Գ. | այսու տամբ. | տամբս այսուիկ. |
| | Յոքնակի | Յոքնակի |
| Ո. | Այս տունք. | Տունքս այսոքիկ. |
| Ս. | այսց տանց. | տանցս այսոցիկ. |
| Տ. | այսց տանց. | տանցս այսոցիկ. |
| Հ. | ըայս տունս. | ըտունս ըայսոսիկ. |
| Բ. | յայսց տանց. | ի տանցս յայսցանէ. |
| Գ. | այսու տամբք. | տամբքս այսոքիւք. |



Հ. Փոխանակ այս, այդ, այն ցուցականների գրաբարում շատ անգամ ի՞նչ է գործածւում:

Պ. Փոխանակ այս, այդ, այն ցուցականների գրաբարում շատ անգամ ս, դ, ն (*) գրերը միայն դրւում են գոյականի վերջում. զոր օրինակ, փոխանակ ասելու, տունս այս, տունդ այդ, տունն այն, կարող է ասուիլ տունս, տունդ, տունն:

14: Հրահանգ.

## ԳՈՅԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Այս տունը բարձր է. Այս մարդիկը թշնամի են. Այն երկիրն անբնակ է. Այս տեղս հանգիստ է. Այս պարտէզը գեղեցիկ է. Այն տղաք խօսք մտիկ

(*) Սրանից տեսնւում է որ ս, դ, ն, գրերին պաշտօնը գրաբարում և աշխարհաբարում տարբեր է. տունս, տունդ, տունն աշխարհաբարում նշանակում է իմ տունս, քո տունդ, նրա տունը. իսկ գրաբարում՝ տունս, տունդ, տունն, նշանակում է այս տունը, այդ տունը, այն տունը, կամ թէ ասենք, ս, դ, ն, աշխարհաբարում իմ, քո, նրա ստացական ածականների տեղը բռնում են, իսկ գրաբարում, այս, այդ, այն ցուցական ածականների տեղը:

անող են. Այս զինուորներն հնազանդ են. Այդ խօսքերը պարապ են. Այն պարիսպներն անառիկ են. Այս ջուրերը յորդ են. Այն գետը պղտոր է. Այդ տեղը բարէօդ է. Այս պտուղները հասած են. Այն կողմերը լեռնային են. Այս երկիրը դաշտային է. Այս ճանապարհները խորտուբորտ են. Այդ խօսքերը հանճարեղ են. Այն մարդիկը պանդուխտ են. Այս խօսքերը ճշմարիտ են. Այդ բարկութիւնն արդար է. Այն փողը մերն է. Այս տղաք իմս են. Այս գրքերն ո՞ւմն են. Ովքե՞ր են այդ կնիկները. Այս գիրքը լիքն է. Այս քաղաքը պզտիկ է. Այդ պարտէզը մեծ չ'է. Այս լեռները բարձր են. Այդ տղան իմ եղբայրս է. Այդ աղջիկը միածնունդ (աղջիկ) զաւակ է. Այս տղաքը ձեր որդիքն են։

| | |
|---|---|
| Մարդիկը, արք | Անառիկ, ամուր |
| Անմարդաբնակ, ամայի | Բարէօդ, հովասուն |
| Հանգիստ, խաղաղ | Հասած, հասուն |
| Տեղի, տեղի | Խորտուբորտ, դժուարին |
| Խօսք մտիկ անող, հլու | Ճանապարհ, ճանապարհ |
| Պարապ, ունայն | Փող, արծաթ |
| Գիրք, մատեան | Քումդ, քո |
| Լիք, լի | Պզտիկ, փոքր |
| Չէ, չէ ինչ | Միածնունդ, միամօր |
| (Աղջիկ) զաւակ, դուստր | Որդիք, որդիք |

---

## ԼՈՒԾՈՒՄՆ

Այս տունը բարձր է. Բարձր է տունս։ Է բայ էակ. սահմ. ներկ. եզ. գ. դէմ։ Ո՞վ է.—Տունս է. տուն գոյ. անուն եզ. ուղղ. տէր բայի է ին, ս ցուցական նշան, փոխանակ այս ցուցական ածականի։ Տունս է ի՞նչ.—Բարձր. բարձր որակ. ած. ստորոգելի տունին։

---



15. Հրահանգ.

## ՑԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՍՏԱՑԱԿԱՆ, ԵՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Եղբօրս հանդերձները նոր են. Ձեր տղոց կօշիկները հին են. Մեր երկրին հողը պտղաբեր է. Ձեր պարտէզին ծառերը շատ են. Մեր Աստուծոյն ողորմութիւնը շատ է. Ձեր աղօթքին զօրութիւնը մեծ է. Քո ծառաներիդ խօսքերը տկար են. Այս տան յարկը բարձր է Այս քաղաքին բնակիչները շատ են. Այն մարդոց փողը քիչ է. Այն ծառաներին տէրը խիստ է. Այն քաղաքին պարիսպներն ամուր են. Այն գետին ջրերը յորդ են. Այդ կնոջ որդին խելացի է. Այս աղբիւրի ակը պղտոր է. Այն աղբիւրին ջուրը սառն է. Այդ բարեկամներին խօսքերը քաղցր են. Այս ծառներին պտուղները հասուն են. Այն երկրին օդն առողջ է. Այն ճանապարհին երկայնութիւնը չափազանց է. Այն տղուն մահը ժամանակից առաջ էր. Այս մարդու չարութիւնը շատ մեծ է. Այս կնոջ բարեգործութիւնները հռչակեալ են. Քաջ մարդու որդի է. Իմաստուն ծառայի տէր է. Բարի մարդու կին է. Հարազատ եղբօր քոյր եմ. Մեծ քաղաքի բնակիչ ենք. Բարեբարոյ կնոջ այր է. Հզօր Թագաւորի բարեկամ եմ. Մեծամեծ բանակների զօրավար է. Իմաստուն վարժապետի աշակերտ է. Ազնիւ հօր որդի է. Բարեպաշտ մօր աղջիկ էր. Երկնաւոր Թագաւորին ծառաներն ենք. Աբրահամ շատ ծառաների տէր էր. Հնազանդ որդիների բնութիւնն այս է. Այս անտառը վայրենի գազանների բնակարան է. Վատ մարդի կին եմ. Արդար հոգիների բնակարան է։

| | |
|---|---|
| Շատ, բազում | Փող, արծաթ |
| Խօսք, բան | Քիչ, սակաւ |

Խելօք, հանճարեղ — Բարեգործութիւն, շնորհաբերութիւն
Ակ, աչք — Վարպետ, վարժապետ, ճարտարապետ
Սառն, ցուրտ — Բնութիւն, բարք
Չափազանց, չափէ — Աղջիկ, դուստր
Ժամանակից առաջ, վաղաժամ — Բնակարան, բնակութիւն
Շատ մեծ, ահագին — Վատ, ծանր

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Նոր են հանդերձ եղբօր խնոյ. Են, բայ. էակ. սահմ. ներկ. յք. գ. դէմք:—Ո՞վ կամ ի՞նչ բաներն են.— Հանդերձները. Հանդերձ գոյ. ան. յք. ուղղ. տէր բայի են ին: Որք հանդերձները.—Եղբօրս. Եղբօր խնոյ սեռ. հոլ. ին ստացական ածականով, յատկացուցիչ հանդերձին: Հանդերձներն են՝ ի՞նչ.—Նոր. նոր ածական ստորոգելի հանդերձին: Այսպէս մնացածները:

Հ. Անորոշ ածականներ գոյականից առա՞ջ թէ յետոյ գրւում են, և ինչպէս են համաձայնւում:

Պ. Բացի ամենայն է, որ սովորաբար գոյականից առաջ է գրւում և անփոփոխ է մնում՝ ուրիշ անորոշ ածականներ սովորաբար գոյականից յետոյ գրուելով նրա հետ ի միասին հոլովւում են այսպէս:

Եզակի.

| | | |
|---|---|---|
| Ո. | Այր այլ | Այր ոմն կամ ոք |
| Ս. | առն այլոյ | առն ուրումն կամ ուրուք |
| Տ. | առն այլում | առն ումեմն կամ ումեք |
| Հ. | զայր այլ | զայր ոմն կամ ոք |
| Բ. | յառնէ այլմէ | յառնէ ումեմնէ կամ ումեքէ |
| Գ. | արամբ այլով | արամբ ոմամբ |

Յոգնակի.

| | | |
|---|---|---|
| Ո. | Արք այլք | Արք ոմանք |
| Ս. | արանց այլոց | արանց ոմանց |
| Տ. | արանց այլոց | արանց ոմանց |
| Հ. | զարս այլս | զարս ոմանս |
| Բ. | յարանց այլոց | յարանց ոմանց |
| Գ. | արամբք այլովք | արամբք ոմամբք |



Սրանցից ոմանք գոյականից առաջ ևս կարող են գրուիլ և հոլովուիլ, զոր օրինակ.

Այլ տուն, այլոյ տան, այլով տամբ, և այլն:

Հ. Որ հարցական անունն ինչպէս համաձայնւում է գոյականին հետ:

Պ. Որ հարցական ածականը գոյականից առաջ գրուելով համաձայնւում է, զոր օրինակ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ո՞ր տուն | Ո՞ր տունք |
| Ս. | որո՞յ տան | որո՞ց տանց |
| Տ. | որո՞ւմ տան | որո՞ց տանց |
| Հ. | զո՞ր տուն | զո՞ր տունս |
| Բ. | յորմէ՞ տանէ | յորո՞ց տանց |
| Գ. | որո՞վ տամբ | որո՞վք տամբք |

Հ. Ով կամ ո և զի՞նչ, ի՞նչ բառի հետ ի միասին գործածւում են:

Պ. Ո գործածւում է ոչ բառին հետ և նշանակում է Ոչ, ո՛չ ոք: Զի՞նչ գործածւում ինչ բառի հետ միայն, և նշանակում է ի՞նչ բան: Ո՞ ոք, և զի՞նչ ինչ հոլովւում են ի միասին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի |
|---|---|---|---|
| Ո. | Ո՞ ոք | Ո՞յք ոմանք | Զի՞նչ ինչ |
| Ս. | ո՞յր ուրուք | ո՞յց ոմանց | է՞ր իրիք |
| Տ. | ո՞ւմ ումեք | ո՞յց ոմանց | ի՞մ իմիք |
| Հ. | զո՞ ոք | զո՞յս ոմանս | Զի՞նչ ինչ |

| | | | |
|---|---|---|---|
| Բ. | յումմէ ումեքէ | յո՞յց ոմանց | յիմմէ իմեքէ |
| Գ. | որո՞վ ոմամբ | որո՞վք ոմամբք | ի՞ւ իւիք |

16. Հրահանգ.

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Ուրիշ աշխարհի բնակիչ են. Ուրիշ կերպով խօսելու. Մի այրի կնոջ որդի էր. Ուրիշ քաղաքներից եկած ենք. Մի քանի մարդոց հանդիպեցանք. Ուրիշ մարդի (տրա.) տուէք այդ. Ձերը ո՞ր տունն է. Ո՞ր քաղաքից էք. Ո՞ր համարձակութեամբ նրա առաջը պէտք է ելնես. Դուն ի՞նչ մարդ ես. Ի՞նչ բանով կարող է. Ո՞ր (ի՞նչ) աչքով պէտք է նայես. Ո՞ր (կամ ի՞նչ) մարդու որդի է այդ. Նա բոլոր երկրիս տէրն է. Յունաստանի բոլոր քաղաքներից եկան. Ուրիշ տիրոջ (տրա.) ծառայ ենք. Սա ուրիշ վարպետի գործ է. այդ ի՞նչ բանի (տրա.) օգտակար է։

| | |
|---|---|
| Կերպ, օրինակ | Ի՞նչ բանով, ի՞ւ իւիք |
| Մի կնոջ, ումն | Ո՞ր, ի՞նչ, ո՞րպիսի |
| Եկած ենք, եկեալ եմք | Բոլոր, ամենայն |
| Մի քանի, ոմանք | Յունաստան, Յոյնք |
| Հանդիպեցանք, հանդիպեցաք | Եկան, եկին |
| Նրա առաջ, առաջի նորա | Ծառայենք, ծառայեսցուք |
| Պէտք է ելնես, ելցես | Վարպետ, ճարտար |
| Ի՞նչ մարդ, ո՞րպիսի ոք | Ի՞նչ բանի, ի՞մ իմիք |

ԼՈՒԾՈՒՄՆ

Ուրիշ աշխարհի բնակիչ են. Բնակիչ են այլոյ աշխարհի։ Են, բայ էակ. ներկ. յք. գ. դէմ։ Ո՞վ են.— Նոքա, էակ. դեր. գ. դէմ. յք. ուղղ. տէր բայի ենին, զօրութեամբ իմացւում է։ Նոքա են, ի՞նչ.—Բնակիչ, գոյ. ան. ուղղ. ստորոգելի նոքաին։ Նոքա են բնակիչ ի՞նչ բանի.—Այլոյ աշխարհի. աշխարհի, գոյ. ան եզ. սեռ. յատկացուցիչ բնակիչին, այլ անորոշ ած. աշխարհին ին։



ԴԱՍ ԺԲ.

ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է դերանուն։

Պ. Դերանուն են կոչւում մի քանի բառեր, որ դրւում են խօսքին մէջ արդէն յիշուած մի անուան տեղ, զոր օրինակ. Թագաւորը և նրա զինուորները. տեսա՞ք այն մարդը որի որդին իմ աշակերտս է։ Այս խօսքերիս մէջ նրա, որի, դերանուն են. առաջինը յարաբերում է թագաւորը, երկրորդը՝ մարդը, փոխանակ ասելու. Թագաւորը և թագաւորի զինուորները. Տեսա՞ք այն մարդը, այն մարդու որդին իմ աշակերտս է։

Հ. Քանի՞ տեսակ դերանուն կայ։

Պ. Չորս տեսակ դերանուն կայ. էական կամ անձնական, ստացական, ցուցական և յարաբերական։

Հ. Ո՞րք են էական դերանունները։

Պ. Էական դերանուններն են, ես, դու, նա։ Ես ցոյց է տալիս առաջին դէմք, այսինքն՝ խօսողը. դու՝ երկրորդ դէմք, այսինքն՝ այն որին ուղղւում է խօսքը. նա՝ երրորդ դէմք, այսինքն՝ այն որի վերայ է խօսւում։

1. ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչպէս հոլովւում են էական դերանուններ։

Պ. Էական դերանունները հոլովւում են այսպէս։

| | Ա. ԴԷՄՔ | | Բ. ԴԷՄՔ | |
|---|---|---|---|---|
| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
| Ո. | Ես | Մեք | Դու | Դուք |
| Ս. | իմ | մեր | քո | ձեր |
| Տ. | ինձ | մեզ | քեզ | ձեզ |
| Հ. | զիս | զմեզ | զքեզ | զձեզ |
| Բ. | յինէն | ի մէնջ | ի քէն | ի ձէնջ |
| Գ. | ինև | մեօք | քև | ձեօք |

### Գ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Նա | Նոքա |
| Ս. | Նորա | Նոցա |
| Տ. | Նմա | Նոցա |
| Հ. | զՆա | զՆոսա |
| Բ. | ի Նմանէ | ի Նոցանէ |
| Գ. | Նովաւ | Նոքօք |

Հ. Քանի՞ են երրորդ դէմքի դերանունները։

Պ. Երրորդ դէմքի դերանուններն են երեք. սա, դա, նա։ Սա՝ ցոյց է տալիս այն որ մօտ է. դա՝ այն որ հեռի է. նա՝ ցոյց է տալիս այն որ բացակայ է։

Հ. Կա՞յ երրորդ դէմքի ուրիշ դերանուն։

Պ. Երրորդ դէմքի դերանուն է նաև ինքն, իւր. որ հոլովւում է այսպէս։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ինքն | Ինքեանք կամ իւրեանք |
| Ս. | ինքեան կամ իւր կամ իւրեան | ինքեանց » իւրեանց |
| Տ. | ինքեան կամ իւր կամ իւրեան | ինքեանց » իւրեանց |
| Հ. | զինքն | զինքեանս » զիւրեանս |
| Բ. | յինքենէ կամ յիւրմէ | յինքեանց » յիւրեանց |
| Գ. | ինքեամբ կամ իւրև կամ իւրեաւ կամ իւրեամբ | ինքեամբք » իւրեամբք |

### 2. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ո՞րք են ստացական դերանունները։

Պ. Ստացական դերանուններն են, իմ, քո, մեր, ձեր, իւր։ (Սրանց հոլովման կերպը տես Դաս Ժ. 3. ստացական ածական)։



### 3. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ո՞րք են ցուցական դերանունները։

Պ. Ցուցական դերանուններն են, այս, այդ, այն. (սրանց ևս հոլովման կերպը տես դաս Ժ. 4. ցուցական ածական)։

### 4. ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է յարաբերական դերանուն։

Պ. Յարաբերական դերանուն է որ կամ ո։ (սրա հոլովման կերպը տես Դաս Ժ. 6. հարցական ածական)։

Հ. Ստացական դերանուններ իմ, քո, մեր, ձեր, իւր. և ցուցական դերանունք այս, այդ, այն դերանո՞ւն են թէ ածական։

Պ. Ստացական և Ցուցական թէ ածական և թէ գոյական են։ Ածական են, երբ մի գոյականի հետ են. իսկ երբ առանց գոյականի միայնակ են գործածւում, դերանուն են։ Զոր օրինակ, երբ ասեմ, Տուն իմ, իմ տունս. իմ՝ ածական է. երբ ասեմ, իմ է տունս, Այս տունն իմս է, կամ Տո՛ւր ինձ զիմս, իմս ինձ տո՛ւր, իմ՝ դերանուն է։ Նոյնպէս, երբ ասեմ, Տունս այս, այս տունը. այս՝ ածական է. երբ ասեմ, այս է մատեան քո, այս է քո գիրքդ. այս՝ դերանուն է։

Հ. Ուրիշ ի՞նչ գիտելիք կայ ստացական դերանուանց վերայ։

Պ. Ստացական դերանունները իմ, քո, մեր, ձեր, իւր. ինչպէս նաև՝ նորա, նոցա, իւրեանց, երբ տէր բացի են, յոգնակի ի մէջ ք գիրը առնում են, և միշտ ն յօդով գործածւում են. բայց երբ ստորոգելի են, այս երկու գրերը չեն առնում. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Իմը լաւ է, քոնը, նրանը վատ է. | Բարւոք է իմն, քոյն կամ քոյդ կամ նորայն յոյժ. |

Մերոնք, ձերոնք հնազանդ են, նրանցը անհնազանդ. Հնազանդ են մերքն, ձերքն, նոցայքն՝ ստահակ

Այս տղայք իմս, քումդ, Իմ, քո, մեր, ձեր, նորա են մերը, ձերը, նրան են. մանկունքս

Այդ գիրքը նրանցն է. Նոցա է մատեանդ

17. Հրահանգ

ԷԱԿԱՆ ԵՒ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՔ

Ես քո բարեկամդ եմ. Դուն իմ ծառաս ես. Այն իմ եղբայրս է. Մենք ձեր ընկերներն ենք. Դուք մեր օգնականն էք. Նրանք իմ տղաքս են. Այս երկիրը ձերն է. Այդ գետը մերն է. Իմ որդիներս սրանք են. Իմ որդիս գեղեցիկ է, քոնը տգեղ է. Ձեր խօսքերն արդար են, նրանց անիրաւ են. Դրանք ովքե՞ր են. Սրանք իմ աղջիկներս են. Այս դպրոցին աշակերտներն սրանք են. Իմ անունս այս է. Նրա խօսքերը սրանք են. Ձեր որդւոյն վարպետըն ես եմ. Այս եկեղեցւոյն շինողն այս է. Դու մի մարգարէ ես. Դա մեղաւոր է. Մենք արդար ենք. Այս գեղեցիկ ամարանոցն իմս է. Այս տան բոլոր կարասին նրան է. Այդ տղան քոնն է. Նա իմ եղբօրորդիս է. Դուք մեր սիրելիներն էք. Քո տղաքդ անհնազանդ են, իմոնք խօսք մտիկ անող են. Դա ճերմակ է, իմը սեւ էր։

| | |
|---|---|
| Նրանք, նոքա | Վարպետ, վարդապետ |
| Սրանք, սոքա | Մի, ոմն |
| Քոնը, քոյդ | Անհնազանդ, խեռ |
| Նրանց, նոցայն | Խօսք մտիկ անող, հլու |
| Դրանք, դոքա | Ճերմակ, սպիտակ |
| Սրանք, սոքա, այսոքիկ | Սեւ, սեաւ |



ԼՈՒԾՈՒՄՆ

Ես քո բարեկամդ եմ. Բարեկամ քո եմ ես. Եմ, էակ. բայ. սահմ. ներկ. եզ. ա. դէմք.—Եմ, ո՞վ,—ես, ես, էակ. դեր. ա. դէմք. տէր բայի եմ ին.—Ես եմ, ի՞նչ.—Քո բարեկամդ, բարեկամ քո. բարեկամ, գոյ. ան. եզ. ուղղ. ստորոգելի ես ին. քո, ստաց. ած. բարեկամին։

Դրանք ովքե՞ր են. Ո՞վ են դոքա. Են, էակ. բայ սահմ. ներկ. յք. գ. դէմք. Են, ովքե՞ր.—դրանք, դոքա. դոքա՝ էակ. դեր. յք. գ. դէմք, տէր բայի են ին. Ո՞վ, հարցական անուն ստորոգելի դոքա ին։

Այս գեղեցիկ ամարանոցն իմս է. Իմ է ամարանոցս գեղեցիկ. Է, էակ. բայ սահմ. ներկ եզ. գ. դէմք. ո՞վ է.—Այս գեղեցիկ ամարանոցը, ամարանոցս գեղեցիկ. ամարանոց՝ տէր բայի է ին. ս ցուցական ած. այս ի տեղ. գեղեցիկ որակական ած. ամարանոց ին։ Այս գեղեցիկ ամարանոցն ո՞րն է. իմս, իմ է. իմ ստացական դեր. ստորոգելի ամարանոցին։

ԴԱՍ ԺԳ.

ԱԾԱԿԱՆ ԲԱՅ, ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

Հ. Քանի՞ տեսակ են ածական բայերն, այսինքն՝ բացի եմ էական բայից ուրիշ բայեր (տես Դաս Գ.)։

Պ. Ածական բայերն երկու տեսակ են, Ներգործական և Չէզոք։

Հ. Ո՞ր բայերը ներգործական են։

Պ. Ներգործական են այն բայերը որ հայցական հոլով են ուզում ամբողջ իմաստ տալու համար. զոր օրինակ երբ ասեմ սիրեմ եմ, ուսեմ եմ, գրեմ եմ. ամբողջ իմաստ չեմ յայտնել. քանզի չեմ յայտ-

նել թէ՝ զո՞վ սիրում եմ, ի՞նչ բան ուտում եմ, կամ գրում եմ. բայց երբ ասեմ՝ սիրում եմ բարեկամիս. հացը ուտում եմ, գրում եմ նամակը. բարեկամիս, հացը, նամակը բառերն ամբողջացնում են սիրում եմ, ուտում եմ, գրում եմ բայերի իմաստը:

Ամեն բայ որ կարող է այսպէս հարցական հոլով ունենալ՝ ներգործական բայ է: Ներգործական բայերի այս հայցականը կոչւում է սեռի խնդիր:

Հ. Ո՞ր բայերը չէզոք են:

Պ. Չէզոք են այն բայերն որ չեն կարող ունենալ սեռի խնդիր, կամ յայտնում են ամբողջ իմաստ առանց սեռի խնդրոյ, ինչպէս՝ քնում եմ, ման եմ գալիս, նստում եմ, մեռնում եմ: Ուստի գիտենալու համար թէ մի բայը ներգործակա՞ն է թէ չէզոք, անելու է զո՞վ կամ ի՞նչ բան հարցումը. եթէ յարմարւում է բայի իմաստին, այն բայը ներգործական է. ապա թէ ոչ՝ չէզոք է: Զոր օրինակ կարող ենք ասել. սիրում եմ.—զո՞վ կամ ի՞նչ. ուտում եմ.—ի՞նչ. գրում եմ—ի՞նչ. ծեծում եմ—զո՞վ. պատմում եմ—ի՞նչ. ապա՝ սիրում եմ, ուտում եմ, գրում եմ, ծեծում եմ, պատմում եմ, ներգործական են: Բայց չենք կարող ասել. քնում եմ—զո՞վ կամ ի՞նչ. նստում եմ—զո՞վ կամ ի՞նչ, դառնում եմ—զո՞վ կամ ինչ. ման եմ գալիս—զո՞վ կամ ի՞նչ. ուրեմն քնում եմ, նստում եմ, դառնում եմ, ման եմ գալիս, չէզոք են:

Հ. Հայերէնում բայերը քանի՞ կերպ վերջաւորութիւն ունեն:

Պ. Հայերէնում բայերը չորս կերպ վերջաւորութիւն ունեն. Եմ, սիրեմ. իմ, խօսիմ. ամ, աղամ. ում, թողում: Այս չորս կերպ վերջաւորութեան Չորս լծորդութիւն է ասւում. Սիրեմ՝ առաջին լծորդութեան բայ է. Խօսիմ՝ երկրորդ լծորդութեան. Աղամ՝ երրորդ. Թողում՝ չորրորդ:

---



## ԴԱՍ ԺԴ.

### Ա. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՑՏՐ. ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում առաջին լծորդութեան բայերը:

Պ. Առաջին լծորդութեան բայերից ոմանք եմ են վերջաւորւում. ինչպէս՝ սիրեմ. ոմանք ևս անեմ վերջաւորւում են, ինչպէս՝ հատանեմ: Սրանց խոնարհման կերպն այս է:

Սահմանական եղանակ ներկայ.

| | |
|---|---|
| Սիր-եմ, սիրում եմ. | Հատ-անեմ, կտրում եմ. |
| սիր-ես | հատ-անես |
| սիր-է | հատ-անէ |
| սիր-եմք | հատ-անեմք |
| սիր-էք | հատ-անէք |
| սիր-են | հատ-անեն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Սիր-էի, սիրում էի. | Հատ-անէի, կտրում էի. |
| սիր-էիր | հատ-անէիր |
| սիր-էր | հատ-անէր |
| սիր-էաք | հատ-անէաք |
| սիր-էիք | հատ-անէիք |
| սիր-էին | հատ-անէին |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Սիր-եցի, սիրեցի. | Հատ-ի, կտրեցի. |
| սիր-եցիր | հատ-եր |
| սիր-եաց | հատ, ե-հատ |
| սիր-եցաք | հատ-աք |
| սիր-եցէք | հատ-էք |
| սիր-եցին | հատ-ին |

Ապառնի

| | |
|---|---|
| Սիր-եցից, պէտք է սիրեմ. | Հատ-ից, պէտք է կտրեմ. |
| սիր-եսցես | հատ-ցես |
| սիր-եսցէ | հատ-ցէ |
| սիր-եսցուք | հատ-ցուք |
| սիր-եսջիք | հատ-ջիք |
| սիր-եսցեն | հատ-ցեն |

Հրամայական

| | |
|---|---|
| Սիր-եա, սիրէ. | Հա՛տ, կտրէ. |
| մի՛ սիր-եր | մի՛ հատ-աներ |
| սիր-եցէք | հատ-էք |
| մի՛ սիր-էք | մի՛ հատ-անէք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Սիր-իցեմ, սիրեմ. | Հատ-անիցեմ, կտրեմ. |
| սիր-իցես | հատ-անիցես |
| սիր-իցէ | հատ-անիցէ |
| սիր-իցեմք | հատ-անիցեմք |
| սիր-իցէք | հատ-անիցէք |
| սիր-իցեն | հատ-անիցեն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Սի-րել, սիրել. | Հատ-անել, կտրել. |

(*) Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Սիր-եալ, սիրած. | Հատ-եալ, կտրած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Սիր-ելոյ, սիրելու. | Հատ-անելոյ, կտրելու. |

---

(*) Բայերին արմատը ող կամ օղ մասնիկով համարվում է ընդունելութիւն ներկայ. ինչպէս՝ սիրող, գործող, ստեղծող. որի վերայ ուրիշ տեղ։



Հ. Գիտենալու հարկաւոր ի՞նչ բան կայ առաջին լծորդութեան բայերի վերայ։

Պ. Եմ վերջաւորած բայերից ածեմ, բերեմ, և հանեմ՝ հատանեմի պէս խոնարհվում են, ուստի պէտք է ասել ած-ի, բեր-ի, հան-ի. ած-ից, բեր-ից, հանից. հրմ. ա՛ծ, բե՛ր, հա՛ն. փոխանակ ասելու ած-եցի, բեր-եցի. ած-եցից, բեր-եցից. ած-եա՛, բեր-եա՛, ևլն։ Ընդհակառակն մի քանի անեմ վերջաւորած բայեր, ինչպէս՝ դարմանեմ, սերմանեմ, ժամանեմ, խոնարհւում են սիրեմի պէս, դարման-եցի, սերման-եցի, ևլն. քանզի սրանց արմատներն են դարման, սերման, ժաման։ Հարկանեմ բայը կատարեալին, ապառնոյն, հրամայականին և անցեալոյն մէջ կորցնում է կ գիրը և ասւում է՝ Հարի, հարից, հար, հարեալ. և ոչ հարկի, հարկից ևլն։

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Հ. Շարադրութեան մէջ ի՞նչ կարգով շարադրուելու են տէր բային, բայը և սեռի խնդիրը։

Պ. Սովորաբար նախ տէր բային դրւում է, ապա բայը, և ապա՝ սեռի խնդիրը։

Հ. Մի՞շտ դրուելո՞ւ է տէր բային։

Պ. Հայերէն թէ գրաբար և թէ աշխարհաբար դերանուն տէր բայերը ես, դու, նա, մեք, դուք. նոքա սովորաբար յայտնի չեն դրւում, այլ լռելեայն կամ ըմբռնելեամբ են իմացւում. ուստի ասում ենք բարեկամիս սիրում եմ, նրանց կերակրեցին, ինձ խաբեցիր, փոխանակ ասելու՝ Ես սիրում եմ բարեկամիս, Նրանք՝ նրանց կերակրեցին, Դու խաբեցիր ինձ։ Այսպէս իմացիր նաև գրաբարը։

| | |
|---|---|
| (*)Բժշկեմ, բժշկում եմ | Բրեմ, երկիրը փորել |

---

(*) Թո՛ղ աշակերտները հետևեալ բայերի մէկը կամ մի քանի հատը գրով խոնարհեն։

| | |
|---|---|
| Արտասուեմ, արտասուեմ | Պեղեմ, փորելով հողէն |
| Կեղեքեմ, հարստահարեմ, կո- | գտնել հանել |
| ղոպտել եմ | Մաղեմ, մաղել եմ |

18. Հրաման

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ ՍԵՌԻ ԽՆԴՐՈՎ

Սիրում եմ բարեկամներիս. Հայրը խրատում էր իւր որդուն. Ընկերներս ինձ ատում են. Մայրն իւր աղջկան խնամում է. Մեր ծառաներն ուղարկեցինք. Եղբայրդ քեզ կոչում է. Աղաչում եմ ձեզ (Հրց.). Հայրս գրեց այս թուղթը (նամակ). Սենեկին դուռը փակեց. Մեր ընկերներին սիրենք. Իւր բարեկամներին հրաւիրեց. Նրանց կերակրեցին. Իմ օրէնքներս մերժեցին. Ինձ խաբեցիր. Պահիր նրանց. Պահպանիր մեզ. Ծառին պտուղները քաղեցինք (պոկել). Իւր տունը շինեց. Աշտարակը կործանեցին. Իրանց ուղկանները կազմեցին (պատրաստեցին, նորոգեցին). Քուրձը դատարկեցինք. Նրանց արձակեմ (ճանապարհել, թողուլ որ երթայ). Վարժապետը պատժում է իրան սոտահակ աշակերտին. Աստուած մեզ պէտք է փրկէ. Իրանց գերիներն ազատ արին. Ոստիկանները գողին փնտռում են. Ձին ծախեցի. Գիրքը գնեցինք. Մեր հայրն այս պարտէզը գնեց. Իւր բոլոր բարեկամներին կոչեց. Կինն իւր դրացիներին կոչում է. Հովիւները ոչխարներին արածացնում են. Ես նրան մատնելու եմ. Քահանայապետն իւր հանդերձը պատառեց. Այս կինը սիրում է իւր տղերքանց. Իմ եղբայրներիս և քոյրերիս սիրում եմ. Քո ծաղիկներդ ուռգեցիր. Իմոնքըն ու քոնոնք ուռգեցի. Քոյրս իրաններն ուռգեց. Մշակներն երկիրը գործում են. Իւր գործը կատարեց. Ցորենը հաւաքենք. Ցարդն այրեցին. Ամբոխը (բազմութիւնը) ցրուեցին. Քաղաքը նուաճեց (առաւ,



տիրեց). Իւր արցունքները սրբեց. Շորերդ մի աղտոտիլ. Փողոցը հարթեցին. Իւր տունը զարդարեց. Նրա ձեռքերն ու ոտքերը կապեցին. Մեր մեռելներին թաղենք. Նրա ծունկերը ջարդեցին. Այծի ձագն եփեց. Տանը դրան տալիս էր. Տղան մկրտեցին. Իւր բոլոր ունեցածը վատնեց. Աստուած Աբրահամին օրհնեց։

| | |
|---|---|
| Աղջիկ, դուստր | Իմոնք, իմինս հյց. զիմինս |
| Ծառայ, սպասաւոր | Քոմոնք, քուկինդ հյց. զքուկինդ |
| Ուղարկեմ, առաքեմ, ղրկեմ | Իրանները, իրենը հյց. զիրենը |
| Կոչեմ, կոչեմ | Ցորեն, ցորեան |
| Փակեմ, փակեմ | Շոր, չորչ |
| Իրանց, իրենց | Աղտոտեմ, աղտեղեմ |
| Դատարկեմ, ըափուր եմ | Մեռել, մեռեալ |
| Ազատ անեմ, արձակեմ | Ջարդեմ, խորտակեմ |
| Արցունք, արտասուք | Տամ (դրան) բաղխեմ |
| Փնտռեմ, խնդրեմ | Հարթեմ, յարդարեմ |
| Ծախեմ, վաճառեմ | Ծունկեր, ծունկք |
| Ոչխար, խաշն յք. խաշինք | Այծի ձագ, ուլ |
| Պատառեմ, պատառեմ | Բոլոր, ամենայն |
| Տղայ, մանուկ յք. մանկունք | Ունեցածը, ինչք |

ԼՈՒԾՈՒՄՆ

Սիրեմ ըմբռնելով եմ. Սիրեմ՝ բայ ներգ. սահմ. ներկ. եզ. ա. դէմ.—Ո՞վ է սիրում.—Ես էակ. դեր. տէր բայի սիրեմ բային, զօրութեամբ է իմացւում։ Սիրեմ՝ զո՞վ.—ըմբռնելով եմ, իմ բարեկամներիս, գոյ. անուն եզ. հյց. սեռի խնդիր սիրեմ ին. եմ ստացական ածական բառելով ին։

(*) Հարկանեմ, խփեմ, զարկ Կլանեմ, կուլ տամ

(*) Թո՛ղ աշակերտները հետեւեալ բայերից մի քանիսը խոնարհեն հատուածին մէջ

| | |
|---|---|
| Գտանեմ, գտնում եմ | Հանեմ, հանում եմ |
| Մուծանեմ, մտցնում եմ | Ածեմ, բերում եմ |
| Արկանեմ, գցում եմ, գցել վրան | Անիծանեմ, անիծում եմ |

19. Հրահանգ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ ՍԵՌԻ ԽՆԴՐՈՎ

Մարդը տեսար. Տեսայ նրան. Գեղեցիկ մարգարիտը գտանք. Իրան սուրը հանեց. Ձեր սպասաւորներն և աղախինները տեսանք. Մեր ճանապարհորդները հասան. Սպասաւորը խօսքը յայտնեց. Հայրը որդուն անիծեց. Ձեր տղերքը բերէք. Շորերդ հագիր. Կորսուած ոչխարս գտայ. Սուրդ կապիր. Նրանց կուլ տանք. Մեզ մտցրեց. Մեր օրերն անց են կենում. Մակոյկին չուանը կտրեցին Նրա կապերը քանդեցին. Իւր իմաստութիւնը ցոյց տուեց. Անձրեւներն իջան. Արեգակն ելնում է. Լուսինն և աստղերը մտնում են. Քո եղբայրներիդ գտայ. Նրանց տեսնեմ. Սպասաւորները նրան տուին (խփեցին). Այրի կնոջ աղջկանը սպաննեց. Ճրագը վառեցին (բռնկցնել). Նրանց տանք (խփենք). Դուրս ելնեն. Ներս մտնենք. Դա կորիր. Այդ աւանակը մի քանդել. Երեսդ ինձ նշանց տուր. Սպաննեցէք Նրանց։

| | |
|---|---|
| Տեսնեմ, տեսանեմ | Կապեմ (փաթաթել գոտի և այլն). ածեմ |
| Գտանեմ, գտանեմ | Կուլ տամ, կլանեմ |
| Ազախին, աղախին յք. աղախնայք | Մացնեմ, մուծանեմ |
| Հասնեմ, հասանեմ | Անցկենամ, անցանեմ |
| Անիծեմ, անիծանեմ | Զուան, պարան |
| Բերեմ, (մի շնչաւոր որ ոտքով է գալիս), ածեմ | Կտրեմ, հատանեմ |
| Հագնիմ, արկանեմ | Կապ, կապանք |
| Կորսուած, կորուսեալ | Քանդեմ, լուծանեմ |
| | Ցոյց տամ, ցուցանեմ |



| | |
|---|---|
| Իջնեմ, իջանեմ | Սպաննեմ, սպանանեմ |
| Ելնեմ, ելանեմ | Վառեմ, լուցանեմ |
| Մտնեմ, մտանեմ | Դուրս, արտաքս |
| Խփեմ, հարկանեմ կտր. հարի | Ներս, ի ներքս |
| | Աւանակ, յաւանակ |

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Տեսե՞ր ցոյցն. մարդը տեսար. Տեսե՛ր՝ բայ ներգործ. կտր. եզ. բ. դէմ. Տեսանես ին։ Ո՞վ է տեսնողը. դու, դու էակ. դեր. եզ. ուղղ. բ. դէմ. տէր բայի Տեսեր ին, զօրութեամբ է իմացւում։ Դու տեսեր՝ զմվ. ցոյցն, մարդին. ցոյցն՝ գոյական եզ. հայց. սեռի խնդիր Տեսեր ին։

---

ԴԱՍ ԺԵ.

Բ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ. ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում Բ. լծորդութեան բայերը։

Պ. Բ. լծորդութեան բայերից ևս ոմանք իմ են վերջաւորւում, ինչպէս՝ խօս-իմ, և ոմանք անիմ, ինչպէս՝ ուս-անիմ։ Սրանց խոնարհման ձևը սա է։

Սահմանական եղանակ ներկայ.

| | |
|---|---|
| Խօս-իմ, խօսում եմ | Ուս-անիմ, սովորում եմ |
| խօս-իս | ուս-անիս, սովորում ես |
| խօս-ի | ուս-անի |
| խօս-իմք | ուս-անիմք |
| խօս-իք | ուս-անիք |
| խօս-ին | ուս-անին |

Անկատար անցեալ.

| | |
|---|---|
| Խօս-էի, խօսում էի | Ուս-անէի, սովորում էի |
| խօս-էիր | ուս-անէիր |
| խօս-էր | ուս-անէր |
| խօս-էաք | ուս-անէաք |
| խօս-էիք | ուս-անէիք |
| խօս-էին | ուս-անէին |

Կատարեալ անցեալ.

| | |
|---|---|
| Խօս-եցայ, խօսեցայ | Ուս-այ, սովորեցի |
| խօս-եցար | ուս-ար |
| խօս-եցաւ | ուս-աւ |
| խօս-եցաք | ուս-աք |
| խօս-եցայք | ուս-այք |
| խօս-եցան | ուս-ան |

Ապառնի.

| | |
|---|---|
| Խօս-եցայց, պէտք է խօսիմ | Ուս-այց, պէտք է սովորիմ |
| խօս-եսցիս | ուս-ցիս, պէտք է սովորես |
| խօս-եսցի | ուս-ցի |
| խօս-եսցուք | ուս-ցուք |
| խօս-եսջիք | ուս-ջիք |
| խօս-եսցին | ուս-ցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Խօս-եա՛ց, խօսի՛ր | Ուս-ի՛ր, սովորի՛ր |
| մի՛ խօս-իր | մի՛ ուս-անիր |
| խօս-եցարո՛ւք | ուս-արո՛ւք |
| մի՛ խօս-իք | մի՛ ուս-անիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Խօս-իցիմ, խօսիմ ևլն. | Ուս-անիցիմ, սովորիմ ևլն. |
| խօս-իցիս | ուս-անիցիս |
| խօս-իցի | ուս-անիցի |
| խօս-իցիմք | ուս-անիցիմք |



| | |
|---|---|
| խօս-իցիք | ուս-անիցիք |
| խօս-իցին | ուս-անիցին |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Խօս-ել, խօսել | Ուս-անել, սովորել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Խօս-եալ, խօսած | Ուս-եալ, ուսած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Խօս-ելոց, խօսելու | Ուս-անելոց, սովորելու |

Հ. Գիտենալու հարկաւոր ի՞նչ բան կայ Բ. լըծորդութեան բայերի վերայ։

Պ. 1. Իմ վերջաւորած բայերից նստիմ, ուսանիմին պէս, կլինի նստ-այ, նստայց, նիստ, ոչ թէ խօսիմին պէս՝ նստ-եցայ, նստ-եցայց, ևլն։

2. Իմ վերջացած բայերից մի քանիսին անցեալը կլինի նաև եցեալ, ինչպէս՝ խօս-իմ, խօսեց-եալ. կոչ-իմ կոչ-եցեալ։

| | |
|---|---|
| (*) Շրջիմ, ման եմ գալիս | Անկանիմ, ընկնում եմ |
| Թուիմ, երևում եմ | Տառապիմ, նեղւում եմ |
| Երևիմ, երևում եմ | Սնանիմ, սնւում եմ |
| Պարծիմ, պարծենում եմ | Զերծանիմ, ազատւում եմ |

Անորոշ հայցական

Հ. Ի՞նչ է նշանակում անորոշ և որոշեալ։

Պ. Երբ մի բան ընդհանուր մտքով է առնւում, կասուի անորոշ. զոր օրինակ, երբ ասեմ մարդն այստեղ է, կամ մարդիկը այստեղ են, մարդն կամ մարդիկը բառերն որոշեալ են, նշանակում են այս ինչ մարդն կամ մարդիկը. բայց երբ ասեմ, ներսում մարդիկ կան, այստեղ մարդիկ բառն առնուել է անորոշ մտքով, և նշանակում է ոչ այս ինչ մարդիկ այլ որ և իցէ մարդիկ։

(*) Աշակերտք այս բայերից մի քանիսին դրով թո՛ղ խոնարհեն։

Հ. Ի՞նչպէս են տարբերւում որոշեալ և անորոշ անունները։

Պ. Անորոշ անուան վերայ յօդ չի դրւում, այսինքն՝ աշխարհաբարում՝ ը, և գրաբարում ն գիրը. իսկ որոշեալ անունների վերայ դրւում է յօդ. զոր օրինակ հացը, հացն, որոշեալ են. հաց անորոշ է։

Հ. Ի՞նչ է անորոշ հայցական։

Պ. Անորոշ անուան հայցականը կոչւում է անորոշ հայցական։ Անորոշ հայցականը գրաբարում զ նախդիրը չի առնում, իսկ որոշեալ հայցական միշտ զ նախդիրն առնում է։ Սա խօսքին մէջ, տո՛ւր ինձ զհացն. հացն ինձ տո՛ւր, զհացն որոշեալ հայցական է, քանզի ունի ն յօդը և զ նախդիրը։ Իսկ սա խօսքին մէջ, տո՛ւր ինձ հաց. ինչ հաց տուր. հաց անորոշ հայցական է, ուստի և չունի ոչ ն յօդը ոչ զ նախդիրը։

## ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Որոշեալ

| | |
|---|---|
| Տո՛ւր ինձ զհացն | Հացն ինձ տո՛ւր |
| Ետ զմանուկն ցհայր իւր | Տղան հօրը տուեց |
| Սպանին զարսն | (Այն)մարդկանցը սպաննեցին |

Անորոշ

| | |
|---|---|
| Տո՛ւք դոցա հաց | Հաց տուէ՛ք դրանց |
| Կացոյց մանուկ մի ի մէջ նոցա | Նրանց մէջտեղում մի տղայ կանգնացրեց |
| Ընտրեա՛ քեզ արս հաւատարիմս | Քեզ հաւատարիմ մարդիկ ընտրէ՛ր |

## ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Ի՞նչ է բնութեան խնդիրը։

Պ. Խօսքի մէջ բացի ուղղական հոլովից՝ որ է տէր բայի և հայցական հոլովից՝ որ է ուղիղ խնդիր, ուրիշ հոլովներ, զոր օրինակ՝ սեռականը, բացառականը, գործիականը կոչւում են բնութեան խնդիր։



Հ. Ի՞նչ հարցման պատասխան է տրական հոլովը։

Պ. Տրական հոլովը պատասխան է ո՞ւմ հարցման։ Զոր օրինակ՝ սա խօսքին մէջ, մարդուն տուի. մարդուն տրական է, քանզի պատասխանն է ո՞ւմ հարցման։ Ո՞ւմ տուի.—մարդուն (*)։

ԱՂԱՍԻ ԱԶԻԶԵԱՆ

## ՕՐԻՆԱԿ

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Մարդուն տուի | Ետու առնն |
| Քո եղբօրդ ասացի | Ասացի եղբօր քում |
| Նրան ներեցի իրան յանցանքները | Թողի նմա զյանցանս իւր |
| Ինձ պարգևներ տուեց | Ետ ինձ զպարգևս |
| Իւր զանձերը ցոյց տուեց նրանց | Եցոյց նոցա զգանձս իւր |
| Գաղտնիքս քեզ յայտնեցի | Յայտնեցի քեզ զգաղտնիս իմ |

20. Հրահանգ.

Շատ փող շահեցաւ. Ուզում եմ գնալ. Մարդիկ խօսում են. Զորքստանիք ման են գալիս. Մարդը գայթակղեցաւ. Ձեր եղբայրները մեկնեցան (ճանապարհւեցին). Շատ բան խօսեցան. Ժողովուրդը պիտի գայթակղի. Խօսէ, ինչո՞ւ լռում ես. Աստուծոյ հրեշտակն երևեցաւ նրան (տեսնուեցաւ). Քո հայրդ աշխատում է և շատ է շահում. Քո ծառաներդ նեղացան. Ինձ լաւ երևեցաւ. Եթէ նրանց մայրը մեկնի. Աղբիւրը ցամաքեցաւ. Իւր որդուն ծնաւ. Մեզ ողորմեցէք. Աստուած նրան ողորմեցաւ. Երկրիս հիմերը շարժեցան. Արեգակը պիտի խաւարի. Ճրագը մարեցաւ. Այս ամենը

(*) Հայերէն սեռական և տրական հոլովները ընդհանրապէս ունին մի և նոյն վերջաւորութիւնը, որոնք խօսքին իմաստից միայն որոշւում են։

խորհեցայ. Ձեր վարժապետներին հնազանդեցէք. Գրագրութեան (գիր գրելու) արուեստը սովորեցայ. Լեզուներ երևեցան (տեսնուեցան). Իւր հանդերձները հագաւ. Քո հայրդ մեռաւ. Տղաքը սկսան պոռալ (բղաւել). Բէլն ընկաւ. Մեր լապտերները մարում են:

| | |
|---|---|
| Շատ, բազում | Մարիմ, շիջանիմ |
| Ստակ, արծաթ | Այս ամենը, այս ամենայն |
| Ուզեմ, կամիմ | Վարժապետ, վարդապետ |
| Ման գամ, շրջիմ | Գրագրութիւն, գրչութիւն |
| Շատ բան, բազում ինչ | Սովորիմ, ուսանիմ |
| Ինչու, ընդէ՞ր | Երևիմ (տեսնուիմ), երևիմ |
| Նեղանում, վշտանամ | Հագնիմ, ագանիմ |
| Լաւ, բարւոք | Սկսիմ, սկսանիմ |
| Երևիմ, երևիմ (իբր տեսնուիլ), թուիմ, (իբր կարծուիլ) | Պոռամ (բղաւեմ), աղաղակեմ |
| | Տղայ, մանուկ յք. մանկունք մանկտի |
| Ցամաքիմ, ցամաքիմ | Ընկնիմ, անկանիմ |

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Շահեցաւ արծաթ բազում. Շատ փող շահեցաւ. շահեցաւ, բայ ներ. կտր. եզ. գ. բ. լծոր. Ո՞վ շահեցաւ.—Նա. նա՝ էական դեր. գ. դէմ. եզ. ուղղ. տէր բայի շահեցաւին. գործութեամբ է իմացւում: Նա շահեցաւ, ի՞նչ բան.—արծաթ, փող, արծաթ՝ գոյ. եզ. անորոշ հայց. սեռի խնդիր շահեցաւին: Բազում, շատ, ած. արծաթին:

Ողորմեցարո՛ւք մեզ. Մեզ ողորմեցէք. ողորմեցարո՛ւք, չէզ. բայ հրմ. յք. բ. դէմ. ողորմիմին: Ո՞վ պէտք է ողորմի.—Դուք. դուք, էակ. դեր. յք. բ. դէմ. տէր բայի ողորմեցարուքին. գործութեամբ է իմացւում: Ողորմեցարուք դուք.—որի՞.—Մեզ. էակ. դեր. յք. ա. դէմ. տր. հոլով. բն. խնդ. ողորմեցարուքին:



## ԴԱՍ ԺԶ.

### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ի՞նչ է նախադրութիւն:

Պ. Նախադրութիւն կոչւում են այն բառերը՝ որ ծառայում են ցոյց տալու համար գործողութեան պարագաները:

Հ. Որո՞նք են գործողութեան գլխաւոր պարագաները:

Պ. Գործողութեան գլխաւոր պարագայներն են տեղը և ժամանակը: Տեղւոյ պարագայն պատասխան է ո՞ւր (ո՞ւրտեղ, ո՞րտեղ). ժամանակի պարագայն՝ ե՞րբ (ե՞նչ ժամանակ) հարցման: Զոր օրինակ. Յիսուս ծնաւ.—ո՞ւր —Բեթղեհէմում.—Ե՞րբ.—Օգոստոս կայսեր ժամանակում: Բեթղեհեմ՝ ծնանելու տեղը ցոյց է տալիս, Օգոստոս կայսեր ժամանակում՝ ցոյց է տալիս ծնանելուն ժամանակը:

Հ. Հայերէն գրաբար տեղւոյ և ժամանակի պարագաներն ի՞նչպէս են բացատրւում:

Պ. Այս պարագայները բացատրւում են՝ տեղ կամ ժամանակ ցոյց տուող անունից առաջ ի նախդիրը դընելով:

Հ. Տեղ ցոյց տուող անունն ի նախդրին հետ ի՞նչ հոլով դրուելու է:

Պ. Եթէ բայը դադարում է ցոյց տալիս, տեղ ցոյց տուող անունը դրւում է ի նախդրին հետ եզակին մէջ տրական(*), յոգնակին մէջ՝ առանց զի հայցական. զոր օրինակ՝ ասում ենք եզակի. Բընակի ի քաղաքի. բնակի, ո՞ւր,—ի քաղաքի, քաղաքում.

---

(*) Տրական հոլովն ի նախդրով կոչւում է ներգոյական, իսկ ի նախդրով անորոշ հայցականը՝ կոչւում է նախդրիւ տըրական:

Նստի ի տան. Նստի ո՞ւր,—ի տան, տանը: Իսկ յոգնակիին մէջ ասում ենք, բնակի ի գեղջ. բնակի. ո՞ւր.—ի գեղջ, քաղաքներում. Նստի ի տունս. Նըստի, ո՞ւր.—ի տունս, տներում: Իսկ եթէ բայը շարժում է ցոյց տալիս, տեղ ցոյց տուող բառը գրւում է ի նախդրին հետ միշտ առանց զ ի հայցական. զոր օրինակ՝ Գնաց ի տուն իւր. գնաց. ո՞ւր—ի տուն իւր, իրան տանը. Գնացին ի տունս իւրեանց. իրանց տներումը: Նոյնպէս տեղւոյ յատուկ անունները ի նախդրին հետ գրւում են միշտ առանց զի հայցական. բայց թէ դադարում ցոյց տայ և թէ շարժում. զոր օրինակ՝ Բնակի ի Հռոմ, յԵրուսաղէմ, յԵգիպտոս. բնակի. ո՞ւր—Հռոմում, Երուսաղէմում ևլն. Չոգաւ ի Հռոմ, յԵրուսաղէմ, յԵգիպտոս. Գնաց. ո՞ւր.—Հռոմում, Երուսաղէմում ևլն: Գետ բառին պէս (տես Դաս Բ.) հոլովւող անուններ նոյնպէս գրւում են ի նախդրին հետ անորոշ հայցական, բայց թէ դադարում և թէ շարժում ցոյց տայ:

Հ. Ե՞րբ է գործածւում առ նախդիրը փոխանակ ի-ի:

Պ. Առ գործածւում է անձն ցոյց տուող բառերի հետ. ուստի ասում ենք. Գնաց առ հայր իւր, առ թագաւորն. գնաց. ո՞ւր. իւր հօրը, թագաւորին. ոչ թէ գնաց ի հայր իւր, ի թագաւորն:

Հ. Ժամանակ ցոյց տուող անունն ի՞նչ հոլով է գրւում ի նախդրին հետ:

Պ. Ժամանակ ցոյց տուող անունը գրւում է ի նախդրին հետ եզակի ի մէջ միշտ տրական, և յոգնակիին մէջ՝ հայցական, զոր օրինակ ասում ենք, ի նեղութեան, ի տօնի. ե՞րբ.—նեղութեան ժամանակ, տօնի ժամանակ; յք. ի նեղութիւնս, ի տօնս. ե՞րբ.—նեղութեանց ժամանակ, տօների ժամանակ:

21. Հրահանգ.

Նրանք բնակւում են քաղաքում, մենք գիւ-



ղում. Եղբայրներդ սարերը շրջում են իմոնք դաշտերը. Նրան դատաւորին բերին. Խորհում է գընալ Յունաստան. Ուզեց մեզ գալ. Եղբայրդ մտաւ պարտէզում. Բարեկամներիս ինձ ուղարկեց. Նրան դրաւ բանտում. Սպասաւորները նստում էին սրահում. Նստեցէք այդ քաղաքում. Երբ խօսքը վերջացրեց, լեռը ելաւ. Հանեց նրանց մի բարձր լեռ. Քո որդիքդ պատերազմում ընկան. Քո սենեակդ մտիր. Նրան եկեղեցում տեսայ. Նրանց ուղարկեց իւր այգում. Եգիպտոսում բնակեցաւ. Նրանց քեզ բերինք. Նրան նայեցաւ. Այս խօսքերը գրեցէք ձեր գրքերում. Ագարակումն էր նրա մեծ որդին. Նրա գըլուխը կտրեցին և թագաւորին բերին. Շատերը երուսաղէմ ելան. Իւր անկողինը մտաւ. Շատ գինի ունէր իւր մառանում. Նրա մահուան ժամանակը մեծ սուգ եղաւ. Իսահակի աչքերը կուրացան իւր ծերութեան ժամանակում. Ոչ մինը նրան մխիթարում էր տրտմութեան ժամանակը. Սողոմոնն իւր հօր թագաւորութեան աթոռը ելաւ. Մեզ իրանց տներում հրաւիրեցին. Ի՞նչպէս մտար այստեղ, պատմէ ինձ. Բազմութիւնը դիմում էր եկեղեցում. Տաճարումը տեսան նրան. Շատերը պիտի ուրախանան նրա ծննդեան ժամանակը. Բոլոր քաղաքը նրա մահուան ժամանակը սուգ արեց. Թռչունները թըռչում են օդի միջին. Մի հարուստի տանը հաւաքուած էինք. Մի օտարի չի տար. Եթէ մինը (մի մարդ) հակառակի. Մինը ուղարկեցէք այնտեղը. Մի ուրիշի տանը մի մտնիլ. Ի՞նչպիսի մէկն է այդ. Դուն մե՞ծ մէկն ես. Եթէ մինը կամենում է ինձ գալ:

| | |
|---|---|
| Իմոնք, ինքն | Ուզեմ, կամիմ |
| Բերեմ, ածեմ (մի կենդանի) | Ուղարկեմ, առաքեմ, յղեմ |
| բերեմ (անկենդան մի բան) | Դնեմ, արկանեմ |
| Յունաստան, Յոյնք | Երբ, երբ |

Վերջացնեմ, կատարեմ
Լեռ, լեառն
Ընկնիմ, անկանիմ
Նայիմ, հայիմ
Խօսք, բան
Գիրք, մատեան
Մեծ (որդի), երէց (որդի)
Մտնեմ անկողին, ելանեմ
Անկողին, մահիճ
Մահ, մահ, սեռ. մահու, տրա. մահուան
Աչքեր, աչք
Կուրանամ, կուրիմ (աչաց)
Ոչ մինը, ոչ ոք
Այստեղ, այսր (շարժում)
Ի՞նչպէս, զիա՞րդ
Ուրախանամ, խնդամ
Սուգ անեմ, սուգ առնում
Թռչիմ, ճախրեմ
Մէկը, ոք
Հարուստ, մեծատուն
Մէկը (մի մարդ) ոք
Մի ուրիշ, այլ ոք

## ԼՈՒԾՈՒՄՆ

Հ. Ամեն նախադասութեան մէջ խօսքի բոլոր մասերը միշտ ներգործութեամբ են դրւում, թէ՞ երբեմն խօսքին մի մասը կամ մի քանի մասերը լռելեայն են իմացւում:

Պ. Երբեմն նախադասութեան մէջ բայը կամ նրա խնդիրներից մինը լռելեայն իմացւում է, զոր օրինակ. եղբայր իմ մեծատուն է. քոյր՝ աղքատ. իմ եղբայրս հարուստ է. քոնը՝ աղքատ: Այս խօսքին վերջին մասում եղբայր և է լռելեայն են իմացւում, ուստի պէտք է այսպէս լինէր. Եղբայր իմ մեծատուն է. եղբայր քո աղքատ է. իմ եղբայրս հարուստ է, քո եղբայր աղքատ է. Նոքա բնակին ի քաղաքի, մեք՝ ի շէնս. Նրանք բնակւում են քաղաքում, մենք գիւղում: Այս խօսքին ևս վերջին մասում բնակիմք բայը լռելեայն է իմացւում, և պէտք է լինէր. Նոքա բնակւում են քաղաքում, մենք գիւղումն ենք բնակւում. Նոքա բնակին ի քաղաքի, մեք բնակիմք ի շէնս: Մի այս տեսակ նախադասութիւնը կոչւում է զեղչեալ նախադասութիւն:



Հ. Մի զեղչեալ նախադասութիւն լուծելու ժամանակ ի՞նչ պէտք է անել:

Պ. Մի զեղչեալ նախադասութիւն լուծելու ժամանակ, զեղչեալ կամ պակաս մասերը պէտք է ամբողջացնել, և այնպէս լուծել, զոր օրինակ. Նոքա բնակին ի քաղաքի, մեք ի շէնս. Բնակին բայ չէզոք. սհմ. ներկ. յք. գ. դէմք: Ո՞վ է բնակողը.—նոքա, Նրանք. նոքա էական դեր. յք. ուղղ. գ. դէմք. տէր բայի բնակին ին: Նոքա բնակին.—ո՞ւր.—ի քաղաքի, քաղաքում. ի քաղաքի, գոյ. ան. եզ. տր. ի նախդրիւ տրական (ներքոյական) բնութեան խնդիր, բնակին բային, տեղւոյ պարագան է ցոյց տալիս: Մեք ի շէնս. մենք գիւղում: Նախադասութիւն զեղչեալ, պէտք է լինի՝ Մեք բնակիմք ի շէնս. մենք գիւղումն ենք բնակւում. բնակիմք բայ չէզ. սհմ. ներկ. յք. ա. դէմք, զօրութեամբ է իմացւում. Ո՞վ են բնակողները.—մեք, մեք էակ. դեր. յք. ուղղ. ա. դէմ. տէր բայի բնակիմքին.—ո՞ւր.—ի շէնս, գիւղում. ի շէնս, գոյ. եզ. տր. ի նախդրիւ տրական (ներքոյական) բնութեան խնդիր բնակիմք ին, տեղւոյ պարագան է ցոյց տալիս:

## ԴԱՍ ԺԷ.

### Գ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ. ՄԱԿԲԱՅ

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում Գ. լծորդութեան բայերը:

Պ. Գ. լծորդութեան բայերից ոմանք ամ են վերջաւորւում, ինչպէս աղ-ամ, և ոմանք՝ անամ, ինչպէս գող-անամ: Սրանց խոնարհման ձևն այս է:

Սահմանական եղանակ ներկայ.

| | |
|---|---|
| Ա.ղ-ամ, աղում եմ | Գող-անամ, գողանում եմ |
| աղ-աս | գող-անաս |
| աղ-այ | գող-անայ |
| աղ-ամք | գող-անամք |
| աղ-այք | գող-անայք |
| աղ-ան | գող-անան |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ա.ղ-այի, աղում էի | Գող-անայի, գողանում էի |
| աղ-այիր | գող-անայիր |
| աղ-այր | գող-անայր |
| աղ-այաք | գող-անայաք |
| աղ-այիք | գող-անայիք |
| աղ-ային | գող-անային |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ա.ղ-ացի, աղացի | Գող-ացայ, գողացայ |
| աղ-ացեր | գող-ացար |
| աղ-աց | գող-ացաւ |
| աղ-ացաք | գող-ացաք |
| աղ-ացէք | գող-ացայք |
| աղ-ացին | գող-ացան |

Ապառնի

| | |
|---|---|
| Ա.ղ-ացից, պէտք է աղամ | Գող-ացայց, պէտք է գողանամ |
| աղ-ասցես | գող-ասցիս |
| աղ-ասցէ | գող-ասցէ |
| աղ-ասցուք | գող-ասցուք |
| աղ-ասջիք | գող-ասջիք |
| աղ-ասցեն | գող-ասցին |



Հրամայական

| | |
|---|---|
| Ա.ղ-ա՛, աղա՛ | Գող-ացի՛ր, գողացի՛ր |
| մի՛ աղ-ար | մի՛ գող-անար |
| աղ-ացէք | գող-ացարո՛ւք |
| մի՛ աղ-այք | մի՛ գողանայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Ա.ղ-այցեմ, աղամ | Գող-անայցեմ, գողանամ |
| աղ-այցես | գող-անայցես |
| աղ-այցէ | գող-անայցէ |
| աղ-այցեմք | գող-անայցեմք |
| աղ-այցէք | գող-անայցէք |
| աղ-այցեն | գող-անայցեն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Ա.ղ-ալ, աղալ | Գողանալ, գողանալ |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ա.ղ-ացեալ, աղացած | Գող-ացեալ, գողացած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ա.ղ-ալոց, աղալու | Գող-անալոց, գողանալու |

Հ. Գ. լծորդութեան բայերի վերայ գիտենալու արժանի ինչ բան կայ։

Պ. Գ. լծորդութեան բայերից 1. բանամ, թռնամ կատարեալում կը լինեն՝ բացի, թացի, ապառնիում՝ բացից, թացից, հրամայականում՝ բա՛ց, թա՛ց. ոչ թէ, առամէս պէս բանացի, թանացի և այլն։

2. Ցնծամ, յուսամ, հոգամ, որսամ, ջանամ, կը լինին ցնծա-ցայ, յուս-ացայ, հոգ-ացայ, որս-ացայ, ջան-ացայ, և ապառնի ցնծ-ացայ, յուս-ացայ, ևլն. ոչ թէ՝ ցնծացի, յուսացի, ևլն. բայց հրամայականը կը լինի, ցնծա՛, յուսա՛, և այլն։

3. Լուանամ, խմանամ, մոռանամ, բայերի հրամա-

յականը կըլինի, լուա՛, իմա՛, մոռա՛։

4. Դառնամ և բառնամ բայերը կատարեալում, ապառնիում, հրամայականում և անցեալում կըլինին։

| | Կատ. | Ապռ. | Հրմ. | Անց |
|---|---|---|---|---|
| Բառնամ | բարձի, | բարձից, | բա՛րձ, | բարձեալ. |
| Դառնամ | դարձայ, | դարձայց, | դա՛րձ, | դարձեալ. |

(*) Բառնամ, վերցնում եմ — Ստանամ, ստանում եմ
Թանամ, թրջում եմ — Իմանամ, իմանում եմ (ձայնը լսում եմ)
Կարդամ, կանչում եմ — Խաղամ, խաղում եմ
Մերկանամ, մերկանում եմ — Գոհանամ, շնորհակալ կըլինեմ

## ՄԱԿԲԱՅ

Հ. Ո՞ր բառերն են կոչւում մակբայ։

Պ. Մակբայ են կոչւում մի տեսակ բառեր, որ նախադրութեամբ խնդիրների պէս (տես Դաս ԺԶ.) ցոյց են տալիս գործողութեան պարագաներին։

Հ. Քանի՞ տեսակ են գլխաւոր մակբայք։

Պ. Գլխաւոր մակբայները հինգ տեսակ են, տեղական, ժամանակական, եղանակական, քանակական և հարցական։

Հ. Ո՞րք են գլխաւոր տեղական մակբայները։

Պ. Գլխաւոր տեղական մակբայներն են, աստ, այստեղ. անդ, այնտեղ. ի ներքոյ, ներսը. արտաքոյ, արտաքս, դուրսը. շուրջ, չորս կողմը. ի մէջ, միջին. առաջի, առաջը և այլք. և պատասխանում նե ու՞ր հարցման։

Հ. Ո՞րք են գլխաւոր ժամանակական մակբայք

Պ. Գլխաւոր ժամանակական մակբայք են, այժմ, արդ, հիմա. յայնժամ, այնժամանակ. այսօր, այսօր, վաղիւ, վաղը. յետոյ, ապա, յետոյ. նախ, առաջ. երբեմն, ժամանակ ժամանակ, ժամանակաւ. մինչդեռ հանապազ

(*) Աշակերտք թո՛ղ գրով խոնարհեն հետևեալ բայերից մի քանիսին։



ամեն ժամանակ, և ուրիշներ և պատասխանում են ե՞րբ հարցման։

Հ. Ո՞րք են գլխաւոր եղանակական մակբայք։

Պ. Գլխաւոր եղանակական մակբայք են, բարւոք լաւ. չարաչար, վատ. դառնապէս, դառն կերպով. փութով, շուտով. մեղմով, կամաց. հաւաստեաւ, ճշդիւ, ստուգիւ և այլք, և պատասխանում են ի՞նչպէս հարցման։

Հ. Ո՞րք են գլխաւոր քանակական մակբայք։

Պ. Գլխաւոր քանակական մակբայք են. յոյժ, շատ. չափի, չափազանց. ստէպ, յաճախ, շատ անգամ. դուն ուրեք, սակաւ քիչ անգամ. այսչափ, այնչափ, և այլք և պատասխանում են ո՞րչափ հարցման։

Հ. Ո՞րք են գլխաւոր հարցական մակբայք։

Պ. Գլխաւոր հարցական մակբայք են. ընդէ՞ր, զի՞, հի՞մ, վասն է՞ր, կամ է՞ր վասն, ինչո՞ւ համար, ուստի՞, ո՞րպէս, ի՞նչպէս, ո՞րչափ, քանի՞. և հարցնում են գործին պատճառը, եղանակը, տեղը, ժամանակը։

Հ. Հայերէնում ի՞նչ մասնաւոր գործածութիւն ունին աստ, անդ, այդր, աստի, անտի այտի. այստեղ, այնտեղ, այստեղից, այնտեղից, այդտեղից, մակբայները գործածւում են այս, այն, այդ ցուցական ածականների ուղղականին, հայցականին և բացառականին տեղ, այսպէս.

Դադարում ցոյց տալու համար

Ի քաղաքի աստ, փոխանակ՝ ի քաղաքիս յայսմիկ կամ ի քաղաքիս (տես Դաս ԺԱ.), այս քաղաքում. ի քաղաքի անդ, փոխանակ՝ ի քաղաքին յայնմիկ կամ ի քաղաքին, այն քաղաքում։

Շարժումն ցոյց տալու համար

Ի քաղաք անդր, փոխանակ՝ ի քաղաքն յայն,

կամ ի քաղաքն, (դէպի) այն քաղաքը· ի քաղաք տօղրու· փոխանակ՝ ի քաղաքս սրա, կամ ի քաղաքս, (դէպի) այս քաղաքը· ի քաղաք տօղրու, փոխանակ՝ ի֊քաղաքդ դրա, կամ ի քաղաքդ, (դէպի) այդ քաղաքը

Բացառականով

Ի քաղաքէ տան, փոխանակ՝ ի քաղաքէս սրա֊մանէ, կամ ի քաղաքէս, այս քաղաքից· ի քաղաքէ անդի (այն քաղաքից) փոխանակ՝ ի քաղաքէն նորին֊նէ, կամ ի քաղաքէն· այն քաղաքից· ի քաղաքէ տան, փոխանակ՝ ի քաղաքէդ դրդմանէ, կամ ի քաղաքէդ· այդ քաղաքից։

ՕՐԻՆԱԿ

| | |
|---|---|
| Այն դաշտը գնա· | Ե՛րթ ի դաշտ անդր |
| Այս տունն եկէք· | Եկա՛յք ի տուն այսր |
| Այդ պարտէզը գնացէք· | Երթա՛յք ի պարտէզ այդր |
| Ուղարկեցինք այն կողմերը | Յղեցաք ի կողմանս անդր |
| Այս տանն է· | Ի տան աստ է |
| Այն երկրում· | Յերկրի անդ |
| Այս աշխարհում· | Յաշխարհի աստ |
| Այն սարերում· | Ի լերինս անդ |
| Այս տանից ելան· | Ելին ի տանէ աստի |
| Այն սովից մեռան | Մեռան ի սովէ անտի |

22. Հրահանգ.

Եղբայրներս իրանց վարժապետներին մտիկ են անում, շատ անգամ սովորում են, և քիչ անգամ խաղում են. Այս տղան ինչու համար լալիս է. Նոյ տապանին պատուհանը բաց արեց. Շտապում էր Երուսաղէմ գնալ. Ինչու կը հեղգաս. Նրանց մօտ կացանք. Տորերս լուացի. Աճապարէ դուրս ել. Զինուորները մի կողմ կանգնեցան։ Երբ տեսան այս շատ ուրախացան. Նրա ոտները թռչում էր. Նրանք



պէտք է լան, դուք պէտք է ուրախանաք. Երբ խելքը գլուխն եկաւ այն ժամանակ զգաց. Մոռացան հաց տանելը. Խոստանում էք և չէք կատարում. Այս ամենը իմացա՞ք. Գերեզմանը վազեց. Իւր պատմուճանը հանեց. Մարդը հիւանդացաւ. Ձեր հանդերձները հանեցէք, և քուրձեր հագէք. Իւր անկողնում զօրացաւ. Սգացէք և ողբացէք. Աշակերտները գողացան. Նրան. Ամպը վերցուեց.Ինչու զարմանում էք. Նրան դպաւ. Ինձ մի՛ դպչիլ. Իրանց տեղերը դարձան. Ագարակ ստացաւ. Եթէ մինը վշտանայ. Ձեր բեռները վերցրէք. Ո՞վ բացեց քու աչքերդ. Ձեռքերդ լուացյ։

| | |
|---|---|
| Վարժապետ, Վարդապետ | Խելքը գլուխ գալ, ուշաստանալ |
| Մտիկ անել, տնսալ | |
| Շատ անգամ, սըքլի | Քիչ անգամ, դուռն սարեք |
| Ինչու համար, ընտէր | Այն ժամանակ, յայնժամ |
| Մօտ, առ (անրջ. հրցկնով) | Վազել, ընթանալ |
| առնոսա, նոցա մօտին | Կենալ, կալ |
| Հիւանդանալ, հիւանդանալ | Տոր, յորջ |
| Հանդերձ հանել, մերկանալ | Ինչու, ընդէ՞ |
| Հագնել, զգենուլ | Մէկ կողմ կենալ, ի բաց կալ |
| Վերցուել, վերանալ | Երբ, եբրև |
| Դպչել, մերձենալ | Շատ (մկ.), յոյժ |
| Մինը, ոք | Բեռն, բեռն յոք. բեռինք |
| Ուրախանալ, խնդալ | Թռչել, թռանալ |

Վերցնել, բառնալ

23. Հրագանդ

Տղաք խաղում էին հրապարակում. Այս տանը շատ հիւանդներ կան. Այն պատերազմում շատեր ընկան. Անապատից դարձան. Վազեցին այն հրապարակում. Բազմութիւնը գաւթում հաւաքուեցաւ. Այն ծովից մի գազան ելաւ. Քաղաքից դուրս

են բնակւում. Մեր առաջին խօսեցին. Էգուց մըտնում ենք այն քաղաք Այն տօնին ժամանակը շատեր հաւատացին նրան. Դուրս ելաւ, և դառն կերպով լաց եղաւ. Նրա այն խօսքերից շատեր գայթակղեցան. Երբ լեռնից իջաւ. Շատ անգամ և շատ են աշխատում. Քիչ անգամ տանն է գտանւում. Բանակում զօրապետներին գնացին. Այս տեղ քանի հաց կայ. Բորբոքած հնոցից նրանց հանեցին. Նրանց այս տեղ մեզ բերէք. Ձեզ ինչպէս է երևում. Մեզ լաւ է երևում. Երկիրը միշտ փորում ենք, և մեր աղբը այն տեղն ենք թափում։

| | |
|---|---|
| Տղայ, մանուկ | Զօրապետ, զօրագլուխ |
| Կան, են, գոն, | Քիչ անգամ, դուն ուրեք, |
| Ընկնիմ, անկանիմ | Այստեղ ( հռմ. ), աստ |
| Վազեմ, դիմեմ | Հաց, (պոքոն) նկանակ |
| Բազմութիւն ամբոխ | Այստեղ (շրժմ.), այսր |
| Հաւաքուիմ, խռնիմ | Բերել, ածել |
| Դուրս, արտաքոյ | Երևիլ, երևել |
| Առաջին, առաջի | Լաւ (մկ.) բարւոք |
| Էգուց, վաղը | Փորել (կակղացնել), բրել |
| Նրա, և նա | Այնտեղ (շրժմ.), անդր |
| Դառն կերպով, դառնապէս | Թափել, հեղուլ |

---

## ԼՈՒԾՈՒՄՆ

Խաղային մանկունքն ի հրապարակի անդ: Խաղային, խաղամ բայից, անկատ. յք. Գ. դէմք: Խաղային՝ ո՞վ.— Մանկունքն, տղաքը: Մանկունքն, յք. գոյ. տէր բայի խաղային ին: Մանկունքն խաղային՝ ո՞ւր.— ի հրապարակի անդ, հրապարակում. ի հրապարակի անդ. ի նախադրութեամբ խնդիր խաղային ին, ո՞ւր հարցման պատասխան է, և տեղւոյն պարագայն է ցոյց տալիս։



Հրապարակ բառը ի նախադրութեան մօտ տրական (ներքոյական) հոլով դրուած է. քանզի խաղային բային գործողութիւնը դէպի մի տեղ շարժումն չի ցոյց տալիս։ Անդ մակբայ է, և այն դերանուան կամ ն յօդին տեղ դրուած է. փոխանակ ասելու՝ Խաղային ի հրապարակին յայնմիկ կամ ի հրապարակին։

## ԴԱՍ ԺԸ.

### Դ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ

Հ. Դ. Լծորդութեան բայերն ինչպէս են խոնարհւում։

Պ. Դ. Լծորդութեան բայերը, որ ում են վերջաւորում՝ կը խոնարհին այսպէս։

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Թող-ում, թողնում եմ. | Զգեն-ում, հագնում եմ |
| Թող-ուս | Զգեն-ուս |
| Թող-ու | Զգեն-ու |
| Թող-ումք | Զգեն-ումք |
| Թող-ուք | Զգեն-ուք |
| Թող-ուն | Զգեն-ուն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Թող-ուի, թողնում էի | Զգեն-ուի, հագնում էի |
| թող-ուիր | զգեն-ուիր |
| թող-ույր | զգեն-ույր |
| թող-ուաք | զգեն-ուաք |
| թող-ուիք | զգեն-ուիք |
| թող-ուին | զգեն-ուին |

Կատարեալ անցեալ.

| | |
|---|---|
| Թող-ի, թողեցի | Զգեց-այ, հագայ |
| թող-իր | զգեց-ար |
| թող կամ եթող | զգեց-աւ |
| թող-աք | զգեց-աք |

| | |
|---|---|
| *թող-էք* | *զգե-ցայք* |
| *թող-ին* | *զգե-ցան* |

Ապառնի.

| | |
|---|---|
| *Թող-ից,* պէտք է թողնեմ | *Զգեց-այց,* պէտք է հագնեմ |
| *թող-ցես* | *զգեց-ցիս* |
| *թող-ցէ* | *զգեց-ցի* |
| *թող-ցուք* | *զգեց-ցուք* |
| *թող-ջիք* | *զգեց-ջիք* |
| *թող-ցեն* | *զգեց-ցին* |

Հրամայական.

| | |
|---|---|
| *Թո՛ղ,* թող (հին ձեւ) | *Զգեց-ի՛ր,* հագի՛ր |
| *մի՛ թող-ուր* | *մի՛ զգեն-ուր* |
| *թող-էք* | *զգեց-արո՛ւք* |
| *մի՛ թողուք* | *մի՛ զգենուք* |

Ստորադասական

| | |
|---|---|
| *Թող-ուցում,* թողնեմ | *Զգեն-ուցում,* հագնեմ |
| *թող-ուցուս* | *զգեն-ուցուս* |
| *թող-ուցու* | *զգեն-ուցու* |
| *թող-ուցումք* | *զգեն-ուցումք* |
| *թող-ուցուք* | *զգեն-ուցուք* |
| *թող-ուցուն* | *զգենուցուն* |

Աներեւոյթ

*Թող-ուլ,* թողուլ. (հին ձեւ) *Զգեն-ուլ,* հագնիլ

Անցեալ ընդունելութիւն

*Թող-եալ,* թողած *Զգեց-եալ,* հագած

Ապառնի ընդունելութիւն

*Թող-լոց,* թողնելու *Զգեն-լոց,* հագնելու

Հ. Դ. Լծորդութեան բայերում ի՞նչ հարկաւոր բան կայ գիտենալու։

Պ. 1. Այս լծորդութեան նում վերջաւորած բայերին մեծ մասը ՝ն գիրը չի փոխում է կատարեալին, ապառնւոյն, հրամայականին և անցելոյն մէջ, զոր օրինակ՝

| | Կտ. | Ապ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Լնում | լցի | լցից | լի՛ց | լցեալ |
| Խնում | խցի | խցից | խի՛ց | խցեալ |
| Ընկենում | ընկեցի | ընկեցից | ընկեա՛ | ընկեցեալ |
| Զգենում | զգեցայ | զգեցայց | զգեցի՛ր | զգեցեալ |
| Ցենում | յեցայ | յեցայց | յեցի՛ր | յեցեալ |
| Ընթեռնում | ընթերցայ | ընթերցայց | ընթերցի՛ր | ընթերցեալ |

Առնում, զբօսնում և հեղձնում բայերը յիշեալ ժամանակներում ՝ն գիրը կորցնում են. զոր օրինակ

| | Կտ. | Ապ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Առնում | առի | առից | ա՛ռ | առեալ |
| Զբօսնում | զբօսայ | զբօսայց | զբօսի՛ր | զբօսեալ |
| Հեղձնում | հեղձայ | հեղձայց | հեղձի՛ր | հեղձեալ |

(*) Արգելում, արգիլում եմ Զգենում, հագնում եմ
Հեղում, թափում եմ Զբօսնում, զբօսնում եմ
Յաւելում, աւելացնում եմ Ընթեռնում, կարդում եմ
Առնում, առնում եմ Լնում, լցնում եմ
Ընկենում, գցում եմ Հեղձնում, խեղդում եմ

24. Հրահանգ.

Ուզում էր գնալ, բայց նրան արգիլեցին. Թողէք այդ մարդին. Անմեղ արիւն մի՛ թափիլ. Թողեց նրան և գնաց. Ոչխարներ և արջառներ մորթում եմ. Նաւին կարասիները ծովը գցեցին. Այդ գաւաթները լեցրէք. Գիրքը կարդացի՛ր. Դպիրները կարդացին հրովարտակը. Նրանց տեղը լեցրին. Ձիս մի՛ թողնիր. Իւր հանդերձները հագաւ. Իւր գաւազանին է կրթնում. Տղաքը պարտէզում զբօսնում

(*) Աշակերտը գրով խոնարհէն հետեւեալ բայերից ոմանք։

էին. Ջուրին սափորն առ. Փողն առի նրանից. Առիւծներին բերանը գոցեցին. Նրա ցաւերը մի աւելացնիլ. Ջրերում խեղդուեցան. Ձեր հին շորերը հանէք և նորերը հագէք. Ժողովուրդը դաշտում զբօսնում էր. Նրա լուծը գցենք. Հայրդ չաղացած եզը մորթեց. Այդ թակոյկները ջրով լեցրէք. Այստեղից նրանց վար նետենք. Ինչո՞ւ զիս թողիք. Ձեզ չպէտք է թողնեմ որբ. Նրա արիւնը գետին թափես. Իմն ա՛ռ և քոնն ինձ տո՛ւր. Բաժակդ մօտեցրո՛ւ որ ածեմ. Ընկածներիդ տեղը լեցրէք. Ամեն ծակ գոցեյինք. Ո՞րն առնենք և ո՞րը թողնենք. Սրահին վարագոյրն երկուք արաւ (ճեղքեց). Ի՞նչ բանով զբօսնունք. Եղբօրս արիւնը ի՞նչպէս թափեմ. Ո՞րտեղից առնեմ փողը. Նրան ո՞ւր տարիք. Նրան ո՞ւր դրին. Ո՞ւր ես գնում. Ո՞ւր է ձեր բնակարանը:

| | |
|---|---|
| Ուզեմ, կամիմ | Գաւազան, ցուպ |
| Բայց, այլ | Փող, արծաթ |
| Անմեղ, անպարտ | Աւելացնեմ, յաւելում |
| Թափեմ, հեղում | Հանեմ (շորը), մերկանամ |
| Մորթեմ, զենում | Նետեմ, ընկենում |
| Ջաղ, պարարտ | Գաւաթ, բաժակ |
| Նետեմ, ընկենում | Այստեղից, աստի |
| Լքցնեմ, լնում | Վայր, ի վայր |
| Գիրք, մատեան | Ինչո՞ւ, ընդէ՞ր |
| Կարդամ, ընթեռնում | Իմն, իմ |
| Շոր, հանդերձ | Քոնն, քոյդ |
| Խեղդւիմ (չկարենալով շունչ առնել) հեղձնում | Մօտեցնեմ, մատուցանեմ |
| | Հագնիմ, զգենում |
| Ընկած, անկեալ | Ի՞նչ բանիւ, ի՞ւ իւիք |
| Երկուք անել (ճեղքել), հերձում | Ո՞րտեղից, ուստի |
| | Բնակարան, բնակութիւն |
| Ի՞նչպէս, զիա՞րդ | Ո՞ւր (շրժմ.) յո՞ |
| Ո՞ւր (դդրմ.), ո՞ւր | |



### ԼՈՒԾՈՒՄՆ

Կամէր երթալ, այլ արգելաք զնա: Այս խօսք երկու նախադասութիւնից է բաղկանում, քանզի նրանում կայ երկու գլխաւոր բայ: Կամէր երթալ, գլխաւոր նախադասութիւն. Այլ արգելաք զնա, միջանկեալ նախադասութիւն, այլ շաղկապով կապուած՝ գլխաւոր նախադասութեան հետ: Կամէր, կամիմ բայից, անկատար, եզ. գ. դէմք: — կամէր, ո՞վ. — Նա. դեր. տէր բայի կամէրին. զօրութեամբ է իմացւում: Նա կամէր զի՞նչ. — Երթալ. սեռի խնդ. կամէրին: Արգելաք արգելում բայից կատ. յք. ա. դէմք: — Ո՞վ է արգելողը. մեք. դեր. տէր բայի, զօրութեամբ է իմացւում: — Մեք արգելաք, զո՞վ. — Զնա. դեր. եզ. գ. դէմք, հյց. սեռի խնդ. արգելաքին: Այլ, շաղկապ, երկու նախադասութիւններին միմեանց հետ է կապում:

---

## ԴԱՍ ԺԹ.

### Ի, ԱՌ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ. ԲԱՑԱՆՈՒՆ

Հ. Ի նախադրութիւն տեղի և ժամանակի պարագայ միայն ցոյց է տալիս (Դաս ԺԶ.) չունի՞ ուրիշ պաշտօն:

Պ. Ի նախադրութիւնը նախ՝ շատ անգամ անորոշ հայցական խնդրով է գործածւում իբր գործիական, ի՞նչպէս՝ ի ձայն մեծ, մեծ ձայնով. երկրորդ՝ ցոյց է տալիս նպատակ, առարկայ, ինչպէս, լինել ձեզ ի կերակուր, ձեզ կերակրի, ուտելու համար լինի:

Հ. Նոյն ի նախադրութիւնը, կամ առ ի, առ, նախադրութիւնները, բայերի աներևոյթին հետ ի՞նչ են նշանակում:

Պ. Ի, առ ի, առ, նախադրութիւնները բայերի աներևոյթին հետ գործածւում են համար (վասն) նշանակութեամբ. զոր օրինակ, Եկեալ եմ ի լսել, կամ,

առ ի լսել, նշանակում է՝ Եկել եմ մտիկ անելու համար:

ԲԱՅԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է Բայանուն:

Պ. Բայանուն կոչւում են այն անունները, որ բայերի արմատ են, ինչպէս՝ սէր, գործ, կեր, լուր որ սիրել, գործել, ուտել, լսել բայերին արմատներն են:

Հ. Բայերի արմատ անուններ ինչու համար բայանուն են ասում:

Պ. Բայանուն ասում են, քանզի բայի զօրութիւն ունին, և շատ անգամ ի նախադրութեամբ բայերի աներևոյթին տեղն է դրւում: Այսպէս ասում ենք. ի լուացումն, լուալու համար, փոխ. ի լուանալ կամ առ ի լուանալ: Ի զբօսանս, զբօսնելու համար, փոխ. ի զբօսնուլ առ ի զբօսնուլ. Յոռոգումն, ջրելու համար, փոխ. յոռոգել կամ առ ոռոգել. Ի լոյս, լոյս տալու համար, փոխ. ի կամ առ ի լուսաւորել. Յիշխանութիւն, իշխելու համար, փոխ. յիշխել կամ առ ի իշխել:

Հ. Աներևոյթների հետ գործածուած ի, առ ի, առ նախադրութեանց վերայ ուրիշ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Ի, առ ի, առ նախադրութիւններից յետոյ կարող է աներևոյթը սեռական ևս դրուիլ, կարող են այս նախադրութիւնները նախ զանց առնուիլ, ուստի ասում ենք: Առ ի լուանալոյ, կամ լոկ՝ լուանալոյ լուալու համար: առ իշխելոյ, կամ իշխելոյ իշխելու համար:

25. Հրահանգ

Եկել եմ լսելու համար, Դատաւորները նստան դատելու համար. Աչք ունին տեսնելու համար, ականջներ լսելու համար, ռնգունք՝ օդ առնելու համար, ձեռք կամ մատներ՝ շօշափելու համար. Տեսարանը դիտելու եկած էին: Պիւթագորաս իւր աշակերտներին օրէնք դրաւ լռել և մսից հրաժարել. Ձիերի բերանը սանձ ենք դնում որ մեզ հնազանդեն. Նրանց ոտները լուանալու համար ջուր բերեն. Ուտելու համար նրանց հաց և արմաւ հանեց. Առատ ջուր ունինք խմելու. Իրիկնադէմին դաշտը ելաւ զբօսնելու համար. Ջրշեղջներ շինեցին ոռոգելու համար արտերն որ անջուր էին. Զօրք ուղարկեց բերդը պահելու համար. Երկիրը սրով և հրով ապականեցին. Ողջ օրը ուրախութեամբ և երգով անցկացրին. Զօրքին մօտենում էր փողի ձայնով. Այս ասում էր խեղճ ձայնով. Խորգով և մոխրով ապաշխարեցին. Այս ամենը խօսեցաւ նրան մխիթարելու համար. Հիւանդներին տեսնելու ենք գնում. Իրանց հաւատարմութիւնն ապացուցանելու համար այս արին. Նայում էին այնտեղից փախչել. Զօրք պատրաստեցին թշնամին երկրից դուրս անելու. Տանը դուռը բաց արեց ներս նայելու համար. Ամպեղէն սիւնով իջաւ նրանց. Հովերին թևովը թռաւ. Սրանք գրեցին յետոյ գալու ազգերին յիշեցնելու համար. Նրա խօսքերը լսելու եկել էին. Բանիւ և գրով՝ աշխատում էր. Այս գիրքը շինեցի տղայոց գործածութեան համար. Նրան բնակելու համար՝ տուն, և մշակելու համար արտեր տուաւ. Ոսկի և արծաթ բերաւ տաճարին նուիրելու համար. Թագաւորին ծառայելու համար մարդիկ ուղարկեց. Այդ ցորենը և այդ անասունները ձեզ՝ ապրուստի համար, և այս կտաւը հագուստի համար տուի:



| | |
|---|---|
| Եկած եմ, եկեալ եմ | Ուտելու համար, ի կերակուր |
| Օդ առնել, ծծել օդ | Խմել, ըմպել |
| Մատ, մատն յք. մատունք | Իրիկնադէմին, ընդ երեկս |
| Տեսարան, տեսիլ, տեսլեան | Շինել, առնել կտր. արարի |
| Դիտելու, ի դիտել | Նայում էին (փախչելու) |
| Դրաւ, եդ | աչս ածէին |
| Հնազանդել, անսալ | Պատրաստել, կազմել |

| | |
|---|---|
| Ջրշեղջ, ջրատարք, ջրմուղ | Երկրից, յաշխարհէն |
| Արտ, անդ | Նայիլ, հայել |
| Անջուր, անջրդի | Նուիրելու համար, ի նուէր |
| Պահելու, ի պահ | Ծառայելու համար, ի սպաս |
| Ողջ օրը, զօրն ողջոյն | Թուչիմ, Տաճիկ կտր. Տաճկաց |
| Մոտեցնել, յառաջ մատուցանել | Յետոյ գալու ազգերին, ազգաց եկելոց առյապա |
| Ձայն, բարբառ, ձայն | Բնակելու համար, ի բնակութիւն |
| Խեղճ, ողորմ | Մշակելու համար, ի մշակութիւն |
| Տեսնելու, տեսանել, այց առնել յայցելութեան | Ներս, ներքս |
| Արին, արարին | Ամպեղէն սիւնով, ի սիւն ամպոյ |
| Ապացուցանելու համար, ի հանդէս | Ապրուստի համար, յապրեստ ի պաշար |
| Յիշեցնելու համար, ի յիշատակ | Հագուստի համար, ի հանդերձ |
| Գործածութիւն, պէտք | Լսելու, յունկնդրութիւն |
| Գործածութեան համար, ի պէտս | Տուի, եդու |
| Զօրք, գունդ | |

---

### ԼՈՒԾՈՒՄՆ

Ի լսել եկեալ եմ, Եկել եմ, բայ. յարակատ. եզ. ա. դէմք.—Ո՞վ եկած է.—Ես. էակ. դեր. եզ. ա. դէմք, զօրութեամբ է իմացւում, տեր բայի Եկեալ եմ ին.— Ես եկած եմ, ինչո՞ւ համար.— Ի լսել, լսելու համար. ի լսել՝ ի նախադրութեամբ աներևոյթ խնդիր եկեալ եմ ին, գալու պատճառը կամ նպատակը ցոյց է տալիս։

Եկեալ էին ի գնել ցորենոյ. Եկեալ էին, եկած էին. բայ գերակատ. յք. գ. դէմք. ո՞վ եկած էր.— Նոքա, Նրանք. նոքա՝ էական դեր. յք. գ. դէմք, զօրութեամբ է իմացւում, և տեր բայի է եկեալ էին ին.— Եկեալ էին, ինչո՞ւ համար.— Ի գնել, գնելու. ի գնել՝ ի



նախադրութեամբ խնդիր եկեալ էին ին, գալուն նպատակը ցոյց է տալիս.— Եկեալ էին ի գնին ի՞նչ բանի.— Ցորենոյ, տեսարանին, ցորենոյ, գոյ. անուն. սեռ. հոլով. յատկացուցիչ ի գնել բառին. այսինքն՝ տեսարանին գնութեանը, տեսարանը գնելու։

---

## ԴԱՍ Ի

### ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅ, ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Ի՞նչ է կրաւորական բայ։

Պ. Կրաւորական բայը ներգործականին (տես Դաս ԺԳ.) հակառակն է. այսինքն՝ ցոյց է տալիս ոչ թէ մի բան ուրիշին անել, այլ ուրիշից կրել (անուիլ). զոր օրինակ՝ սիրում եմ ներգործական է, սիրւում եմ կրաւորական։

Հ. Ի՞նչ է հետևում սրանից։

Պ. Սրանից հետևում է թէ ամեն ներգործական բայ կրաւորական կը լինի վերջաւորութիւնը փոխելով. զոր օրինակ աշխարհաբար ասում ենք։

| Ներգոր. | Կրաւոր. |
|---|---|
| Բժշկում եմ | Բժշկւում եմ |
| Բանում եմ | Բացւում եմ |
| Թողնում եմ | Թողնւում եմ |

Հ. Ասացէք թէ ամեն ներգործական բայ կրաւորական կը լինի, ասա ուրեմն, Ա. լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած ներգործական մի բայ գրաբարում ինչպէս է փոխւում կրաւորականի։

Պ. Ա. լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած բայերին կրաւորականը փոխւում է ներգործականի, եմը իմ անելով, և խոնարհելով Բ. լծորդութեան պէս, այսպէս։

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ.

| | |
|---|---|
| Սիրեմ, սիրում եմ. | Սիրիմ, սիրւում եմ, |
| սիրես | սիրիս |
| սիրէ | սիրի |
| սիրեմք | սիրիմք |
| սիրէք | սիրիք |
| սիրեն | սիրին |

Անկատար անցեալ.

| | |
|---|---|
| Սիրէի, Սիրում էի | Նոյն ընդ ներգործ. |
| Սիրէիր, և այլն | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Սիրեցի, Սիրեցի | Սիրեցայ, Սիրւեցայ |
| սիրեցեր | սիրեցար |
| սիրեաց | սիրեցաւ |
| սիրեցաք | սիրեցաք |
| սիրեցէք | սիրեցայք |
| սիրեցին | սիրեցան |

Ապառնի

| | |
|---|---|
| Սիրեցից, Պէտք է սիրեմ | Սիրեցայց, Պէտք է սիրւեմ |
| սիրեսցես | սիրեսցիս |
| սիրեսցէ | սիրեսցի |
| սիրեսցուք | սիրեսցուք |
| սիրեսջիք | սիրեսջիք |
| սիրեսցեն | սիրեսցին |

Հրամայական.

| | |
|---|---|
| Սիրեա՛, Սիրէ՛ | Սիրեա՛ց, Սիրւէ՛ |
| մի սիրեր | մի սիրիր |
| սիրեցէ՛ք | սիրեցարո՛ւք |
| մի սիրէք | մի սիրիք |



Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Սիրեցեմ, Սիրեմ | Սիրեցիմ, Սիրւեմ |
| սիրեցես | սիրեցիս |
| սիրեցէ | սիրեցի |
| սիրեցեմք | սիրեցիմք |
| սիրեցէք | սիրեցիք |
| սիրեցեն | սիրեցին |
| Աներ. Սիրել, Սիրել | Սիրել (իլ), Սիրւել |
| Անց. ընդ. սիրեալ, սիրած | սիրեալ, սիրւած |
| Ապ. ընդ. սիրելոց, սիրելու | սիրելի, սիրւելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Հատանեմ, Կտրում եմ | Հատանիմ, Կտրւում եմ |
| հատանես | հատանիս |
| հատանէ | հատանի |
| հատանեմք | հատանիմք |
| հատանէք | հատանիք |
| հատանեն | հատանին |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Հատանէի, Կտրում էի, | Նոյն ընդ ներգործ. |
| Հատանէիր | |
| Հատանէր, և այլն | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Հատի, Կտրեցի | Հատայ, Կտրւեցայ |
| հատեր | հատար |
| հատ կամ եհատ | հատաւ |
| հատաք | հատաք |
| հատէք | հատայք |
| հատին | հատան |

Ապառնի

| | |
|---|---|
| Հատից, Պէտք է կտրեմ | Հատայց, Պէտք է կտրւեմ |

| | |
|---|---|
| Հատցէս | Հատցիս |
| Հատցէ | Հատցի |
| Հատցուք | Հատցուք |
| Հատջիք | Հատջիք |
| Հատցեն | Հատցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Հա՛տ, Կտրէ՛ | Հատի՛ր, Կտրուէ՛ |
| մի՛ հատաներ | մի՛ հատանիր |
| Հատէ՛ք | Հատարո՛ւք |
| մի՛ հատանէք | մի՛ հատանիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Հատանիցեմ, Կտրեմ և այլն | Հատանիցիմ, Կտրուիմ, և այլն |
| Աներ. Հատանել, Կտրել | Հատանել (իլ), Կտրուիլ |
| Անց. ընդ. Հատեալ, կտրած | Հատեալ, կտրուած |
| Ապ. ընդ. Հատանելոց, կտրելու | Հատանելի, կտրուելու |

### Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԲ.

Հ. Բ. լծորդութեան, այսինքն իմ վերջաւորած բայերի ներգործական ինչպէս է փոխւում կրաւորականի:

Պ. Բ. լծորդութեան, այսինքն իմ վերջաւորած բայերին կրաւորականը ներգործականից ամենևին չի տարբերւում. ուստի խօսիմ, ուսանիմ նշանակում են թէ խօսում եմ, ուսանում եմ, և թէ խօսւում եմ, ուսանւում եմ, սովորւում եմ: Այս պատճառաւ Քերականութիւններից ոմանք իմ վերջաւորած բայերին հասարակ բայ կոչեցին:

Հ. Գ. լծորդութեան բայերին ներգործականը կրաւորականի ինչպէս է փոխւում:

Պ. Գ. լծորդութեան, այսինքն՝ ամ և անամ վերջաւորած բայերին ներգործականը՝ կրաւորականի է փոխւում այսպէս:



Սահմանական եղանակ ներկայ

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|
| Աղամ, Աղում եմ | Նոյն ընդ ներգործ. Աղաց- |
| Աղաս, և այլն | ւում եմ |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Աղայի, Աղում էի | Նոյն ընդ ներգործ. Աղաց- |
| Աղայիր, | ւում էի |
| Աղայր և այլն | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Աղացի, Աղացի | Աղացայ, Աղացուեցայ |
| աղացեր | աղացար |
| աղաց | աղացաւ |
| աղացաք | աղացաք |
| աղացէք | աղացայք |
| աղացին | աղացան |

Ապառնի

| | |
|---|---|
| Աղացից, Պէտք է աղամ | Աղացայց, Պէտք է աղացուիմ |
| աղասցես | աղասցիս |
| աղասցէ | աղասցի |
| աղասցուք | աղասցուք |
| աղասջիք | աղասջիք |
| աղասցեն | աղասցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Աղա՛, Աղա՛ | Աղացի՛ր, Աղացուէ՛ |
| մի՛ աղար | մի՛ աղար, մի՛ աղացուիր |
| աղացէ՛ք | աղացարո՛ւք, աղացուեցէք |
| մի՛ աղայք | մի՛ աղայք, մի՛ աղացուիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Աղայցեմ, Աղամ | Աղայցիմ, Աղացուիմ |
| աղայցես | աղայցիս |
| աղայցէ, և այլն | աղայցի, և այլն |

| | | |
|---|---|---|
| Անէր. | Աղալ, Աղալ | Աղալ, Աղացուիլ |
| Անց. ընդ. | աղացեալ, աղացած | աղացեալ, աղացուած |
| Ապ. ընդ. | աղալոց, աղալու | աղալի, աղացուելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանադրական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Գողնում, գողնում եմ | Նոյն ըստ ներգործ. |
| Գողնում և այլն. | |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Գողնայի, գողնում էի | Նոյն ըստ ներգործ. |
| Գողնայիր և այլ՛. | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Գողացայ, Գողացայ | Նոյն ըստ ներգործ. Գողացուե- |
| և այլն. | ցայ, աղամէն կրաւոր. էն պէս |

Ապառնի

| | |
|---|---|
| Գողացայց, Պիտի գողնամ | Նոյն ըստ ներգործ. Պիտի գո- |
| և այլն. | ղացուիմ. աղամ էն կր. էն պէս |

Հրամայական

| | |
|---|---|
| Գողացի՛ր, Գողացի՛ր | Նոյն ըստ ներգործ. գողացուէ՛ |
| մի՛ գողնար | մի՛ գողացուիր |
| գողացարո՛ւք | գողացուեցէ՛ք |
| մի՛ գողնայք | մի՛ գողացուիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Գողնայցեմ, գողնամ. և լն. | Գողնայցիմ, գողացուիմ |
| գողնայցես | գողնայցիս |
| գողնայցէ, և այլն. | գողնայցի, և այլն. |

| | | |
|---|---|---|
| Անէր. | Գողնալ, գողնալ | Գողնալ, գողացուիլ |
| Անց. ընդ. | գողացեալ, գողացած | գողացեալ, գողացուած |
| Ապ. ընդ. | գողնալոց, գողնալու | գողնալի, գողացուելու |

Հ. Դ. լծորդութեան, այսինքն՝ ում վերջաւորած բայերին ներգործականն ինչպէս փոխւում է կրաւորականի:



Պ. Դ. լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայերին ներգործականը կրաւորականի է փոխւում այսպէս:

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Թողում, թողնում եմ | Նոյն ըստ ներգործ. թողնւում եմ |
| Թողուս, և այլն | |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Թողուի, թողնում էի | Նոյն ըստ ներգ. թողնւում էի |
| Թողուիր, և այլն | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Թողի, թողեցի | Թողայ, թողուեցայ |
| Թողիր | Թողար |
| Եթող, թող | Թողաւ |
| Թողաք | Թողաք |
| Թողէք | Թողայք |
| Թողին | Թողան |

Ապառնի

| | |
|---|---|
| Թողից, պիտի թողում | Թողայց, պիտի թողնուեմ |
| Թողցես | Թողցիս |
| Թողցէ | Թողցի |
| Թողցուք | Թողցուք |
| Թողջիք | Թողջիք |
| Թողցեն | Թողցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Թո՛ղ, թո՛ղ | Թողի՛ր, թողուէ՛ |
| մի՛ թողուր | մի՛ թողուր |
| թողէ՛ք | թողարո՛ւք, թողուեցէ՛ք |
| մի՛ թողուք | մի՛ թողուք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Թողուցում, թողնեմ | Նոյն ըստ ներգործ. թողուիմ |
| թողուցուս, և այլն | |

| | | |
|---|---|---|
| Աներ. | Թողուլ, Թողնել | Թողուլ, Թողնուիլ |
| Անց. ընդ. | Թողեալ, Թողած | Թողեալ, Թողնուած |
| Ապ. ընդ. | Թողլոց, Թողնելու | Թողլի, Թողնուելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Ընթեռնում, կարդում եմ | Նոյն ընդ ներգործ. կարդաց-ւում եմ |
| ընթեռնուս, և այլն. | |

Անկատար անցեալ.

| | |
|---|---|
| Ընթեռնուի, կարդում էի | Նոյն ընդ ներգործ. կարդաց-ւում էի |
| ընթեռնուիր, և այլն. | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ընթերցայ, կարդացի | Նոյն ընդ ներգործ. կարդաց-ուեցայ |
| ընթերցար | |
| ընթերցաւ | |
| ընթերցաք | |
| ընթերցայք | |
| ընթերցան | |

Ապառնի

| | |
|---|---|
| Ընթերցայց, պիտի կարդամ | Նոյն ընդ ներգործ. պիտի կար-դացուեմ |
| ընթերցցես | |
| ընթերցցէ | |
| ընթերցցուք | |
| ընթերցջիք | |
| ընթերցցեն | |

Հրամայական.

| | |
|---|---|
| Ընթերցի՛ր կարդա՛ | Նոյն ընդ ներգործ. կարդացուէ՛ |
| մի ընթեռնուր | մի՛ կարդացուի՛ր |
| ընթերցարո՛ւք | կարդացուէ՛ք |
| մի ընթեռնուք | մի՛ կարդացուիք |



Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Ընթեռնուցում, կարդամ | Նոյն ընդ ներգործ, կարդացուեմ |
| Ընթեռնուցուս և այլն | |

| | | |
|---|---|---|
| Աներ. | Ընթեռնուլ, Կարդալ | Ընթեռնուլ Կարդացուիլ |
| Անց.ընդ. | ընթերցեալ, կարդացած | ընթերցեալ, կարդացուած |
| Ապ.ընդ. | ընթեռնլոց, կարդալու | ընթեռնլի, կարդացուելու |

Բացառական հոլով

Հ. Ի՞նչ հարցման է պատասխանում բացառական հոլովը։

Պ. Բացառական հոլովը պատասխան է, որի՞ց, ի՞նչ բանից, ուստի՞ (որտեղից, որից) հարցման զոր օրինակ՝ Հօրից առի.— Որի՞ց առի.— Հօրից։ Սովից մեռաւ.— Ի՞նչ բանից մեռաւ.— Սովից։ Տանից ելաւ.— Ուստի՞ ելաւ.— Տանից. ասա՝ հօրից, սովից, տանից բացառական են։

26 Հրահանգ

Կրաւորական եւ Չէզոք Բայեր բացառական խնդրով

Պատժւում ենք Աստուծուց. Գողն ու մարդասպանը պատժւում են. Շատոնք բռնաւորներից տանջուեցան. Թշնամին քաղաքից հեռացաւ. Նրանց մարմինները գերեզմաններից հանուեցան. Դարձիր ինձանից (վիլ արա՛ գլխ). Մեզանից ելան. Լեռնից իջնում էին. Երբ ջրից ելաւ. Այն տեղից գնաց. Ձեզանից լսեցինք այս. Նրա վէրքերը բժշկուեցան. Հարիւրապետին ծառան վատ հիւանդութիւնից լաւացաւ. Իւր տանջանքներից պիտի ազատի. Աբէլի մահուան վրէժը խնդրուեցաւ Կայենից. Նրա լեզուի կապերը արձակուեցան. Աստուծուց Յովսէփին հրեշտակ ուղարկուեցաւ. Հայրս աւազակներից սպանուեցաւ. Երկնքին սահանքները (քէփէնք) բացուեցան. Քաղքին դռները պէտք է գոցուին. Եղբայրդ գետին հոսանքին մէջ նետուեցաւ (ձգուիլ). Նրա արիւնը

պէտք է թափուի. Ահա մենք ձեզանից ճանապարհուում ենք. Երկիրս օդով պատուում է. Ցամաքը ջրերից պաշարուած է. Քաղաքը թշնամիից պաշարուեցաւ. Բոլոր երկիրը շարժեցաւ. Լեռնից մի քար փրրթաւ (պոկուեց). Տղան պիտի բժշկուի. Ինձնից լսեցիք. Մեզանից են. Մօրից անիծուեցաւ. Աբէլ իւր եղբօրից սպանուեցաւ. Ճանապարհ ելնելու ենք պարտաւորւում. Շատ փող հաւաքուեցաւ. Դրա մահուան վրէժը նրանից պիտի խնդրուի. Նրանց ամանները լեցուեցան. Քաղաքը պիտի առնուի. Աստղերը պիտի թափին, երկիրը պիտի շարժի. Իմ տանից ելնես. Նրանից վախեցիր, որ հոգին է սպաննում. Ինձանից սովորեցէք. Քեզանից ինչ է խնդրում. ոսկին, արծաթն և ուրիշ բոլոր մետաղները հանքերից են հանւում. Ամեն բան հողից է և հող է դառնում. Մեզանից ես թէ նրանցից. Այդ ամենը չարից է. Հիմից խախտեցաւ։

| | |
|---|---|
| Մարդասպան, սպանող | Շարժեմ, դղրդեմ (կր.) |
| Շատոնք, բազումք | Փրթիմ, հատանիմ |
| Երբ, երբոր | Լսեցիք, լուարուք |
| Երթամ (մի տեղից) մեկնիմ | Ճանապարհ ելնել, ելանել ի ճանապարհ |
| Լսեցինք, լուաք | |
| Վատ հիւանդութիւն, չարաչար | Փող, արծաթ |
| | Թափիմ, հեղանիմ |
| Լաւանամ, առողջանիմ | Շարժիմ, սասանիմ |
| Ազատիմ, ապրիմ | Վախենամ, երկնչիմ |
| Կապեր, կապանք | Վախեցիր, երկեր |
| Արձակուիմ, լուծանիմ | Սովորիմ, ուսանիմ |
| Ուղարկուիմ, առաքիմ | Ուրիշ բոլոր, այլ ամենայն |
| Գոցեմ, փակեմ | Մետաղ, երկաթոյ նիւթ |
| Նետեմ, ընկենում (կր.) | Հանք, բովք, բովուց |
| Թափեմ, հեղում ,, | Հանեմ, հանեմ (կր. |
| Ճանապարհել, յուղարկել | Ամեն բան, ամենայն ինչ |
| Բոլոր, ամենայն | Հիմից, ի հիմանէ |



## ԴԱՍ ԻԱ.

### Առ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Առ նախադրութիւնն անորոշ հայցականով ինչ է նշանակում։

Պ. Առ նախադրութիւնն անորոշ հայցական խնդրով դէպի մի մարդ կամ անձն շարժումն ցոյց տալու համար է գործածւում (տես և դաս ԺԶ.), զոր օրինակ.

| | |
|---|---|
| Գնաց առ թագաւորն | Թագաւորին մօտ գնաց |
| Առաքեցաք զնա առ եղբայր իւր | Նրան ուղարկեցինք իւր եղբօր մօտ |
| Եկա՛յք առ իս | Ինձ մօտ եկէք |

Հ. Առ նախադրութիւնը տրականով ինչ է նշանակում։

Պ. Առ նախադրութիւնը տրական խնդրով նշանակում է մէկին տանը կամ մօտին, մի բանի մօտին, կամ մօտը, առջևը, առաջը։

| | |
|---|---|
| Առ դրան | Դրանը մօտ |
| Առ հօր իւրում | Հօրը տանը, մօտ |
| Ո՞ւր իցէ նա արդ.—Ընդ առ քեռայն իւրում | Հիմա ո՞ւր է.— Քեռայրին մօտն է |

Հ. Առ նախադրութիւնը սեռականով ինչ է նշանակում։

Պ. Առ նախադրութիւնը սեռական. և երբեմն հայցական կամ բացառական խնդրով նշանակում է համար կամ պատճառաւ, և աշխարհաբարում սովորաբար բացառականի դառնում է. ինչպէս՝ առ նախանձու, նախանձից. առ ահի, վախից։

| | |
|---|---|
| Ոչ յայտնեաց զանձն առ երկիւղի | Վախից ինքզինքը չը յայտնեց |
| Շիկնէր առ ամօթոյ | Ամօթից կարմրում էր |
| Առ սէր քո արարի զայս | Այս քու սիրոյ համար արի |
| Առ չգիտութեան եկեր | Չգիտենալով կերաւ |
| Ոչ առ ատել ինչ ասեմ | Այս ասումեմ ոչ թէ ատելու համար |

Առ ի չգոյէ կերակրոյ     Կերակուր չլինելուց

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Ի՞նչ հարցման պատասխան է գործիական հոլովը:

Պ. Գործիական հոլովը որո՞վ, ի՞նչ բանով հարցման պատասխան է: Աստուծով կը յաղթենք.— Ո՞րով կը յաղթենք.— Աստուծով: Նրանց քուրձերը ցորենով լեցրեց.— Ի՞նչ բանով լեցրեց.— Ցորենով: Աստուծով, ցորենով գործիական են:

27. Հրահանգ

Բարեկամս ինձ մօտ եկաւ. Նրանց ձեզ ուղարկեցի. Տան տիրոջ գնացինք. Պատգամաւորները պաշտօնէին մօտն եկան. Դատաւորին գրեցինք. Իւր եղբօր մօտն է բնակւում. Այդ մարդիկ մեր մօտն են հիւր. Կայսեր բողոքում եմ. Այս գիշերը մեր մօտ կմցց. Նրա տանը (մօտը) իջաւ. Իւր սիրելի որդին ուղարկեց նրանց. Մեզ ինչո՞ւ գրեցիք. Դրացւոյն տանը (մօտը) մտաւ. Մահապարտ է այն մարդը որի մօտին փող է գտանւում. Ցաւից բղաւում էր. Ուրախութիւնից բղաւում էին. Բաղձանքից մաշում էր. Կարօտից մեռնում եմ. Բարկութիւնից հայհոյում էր. Ինձ բերէք նրան. Դատաւորին մօտ եկան. Հօրս գնամ. Մի նոր կուժ բերեն ինձ. Եկէք նրա մօտ ելնենք. Մի պարտական ներկայացուեցաւ նրան. Վախից նրա դէմ չկեցաւ. Կերակուր չուտելուց հիւծած էր. Քու մարդուդ դարձիր. Նրան իւր բարեկամներին ուղարկեց. Նրան իւր կուշտն առաւ. Այդ տղան տարէք իւր մօր մօտը. Պատուհանին մօտը նստում էր. Աստուծոյ կանչեցին և նա փրկեց նրանց. Սրտին ցաւից լաց եղաւ. Նախատինքին չդիմանալուց այնտեղից գնաց. Մի խորթ մայր իւր խորթ զաւակին մօտ չի բնակւում. Եղբայրդ ո՞ւր է. Խորթ հօր մօտինն է. Ինչո՞ւ



համար ինձ չեկար. Մօր եղբօրս մօտինն էի. Ձիս մում պէտք է ուղարկես. Աներոջս, նրան աւետիս տալու համար որ ինձ մի արու զաւակ եղաւ. Եղբայրդ իմ մօտիս հիւր է. Նրանց մի՛ դպչէք. Սարից մեզ իջաւ. Այս տուր այն աղքատ տղային որ մնում է դրան մօտին. Ոչ ոք համարձակւում էր մօտենալ նրան: Իւր միածնունդ աղջիկից ուրիշ մինը չկար նրա կըշտին. Մենք լճին մօտ բնակւում էինք, և նրանք բլրոյն վրայ. Գիտէր որ ատելութեան համար նրա վրայով ամբաստանութիւն էին անում. Թագաւորին մօտ ամբաստանութիւն արին նրա վրայով:

Եկաւ, եկն
Տանտէր, տանուտէր
Կենալ (գիշերը մինին), ագանիմ
Մէկուն տունը, այսինքն մօտը. առ (տրականով)
Իջնել (ճանապարհորդին), լուծանիմ
Բղաւեմ, ճչեմ, գոչեմ
Բաղձանք, յանկութիւն
Մաշիլ, հալչել
Կանչել (մէկին) կարդալ
Սրտի ցաւ, վիշտ
Դիմանալ, ժուժել
Այնտեղից, անտի
Գնալ (մի տեղից), մեկնիմ
Խորթ մայր, մօրու
Խորթ հայր, հօրու հօրոյ
Եկար, եկիր
Բարկութիւն, ցասումն
Եկան, եկին
Բերեմ (մի անձն) ածեմ

Բերէք ինձ, ածէք ածիք
Եկէք, եկայք
Ներկայացուիմ, մատուցանիմ
Պարտական, պարտապան
Վախ, ահ
Դէմ կենալ, ընդդիմանալ
Կերակուր չուտելը, անսուաղութիւն
Մարդը (կնոջ), այր
Մօրեղբայր, քեռի
Արու զաւակ, ուստր
Դպչիմ, մերձենամ
Մօտենամ, մատչիմ
Կենալ, կալ
Միածնունդ աղջիկ, դուստր միամօր
Լիճ, ծովակ
Նրա վրայով, ընդ նմանէ
Ամբաստանութիւն անել, ամբաստանել, ամբաստան լինել չարախօսել
Վրայով, զ (բացառականով պատմական)

## Դ Ա Ս ԻԲ.

### ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ ԲԱՑԱՏԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ, Առ, ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ, ց ՆԱԽԴԻՐ

Հ. Ի՞նչ է անկանոն կամ զարտուղի բայ։

Պ. Անկանոն կամ զարտուղի կասուին այն բայերը որոց կատարեալը, ապառնին, հրամայականը և անցեալը տարբերւում են չորս լծորդութեանց խոնարհման հասարակ ձեւից։ Զոր օրինակ՝ ճանաչեմ, կատարեալը կը լինի ծանեայ, ապառնին՝ ծանեայց, հրամայականը՝ ծանի՛ր, փոխանակ ճանաչեցի, ճանաչեցից, ճանաչեա՛։

Հ. Ասեմ, գիտեմ, կարեմ բայերն ի՞նչ բանով տարբերւում են եմ վերջաւորած կանոնաւոր բայերից։

Պ. Ասեմ, ասել, գիտեմ, գիտենալ. կարեմ, կարողանալ. բայերը, կատարեալին, ապառնւոյն և անցելոյն մէջ, եմ վերջաւորած կանոնաւոր բայերին պէս, փոխանակ եցի, եցից, եալ լինելու, ինչպէս՝ սիրեցի, սիրեցից, սիրեալ, կը լինին ացի, ացից, ացեալ, զոր օրինակ.

| | Կտր. | Ապ. | Հրմ. | Անց. |
|---|---|---|---|---|
| (*) Ասեմ, | ասացի, | ասացից, | ասա՛, | ասացեալ |
| Գիտեմ, | գիտացի, | գիտացից, | գիտա՛, | գիտացեալ. |
| Կարեմ, | կարացի(**), | կարացից, | չունի, | կարացեալ. |

Հ, Ի՞նչպէս խոնարհւում են առնեմ, յառնեմ, յանցանեմ, մեղանչեմ անկանոն բայերը։

Պ. Առնեմ, անել, յառնեմ, ելնել (նստած կամ պառկած տեղից), յանցանեմ, սխալուիլ, յանցանք գործել. մեղանչեմ, մեղք գործել, վնասել, հետեւեալ կերպով խոնարհւում են։

---

(*) Աշակերտներն այս բայերը թո՛ղ խոնարհեն։

(**) Կարեմ, կար կարելու նշանակութեամբ, կը լինի կարեցի, կարեցից, կարեա՛, կարեալ։



| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱւՈՐ. |
|---|---|
| Սահմանական եղանակ, Ներկայ. | |
| Առնեմ, անում եմ | Առնիմ, անւում եմ |
| Առնես, | Առնիս |
| և այլն | և այլն |
| Անկատար անցեալ | |
| Առնէի, անում էի | Առնէի, անւում էի |
| և այլն | և այլն |
| Կատարեալ անցեալ | |
| Արարի, արի | Արարայ, արուեցայ |
| արարեր | արարար |
| արար | արարաւ |
| արարաք | արարաք |
| արարէք | արարայք |
| արարին | արարան |
| Ապառնի | |
| Արարից, պէտք է անեմ | Արարայց, պէտք է արուեմ |
| արասցես | արասցիս |
| արասցէ | արասցի |
| արասցուք | արասցուք |
| արասջիք | արասջիք |
| արասցեն | արասցին |
| Հրամայական. | |
| Արա՛, արա՛ | Արասջի՛ր, արուի՛ր |
| մի՛ առներ | մի՛ առնիր |
| արարէք | արասջիք |
| մի՛ առնէք | մի՛ առնիք |
| Ստորադասական | |
| Առնիցեմ, անեմ | Առնիցիմ, անուեմ |
| առնիցես | առնիցիս |
| և այլն | և այլն |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Առնել, անել | Առնել (իլ), արուիլ |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Արարեալ, արած | Արարեալ, արուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Առնելոց, անելու | Առնելի, արուելու |

| ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ |
|---|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | | |
|---|---|---|
| Ընում եմ | Յանցանք եմ գործում | Մեղք եմ գործում |
| Յառնեմ | Յանցանեմ | Մեղանչեմ |
| յառնես | յանցանես | մեղանչես |
| և այլն | և այլն | և այլն |

Անկատար անցեալ

| | | |
|---|---|---|
| Ընում էի | Յանցանք չանէի | Մեղք էի գործում |
| Յառնէի | Յանցանէի | Մեղանչէի |
| և այլն | և այլն | և այլն |

Կատարեալ անցեալ

| | | |
|---|---|---|
| Ըրայ | Յանցանք գործեցի | Մեղք գործեցի |
| Յարեայ | Յանցեայ | Մեղայ |
| յարեար | յանցեար | մեղար |
| յարեաւ | յանցեաւ | մեղաւ |
| յարեաք | յանցեաք | մեղաք |
| յարեայք | յանցեայք | մեղայք |
| յարեան | յանցեան | մեղան |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Պիտի ընեմ | Պիտի յանցանք գործեմ | Պիտի մեղք գործեմ |
| Յարեայց | Յանցեայց | Մեղայց |
| յարիցես | յանցիցես | մեղիցես |
| յարիցէ | յանցիցէ | մեղիցէ |
| յարիցուք | յանցիցուք | մեղիցուք |
| յարիջիք | յանցիջիք | մեղիջիք |
| յարիցեն | յանցիցեն | մեղիցեն |



ԱՂԱՍԻ ԱՃԻՃԵԱՆ

Հրամայական

| | | |
|---|---|---|
| Ըրէ՛ | Յանցանք գործէ՛ | Մեղք գործէ՛ |
| Արի՛ | Յանցի՛ր | Մեղի՛ր |
| մի՛ յառներ | մի՛ յանցաներ | մի՛ մեղանչեր |
| արի՛ք | յանցերո՛ւք | մեղարո՛ւք |
| մի՛ յառնէք | մի՛ յանցանէք | մի՛ մեղանչէք |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| Ընեմ | Յանցանք անեմ | Մեղք գործեմ |
| Յառնիցեմ | Յանցանիցեմ | Մեղանչիցեմ |
| յառնիցես | յանցանիցես | մեղանչիցես |
| և այլն | և այլն | և այլն |

Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| Ընել | Յանցանք անել | Մեղք գործել |
| Յառնել | Յանցանել | Մեղանչել |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ըրած | Յանցանք արած | Մեղք գործած |
| Յարուցեալ | Յանցուցեալ | Մեղուցեալ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| Ընելու | Յանցանք անելու | Մեղք գործելու |
| Յառնելոց | Յանցանելոց | Մեղանչելոց |

## ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱԿԲԱՑ

Հ. Ի՞նչ է բացասական մակբայ

Պ. Բացասական մակբայ կասուին ոչ կամ չ և մի բառերը, որ սովորաբար դրւում են բայից առաջ։

Մի գործածւում է, երբ խօսքը Հրամայական է։

| | |
|---|---|
| Ոչ սիրեմ, չեմ սիրում | Մի՛ սիրեր, մի՛ սիրիր |
| Ոչ ընթեռնումք, չենք կարդում | Մի՛ ընթեռնուք, մի՛ կարդաք |
| Ոչ լուար, չլսեցիր | Մի՛ լուիցես, չլսես |
| Ոչ տեսցէ, չտեսնէ պիտի | Մի՛ տեսցէ, չտեսնէ |
| Զառնում յանձն, յանձն չեմ առնում | Մի՛ առնուցուս յանձն, յանձն չառնես |

## ԱՌ ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Հ. (Դաս ԺԶ. և ԻԱ.) ասացիր թէ առ նախադրութիւնը հայցական խնդրով դէպի մի մարդ շարժում է ցոյց տալիս, և եզակի տրականով և յոգնակի հայցականով մի մարդու կամ բանի մօտ նշանակում է: Գործիական խնդրով ի՞նչ է նշանակում:

Պ. Առ նախադրութիւնը գործիական խնդրով նշանակում է:

1. Մարդի կամ բանի ժամանակը, օրովը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Առ Սողոմոնիւ | Սողոմոնի ժամանակումը |
| Առ Տրդատաւ | Տրդատի օրովը կամ օրերում |
| Առ կենդանութեամբ | Կենդանութեան ժամանակումը |
| Առ նովաւ | Նրա ժամանակումը |

2. Նշանակում է մօտը, մօտից, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Առ եզերբ գետոյն | Գետին մօտը կամ մօտից |
| Առ որմովն | Պատին մօտից, կամ մօտն ի վեր |
| Առ ճանապարհաւ | Ճանապարհին մօտը, եզերքը |

3. Նշանակում է բաղդատմամբ, նայելով, մօտը.

| | |
|---|---|
| Զինչ է յարդ առ ցորենով | Յարդը ցորենին նայելով ինչ է |
| Տգէտ է նա առ քեւ | Նա քեզ նայած տգէտ է |
| Աղմուկս չէ ինչ առ այնու որ երէկն եղեւ | Այս խռովութիւնն երեկուանին մօտ մի բան չէ |

### Ց ՆԱԽԴԻՐ

Հ. Ի՞նչ է նշանակում ց նախդիրը:

Պ. ց նախդիրը 1. առեմ, հարցանեմ և ուրիշ մի քանի բայերի հետ գործածւում է. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ասա ցիս | Ինձ ասա́ |
| Հարցին ցնա | Նրան հարցրին |



| | |
|---|---|
| Ասաց ցհայր իւր | Իւր հօրն ասաց |

2. Նշանակում է մինչեւ, և շատ անգամ մինչեւ ին հետ գործածւում է.

| | |
|---|---|
| Մինչեւ ցդուռնն կամ ցդուռնն | Մինչև դուռը |

28. Հրահանգ

Օրէնքը չգիտեն. Բաժակը կարո՞ղ ես խմել. Ինձ ասա. Ծառայիս ասում եմ. Այդ բանն արա́, և կանէ. Իրաւունք և արդարութիւն արի. Աստուած երկինքն ու երկիրը արար (ստեղծեց). Աստուծոյ կամքն անենք (կատարենք). Մի́ ասել թէ չեմ կարող. Ողջացար, էլ մեղք մի́ գործել. Նրա կամքը գիտէ. Չէր ուզում նրանց մօտ գնալ. Չեմ արգելում ձեզ. Ելաւ (ոտք) և կամենում էր գնալ. Ժողովուրդը մեղանչեց. Չար գործեցին. Ձեզ բարեկամներ արէք. Օգտակար չի անուիլ. Այդ (բանն) անել յանձն չեմ առնիլ. Մեղանչեցի վասն զի անմեղ արիւնը թափեցի. Ծառ որ պտուղ չի անիլ (չի բերել). Յետոյ քեզ պէտք է ասեմ. Ասում է նրան. Ինձ ասա́. Ինձ ասաց ականջիցս (ականջս ի վեր). Դուք այնտեղ չէք կարող գալ. Հիմա չես կարող գալ. Ինչո՞ւ հիմա չեմ կարող գալ. Դուն ամեն բան գիտես. Մինը չի կարող ներս մըտնել. Չգիտէի որ այստեղ է. Այն ինձ ամենը (ամեն բան) ասաց. Եթէ եղբայրդ քեզ յանցանք անէ, յանդիմանէ նրան. Ն'լ, քալէ. Ուզում էր ինձ թակել, բայց չկարողացաւ. Գազանները նրան չէին վնասում. Քեզ ի՞նչ արեց. Գիտեմ որ այն մարդը բարկասիրտ է. Եթէ դու ես մեզ համարձակ ասա́. Դրա վնաս մի́ անիլ. Ձեզ ասացի և չէք հաւատում. Խորհուրդ արին որ նրան սպանեն. Նրան ընթրիք արաւ. Նրա ժամանակում մեծ սով եղաւ. Տրդատայ և Գրիգորի ժամանակում եղաւ մեր ազգի դարձը. Դիոկղետիանոսի ժամանակում շատեր Քրիստոնեաներից սպանուեցան. Սարի տակից (տակով) էր գնում. Դաշտին

մօտն ի վեր բնակեցաւ զօրքը. Ծովի եզերքն ի վեր (եզերքով) ցամաքին մօտը նաւում էին. Ես նրան նայելով (նրա մօտ) մի բան չեմ. Մեր իմաստութիւնը քումնին մօտ մի փոքր բան է. Ինչպէս մի տղայ մի հսկայի մօտ. Դուն էլ այնպէս նրա մօտ. Այս երկիրը մի պզտիկ գնդակի պէս է արեգակին նայելով. Քրիստոս Հերովդէսին ժամանակում ծնուեց և Պիղատոսի ժամանակում խաչուեց. Սպասաւորներին հարցնում էր. Նրան բերին մինչև սարին գլուխը. Մինչև հիմայ ոչ ոք երևեցաւ։

Բաժակ, բաժակ — Մօտ, մօտ է
Խմել, ըմպել — Նրան նայելով, առ նովաւ
Ասեմ, ասեմ — Բերել, ածեմ
Անմեղ, արդար — Ականջս ի վեր, յանձանձէ
Ցետոյ, ապա — Այնտեղ, անդր
Անեմ, առնեմ — Հիմա, այժմ
Ողջանալ, ողջանամ — Ամեն բան, զամենայն
Մեղք գործել, մեղանչել — Ոչ մինը, ոչ ոք
Նրանց մօտ, առ նոքա — Ներս, ի ներքս
Ելնել ոտք, յառնեմ — Այստեղ, աստ
Գործել, առնեմ — Յանցանք անեմ, յանցանել
Անուիլ, առնիմ — Նրան, զնա
Թափեմ, հեղում — Մի բան, ինչ
Քալել, գնալ — Քումնդ, քո, քոյոյ
Վնասել, մեղանչեմ — Մի փոքր բան, դոյզն ինչ
Թակել, հարկանիմ — Ինչպէս, որպէս
Կարողանամ, կարեմ — Տղայ, մանուկ
Նրա ժամանակում, առ նովաւ — Գնդակ, գունդ, գնդակ
Պէս, իբրև...
Ծառերը, ծառքն — Պզտիկ, փոքր
Տակից (տակով) առ ոտամբ, առ ստորոտով — Խաչուիլ, հանիմ ի խաչ
Նրան, զնա
Դաշտին մօտն ի վեր, առ դաշտին — Հիմա, արդ, այժմ



## ԼՈՒԾՈՒՄՆ

Ոչ գիտեն զօրէնս. Նախադասութիւն ժխտական. գիտեն, բայ ներգ. սահմ. ներկ. յոգ. գ. դէմք։— Գիտեն, ո՞վ.— Նոքա. նոքա, էական դեր. յոգ. գ. դէմք տէր բայի գիտեն ին. զօրութեամբ է իմացւում.— Նոքա գիտեն, զի՞նչ.— Զօրէնս, գոյ. յոգ. հայց. սեռի խնդիր գիտեն ին։ Ոչ բացասական մակբայ. բայիւ նշանակուած գործողութեանն է բացասում, ժխտում։

Ասա՛ ցնա. Ասա՛ բայ ներգ. հրամ. եզ. բ. դէմք։— Ո՞վ պէտք է ասի.— Դու, էակ. դեր. եզ. բ. դէմք. զօրութեամբ, տէր բայի ասա ին։ Ասա ու՞մ.— Ցնա, ինձ, ցնա, նա, դեր. ա. դէմք, եզ. հյց. յ նախդրիւ բնութեան խնդիր ասա ին։

---

## ԴԱՍ ԻԴ.

### ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

ԸՆԴ ԵՒ ԸՍՏ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Ի՞նչպէս խոնարհւում են լսեմ, ճանաչեմ բայերը։
Պ. Լսեմ, ճանաչեմ բայերը խոնարհւում են այսպէս։

ՆԵՐԳՈՐԾ. — ԿՐԱՒՈՐ.

Սահմանական եղանակ ներկայ

Լսեմ, լսում եմ — Լսիմ, լսւում եմ

Անկատար անցեալ.

Լսէի, լսում էի — Նոյն ընդ ներգ. լսւում էի

Կատարեալ անցեալ

Լուայ, լսեցի — Լսելի եղէ (°) լսուեցայ
լուար — լսելի եղեր
լուաւ — լսելի եղև

(°) Ասւում է նաև լուայ կամ լուա եղէ, և այլն. երրորդ դէմք։

| | |
|---|---|
| լուաք | լսելի եղաք |
| լուայք | լսելի եղէք |
| լուան | լսելի եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Լուայց, պէտք է լսեմ | Լսելի եղէց, պէտք է լսուիմ |
| լուիցես | լսելի եղիցիս |
| լուիցէ | լսելի եղիցի |
| լուիցուք | լսելի եղիցուք |
| լուիջիք | լսելի եղիջիք |
| լուիցեն | լսելի եղիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Լո՛ւր, լսէ՛ | Լսելի լե՛ր, լսուէ՛ |
| մի լսեր | մի լինիր լսելի |
| լուարո՛ւք | լսելի լերո՛ւք |
| մի լսէք | մի լինիք լսելի |

Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Լսիցեմ, լսեմ | Լսիցիմ կամ լսելի լինիցիմ |
| և այլն | և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Լսել, լսել | Լսելի լինել, լսուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Լուեալ, լսած | Լսելի լեալ, լսուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Լսելոց, լսելու | Լսելի, լսուելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Ճանաչեմ, ճանաչում եմ | Ճանաչիմ, ճանաչուում եմ |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ճանաչէի, ճանաչում էի | Նոյն ընդ ներգ. ճանաչուում էի |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ծանեայ, ճանաչեցի | Ծանօթ եղէ, ճանաչուեցայ |
| ծանեար | ծանօթ եղեր |



| | |
|---|---|
| ծանեաւ | ծանօթ եղև |
| ծանեաք | ծանօթ եղաք |
| ծանեայք | ծանօթ եղէք |
| ծանեան | ծանօթ եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Ծանեայց, պիտի ճանաչեմ | Ծանօթ եղէց, պիտի ճանաչ-ուիմ |
| ծանիցես | ծանօթ եղիցիս |
| ծանիցէ | ծանօթ եղիցի |
| ծանիցուք | ծանօթ եղիցուք |
| ծանիջիք | ծանօթ եղիջիք |
| ծանիցեն | ծանօթ եղիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Ծանի՛ր, ճանաչէ՛ր | Ծանօթ լե՛ր, ճանաչուէ՛ |
| մի ճանաչիր | մի լինիր ծանօթ |
| ծաներո՛ւք | ծանօթ լերո՛ւք |
| մի ճանաչէք | մի լինիք ծանօթ |

Ստորադասական

| | |
|---|---|
| Ճանաչիցեմ, ճանաչեմ և այլն | Ճանաչիցիմ կամ ծանօթ լինիցիմ, ճանաչուիմ. և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Ճանաչել, ճանաչել | Ծանօթ լինել, ճանաչուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ծանուցեալ, ճանաչած | Ծանօթ (լեալ), ճանաչուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ճանաչելոց, ճանաչելու | Ճանաչելի, ճանաչուելու |

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում ուտեմ, դնեմ բայերը

Պ. Ուտեմ, դնեմ բայերը խոնարհւում են հետևեալ կերպով:

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Ուտեմ, ուտում եմ և այլն | Ուտիմ, ուտուում եմ և այլն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ուտէի, ուտում էի | Նոյն ընդ ՛նէրգ. ուտւում էի |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Կերայ կամ կերի, կերայ | Կեր եղէ (°) կերուեցայ |
| կերար ,, կերեր | կեր եղեր |
| կերաւ ,, եկեր | և այլն |
| կերաք | |
| կերայք | |
| կերան | |

Ապառնի

| | |
|---|---|
| Կերայց կամ կերից, պէտք ուտեմ | Կեր եղեց, պէտք ուտուիմ |
| կերիցես | կերիցիս |
| կերիցէ | կերիցի |
| կերիցուք | կեր լիցուք |
| կերիջիք | կեր լիջիք |
| կերիցեն | կեր լիցին կամ կերիցին |

Հրամայական.

| | |
|---|---|
| Կե՛ր, կե՛ր | Կեր լե՛ր, կերուիր |
| մի՛ ուտեր | մի՛ ուտիր |
| կերա՛յք կամ կերէք | լերո՛ւք կեր |
| մի՛ ուտէք | մի՛ ուտիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Ուտիցեմ, ուտեմ և այլն | Ուտիցիմ, ուտուիմ և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Ուտել, ուտել | Կեր լինել, ուտուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կերեալ, կերած | Կերեալ, կերուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ուտելոց, ուտելու | Ուտելի, ուտուելու |

---

(°) Ասւում է նաև կեր եղէ, և այլն.



ՆԵՐԳՈՐԾ. ԿՐԱՒՈՐ.

Սահմանական եղանակ, Ներկայ.

| | |
|---|---|
| Տանիմ, տանում եմ<br>և այլն | Տարեալ լինիմ, տարւում եմ<br>և այլն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Տանէի, տանում էի<br>և այլն | Տարեալ լինէի, տարւում էի<br>և այլն |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Տարայ, տարայ | Տարեալ եղէ, տարուեցայ և այլն. |
| տարար | տարեալ եղեր |
| տարաւ | տարեալ եղեն |
| տարաք | տարեալ եղաք |
| տարայք | տարեալ եղէք |
| տարան | տարեալ եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Տարայց, պէտք տանեմ | Տարեալ եղէց, պէտք տարուիմ |
| տարցիս | տարեալ եղիցիս |
| տարցի | տարեալ եղիցի |
| տարցուք | տարեալ եղիցուք, լիցուք |
| տարջիք | տարեալ եղիջիք, լիջիք |
| տարցին | տարեալ եղիցին, լիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Տա՛ր, տա՛ր | Տարեալ լե՛ր, տարուէ՛ |
| մի՛ տանիր | և այլն |
| տարա՛յք | |
| մի՛ տանիք | |

Ստորադասական

| | |
|---|---|
| Տանիցեմ, տանիմ<br>և այլն | Տանիցիմ կամ տարեալ լինիցիմ, տարուիմ, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Տանել, տանել | Տարեալ լինել, տարուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տանելոց, տանելու | Տանելի, տարուելու |

Ընդ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով ինչ է նշանակում։

Պ. Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով նշանակում է փոխանակ, տեղը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ընդ իմ և ընդ քո | Իմ և քո տեղդ |
| Ընդ նորա | Նորա տեղը |
| Ընդ եղբօր իւրոյ | Եղբօր տեղը |

Հ. Ի՞նչ է նշանակում Ընդ տրական խնդրով։

Պ. Ընդ՝ եզակի տրական և յոգնակի անորոշ (առանց զ ի) հայցական խնդրով նշանակում է հետը, զոր օրինակ.

Եզակի

| | |
|---|---|
| Ընդ իս (ոչ՝ ինձ) | Ինձ հետ |
| Ընդ նմա | Նրա հետ |
| Ընդ եղբօր իւրում | Իրեն եղբօրը հետ |

Յոգնակի

| | |
|---|---|
| Ընդ մեզ | Մեզ հետ |
| Ընդ նոսա | Նոցա հետ |
| Ընդ եղբարս իւր | Իւր եղբայրներին հետ |

Հ. Ի՞նչ է նշանակում ընդ հայցական խնդրով։

Պ. Ընդ թէ եզակի և թէ յոգնակի հայցական խնդրով գործածւում է, երբ խօսքն է տեղից անցնելու, մտնելու, ելնելու, մի բան ուրիշ բանի նայելու կամ կպչելու, ընդարձակ տեղ տարածուելու կամ պատելու վերայ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Եմուտ ընդ պատուհանն | Պատուհանից մտաւ |
| Անց ընդ դուռն պարտիզին | Պարտէզի դռնից անցաւ |
| Կապեաց զձորին ընդ մացառն | Ձորին կապեց մացառին |
| Եւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն | Նորա անունը տարածուեցաւ այն բոլոր երկրում |
| Շրջեցաւ ընդ ամենայն քաղաքն | Ողջ քաղաքը պտտեցայ |

Հ. Ի՞նչ է նշանակում ընդ հայցական խնդրով կրկնուելով։



Պ. Ընդ հայցական խնդրով կրկնուելով նշանակում է մէջ տեղը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ | Իմ և քո մէջտեղ կռիւ չըլինի |
| Կախեալ էր ընդ երկինս և ընդ երկիր | Երկնի և երկրի մէջտեղ կախուած էր |

Հ. Ի՞նչ է նշանակում ընդ գործիականով։

Պ. Ընդ գործիական խնդրով նշանակում է տակը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Նստայ ընդ ծառովն | Ծառին տակը նստայ |
| Գունդն երկրորդ ընդ իմով ձեռամբ է | Երկրորդ գունդն իմ ձեռքիս տակն է |

Ըստ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով ինչ է նշանակում։

Պ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով նշանակում է համեմատ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ըստ բանի քում | Քո խօսքիդ համեմատ |
| Ըստ նմա | Նրա (կարծեաց, խօսքին) նայելով |

Հ. Ի՞նչ է նշանակում ըստ հայցական խնդրով։

Պ. Ըստ հայցական խնդրով նշանակում է մի տեղից մի բանից այն կողմն անցկենալ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Անցին ըստ գետն | Գետից այն կողմն անցան |
| Ելին ըստ քաղաքն | Քաղաքից այն կողմն ելան, դուրս |

29. Հրաման

Նրա ձայնը լսեցի. Հայրդ զիս ճանաչեց. Թագաւորին տարաւ նրան. Նրանց իրանց տները տարին. Մի չար գազան կերաւ իմ որդուս. Խուլերը լսում են, ու համրերը խօսում են. Իմ աղաչանքիս մտիկ արա. Ինձ մտիկ արէք. Քեզ չեմ ճանաչում. Տեղացիները նրանց ճանաչեցին. Այդ տղան իւր մօրը

տմր. Նրանց օտար երկիր մի տանիք. Ձքեզ ճանաչէ՛ր. Մարախը երկրին կանաչեղէնը կերաւ. Եղբայրըդ նրա հետ կը պտըտի. Ծառին տակը նստում էր. Նրան ողջ քաղաքը շրջեցրեց. Դաշտին վերայ տարածուեցան. Քաղաքում մի լուր ելաւ թէ թագաւորը մեռաւ. Ինձ հետ մի՛ խօսիր. Կրծից անցնելով նրա ետևից ընկան, բայց չկարացին հասնել. Ծովից գնանք, ցամաքից ճանապարհ չկայ մեզ. Արևելքին կողմն եղող դռնից չելնես. Իմ յարկիս տակը մտան. Նեղ դռնից մտէք. Նրանց հետ վէճի մի մտնիր. Երկու եղբարք իրար հետ կռուեցան (խօսքով). Զօրքը կամուրջից այն կողմն անցաւ. Նրանք իրանց տիրոջ հրամանից այն կողմն անցան. Մեզ (մեր կարծեաց նայելով) դժուարին չէ. Մեր կարողութեան համեմատ ջանանք. Գաւթից այն կողմ չելան. Զօրին կապեց դրան. Նրան մեխեցին պատին. Մեր և ձեր մէջ տեղը խտրութիւն չկայ։

Մտիկ անել, լսել (ումեք) Արևելքին կողմն եղող. որ
Կանաչեղէն, բանջար ընդ արևելս
Պտրտիմ, շրջիմ Վէճի մտնել, մտանել ի պայքար
Տարածուիմ, սփռիմ Կռուիլ (խօսքով) հեգել
Լուր, համբաւ Կարողութիւն, կար
Ետևից ընկնիլ, զհետ պնդել Համեմատ, նայելով, ըստ
Չկայ, չիք Պատ, որմ
Ճանապարհ, ճանապարհ Մեխել, վարսեմ
Խտրութիւն, խտիր

## ԼՈՒԾՈՒՄՆ

Եմուտ ընդ պատուհանն ի ներքս. Եմուտ բայ չեզոք. կտ. եզ. գ. դէմք. մտանեմ ին. — Եմուտ, ո՞վ. — Նա. նա, էական դերանուն եզակի գ. դէմք, զօրութեամբ, տէր բայի Եմուտ ին։ — Եմուտ նա ո՞ւր. — Ի ներքս. մակբայ, որ մի տեղի պարագայ այսինքն՝ ուր մտնելը



ցոյց է տալիս։ Եմուտ նա ի ներքս, ուստի՞. — Ընդ պատուհանն, պատուհանից. ընդ նախադրութեամբ բնութեան խնդիր, նոյնպէս մտնելուն ուրիշ մէկ տեղի պարագան ցոյց է տալիս, այսինքն՝ ուստի մտնելը։

## ԴԱՍ ԻԴ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

### ՏԵՂԻՈՅ ՊԱՐԱԳԱՅ ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Ի՞նչպէս խոնարհւում են Գտանեմ, ըմպեմ, ունիմ։
Պ. Գտանեմ, ըմպեմ, (խմել), ունիմ (բռնել), խոնարհւում են այսպէս։

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|
| Սահմանական եղանակ ներկայ | |
| Գնեմ, գտնում եմ | Գնիմ, գտնուում եմ |
| գնես, և այլն | գնիս, և այլն |
| Անկատար անցեալ | |
| Գնէի, գտնում էի և այլն | Գնէի, գտնուում էի և այլն |
| Կատարեալ անցեալ | |
| Եգի, գտայ | Եգայ, գտնուեցայ |
| եգիր | եգար |
| եգ | եգաւ |
| եգաք | եգաք |
| եգիք | եգայք |
| եգին | եգան |
| Ապառնի | |
| Եգից, պիտի գտնեմ | Եգայց, պիտի գտնուիմ |
| գիցես | գիցիս |
| գիցէ | գիցի |
| գիցուք | գիցուք |
| գիջիք | գիջիք |
| գիցեն | գիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Դի՛ր, տէ՛ր | Դիջի՛ր, տըրուէ՛ |
| մի՛ դներ | մի՛ դնիր |
| դի՛ք | եդարո՛ւք |
| մի՛ դնէք | մի՛ դնիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Դնիցեմ, տնէմ | Դնիցիմ, տըրուիմ |
| դնիցես և այլն | դնիցիս և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Դնել, տնել | Դնել (իլ), տըրուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եդեալ, տըրած | Եդեալ, տըրուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Դնելոց, տնելու | Դնելի, տըրուելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Ըպեմ, խմում էմ | Ըմպիմ, խմւում էմ |
| ըմպես և այլն | ըմպիս և այլն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ըմպէի, խմում էի | Ըմպէի, խմւում էի |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Արբի, խմեցի | Արբայ, խմուեցայ |
| արբեր | արբար |
| արբ, էարբ | արբաւ |
| արբաք | արբաք |
| արբէք | արբայք |
| արբին | արբան |

Ապառնի

| | |
|---|---|
| Արբից, պէտք խմեմ | Արբայց, պ՛տք խմուիմ |
| արբցես | արբցիս |
| արբցէ | արբցի |
| արբցուք | արբցուք |
| արբջիք | արբջիք |
| արբցեն | արբցին |



Հրամայական

| | |
|---|---|
| Ա՛րբ, խմէ՛ր | Արբի՛ր, խմուէ՛ր |
| մի՛ ըմպեր | մի՛ ըմպիր |
| արբէք | արբերո՛ւք |
| մի՛ ըմպէք | մի՛ ըմպիք |

Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Ըմպիցեմ, խմէմ | Ըմպիցիմ, խմուիմ |
| ըմպիցես, և այլն | ըմպիցիս, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Ըմպել, խմել | Ըմպել (իլ), խմուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Արբեալ, խմած | Արբեալ, խմուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ըմպելոց, խմելու | Ըմպելի, խմուելու |

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, ներկայ.

| | |
|---|---|
| (*) Ունիմ, կը բռնեմ | Կալեալ լինիմ (**) կը բռնուիմ |
| ունիս, և այլն | կալեալ լինիս, և այլն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ունէի, բռնում էի, և այլն. | Կալեալ լինէի, բռնւում էի և այլն. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Կալայ, բռնեցի | Կալեալ եղէ, բռնուեցայ |
| կալար | կալեալ եղեր |

---

(*) Տղայք ընդունին բայը Թո՛ղ խօնարհեն ունիմ ին պէս

(**) Ունիմ, բռնում եմ, բային կրաւորականին համար սովորաբար ընկնում, կը բռնուիմ, բայը գործածւում է։

Նոյն ունիմ բայը նշանակւում է նաև ունենալ, բայց ներկայի, անկատարին, ստորադասականին, աներևոյթին և ապառնի ընդունելութեան մէջ միայն, ուստի և ունիմ, ունէի, ունիցիմ, ունել, ունելոց, նշանակւում են նաև ունիմ, ունէի, ունենալ և այլն։ Իսկ միւս ժամանակներին, զոր օրինակ կատարեալին, ապառնւոյն և անցեալին համար գործածւում են էմ բայը, այսպէս եղեւ իմ և այլն։

| | |
|---|---|
| կալաւ | կալեալ եղև, և այլն |
| կալաք | |
| կալայք | |
| կալան | |

Ապառնի

| | |
|---|---|
| Կալայց, պէտք բռնեմ | Կալեալ եղէց, պէտք բռնուիմ |
| կալցիս | կալեալ եղիցիս, և այլն |
| կալցի | |
| կալցուք | |
| կալջիք | |
| կալցին | |

Հրամայական

| | |
|---|---|
| Կա՛լ, կա՛, բռնէ՛ր | Կալեալ լե՛ր, բռնուէ՛ր և այլն |
| մի՛ ունիր | |
| կալա՛յք, կալարո՛ւք | |
| մի՛ ունիք | |

Ստորադասական

| | |
|---|---|
| Ունիցիմ, բռնեմ | Կալեալ լինիցիմ, բռնուիմ |
| ունիցիս | կալեալ լինիցիս |
| ունիցի և այլն | կալեալ լինիցի, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Ունել, բռնել | Կալեալ լինել, բռնուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կալեալ, բռնած | Կալեալ, բռնուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ունելոց, բռնելու | Ունելի, բռնուելու |

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում տամ, գամ, երթամ։

Պ. Տամ, գամ, երթամ խոնարհւում են այսպէս։

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ ներկայ

| | |
|---|---|
| Տամ, տալիս եմ | Տուեալ լինիմ, տրւում եմ |
| տաս | և այլն |
| տայ | |



| | |
|---|---|
| տամք | |
| տայք | |
| տան | |

Անկատար անցեալ.

| | |
|---|---|
| Տայի | |
| տայիր | |
| տայր, և այլն | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ետու, տուի | Տուայ, տրուեցայ |
| ետուր | տուար |
| ետ | տուաւ |
| տուաք | տուաք |
| ետուք | տուայք |
| ետուն | տուան |

Ապառնի

| | |
|---|---|
| Տաց, պէտք տամ | Տուայց, պէտք տրուիմ |
| տացես | տացիս |
| տացէ | տացի |
| տացուք | տացուք |
| տաջիք | տաջիք |
| տացեն | տացին |

Հրամայական

| | |
|---|---|
| Տո՛ւր, տո՛ւր | Տաջի՛ր, տրուէ՛ր |
| մի՛ տար | մի՛ տուեալ լինիր |
| տո՛ւք | տաջի՛ք, տուարո՛ւք |
| մի՛ տայք | մի՛ լինիք տուեալ |

Ստորադասական

| | |
|---|---|
| Տայցեմ, տամ | Տայցիմ, տրուիմ |
| տայցես, և այլն | տայցիս, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Տալ, տալ | Տուեալ լինել, տրուել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տուեալ, տուած | Տուեալ, տրուած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տալոց, տալու | Տալի, տրուելու |

---

| ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ |
|---|---|
| Սահմանական եղանակ ներկայ | |
| Գամ, գալիս եմ | Երթամ, գնում եմ |
| գաս | երթաս |
| գայ | երթայ |
| գամք | երթամք |
| գայք | երթայք |
| գան | երթան |
| Անկատար անցեալ | |
| Գայի, գալիս էի | Երթայի, գնում էի |
| գայիր, և այլն | երթայիր, և այլն |
| Կատարեալ անցեալ | |
| Եկի, եկայ | Զոքայ, գնացի |
| եկիր | չոքար |
| եկն | չոքաւ |
| եկաք | չոքաք |
| եկայք | չոքայք |
| եկին | չոքան |
| Ապառնի | |
| Եկից, պիտի գամ | Երթայց, պիտի գնամ |
| եկեսցես | երթիցես |
| եկեսցէ | երթիցէ |
| եկեսցուք | երթիցուք |
| եկեսջիք | երթիջիք |
| եկեսցեն | երթիցեն |
| Հրամայական | |
| Ե՛կ, արի՛ | Ե՛րթ, գնա՛ |
| մի՛ գար | մի՛ երթար |
| եկա՛յք | երթա՛յք |
| մի՛ գայք | մի՛ երթայք |
| Ստորադասական | |
| Գայցեմ, գամ | Երթայցեմ, երթամ |



| | |
|---|---|
| գայցես | երթայցես |
| գայցէ | երթայցէ |
| գայցեմք | երթայցեմք |
| գայցէք | երթայցէք |
| գայցեն | երթայցեն |
| Աներևոյթ | |
| Գալ, գալ | Երթալ, երթալ |
| Անցեալ ընդունելութիւն | |
| Եկեալ, եկած | Երթեալ, գնացած |
| Ապառնի ընդունելութիւն | |
| Գալոց, գալու | Երթալոց, երթալու |

ՉԷԶՈՔ

Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| Կամ, կենում եմ | Կեամ, ապրում եմ |
| կաս | կեաս |
| կայ | կեայ |
| կամք | կեամք |
| կայք | կեայք |
| կան | կեան |
| Անկատար անցեալ | |
| Կայի, կենում էի | Կէի, ապրում էի |
| կայիր | կէիր |
| կայր, և այլն | կեայր, և այլն |
| Կատարեալ անցեալ | |
| Կացի, կեցայ | Կեցի, ապրեցայ |
| կացեր | կեցեր |
| կաց, եկաց | կեաց, եկեաց |
| կացաք | կեցաք |
| կացէք | կեցէք |
| կացին | կեցին |
| Ապառնի | |
| Կացից, պետք է կենամ | Կեցից, պէտք է ապրիմ |
| Կացցես | կեցցես |
| կացցէ | կեցցէ |

| | |
|---|---|
| Կացցուք | կեցցուք |
| կացջիք | կեցջիք |
| կացցեն | կեցցեն |

Հրամայական

| | |
|---|---|
| Կա՛ց, մնացի՛ր | Կեա՛ց, ապրի՛ր |
| մի՛ կար | մի՛ կեար |
| կացէք | կեցէք |
| մի՛ կայք | մի՛ կեայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Կացցեմ, մնամ | Կեցցեմ, ապրեմ |
| կացցես, և այլն | կեցցես, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Կալ, մնալ | Կեալ, ապրել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կացեալ, մնացած | Կեցեալ, ապրած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կալոց, մնալու | Կելոց, ապրելու |

## ՏԵՂԻՈՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Մի քանի այլ և այլ կողմերը ցոյց տուող նախադրութիւններն որոնք են:

Պ. Մի քանի այլ և այլ կողմերը ցոյց տուող նախադրութիւններն են:

| | |
|---|---|
| Առաջի կամ առաջոյ, առաջը | Զհետ, զկնի, յետևից |
| | Ի վերայ, վերայ |
| Զկնի, յետոյ, յետևը, յետոյ | Ընդ, տակը |
| Ի, յ, մէջը, միջում | Ընդդէմ } դէմ |
| Ի մէջ, ի միջի, մէջտեղը | Հակառակ } դէմ |
| Արտաքոյ, դուրսը, դրսում | Մերձ, մօտ, մօտ |
| Ի ներքոյ, ներսը, ներսում | Դէպի, դէպ |
| Առ, մօտը, մօտին | Մինչև, մինչև |
| Առընթեր, կիցը | Հեռի, հեռու |
| Յանդիման, հանդէպ, դիմացը | Շուրջ, չորս կողմը |



Հ. Ի՞նչ հոլով խնդիր են պահանջում այս նախադրութիւնք:

Պ. Մեծ մասը սեռական, ոմանք տրական, բացառական, գործիական կամ ուրիշ նախադրութեամբ խնդիր, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Խոստովան լեր առաջի Աստուծոյ | Խոստովանէ Աստուծոյ առաջ |
| Կայր յետոյ դրանն, յետոյ նորա, զկնի վարագուրին | Դրան, նրա, վարագուրին ետևը կենում էր |
| Գնացին զհետ, զկնի նորա | Նրա ետևից գնացին |
| Եդ ի վերայ սեղանոյն | Սեղանին վերայ դրաւ |
| Նստէր ընդ հովանեաւ ծառոյն | Ծառին շուքին տակը նստում էր |
| Կային ի հրապարակի անդ | Կենում էին հրապարակում |
| Խաղաղութիւն էր ի մէջ նոցա | Նրանց մէջտեղ խաղաղութիւն կար (էր) |
| Կացին արտաքոյ դրանն | Դռնից դուրսը կեցան |
| Էր ի ներքոյ վարագուրին | Վարագուրին ներսն էր |
| Ագաւ առ նմա զայն գիշեր | Այն գիշեր նրա մօտ իջևանեցաւ |
| Տունն կայր առ դիականն | Տունը դիակին մօտ կենում էր |
| Պատգամաւորն անցեալ նստէր առընթեր նոյա | Պատգամաւորն անցնելով մօտիս նստում էր |
| Նստէր յանդիման նորա | Նրա դիմացը նստում էր |
| Երթայք ի գիւղն որ հանդէպ մեր կայ | Մեր դիմացի գիւղը գնացէք |
| Ընդդէմ մեր էր հողմն | Քամին մեզ դէմ էր |
| Հակառակ կայր նմա | Հակառակ էր կենում նրան |
| Տուն իմ մերձ է յեկեղեցւոյն | Տունս մօտ է եկեղեցուն |
| Նաւէաք դէպ յարևելս | Նաւում էինք դէպ արևելք |
| Ածին զնոսա մինչև ի դուռն քաղաքին | Նրանց բերին մինչև քաղաքին դուռը |
| Հեռի է տանէ և ի բարեկամաց | Տանից՝ բարեկամներից հեռի |

Ածին պարիսպ շուրջ զքաղաքաւն  Քաղաքին չորս կողմը պատ քաշեցին

## 30. Հրաման

Գիրքը սեղանին վերայ դրի. Մեր ետևից եկան. Ձեր տները գնացէք. Օտարի տունը մի՛ գնար. Իմ բաժինս ինձ տո՛ւր. Հայրդ պատասխան չի տալիս. Գրքերը տուր նրան. Շատ ձուկ բռնեցին. Սպասաւորները գինին խմեցին. Իւր եղբօր մօտ գնաց. Նրան ո՞ւր դրիր. Նրան բաւական պաշար տուին. Հաց գնելու երթանք. Նրա մարմինը դրին գերեզմանում. Ինձ եկէք. Շատ փող ունի. Մի բան չունինք. Նրան ընդունեց իւր տունը. Եղբայրդ ինձ եկաւ. Ինձ հետ արի, տեղը քեզ ցոյց կը տամ. Այդ ձեր իւղից մեզ տուէք. Ձեր բոլոր պէտքը ձեզ պէտք է տամ. Ինձ հետ դաշտը գնացին. փողի տեղ նրանց կերակուր տուինք. Քո պատկերդ պէտք է դնեմ սենեակումս. Պարտքի համար բանտ դրուեցաւ, բայց մի ժամից յետոյ հանուեցաւ այնտեղից. Ինչո՞ւ համար այդ մարդին փող ես տալիս փոխ. Նրան փոխ եմ տալիս, քանզի փողի պէտք ունի. Ջուր չեմ խմում, քանզի ծարաւ չեմ. Գինի խմեցինք, քանզի ջուր չը գտնուեցաւ. Ո՞ւր դրիր մատանին. Քո սնդուկում դրի գայն. Եղբայրդ ո՞ւր գնաց. Որսի գնաց. Զինուորներն եկան և մեզ բռնել ուզում էին. Իւր եղբօրը հետ եկաւ. Նրա եղբայրն եկաւ նրա հետ. Մեզ հետ եկէք. Իմ ձեռքիս տակն ունիմ. Ձեր իշխանութեան տակ զինուորներ ունիք. Նրանց վերայ յարձակուեցան. Իմ վերայ մի՛ լաք. Իմ առջևս մի՛ բերէք. Նրան քաղաքից դուրս հանին. Ճանապարհին նրան պատահեցինք գիւղին մօտ. Այս ամենը մեր առջևը գործուեցաւ. Նա սենեկից դուրսն էր կենում, ես ներսում. Հրապարակին մէջտեղը աղբիւր շինեց, և աղբիւրին վերայ կանգնեց իւր պղնձէ արձանը. Երբ



մօտն եկանք այն քաղաքին որ լերանը դիմացն է. Այգիները գիւղից շատ հեռի չեն. Քաղաքին բոլորտիքը պարտէզ է, պարտիզին մօտից (տես էջ 110) գետ է անցկենում. Ուզում էինք ելնել մինչև լերան գլուխը, բայց հազիւ մինչև կէսը կարացինք ելնել (հասնել). Շուրջս առին (շրջապատեցին) և խնդրում էին ինձանից որ նրան իրենց ձեռքը տամ. Նրանց վերայ ելան. Նրանք որ մեր առաջից էին գնում սկսան մեր ետևից գալ. Զուգեցինք նրանց ետևը կենալ. Երբ կամարներով կապուած սրահին տակ մտանք. Նաւը խարխսխ նետեց աշտարակին դիմացը. Նաւահանգստին ներսը վտանգ չկայ, նրանից դուրս է վտանգը. Մինչև փողոցին անկիւնը արի, և այնտեղից յետ դարձիր։

Ետևից գալ, գալ զկնի
Պատասխան, պատասխանի
Բռնեմ (ձուկ, ևլն.) ունիմ, կալայ
Խմեմ, ըմպեմ
Ո՞ւր, ո՞ւր (եթէ շարժականով), յո՞
Բաւական, բաւ բաւականին
Մի բան (բացասական բայի հետ), ոչինչ
Տեղ (նախ.), փոխանակ (սեռականով)
Փողի տեղ, փոխանակ արծաթոյ
Տակ, ընդ, գործածականով իմ ձեռքիս տակ, ընդ ձեռամբ իմով
Ճանապարհ, ճանապարհոյն
Պատահել, հանդիպել
Մէջտեղ, ի մէջ
Արձան, պատկեր
Պղնձէ, պղնձի
Դիմացը, յանդիման, հանդէպ
Այգիներ, այգեստան
Բոլորտիքը (նախ.) շուրջ զ գործածականով Նրա բոլորտիքը, շուրջ զնովաւ
Դրուեցաւ, եդաւ (դնեմին կրաւոր.)
Ետքը (նախ.), (յետ սեռակ.)
Այնտեղից, անտի
Ինչո՞ւ համար, ընդէ՞ր
Պէտք ունիմ, պէտս ունիմ
Սնդուկ, արկղ, արկեղ
Որսի երթալ (գնալ) երթալ որսոյ
Բոլորտիքն առնել, շուրջն առնել, լինել շուրջ
Ելնել (մէկին վերայ) յառնեմ
Կամարներով կապուած, կամարակապ

*Նետել (խարխսխ) ընկնում յետ, յետ (մակբայ)*

---

ԼՈՒԾՈՒՄՆ

*Եդի զգրատախտակն ի վերայ սեղանոյն. Եդի, դնեմ բային կտ. եզ. ա. դէմքը. տէր բային ես, զօրութեամբ իմացւում է։ Զգրատախտակն, զոյ. հայց. սեռի խնդիր եդի ին։ Ի վերայ սեղանոյն, նախադրութեամբ խնդիր եդիին. տեղւոյ պարագայն է ցոյց տալիս։ Եդի, դրի.—Ո՞վ—Ես.—Ի՞նչ բանը.—Զգրատախտակն, գիրքը.—Ո՞ւր.—Ի վերայ սեղանոյն, սեղանին վերայ։*

*Եկին ընդ նմա. Եկին, գամ բային կտ. յք. գ. դէմքը. տէր բային է նոքա, զօրութեամբ։ Ընդ նմա, նախադրութեամբ խնդիր. գալուն մէկ պարագան է ցոյց տալիս։ Եկին, եկան.—Ո՞վ.—Նոքա, նրանք. որ՞ ե-տևից։—Ընդ նմա, մեր ետևից. Նախադրութեամբ խնդիր եկին ին։*

---

## ԴԱՍ ԻԵ.

### ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

*Հ. Ի՞նչպէս են խոնարհւում զարթնում, երկնչիմ, եղանիմ, լինիմ բայերը։*

*Պ. Զարթնում, երկնչիմ, եղանիմ, լինիմ խոնարհւում են այսպէս։*

| ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ |
|---|---|
| *Սահմանական եղանակ ներկայ* | |
| *Զարթնում, արթնանում եմ* | *Երկնչիմ, վախենում եմ* |
| *զարթնուս, և այլն* | *երկնչիս, և այլն* |
| *Անկատար անցեալ* | |
| *Զարթնուի, արթնանում էի* | *Երկնչէի, վախենում էի* |
| *զարթնուիր, և այլն* | *երկնչէիր, և այլն* |
| *Կատարեալ անցեալ* | |
| *Զարթեայ, արթնացայ* | *Երկեայ, վախեցայ* |
| *զարթեար* | *երկեար* |



| | |
|---|---|
| *զարթեաւ* | *երկեաւ* |
| *զարթեաք* | *երկեաք* |
| *զարթեայք* | *երկեայք* |
| *զարթեան* | *երկեան* |
| *Ապառնի* | |
| *Զարթեայց, պէտք է արթնանամ* | *Երկեայց, պէտք է վախենամ* |
| *զարթիցես* | *երկիցես* |
| *զարթիցէ* | *երկիցէ* |
| *զարթիցուք* | *երկիցուք* |
| *զարթիջիք* | *երկիջիք* |
| *զարթիցեն* | *երկիցեն* |
| *Հրամայական* | |
| *Զարթիր, արթնացի՛ր* | *Երկիր, վախեցի՛ր* |
| *մի՛ զարթնուր* | *մի՛ երկնչիր* |
| *զարթիք* | *երկերուք* |
| *մի՛ զարթնուք* | *մի՛ երկնչիք* |
| *Ստորադասական* | |
| *Զարթնուցում, արթնանամ* | *Երկնչիցիմ, վախենամ* |
| *զարթնուցուս* | *երկնչիցիս* |
| *զարթնուցու* | *երկնչիցի* |
| *զարթնուցումք, և այլն* | *երկնչիցուք, և այլն* |
| *Աներևոյթ* | |
| *Զարթնուլ, արթնանալ* | *Երկնչիլ, վախենալ* |
| *Անցեալ ընդունելութիւն* | |
| *Զարթուցեալ, արթնացած* | *Երկուցեալ, վախեցած* |
| *Ապառնի ընդունելութիւն* | |
| *Զարթնլոց, արթնանալու* | *Երկնչելոց, վախենալու* |

| ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ |
|---|---|
| *Սահմանական եղանակ, ներկայ* | |
| *Եղանիմ, լինում եմ* | *Լինիմ, լինում եմ* |
| *եղանիս, և այլն* | *լինիս, և այլն* |
| *Անկատար անցեալ* | |
| *Եղանէի, լինում էի* | *Լինէի, լինում էի* |
| *եղանէիր, և այլն* | *լինէիր, և այլն* |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Եղէ, եղայ | Նոյն |
| եղեր | |
| և այլն | |

Ապառնի

| | |
|---|---|
| Եղեց, պէտք է լինեմ | Լիցիմ, պէտք է լինեմ |
| եղիցիս | լիցիս |
| եղիցի | լիցի |
| եղիցուք | լիցուք |
| եղիջիք | լիջիք |
| եղիցին | լիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Եղիջի՛ր, եղի՛ր | Լե՛ր, լիջի՛ր, եղի՛ր |
| մի՛ եղանիր | մի՛ լինիր |
| եղերո՛ւք | լերո՛ւք |
| մի՛ եղանիք | մի՛ լինիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Եղանիցիմ, լինեմ | Լինիցիմ, լինեմ |
| եղանիցիս, և այլն | լինիցիս, և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Եղանել, լինել | Լինել, լինել |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եղեալ, եղած | Լեալ, եղած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եղանելոց, լինելու | Լինելոց, լինելու |

## ԴԱՍ ԻԶ.

### Զ ՆԱԽԴՐԻՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Բացի հայցականից ուրիշ ո՞ր հոլովներով գործածւում է զ նախդիրը։

Պ. Զ նախդիրը շատ անգամ գործածւում է նաև բացառականով և գործիականով։

Հ. Ի՞նչ է կոչւում և ի՞նչ է նշանակում զ նախդրի բացառականը։



Պ. Զ նախդրի բացառականը կոչւում է պատմական, և նշանակում է մի բանի վերայով, զոր օրինակ.

| Բացառական | Պատմական |
|---|---|
| Ի մանկանէն, տղից | Զմանկանէն, տղի վրայով |
| Յինէն, ինձանից | Զինէն, իմ վերայով |
| Ի նմանէ, նրանից | Զնմանէ, նրա վրայով |
| Ի նոցանէ, նրանցից | Զնոցանէ, նրանց վերայով |
| Յումեքէ, մինից | Զումեքէ, մինի վրայով |
| Յիմեքէ, մի բանից | Զիմեքէ, մի բանի վրայով |
| Յայլմէ իմեքէ, մի այլ բանից | Զայլմէ իմեքէ, մի այլ բանի վրայով |

Հ. Ի՞նչ է կոչւում և ի՞նչ է նշանակում զ նախդրի գործիականը։

Պ. Զ նախդրի գործիականը կոչւում է պարառական և նշանակում է. 1. Մէկին կամ մի բանի շուրջը և 2. Մի բանի ժամանակները, զոր օրինակ.

| Գործիական | Պարառական |
|---|---|
| Նովաւ, նրանով | Զնովաւ, նրա բոլորտիքը, շուրջը |
| Քաղաքաւ, քաղաքով | Զքաղաքաւն, քաղաքին շուրջը |
| Ինեւ, ինձնով | Զինեւ, իմ շուրջս |
| Ինն ժամաւ, ինը ժամով | Զինն ժամաւ, ինը ժամի ժամանակները |
| Միջօրէիւ, կէսօրով | Զմիջօրէիւ, կէսօրուան ժամանակները |

Հ. Ո՞ր բայերն են որ փոխանակ բացառականի առնում են պատմական խնդիր։

Պ. Կախել և ունել (բռնել) բայերը. ուստի ասւում է՝ կախել զփայտէ, զծառոյ, զորմոյ. փայտից, ծառից, պատից վայր կախել. ունել զձեռանէ, զփողոյն, բռնել ձեռքից, վզից։

Հ. Ո՞ր բայերն են որ ուզում են պարառական խնդիր։

Պ. Արկանել և ածել բայերը, ուստի ասւում է։

Արկեալ էր զիւրեւ կամ զնա· Վերան մազից մի վերար-

| | |
|---|---|
| ջամճ վերարկու մազեղէն | կուգձած էր (հագած) |
| Արկին փշրվա քղամիդ կարմիր | Նրան կարմիր քղամիդ հագցրին |
| Ածել գոտի, սուր ըմբշով | Մէջքը գոտի, սուր կապել |
| Ածել որմ, պատուար շէօշէօ | Քաղաքը պատով, պատուարով պատել |

31 Հրաման

## զ ՆԱԽԴԻՐ ԱՑԼ ԵՒ ԱՑԼ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Նրա ձայնը լսեցինք. Յովսէփ իւր եղբայրներին ճանաչեց. Էգ առիւծը պաշտպանում է իւր ձագերին. Երկրագործը մշակում է երկիրը. Քրիստափոր Կոլոմպոսը գտաւ Ամերիկա. Նրա վերայով լսեցինք թէ եղբօրը մօտն է. Ի՞նչ բանի վրայով է խօսում այդ գիրքը. Այս գիրքը խօսում է հանգերի վրայով. Տրովադացւոց պատերազմին վերայ ո՞վ գրեց. Իրենց ժամանակի դէպքերի վերայ գրում են Եղիշէ վարդապետ և Ղազար Փարպեցի. Այդ խօսքը ո՞րի վրայով էր. Մեր խօսքը թագաւորին որդուն վերայով էր. Արանք ամբաստանում են՝ նրա վրայով թէ թշնամիներին ծածուկ օգնական է. Ինձ համար ո՞վ եմ ասում էք. Ձեր վրայով լսում ենք թէ շատ հարուստ էք. Ջուր բերելու գնացին. Մի բան էին փնտռում որ նրա վերայով ամբաստանութիւն անեն. Քաղաքին շուրջը պատ քաշեցին. Թշնամիները շուրջս պատեցին. Նրա վերայ կարմիր քղամիդ տուին. Իւր հանդերձը վրան առաւ. Ձեռքից բռնելով ներս մտցրեց. Մազերից բռնելով քաշում էին. Ջորս ծայրերից (պոչերից) կախուած մի աման տեսաւ. Մի խոյ Սաբեկայ ծառից կախուած կենում էր եղջիւրներից. Մէկ ոտքից կախուած էր. Տղաքն իրենց մայրերին վզից կախեցին. Ծուռ է նայում քեզ. Երևի թէ քեզ դէմ մի բան ունի. Ծառաները նրա շուրջն էին կենում. Նրա հանդերձից բռնեց. Վրան մի կտաւ ա-



ռած էր, քանզի մերկ էր. Նրա արիւնից պատին շուրջը ցատկեց. Կռապաշտ ազգերից ոմանք իրենց զաւակներին կրակից անցկացնելու սովորութիւն ունէին. Վարագդատ անունով մի թագաւորի վերայով պատմում է թէ Եփրատ գետից ցատկեց. Հին ժամանակում ինչան սգոյ և ապաշխարութեան սովորութիւն էր քուրձ հագնել և գլխին հող դնել. Տղին վերայով ուզում եմ լսել. Կռուոյն վրայով մի ստոյգ բան չի պատմւում. Ինչո՞ւ համար իմ վրայովն ամբաստանութիւն էք անում. Նրա վրայով շատ բան ենք լսում. Նրանց վրայով ասուած խօսքերը սուտ են. Մինի կամ մի բանի վրայով երբէք լաւ կամ վատ գրած չեմ. Ուրիշ բանի վրայով խօսենք, ոչ միշտ մի և նոյն բաների վերայ. Բազմութիւնն նրա շուրջը դիզուեցաւ. Քաղաքին շուրջը նստան. Կէս օրուան չափ կէս գիշերուան ժամանակները քաղաքից գնում էին. Ճանապարհի կէսին մօտ վրան հասան. Այն ժամանակներն այն երկու ազգին մէջտեղ պատերազմ կար։

| | |
|---|---|
| Էգ, մատակ | Քարշեմ, քարշէմ |
| Ձագ (առիւծի, շան) | Ծայր, (մի շորի) (սեռուսկան) |
| Երկրագործ, հողագործ | |
| Ի՞նչ բան, ըի՞նչ | Ծուռ նայել |
| Ի՞նչ բանի վրայով | (Մէկին դէմ, մի բան ունենալ (սրտում) (զումեքէ) |
| Խօսել, ճառել | |
| Հանք | Ցատկել, (ջուր, ևլն.) (գործիական) |
| Ո՞վ, ո՞վ, ո՞ | Այրել (կրակին շուրջը դնել) |
| Ո՞րբ վրայով | |
| Թագաւորի որդի, արքայորդի | Սովորութիւն ունենալ |
| Ծածուկ, գաղտ | |
| Օգնական | |
| Ջուր, ոսկի և այլն բերելու | Ցատկել (թռչել) (գործ.) |
| երթալ, ղրկել, երթալ | |
| կամ | Հին ժամանակ |

Գլխին հող դնել, տըքմա՞նել
հող դգլխով
Մի սատիկ բան չ...էնչ
տոյգ
Ամբաստանութիւն անել,
չարախօսել
Ասուած խօսքերը, ըսածն
որ ասին
Գրած չեմ, չէ՞ ին՞ գրեալ
Դիզուել, խռնիմ

Կէս օրուան ժամանակները
ղ՚իջօրէն, ղնաատրան տա-
ուրէ, ղ՚իջատուրէ
Կէս գիշերուան ժամանակ-
ները, ղ՚էջ գիշերա,
ղնատարու գիշերա
Բազմութիւն, ամբոխ
Ճանապարհի կէսին մօտ,
ղմիջօյա ճանապարհին
Այն ժամանակները, ղոյ-
նոտ ժամանակա

Հ. Ո՞ր բայերը զարմնում և երկնչէ՞ին պէս խո-
նարհւում են:

Պ. Զարմնում ին պէս խոնարհւում են։
Այգնում, ուռչում եմ | Ցասնում, բարկանում եմ
Երգնում, երդւում եմ | Քաղցնում, քաղցենում եմ
Ոստնում, ցատկում եմ | Փախնում, կը փախչեմ

Երկնչէ՞ին պէս խոնարհւում են:
Թռչիմ (*), գաղւում եմ | Մօտչիմ, մօտենում եմ
Թռչիմ, թռչում եմ | Մորթնչիմ, կռւում եմ
Հանգչիմ, հանգչում եմ | Փախչիմ, փախչում եմ

32. Հրամանք

Հայրդ արթնացաւ, և քեզ կանչում է. Զարա-
գործները վախենում են իշխանութիւնից. Անիրաւ
տեղը բարկացաւ. Իմ տանս մէջ պէտք է հանգչիմ.
Թռչունները ծառերի ճիւղերին վերայ հանգչում
են. Աստուծմէ վախեցիր. Սուտ երդում չանես. Մեր
զինուորները քաջութեամբ կռուեցան. Մօտեցաւ
նրան և աղաչում էր. Երբ նրա ձայնը լսեց, փա-
խաւ. Այս իրեն ասելու վախեցան. Ինչու՞ վախենում
էք նրանցից. Անզգամներից փախէք. Երդւում արդ
ինձ նրան վնաս չանելու. Քո խօսքերից մէջ հա-

(*) Աշակերտը այս բայերը խոնարհէ...



ւատարիմ եղիր. Քաջ եղիք. Հեզ մի լինիք. Երբ
արթնացան, զայն իրենց մօտ տեսան. Անօթեցայ և
ինձ ուտելիք չը տուիք. Տղերք հնազանդ լինին ի-
րենց ծնողացը. Վաղուան (էգուցուան) պատրաստ
եղիք. Ինչու՞ բարկանում ես. Մի չար բան չգոր-
ծեցի։

Կանչեմ, կոչեմ
Անիրաւ տեղը, յանիրաւի
Ծիւղ, ոստ
Սուտ (մկ.), սուտ

Ինչու՞, ընդէ՞ր
Վնաս անել, մեղանչել
Ուտելիք տալ, տալ ուտել
Վաղուան (էգուցուան), առ-
ւաւօտ

## Դ Ա Ս Ի Է.

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Հայցական հոլովը միշտ սեռի խնդի՞ր է թէ
իբրև բնութեան խնդիր նաև գործածւում է։

Պ. Հայցական հոլովը գործածւում է նաև իբրև
բնութեան խնդիր։ 1. Ժամանակի տևողութիւն և չափ ցոյց
տալու համար, և, ո՞րչափ ժամանակ, ո՞րչափ, ո՞րչափ տեղ,
հարցմանց պատասխան է. զոր օրինակ՝ մնաց անդ
զաւուրս հինգ, Այնտեղ մնաց հինգ օր։ Այս խօսքին
մէջ զաւուրս հինգ, հինգ օր, հայցականը՝ բնութեան
խնդիր է, ցոյց է տալիս մի ժամանակի տևողութիւն,
և ո՞րչափ ժամանակ, հարցման պատասխան է։ Ո՞ր-
չափ ժամանակ մնաց.—Հինգ օր։

Ետ նոցա ցորեան քառս հինգ. Նրանց հինգ քառ
ցորեն տուաւ։ Այս խօսքին մէջ քառս հինգ, հինգ
քառ, հայցականը՝ բնութեան խնդիր է, չափ է ցոյց
տալիս, և ո՞րչափ հարցման պատասխան է։ Ո՞րչափ
ցորեն տուաւ.—Հինգ քառ։

Գնացաք մղոնս երիս, երեք մղոն քալեցինք։ Այս
խօսքին մէջ մղոնս երիս, երեք մղոն, հայցականը՝ բնու-
թեան խնդիր է, չափ է ցոյց տալիս, և ո՞րչափ տեղ

հարցման պատասխան է։ Ո՞րչափ տեղ գնային (քալեցին).—Երեք մղոն։

33 Հրաման

Աշակերտ Թուական ածականները Գոյականներից յետոյ դնելով համաձայնեցնեն նրանց հետ

Հայրս եօթանասուն տարի ապրեցաւ. Երեք օր փնտռեցին նրան. Պատերազմը հինգ օր տևեց. Եօթ ժամ խօսեցաւ. Օրը տասը ժամ աշխատում եմ, երկու ժամ հանգչում եմ, երեք ժամ ուտում և զբօսանք անում, մնացած ժամերին ննջում եմ. Սեանը բարձրութիւնը վեց կանգուն էր. Քաղաքը մեզանից հեռի է մէկ օրուան ճանապարհ. Նրանց երկու մղոն տարան. Նրանց հինգ քոռ ցորեն տուին. Պատը բարձրացրին եօթը կանգուն. Սրա համար ութ տարի աշխատեցայ. Աշտարակը հեռի է մեզանից երկու քարընկեց. Եղբայրս երեսուն տարի ապրեցաւ. Տասը տարի եղբօրը մօտին բնակեցաւ. Ութը մղոն քալեցինք. Հարիւր լիտր իւղ ծախեցինք. Նրանց սովորեցնում էր տասուերկու օր. Շատ օրեր նեղութիւն կրեցին. Մի ամբողջ օր ոչ կերաւ և ոչ խմեց. Վեց օր գործէ. Նրանց մօտ երկու օր կեցանք. Եօթն օր հարսանիք արին. Մեզ երկու մարդ եկան. Երկու օր յետոյ որդին մեռաւ. Երկու քանքար շահեցայ. Վեց մարդ տասն օր աշխատեցան. Զորս օր նրանց սպասեցինք. Տարւոյն մէջ տասուերկու ամիս կայ, ամսոյն մէջ երեսուն կամ երեսուն և մի օր, օրուան մէջ քսան և չորք ժամ, ժամում վաթսուն րոպէ. Երկու ամիս է ինչ որ եղբայրս մեռաւ. Այնտեղ նստայ մի ժամ. Բոլոր այս գիշեր աշխատեցանք. Ինչու համար բոլոր ցերեկը դատարկ էք մնում. Այն օր նրա մօտ օթևան արին. Ինձ մի բաժակ ջուր տուր. Շատ օրեր այնտեղ կեցանք. Երկու օր նրանց հետ քալելուց յետոյ մի գիւղ հասանք. Տասը ժամ անօթի (սոված) կացի. Սրահում եօթը սիւն կանգնեցրեց.



Միայնակ էր բնակւում մի տան մէջում. Մի մարգով եկաւ. Մի Թզից մահ եղաւ. Երեք մարդերի իշխանութիւնը (եռապետութիւնը) երկայն չըտևեց. Զորս զինուորով բերուեցաւ. Նա հարիւրից աւելի ողէքանց վարպետ էր. Երեք հազարի չափ մարդերի խօսեցաւ. Ութ օր յետոյ մեռաւ. Տասուերկու որդի ունէր. Վեց տարի առաջ տեսայ նրան. Հինգ ամիս յետոյ սովը դադարեցաւ։

| | |
|---|---|
| Ապրիմ, կեամ | Երկայն, ընդերկար |
| Տարի, ամ | Վարպետ, վարդապետ |
| Փնտռել, խնդրեմ | Նեղութիւն կրել, տառապիմ |
| Օրը, յաւուր | Ամբողջ, ողջոյն |
| Ննջել, ննջեմ | Կենալ, կալ |
| Պատ, որմ | Անել, առնեմ |
| Քալել, գնամ | Կայ, էն |
| Ծախել, վաճառեմ | Քանի որ (ինչ որ), յորմէհետէ |
| Սովորեցնել, ուսուցանեմ | Աշխատել, աշխատ լինիմ |
| Բոլոր այս գիշեր, զամենայն գիշեր | Այնտեղ, անդ |
| Բոլոր ցերեկը, զտիւն կամ զօրն ողջոյն | Ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, է իմ, քո, նորա. մեր, ձեր, նոցա |
| Օթևան անել, ագանիմ | Առաջ, յառաջ քան |
| Բաժակ, բաժակ | Աւելի, աւելի քան |
| Անօթ (սոված), նօթի | (Հազարի) չափ, իբրև |
| Միայնակ, առանձին | Դադարիմ, դադարեմ, դադարեցի |
| Մարդ, այր | |

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Տարան զնոսա մղոնս երկուս. Տարան, բայ ներգ. կատ. յոգ. գ. դէմք, տանիմ ից.—Տարան, ո՞վ.—Նոքա. նոքա, յոգ. գ. դէմք, զօրութեամբ իմացւում էական դեր. յոգ. գ. դէմք, տէր բայի տարան ին։—Նոքա տարան. զո՞վ.—Զնոսա. զնոսա, էակ. դեր. գ. դէմք. յոգ. հայց. սեռի խնդիր

տարան ին. — Տարան զնոսա. ո՞րչափ տեղ. — Մղոնս երկուս. Հայց. բնութեան խնդիր տարան ին, երկայնութեան չափ է ցոյց տալիս:

## ԴԱՍ ԻԸ.

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ
## Ի ՁԵՌՆ, ՀԱՆԴԵՐՁ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Հ. Ուրիշ ո՞ր բառերին հայցականը բնութեան խնդիր է:

Պ. Բնութեան խնդիր է նաև՝

2. Ճանապարհ, ճանապարհ բառին հայցականը, և ո՞ր ճանապարհիւ հարցման պատասխան է. զոր օրինակ՝ Երթայր ճանապարհ լերինն. Լերան ճանապարհից գնում էր. Երթայր, գնում էր, ո՞ր ճանապարհ ս.— Զճանապարհ լերինն, լերան ճանապարհիւ. զճանապարհ հայցական հոլովը բնութեան խնդիր է երթայր բառին:

3. Օրինակ (եղանակ), ձև, ազգ (տեսակ) բառերին հայցականը նոյնպէս բնութեան խնդիր է, և ի՞նչ եղանակաւ, ի՞նչ ձևով, ի՞նչ կերպով, հարցման պատասխան է. զոր օրինակ՝ խօսեցաւ զայս օրինակ. այս կերպով խօսեցաւ: Խօսեցաւ ի՞նչ կերպով.— Զայս օրինակ, այս կերպով. զայս օրինակ, հարցման հոլովը բնութեան խնդիր է խօսեցաւ ին:

### Ի ձեռն, հանդերձ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Ի՞նչ են նշանակում և ի՞նչ հոլով խնդիր են ուզում ի ձեռն, հանդերձ նախադրութիւնները:

Պ. Ի ձեռն նախադրութիւնը նշանակում է ձեռքով, և առնում է սեռական հոլով խնդիր. հանդերձ նշանակում է մէկտեղ, հետը և առնում է գործիական հոլով խնդիր. զոր օրինակ՝ ի ձեռն նորա, նշանակում է



նորա ձեռքով, հանդերձ նովաւ, մէկտեղ (ի միասին), նրա հետ:

### 34. Հրահանգ

Երեք օրուան ճանապարհ գնացին. Ձեր ճանապարհը գնացէք. Հասարակաց ճանապարհից գնանք. Հեռի ճանապարհ գնաց. Նրանց հետ ճանապարհ մի՛ գնայ. Երկայն ճանապարհից գնալ չէին ուզում. Մարդիկը լերան ճանապարհից նրանց ետևից ընկան. Ո՞ր ճանապարհից գնանք. Ուղիղից գնանք. Նրանց երկայն ճանապարհից ուղարկեց, ինքը կարճից գնաց. Երբ մի օրուան ճանապարհ եկան. Քաղաքից երկու օրուան ճանապարհ հեռացանք. Այս կերպով խօսեցաւ նրանց հետ. Ամենքն էլ նոյն գունով և նոյն ձևով հանդերձներ հագնում են. Եղբօրը հետ մէկտեղ այստեղ եկաւ. Աթէնքում եկան կնոջմով և տղերքանցով միատեղ. Այս եկեղեցին որի՞ ձեռքով շինուեցաւ. Իտալացի ճարտարապետների ձեռքով. Աստուած մեծամեծ բաներ կատարում է անզօրների և պզտիկների ձեռքով. Թագաւորական պալատին ձևով իրան պալատ շինեց. Թշնամեաց նաւերի ձևով նաւեր շինել տուաւ, բայց ուրիշ տեսակ ներկել տուաւ նրանց. Իմ ձեռքովս հասաւ այն պատուէր. Բարեկամների ձեռքով դաւաճանութիւնն իմացրեց նրան. Որի՞ (ո՞ւմ) ձեռքով ստացար այդ ճարտարութիւնը. Մեր ձեռքով չէ՞ միթէ:

| | |
|---|---|
| Հասարակաց (ճանապարհ) | Որի՞, ո՞ւմ ձեռքով, յո՞յր ձեռն |
| հասարակաց, արքունի (ճանապարհ) | Մեծամեծ բաներ, մեծամեծս |
| | Կատարել, վճարել |
| Ետևից ընկնել, պնդել զհետ | Անզօր, տկար |
| Ուղիղ, ուղղորդ | Պզտիկ, մանուկ |
| Մէկտեղ, միատեղ, հանդերձ | Պալատ, ապարանք |
| Այստեղ (շարժում), այսր | Թագաւորական, արքունի |
| Ամէն, Ամէնք, յԱմէնս (շր.) | Ձև, կերպ, եղանակ, օրինակ |
| Տղայք, մանկունք | Տեսակ, ազգ |

Պատասխանութիւն, պատասխան  Հարստութիւն, մեծութիւն
Իմացնել, գիտացուցանել  Զէ միթէ կամ չէ ոչ, ո՞չ ապաքէն

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Գնացին ճանապարհ երեք աւուրց. Երեք օրուան ճանապարհ գնացին։ Գնացին, բայ չէզոք կատ. յոգ. գ. դէմք։ Գնացին, ո՞վ, ովքե՞ր. — Նոքա. նոքա՛ էակ. դեր. գ. դէմք. յոգ. ուղղ. տէր բայի գնացին ին, զօրութեամբ. — Նոքա գնացին. ուրքա՞ն տեղ — Երեք աւուրց ճանապարհ, երեք օրուան ճանապարհ (միջոց, տեղ). ճանապարհ՝ հայց. բնութեան խնդիր է գնացին ին, քանակի չափ, երկայնութիւն, ճանապարհ ցոյց տուող բառերն հայերէն հայցական կը դրուին։

Խօսեցաւ ընդ նոսա զայս օրինակ. Նրանց հետ այս կերպով խօսեցաւ։ Խօսեցաւ, բայ չէզ. կատ. եզ. գ. դէմք։— Խօսեցաւ, ո՞վ. — Նա. նա՛ էակ. դեր. գ. դէմք. եզ. ուղղ. տէր բայի խօսեցաւ ին, զօրութեամբ։— Նա խօսեցաւ ո՞ւմ, ում հետ. — Ընդ նոսա, նրանց հետ. Ընդ նոսա՝ նախադրութեամբ խնդիր խօսեցաւ ին։ Նա խօսեցաւ ընդ նոսա, ի՞նչ կերպով. — Զայս օրինակ, այս կերպով. Զայս օրինակ՝ հայցական բնութեան խնդիր խօսեցաւ ին. կերպ, եղանակ ցոյց տուող բառեր հայերէն հայցական են դրւում։

---

## ԴԱՍ ԻԹ.

### ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ. ՏԱՄ ԲԱՅՈՎ ԱՆՆԵՐԵԻՈՒԹ

Հ. Ո՞ր բայերը կոչւում են անցողական։

Պ. Հայերէն լեզուն մի մասնաւոր յատկութիւն ունի որ ամեն չէզոք բայ կարող է ներգործականի փոխել, զոր օրինակ՝ զօրանամ, զօրացուցանեմ, նստիմ, նստուցանեմ։ Այսպիսի բայեր կոչւում են անցողական։

Հ. Ի՞նչպէս կը շինուին անցողական բայերը։



Պ. Անցողական բայերը կը շինուին՝ չեզոք բային կատարեալ եզակի առաջին դէմքին վերջին ձայնաւորը փոխելով ուցանեմի, զոր օրինակ։

| | Կատարեալ | անցողական |
|---|---|---|
| Ննջեմ | ննջեցի | ննջեցուցանեմ |
| անցանեմ | անցի | անցուցանեմ |
| աշխատիմ | աշխատեցայ | աշխատեցուցանեմ |
| խաղամ | խաղացի | խաղացուցանեմ |
| լնում | լցի | լցուցանեմ |
| զգենում | զգեցայ | զգեցուցանեմ |

Հ. Ի՞նչ զարտուղութիւն կայ այս կանոնից։

Պ. Կորնչիմ բային վերայ փոխանակ ուցանեմի աւելացնում է ուսանեմ, և փլանիմ բային վերայ՝ ուզանեմ, զոր օրինակ.

| | Կատարեալ | անցողական |
|---|---|---|
| Կորնչիմ | կորեայ | կորուսանեմ |
| փլանիմ | փլայ | փլուզանեմ |

Հ. Ի՞նչպէս են խոնարհւում անցողական բայեր։

Պ. Անցողական բայեր խոնարհւում են այսպէս։

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱԻՈՐ |
|---|---|
| Սահմանական եղանակ ներկայ | |
| Հատուցանեմ, վճարում եմ | Հատուցանիմ, վճարւում եմ |
| Հատուցանես, և այլն | Հատուցանիս, և այլն |
| Անկատար անցեալ | |
| Հատուցանէի, վճարում էի | Հատուցանէի, վճարւում էի |
| Հատուցանէիր, և այլն | Հատուցանէիր, և այլն |
| Կատարեալ անցեալ | |
| Հատուցի, վճարեցի | Հատուցայ, վճարուեցայ |
| Հատուցեր | Հատուցար |
| Հատոյց | Հատուցաւ |
| Հատուցաք | Հատուցաք |
| Հատուցէք | Հատուցայք |
| Հատուցին | Հատուցան |

Ապառնի

| | |
|---|---|
| Հատուցից, պէտք է վճարեմ | Հատուցայց, պէտք է վճարուեմ |
| հատուսցես | հատուսցիս |
| հատուսցէ | հատուսցի |
| հատուսցուք | հատուսցուք |
| հատուսջիք | հատուսջիք |
| հատուսցեն | հատուսցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Հատո՛, վճարէ՛ | Հատուցի՛ր, վճարուէ՛ր |
| մի՛ հատուցաներ | մի՛ հատուցանիր |
| հատուցէք | հատուցարո՛ւք |
| մի՛ հատուցանէք | մի՛ հատուցանիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Հատուցանիցեմ, վճարեմ | Հատուցանիցիմ, վճարուիմ |
| հատուցանիցես, և այլն | հատուցանիցիս և այլն |

Աներևոյթ

| | |
|---|---|
| Հատուցանել, վճարել | Հատուցանել (իլ) վճարուիլ |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Հատուցեալ, վճարած | Հատուցանելոց, վճարելու |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Հատուցեալ, վճարուած | Հատուցանելի, վճարուելու |

35. Հրահանգ

Շրջիմ (*). Դառնամ. Մատչիմ. Հասանեմ. Վերանամ. Թռչիմ. Ճանաչեմ. Զբօսնում. Շիջանիմ. Յառնեմ. Գնամ. Կեամ. Կամ. Լամ. Խոնարհիմ. Սնանիմ. Ծնանիմ. Մեղանչեմ. Բուսանիմ. Զօրանամ. Գօսանամ. Դառնանամ. Ուսանիմ. Ամաչեմ. Լնում. Զարմանամ. Իմանամ. Զգամ. Վրիպիմ. Հաւանիմ. Հաճիմ. Յուսամ. Մոռանամ. Մոլորիմ. Բարձրանամ. Թուլանամ. Խստանամ. Սովորիմ. Ժառանգեմ. Զովանամ. Ցրտանամ. Ուծանամ. (Մէկից սառչիլ). Զեռնում. Մեծանամ. Զարթնում. Ագանիմ. Հնազանդիմ. Դադարիմ. Ապրիմ. Տրտմիմ։

(*) Աշակերտք նշանակեալ բայերի անցողականները թող շինեն։



## ՏԱՄ ԲԱՅՈՎ ԱՆԵՐԵՒՈՅԹ

Հ. Տամ բայով աներևոյթն Հայերէն ի՞նչ է նշանակում։

Պ. Հայերէն ամեն աներևոյթ, մանաւանդ ներգործական բայեր տամ բայով կարող է գործածուել, ինչպէս՝ տալ ուտել, տալ խօսել, տալ անցանել, և այլն։ Տամ բայն այս կերպ գործածութեան մէջ մի բան անել տալ կամ թողլ տալ նշանակում է։

| | |
|---|---|
| Ետ նմա ըմպել | Նրան խմել տուեց |
| Ոչ ետ նմա ոգի առնուլ | Նրան շունչ առնել չտուեց |
| Տալ քեզ ճաշակել | Քեզ ուտել պէտք է տամ |
| Տո՛ւր ընթեռնուլ գիրս | Այդ գիրքը կամ գրուածքը կարդալ տո՛ւր |
| Ոչ տալ քեզ մտանել ի ներքս | Քեզ չեմ թողլ տալ ներս մտնել |

36. Հրահանգ

Եղբայրդ իւր պարտքը չի վճարում. Երբ տղան կաթից կտրուեց. Ձեռքից բռնելով վերցրեց. Աշակերտները նրան արթնացրին. Նրան իւր հանդերձները հագցրին. Տղան ծունկերի վերայ քնացրեց. Ծառերին զարմացնում էր. Այդ տղան իւր մօրը դարձրո՛ւ. Մի պարտապան նրա առաջ հանուեցաւ. Կրակը հանգցրին. Ճրագն ո՞վ հանգցրեց. Նրան շըրջեցրեց ողջ քաղաքում. Բոլոր ազգերին հնազանդեցրեց. Նրանց այնտեղ երկու օր դադարեցրինք. Ձիս այս վտանգից ազատի՛ր. Նրան մի՛ տրտմեցներ. Նրանց չարաչար աշխատեցրեց. Նախ նրանց անցկացրեց գետից և յետոյ ինքն անցկացաւ. Նրան խօսել չեմ տալ. Մեզ շունչ առնել չեն տալ. Նրան մեզ հակառակ խօսել չտուեց. Ինքը գիր չգիտէ, ուրիշներին է գրել տալիս. Նրան գինի խմել տուեցին. Ձեզ պէտք է պատժել տամ. Նրան աքսորել տուեց մի կղզի. Ձեզ մեր երկրից անցկենալ չենք տալ. Երկու ոչխար մորթել տուեց. Եթէ ինձ տեսնել տաս

որդիներիս. Նրանց ձայն հանել չէր տար. Նրան իւր տու-նը տանել տուեց. Ինձ վճարէ պարտքդ. Զիս այս ան-գամ ևս զօրացրու. Փարաւոնին աղջիկը մեծացրեց Մովսէսին. Աստուած Աբրահամին հարըստացրեց։

| | |
|---|---|
| Վճարեմ, հատուցանեմ | Ողջ, ամենայն |
| Կաթից կտրեմ, հատուցա-նեմ ի ստենէ | Ազատեմ, ապրեցուցանեմ |
| | Գետից, ըստ գետն |
| Ձեռքից բռնել, ունել ըզ-ձեռանէ | Շունչ առնել, ոգի առնուլ |
| | Յետոյ, ապա |
| Վերցնեմ, յարուցանեմ | Գիր (գրութիւն), դպրութիւն |
| Արթնացնեմ, զարթուցանեմ | Խմեմ, ըմպեմ |
| Հագցնեմ, ագուցանեմ | Պատժեմ, պատուհասեմ |
| Ծունկ, ծունգ սեռ. ծնգաց | Մի կղզի, ի կղզի ուրեք |
| Քնացնեմ, ննջեցուցանեմ | Երկրից, ըստ երկրէ |
| Զարմացնել, ապշեցուցանել | Մորթեմ, զենում |
| (Մէկին) առաջ հանել, մատուցանել առ (ոք) | Ձայն հանել, ձէն հանել |
| | Անգամ, նուագ |
| Հանգցնեմ, շիջուցանեմ | Էլ, ևս |
| Շրջեցնեմ, շրջեցուցանեմ | Հարստացնեմ, մեծացուցանեմ |

## ԴԱՍ Լ.

### ԵՄ ԲԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Գոմ

Հ. Ե՞րբ էական բայ է եմ բայը։

Պ. Եմ բայը էական կամ գոյական բայ է, երբ մի ստորոգելի ենթակային (*) (տէր բային) հետ կապում է, զոր օրինակ՝ այս նախադասութեան մէջ, Արդար

(*) Տրամաբանք ենթակայ են կոչում տէր բային, Հայերէն քերականութեանց մէջ ուղղական խնդիր ասուած բառին էլ ան-ուանում են ստորոգելի. իսկ էական բային, այսինքն՝ է բային կապ են անուանում։ Այս երեք բառերից, այսինքն՝ ենթակայից, ստորոգելեաց և էական բայից բաղկացեալ մի խօսք անուանում են նախադասութիւն



է Աստուած. էն էական բայ է, քանզի արդար ստո-րոգելին կապում է Աստուած ենթակային հետ։

| | |
|---|---|
| Լուսաւոր է արեգակն | Արեգակը լուսաւոր է |
| Բազում են աստեղք | Աստղերը շատ են |
| Դա է որդի իմ | Իմ որդիս այդ է |
| Այս էին բանք նոցա | Սրանք էին նրանց խօսքերը |
| Իմ է երկիրս | Այս երկիրն իմն է |
| Քո՞ իցէ մատեանդ | Այդ գիրքը քո՞ւմն է |
| Այլ է խորհուրդ նոցա | Նրանց խորհուրդն ուրիշ է |

Բոլոր այս խօսքերին մէջ եմ բայն էական կամ գոյական բայ է։

Հ. Ուրիշ ի՞նչ է նշանակում եմ բայը։

Պ. Եմ բայը 1. շատ անգամ չէզոք բայ է, և նշանակում է գտնուիլ (մի տեղ), ներկայ լինել, և այն ժամանակ նախադասութեան մէջ չի գտնւում ստո-րոգելի, կամ մի ստորոգելի իմացւում է լռելեայն, զոր օրինակ այս խօսքին մէջ Աստուած ամենայն ուրեք է, Աստուած ամեն տեղ է. է նշանակում է ներկայ է, գտնւում է։

| | |
|---|---|
| Ո՞ւր իցէ եղբայրն իմ | Եղբայրս ո՞ւր է, այսինքն՝ ո՞ւր է գտնւում, ո՞ւր է կենում |
| Աստ է որդին քո | Քո որդիդ այստեղ է, այսինքն՝ այստեղ է գտնւում, այստեղ է կենում |
| Եւ էր Պետրոս ի բանտի | Պետրոս բանտումն էր, այսինքն՝ կապուած արգելուած էր |
| Եղաք առ նոսա աւուրս եօթն | Եօթն օր նրանց մօտ եղանք, այսինքն՝ մնացինք, բնակեցանք |

2. Եմ բայը շատ անգամ կայ բային տեղ գոր-ծածւում է, և այնպէս չէզոք է, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Են ոմանք որ ոչ հաւատան | Կան ոմանք որ չեն հաւատում |
| Է աստ այր մի | Այստեղ մի մարդ կայ |
| Էին անդ թակոյկք եօթն | Այնտեղ եօթը թակոյկ կար |

Հ. Ուրիշ ի՞նչ բայ կայ՝ կայ նշանակող։

Պ. Գոմ պակասաւոր չեզոք բայը նշանակում է կայ, և այս նշանակութեամբ շատ անգամ եմ բային տեղ գործածւում է, զոր օրինակ՝ գոյ աստ այր մի, այստեղ մի մարդ կայ։

Հ. Ո՞ր ժամանակներն ունի գոմ բայը, և ի՞նչպէս խոնարհւում է։

Պ. Գոմ բայն ունի միայն ներկայ և անկատար, ստորադասականին երրորդ դէմքը միայն, և աներևոյթ և խոնարհւում է այսպէս։

Սահմանական ներկայ

Գոմ, գոս. գոյ — Գոմք, գոյք, գոն

Անկատար

Գոյի, գոյիր, գոյր — Գոյաք, գոյիք, գոյին

Ստորադասական

Գ. դէմք՝ Գուցէ

Աներևոյթ

Գոլ

Հ. Ուրիշ ի՞նչ պակասաւոր բայ կայ։

Պ. Պակասաւոր բայ են գոգեմ և բամ որ ասեմ բային նշանակութիւնն ունին և ընդհանրապէս ասեմ բային հետ գործածուած կը գտնուին։

Հ. Ի՞նչ ժամանակ ունի գոգեմ բայը։

Պ. Գոգեմ բայն ունի հրամայական, և ստորադասականին մի քանի դէմքը։

Հրամ. Գո՛գ, գոգջի՛ր. գոգէք, գոգջիք, գոգցես, գոգցուք, գոգցին։

Հ. Ի՞նչ ժամանակ ունի բամ բայը։

Պ. Բամ բային ներկայ եզ. ա. դէմք և գ. դէմքը միայն գործածւում է. այսպէս. ասեմ բամ. ասացի բամ, ասէ բայ, ասեն բայ, ասաց բայ։ (*)

Հ. Գոմ բայն եմ էական բային տեղ չ՞ի կարող գործածուիլ։

Պ. Գոմ բայն եմ էական բային տեղ գործածել

(*) Այս ձևերը թէպէտ ընտիր, բայց գուն ուրեք գործածւում են



ընտիր Հայերէն չէ. ուստի և փոխանակ ասելու հիւանդ գոյ, վայելուչ գոյր, ճշմարիտ գոլ, պարտ է ասել, հիւանդ է, վայելուչ էր, ճշմարիտ լինել։

Ոչ է, ոչ գոյ, չկայ՝ բառերին տեղ Հայերէն սովորաբար գործածւում է չիք. զոր օրինակ՝

Չիք ոք բարի — Բարի մէկը չկայ

Չիք աստ տեղի բնակութեան — Այստեղ բնակութեան տեղ չկայ

## 37. Հրահանգ

Տգիտութիւնն ամբարտաւանութեան քոյրն է. Դատարկութիւնն ամենայն չարեաց մայրն է. Կարդալը ձանձրութեան դեղթափն է. Գինին ծերերի կաթն է. Բանաւոր մարդն արձակուած առիւծ է. Նուշանն անմեղութեան նշան է. Առիւծին բարկութիւնը սոսկալի է. Հայրդ ո՞ւր է. Հայրս տանն է. Շատ օրեր այնտեղ եղաւ. Քաղաքին մէջ մի կին կար. Անտառում գազաններ կան. Ձեր եղբայրները պարտէզում են. Բանտում եղած ժամանակս. Նա մեզ հետ չէր. Կաթսայում մահ կայ. Սրահում շատ բազմութիւն կար. Մայրս իւր սենեակումն է. Ամենքն էլ այստեղ են. Երկուքն էլ մէկտեղ էին. Այստեղ երկու սուր կայ. Նրա մեծ որդին ագարակումն էր. Այնտեղ մի մարդ կար. Հօրս տանը շատ սպասաւորներ կան. Դուք ծովումն էք, մենք ցամաքում. Օտարականներն այս սրահումն են. Հիւրը մեր մօտինն է. Այս տանը հարսանիք կայ. Թզենուն վերայ պտուղ չկայ. Քո փողդ (ստակ) սնտուկումս է. Նրա գերեզմանը եկեղեցւոյն բակումն է. Երկիրը խաղաղութեան մէջ էր. Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր. Մեր սպասաւորները դաշտումն են. Ձեր քոյրերը գիւղումն են. Մայրդ ո՞ւր էր. Մայրս եկեղեցումն էր. Այնտեղ խոզերի մի երամակ կար. Նրա ծառաներից երկուքը քաղաքումն են, երեքը

գիւղում. Նրանցից մինը այստեղ է։

| | |
|---|---|
| Կարդալը, ըստ ընթերցուածոց | Եղած ժամանակս, մինչ էի |
| Դեղթափ, անդեղեայ, անդեղայ | Շատ, յոյժ |
| Արձակուած, արձակ | Ամենքն էլ, ամենեքին |
| Նշան, նշանակ | Երկուքն էլ, երկոքին |
| Բարկութիւն, ցասումն | Մէկտեղ, ի միասին |
| Օսկալի, ահագին | Սուր, սուսեր |
| Մեծ (որդի), երէց | Բակ, գաւիթ |
| Մեր մօտը, առ մեզ | Մէջտեղ, ի մէջ |
| Անտուկ, արկղ | Գիւղ, շէն |

ԼՈՒԾՈՒՄՆ

Հայր իմ ի տան է։ է, չէզոք բայ, նշանակում է՝ գտնւում է, այնտեղ է. սհմ. ներկ. եզ. գ. դեմք.— Ո՞վ է (գտնւում է).— Հայր իմ. հայր, գոյ. եզ. ուղղ. տէր բայի է ին. իմ ստացական ած. հայր ին.— հայր իմ է, ո՞ւր.— Ի տան. ի տան՝ ի նախդրիւ բնութեան խնդիր է ին, տեղւոյ պարագան է ցոյց տալիս։

ԴԱՍ ԼԱ.

ԵՄ ԲԱՅՆ ունիմ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Հ. Հայերէն ի՞նչ բայ գործածւում է ունիմ բայի՞ն տեղ։

Պ. Ունիմ բային տեղ Հայերէն շատ անգամ կը գործածուի եմ բայը։

Հ. Եմ բայն այսպէս ունիմ բային տեղ գործածուելու համար ի՞նչ անելու է։

Պ. Ունիմ ին սեռի խնդիրն անելու է տէր հոլովի, իսկ տէր հոլովն փոխելու է սեռական ի. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Նա մի պարտէզ ունի | Պարտէզ մի է նորա |
| Հայրս մի այգի ունէր | Այգի մի էր հօր իմոյ |
| Նա տղաքներ և աղջիկներ ունեցաւ | Եղեն նորա ուստերք եւ դստերք |



38. Հրահանգ

Երկու եղբայր ունիմ. Նա ոչխար և արջառ ունէր. Մի աղջիկ ունէր միածնունդ. Մի գիրք ունիմ. Եղբայրս մի պզտիկ պարտէզ ունի. Մի գեղեցիկ տուն ունինք. Նրանք մեծամեծ պալատներ ունին. Այն թագաւորը շատ զինուորներ ունի. Նրա զօրքը պաշար չունի. Հօրեղբայրս մի տղայ (մանչ) և մի աղջիկ ունի. Շատ փող ունի՞ս. Շատ փող չունիմ, Շատ բարեկամ ունիմ. Ծառաներ և աղախիններ չունին. Նա Եգիպտացւոց հետ պատերազմ ունեցաւ. Ծառաներ և աղախիններ ունէն. Հայրս մի մեծ տուն ունի. Նա մի փոքրիկ շուն ունէր. Տեղ չունեմ. Աչք ունին և չեն տեսնում. Ականջ ունին և չեն լսում. Բարեկամս մի պզտիկ շուն ունի որ շատ հաւատարիմ է. Շատ գիրք ունինք. Մի ուրիշ տուն ունիմ որ շատ գեղեցիկ է. Շատ բարեկամներ ունինք, շատ երջանիկ ենք. Զաւակները բարեկամ չունին և թշուառ են. Նա մի որդի ունեցաւ. Հայրս շատ ստացուած ունի. Կինը մեծ գութ ունէր իւր զաւակներին։

| | |
|---|---|
| Պզտիկ, փոքր | Տեղ, տեղի |
| Պալատ, ապարանք | Հետ, ընդ յոգ. հայցականով |
| Տղայ (մանչ), ուստր | Շատ, յոյժ ած. բազում |
| Աղջիկ, դուստր | Ուրիշ, այլ, միւս եւս |
| Փող (ստակ), արծաթ | Զունին, չիք, ոչ գոյոյք. ոչ գոն |
| Աղախին, աղախին յոգ. աղախնայք | Ստացուածք, ինչք ստացուածք |
| Փոքրիկ շուն, շնիկ, շուն փոքրիկ | Զաւակ, որդի, որդեակ |

ԼՈՒԾՈՒՄՆ

Են իմ եղբարք երկու։ Են. էակ. բայ. սհմ. ներկ. յք. գ. դեմք. այստեղ նշանակում է ունենալ։— Ո՞վ են.— Եղբարք երկու. եղբարք՝ գոյ. յոգ. ուղղ. տէր բայի են ին. երկու՝ թուական ածական եղբարք ին։— Եղբարք

երկու էն. որի.— Ի՛. ե՛ էակ. դեր. ա. դէմք. եզակի սեռ. խնդիր էն ին:

## ԴԱՍ ԼԲ.

### ՇԱՂԿԱՊ

Հ. Ի՞նչ է Շաղկապ:

Պ. Շաղկապ կասուին այն բառերն՝ որ կապում են իրար հետ բառեր կամ նախադասութիւններ (խօսք), ինչպէս ես և եղբայրը իմ. Ես ու եղբայրս. Դու կամ որդի քո, Դու կամ որդիդ. Քոյր քո կրտսեր է քան զքեզ, այլ քան զքեզ հանճարեղ. Քոյրդ քան զքեզ կրտսեր (փոքր) է, բայց քան զքեզ հանճարեղ: Այս օրինակների մէջ, և, կամ, այլ, շաղկապ են. առաջինը, և, կապում է ես, եղբայր. երկրորդը, կամ, դու, որդի, քո, բառերը. երրորդը, այլ, բայց, կապում է երկու նախադասութիւնները, կրտսեր է, հանճարեղ է:

Հ. Ո՞յք են գլխաւոր շաղկապք:

Պ. Գլխաւոր շաղկապք են:

Եւ, նաև, ու, և, կամ, և կամ, կամ
Բայց, այլ, սակայն, իսկ, բայց
Թէ, եթէ, թէ որ
Թէ, զի, վասնզի, վասնզի, մինչ որ
Որովհետև, զի, որովհետև
Ուրեմն, ապա, ուրեմն, եթէ այնպէս
Թէպէտև, թէպէտ, թէպէտ, թէև
Մինչ, մինչև, (աներևութով) այնպէս որ

### ՕՐԻՆԱԿ

Ես կամ հայր իմ եկեսցուք. Ես կամ հայրս կգանք. Յորժամ դու և նա միայն իցէք. Երբ դու և նա միայն էք. Կամիմ զի տայցես ինձ զարծաթն, կամենում եմ որ ինձ տաս փողը: Մի յաղթիր ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին. Մի՛ յաղթուիր չարից, այլ յաղթի՛ր չարին բարիով. Թէպէտ և ամենեքին ուրասցին, սակայն ես ոչ ուրացայց. Թէպէտ



ամենքն ուրանան բայց ես չեմ ուրանայ

Թաքեայ, զանզի մերկ էի. պահուեցայ վասնզի մերկ էի

Այր բարկացող նիւթէ զկռիւ, իսկ երկայնամիտն և զհանդերձեալն ցածուցանէ. բարկացող մարդը կռիւ է հանում, իսկ համբերողը հանդերձեալը (գալիքը) ևս իջեցնում է: Եթէ ննջէ, ապա ապրի. եթէ ննջում է, ուրեմն կապրի: Որովհետև ոչ կամեցար, չունիս մասն ընդ իս. որովհետև չուզեցիր, չունիս ինձ հետ բաժին

Բազումք գային, մինչև ոչ ժամանել նոցա ուտել հաց. Շատեր գալիս էին, այնպէս որ հաց ուտելու անգամ չէին հասնել:

### 39. Հրովանդ

Տանը մտան, նաև նրա որդիքը. Արևը և աստղեր կոչւում են լուսաւոր. Արծաթ և ոսկի չունիմ, ասածս արա և կամ գնա այստեղից. Եթէ պարտքդ հատուցանես կազատուես նրա ձեռքից. Ինձ կարելի չէր ձին գնել, վասնզի փող չունէի. Բղաւում էին և ասում էին թէ մահապարտ է. Ձի կարող ոտքի վերայ կենալ, վասնզի տկար է. Այս տունն իմս չէ, այլ եղբօրս. Թէպէտ գիտէր, բայց լռեց. Թողի նմա յանցանքը, վասնզի աղաչում էր. Նրան բռնելու ելան, վասնզի կարծում էին թէ խենդացած (գըժուած) է. Ասում էին թէ նա սպաննած էր մարդին. Երբ արև ծագեց, տաքացաւ, և որովհետև արմատ չկար, չորացաւ. Հոգդ չէ որ ահա կորչում ենք. Օգտուած չէր, հապա էլ աւել սաստկացած էր (հիւանդութիւնը). Զուգեց գնալ նրա հրաւէրին, վասնզի վախենում էր նրանից. Նրան բանտ դրեց, վասնզի նրա վերայ կասկած ունէր. Ամբաստանեցին նրան թէ նա ևս օգնական էր թշնամիներին. Կը գան ոմանք և կասեն թէ որդիդ մեռաւ. Ոչ ում թողեց մտնել, բայց միայն իւր բարեկամներին. Ելաւ և գնում էր, վասնզի ողջացած էր հիւանդութիւնից. (մի) Մարգարէ անարգ չէ, բայց միայն իւր երկրում

և տանը. Մի՛ խօսիր, այլ լսէ. Աղաչում էին որ չը- գնայ. Թագաւորը լսեց, վասնզի նրա անունը հըռ- չակուեցաւ (տարածուեցաւ). Ոմանք կասէին թէ այն է. Ուրիշները թէ նրա սպասաւորներից մինն էր. Նրանից վախենում էր, ինչու որ գիտէր թէ թա- գաւորին ընտանի էր. Տեսայ նրան որ գնում էր. Եթէ նրան օգնեց, ուրեմն նրա բարեկամն էր. Ժո- ղովուրդ դիզուեցաւ նրա շուրջը, այնպէս որ քաշ- ուեցաւ այնտեղից. Նրա խրատը մտիկ արա, վասն- զի իմաստուն է քան զքեզ. Առ այդ դահեկանը և տուր դուռը կեցող մարդուն. Եթէ ես եմ յանցաւորն, ու- րեմն թող դրան որ գնայ. Թագաւորը բարկացաւ, բայց ծերութեանը համար չուզեց պատժել նրան. Ուզում եմ որ տաս հիմա ինչ որ երէկ խնդրում էի քեզանից. Որովհետև իմ որդւոյս արիր այդ շնորհը, ինձ արիր. Մեռնիմ այսուհետև, որովհետև տեսայ քո երեսդ. Որովհետև կատարեցեր գործդ, գնա՛ հանգչիր այսուհետև. Ո՞րչափ աւելի գերազանց է մարդը քան ոչխար. Ուրեմն պէտք է շաբաթ (սուրբ) օրը բարիք գործել. Եղաւ քամու մեծ փոթորիկ որ ալիքները նաւին մէջ թափում էր, այնպէս որ գրեթէ լքցւում էր նաւը. Չենք կարող այստեղ կենալ, վասն- զի շատուոր ենք. Պատուիրեց նրան լռել, բայց նա աւելի ևս բղաւում էր։

Աւելի, առաւել
Արև, արեգակն
Ասածս, զոր ասեմ
Փող, արծաթ
Բղաւել, աղաղակել
Ոտքի վերայ կենալ, կալ յոտն
Այստեղից, աստի
Գնալ(մի տեղից), գնալ ի բաց
Ազատել, ապրել
Կարելի է, մարթ է

Տաքանալ, ջեռնուլ
Չկար, չկայ, չգոյր, ոչ գոյր, ոչ գոյին
Հոգդ չէ, ոչինչ է քեզ փոյթ
Օգտել, օգնել
Հապա, այլ
Էլ աւելի, առաւել ևս
Սաստկանալ, զօրանալ
Զուզեց, ոչ կամեցաւ
Հրաւէր, կոչ



Խենդենալ (գժուիլ) մոլեգնիլ
Բանտ դնել, արկանել ի բանտ
Մէկին վերայ կասկած ու- նենալ, կասկածիլ յումեքէ կասկածս զումեքէ
Մէկին ամբաստանել, ամ- բաստան լինել զումեքէ
Օգնական, ձեռնտու ի . . .
Բայց, սակայն
Ելնել (դուրս) ելանել
Բռնել, ունել
Կարծել, համարել
Գնալ (մի տեղից), մեկնել
Հռչակուել, հռչակել
Մէկը (մինը), մի ոմն
Դիզուիլ, խռնել
Նրա շուրջը, զնովաւ
Քաշուել(մի տեղից)խոյս տալ
Մտիկ անել, լսել (տրա- կանով)
Դուռը կեցող, որ առ դրան կայ

Վախենալ, երկնչիլ
Պատժել, պատուհասել
Հանգչիր, հանգի՛ր
Որչափ աւելի, որչափ ևս
Գերազանց, առաւել
Պէտք է, պարտ է
Քամի, հողմ
Փոթորիկ, մրրիկ (մրրիկ հող- մոյ)
Թափել (լքցնել յորդու- թեամբ), զեղուլ
Ելանել (պառկած, նստած տեղից), յառնել
Գնալ, գնալ
Ողջացած, ողջացեալ
(Մէկին երկիրը), գաւառ
Լքցուիլ, լի լինել
Այստեղ, աստէն, աստ
Նաւաւոր, բեռնում
Պատուիրել, պատուէր տալ
Աւելի ևս, ևս քան զնա

## ԴԱՍ ԼԳ.

## ԱԾԱԿԱՆԱՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հ. Ածականք իրաց յատկութիւնը քանի՞ կերպով կարող են ցոյց տալ։

Պ. Ածականք իրաց յատկութիւնը կարող են ցոյց տալ երեք կերպով, 1. Պարզապէս, 2, Բաղդատութեամբ, և 3. Իբր վերջին աստիճան։ Զոր օրինակ.

Եղբայրս իմաստուն է — Իմաստուն է եղբայր իմ
Եղբայրս քո հօրից աւե- լի իմաստուն է — Եղբայր իմ իմաստուն կամ ի- մաստնագոյն է քան զհայր քո

Եղբայրս շատ իմաստուն է Եղբայր իմ իմաստուն է յոյժ

Առաջին խօսքին մէջ իմաստուն ածականը դրական է, երկրորդին մէջ՝ բաղդատական, երրորդին մէջ՝ գերադրական. սրանք են ածականաց աստիճանները:

Հ. Քանի՞ տեսակ է բաղդատութիւնը:

Պ. Բաղդատութիւնն է երկու տեսակ. 1. Հաւասարութեան բաղդատութիւն. և 2. Տարբերութեան բաղդատութիւն:

Հ. Հաւասարութեան և տարբերութեան բաղդատութիւնները ի՞նչ են ցոյց տալիս, և ի՞նչպէս բացատրւում են:

Պ. Հաւասարութեան բաղդատութիւնը ցոյց է տալիս երկու բան իրար հաւասար են, և բացատրւում իբրև ու նախադրութեամբ: Տարբերութեան բաղդատութիւնը ցոյց է տալիս թէ երկու բան իրարուց աւելի կամ պակաս են, և բացատրւում քան ու նախադասութեամբ, զոր օրինակ:

| | |
|---|---|
| Օդը ջրի պէս լոյծ է | Լոյծ է օդ իբրև զջուր, |
| բայց նրանից աւելի | այլ նուրբ և թեթև |
| բարակ և թեթև է | է քան զնա |

Հ. Բաղդատութեան մէջ ածականին վերայ ի՞նչ մասնիկ կամ բառ է աւելանում:

Պ. Բաղդատութեան մէջ ածականին վերայ երբեմն գոյն մասնիկը կաւելանայ, և երբեմն եւս բառը կը դրուի ածականից առաջ կամ յետոյ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ուժից աւելի յարգի է իմաստութիւնը | Իմաստութիւն պատուական կամ պատուականագոյն է քան զզօրութիւն |
| Հարստութիւնը լաւ է, բայց առաքինութիւնն աւելի լաւ է | Բարւոք է մեծութիւն, այլ առաքինութիւնն բարւոք եւս է |

Հ. Բաղդատութիւնն ե՞րբ ցոյց է տալիս նուազութիւն:

Պ. Բաղդատութիւնը ցոյց է տալիս նուազութիւն,



երբ բայն է բացասական, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Եղբայրդ քեզ չափ խորագէտ է | Եղբայր քո խորագէտ է իբրև զքեզ |
| Եղբայրդ քեզանից պակաս խորագէտ է | Եղբայր քո չէ խորագէտ իբրև զքեզ |
| Եղբայրդ քեզանից աւելի լաւ է | Եղբայր քո լաւ կամ լաւագոյն է քան զքեզ |
| Եղբայրդ քեզանից պակաս լաւ է | Եղբայր քո չէ ինչ լաւ կամ լաւագոյն քան զքեզ |

Հայերէն գերադրական աստիճան ցոյց տալու համար ի՞նչ անելու է:

Պ. Հայերէն գերադրական աստիճան ցոյց տալու համար ածականին վերայ աւելացնելու է յոյժ, կարի, առաւել և ուրիշ սրանց նման բառեր:

ԱՂԱՍԻ ԱՅԻՎԶԵԱՆ

40. Հրահանգ

Եղբայրս քո հօր պէս հարուստ է, բայց ինձանից աւելի հարուստ չէ. Ձեր հօրեղբօր տունը մերինին պէս ընդարձակ է. Այս պարտէզը մեծ է, բայց իմինիս չափ գեղեցիկ չէ. Առիւծը վագրին չափ անգութ չէ. Ուզում եմ տունս քանդել և աւելի (լաւը) գեղեցիկ շինել. Այս տղան քո աղջկանից աւելի խելօք և հանդարտ է. Ծովերը լճերից աւելի խոր և ընդարձակ են. Դուք ինձանից աւելի իրաւացի էք. Ես անիրաւ եմ, դու ինձանից աւելի անիրաւ ես. Եղբայրդ բոլորովին անիրաւ է. Իմ եղբօրից մեծ ես, բայց նրանից աւելի խելօք չես. Մեր ծառաները ձերոնցից երջանիկ են. Իմ բժիշկս քո կնոջից աւելի փորձուած է. Այս մարդը շատ հարուստ է. Երեսունից աւելի տներ ունի. Դուն շատ բաներով զբաղած ես, բայց եղբայրս քեզանից աւելի զբաղած է. Դուն քիչ զբօսնում ես, ես քեզանից քիչ, իսկ քոյրս մեզանից աւելի քիչ. Օդը ջրից թեթև է. Որդիս քեզանից իմաստուն է. Այս լեռն ամէն լեռ-

ներից բարձր է. Աշխարհիս մէջ վատահամբաւ լինելուց լաւ է մեռնել. Կենդանի շունը՝ մեռած առիւծից լաւ է. Թագաւորները զօրաւոր են, բայց Աստուած նրանցից աւելի զօրաւոր է. Եղբայրդ խելօք է, բայց իմ եղբայրս նրանից աւելի խելօք է. Ձեր քոյրը պարկեշտ է, բայց մեր դպրոցին աղջիկները նրանից աւելի պարկեշտ են. Այս տղաքն իրանց հօրից աւելի խելացի են. Քամին և ջուրն ամեն բանից աւելի սաստիկ և ուժով են. Առիւծից աւելի սոսկալի մի կենդանի չկայ. Արևին լոյսը լուսնի լոյսից աւելի պայծառ է. Հոգին մարմնից գերազանց է. Լուսինն ուրիշ աստղերից փոքր է. Աստղերից ոմանք արեգակից մեծ են. Հին գինին նորից աւելի յարգի է. Նրպատ լեռն Արարատից աւելի բարձր չէ (կամ Արարատից նուազ բարձր է). Սև ծովը Միջերկրականից աւելի շատ անգամ ալէկոծւում է. Այս մարդը մեզանից աւելի շատ անգամ ճանապարհորդում է. Այս լեռները շատ բարձր են. Ջրին զօրութիւնը շատ սաստիկ է. Նրան յաղթել շատ դժուար է. Ցամաքը մեզանից շատ հեռի էր. Այն մարդը շատ ճարտասան է:

| | |
|---|---|
| Պէս, իբրև զ | Զօրաւոր, հզօր |
| Հարուստ, մեծատուն | Պարկեշտ, ողջախոհ, պարկեշտ |
| Անգութ, անագորոյն | Խելացի, հանճարեղ |
| Աւելի, առա | Սաստիկ, բուռն |
| Խելօք, ուշիմ | Ուժով, ուժգին |
| Լիճ, ծովակ | Կենդանի, կենդան |
| Խոր, խոր | Սոսկալի, ահագին |
| Իրաւացի. արդար | Գերազանց, առաւել |
| Բոլորովին, յոյժ ամենեւին | Աստղերից ոմանք, են աստեղք որ |
| Վարպետ, ճարտար | Յարգի, պատուական |
| Շատ բաներով, զբաղեալ բազմօք | Շատ անգամ, բազում, յաճախ |
| զբաղեալ | Ալէկոծիմ, ամբոխիմ |
| Զբաղած, զբաղեալ | Ճանապարհորդեմ, ճանապարհորդեմ |
| Վատահամբաւ, վատանուն | |



| | |
|---|---|
| Շատ (մկ.) յոյժ | Զօրութիւն, կարողութիւն |
| | Ճարտասան, բանիբուն |

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Եղբայր իմ մեծատուն է քան զհայր քո, այլ ոչ ընչեղ քան զիս: Է, էական բայ. սահմ. ներկ. եզ. գ. դէմք.— Ո՞վ է.— Եղբայր իմ. եղբայր իմ՝ տէր բայի է ին.— Եղբայր իմ է, ինչ.— Մեծատուն. մեծատուն՝ ստորոգելի եղբայր ին.—Եղբայր իմ մեծատուն է, քան զո՞վ.— քան զհայր քո. իբրև զհայր քո՝ նախադրութեամբ խնդիր մեծատուն ին, համասարութիւն է ցոյց տալիս:

Այլ ոչ ընչեղ քան զիս: Է. բայ էակ. սահմ. ներկ. եզ. գ. դէմք.— Է. ո՞վ.— Նա (եղբայր իմ), դերանուն տէր բայի, զօրութեամբ է իմացւում:— Է նա ընչեղ քան զո՞.— Քան զիս. քան զիս՝ քան զ նախադրութեամբ խնդիր, առաւելութիւն է ցոյց տալիս, այստեղ բայը բացասական լինելուն համար նուազութիւն է ցոյց տալիս. ոչ բացասական մակբայ. այլ շաղկապ, խօսքին երկու նախադասութիւններն է կապում

## ԴԱՍ ԼԴ.

### ԱԾԱԿԱՆԱՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Ածականք առնո՞ւմ են խնդիր և ի՞նչ հոլով:

Պ. Ածականներից ոմանք շատ անգամ առնում են տրական, բացառական, գործիական և կամ նախադրութեամբ խնդիր. ինչպէս, չարօք խրատու, խրատէ կարօտ. Մերձ ի հայրենեաց, հագուստից զուրկ. լի շնորհօք, շնորհքով լիք. Պատրաստ ի կռիւ, կռուի պատրաստ:

Հ. Ի՞նչ հոլով խնդիր առնում են թուական և անորոշ ածականք:

Պ. Թուական ածականք, և քանակութիւն ցոյց տուող ուրիշ մի քանի ածականաց յոքնակիներն, ինչպէս՝ բազումք, կէսք, շատք, և անորոշ ածականք՝ ոմն,

ոմանք, այլք, ո՞վ. գոյականաբար առնուելով՝ առնում են բացառական հոլով խնդիր։ Այսպէս կասուի Մի ի ձէնջ, ձեզանից մինը. Երկուս ի նոցանէ, նրանցից երկուսը. Բազումք յաշակերտացն, աշակերտներից շատերը. Այլք ի բարեկամաց նորա, նրա բարեկամներից ուրիշները. Ոմանք ի մէնջ, մեզանից ոմանք։

41. Հրահանգ

Ի՞նչ բանի կարօտ ես. Ձեր օգնութեանը կարօտ եմ. Նոյ հաճոյ եղաւ Աստուծոյ. Ուզո՞ւմ ես ինձ հաճոյ լինել. Քո տիրոջդ հաճոյ եղիր. Նրանց քուրձերը ցորենով լեցուն էին. Պտղով լեցուն երեք կողով (կթոց) բերին. Մեր շտեմարանները դատարկ են բերքից. Բարեկամ, քեզանից գոհ եմ. Նրանց տէրերը գոհ էին նրանցից. Աշխատութիւնը մարմնոյ օգտակար է. Դատարկութիւնը թէ հոգւոյ և թէ մարմնոյ վնասակար է. Գիտութիւնը հարկաւոր է ամեն մարդու. Հոգին մարմնից (քան զմարմինը) գերազանց է. Դու քո եղբայրներից գերազանց ես իմաստութեամբ. Քաջութիւնից պակաս չենք. Երկիրը բնակիչներից դատարկուած էր. Ցաւերից ազատ էք. Նրանք հիւանդութիւններից զերծ են. Նրա տունը եկեղեցւոյն կից էր. Մարդիկը որսի տեղեակ էին. Ճանապարհին տեղեա՞կ ես (գիտե՞ս). Նրանց խորհուրդներին (միտքը գրածին) անտեղեակ չենք. Նրանց գործքերին հաղորդ մի՛ լինիք. Գիրը դիւրին էր կարդացուելու. Խօսքերը դժուար էին իմանալու. Նրա արևնից մաքուր եմ. Առաքինութիւնից և բարի գործքերից մերկ էին. Նա վարժ էր գիր գրելու արհեստում. Ձին և շունը շատ ընտանի են մարդուս. Աստուծոյ պատուէրն է մեծերին հնազանդ լինել. Մեզանից մի՛ լինիք օտար. Աստուծոյ կամքին հպատակ լինել մեզ պարտք է։

Ի՞նչ բանի, ի՞մ իմէ — Լեցուն, լի



Դատարկ, ունայն
Հարկաւոր է, պիտոյ է
Գերազանց, առաւել
Պակաս, նուազ
Բերք, արդիւնք
Քեզանից, զքէն (գոհ լինել խնդրում է պատմական, այսինքն՝ զով բացառական) (խընդրում է ի, նախդրիւ հայցական)
Կից, կից
Մարդիկը, արք
Տեղեակ, հմուտ, տեղեակ
Չենք, չեմք ինչ

Կարդալ, ընթեռնուլ, կարդացուելու, ընթեռնլոյ լինել ընթեռնուլ
Իմանալ, իմանալ, առնուլ ի միտ
Իմանալու, առ ի մանալ
Պարպուած, թափուր (դատարկուած)
Հիւանդութիւն, հիւանդ
Ճանապարհ, ճանապարհ
Մաքուր, սուրբ
Արհեստ, արուեստ
Գիր գրելու (արհեստ), արուեստ գրչութեան
Շատ, յոյժ
Մեծ (մեծեր), աւագ յոգ. աւագք

Պարտք, պարտ, պարտք

42. Հրահանգ

Նոցանից երկուքը գնում էին մի գիւղ. Մեզանից շատերը այնտեղ էին. Նոցանից հինգն իմաստուն էին, և հինգը՝ յիմար. Բազմութիւնից ոմանք յառաջ եկան. Ձեր եղբայրներից մինը մեր մօտն է. Իշխաններից մինն ասում է նրան. Ձեզանից քիչեր կարող են այս անել. Նրանցից կէսը (ոմանք) սպանուեցան. Ուրիշները գերութեան տարուեցան. աւազակներից ոմանց սպաննեցին, մնացածներին ծովը նետեցին (ձգեցին). Նոցանից բաւական մարդիկ գերծան. Նոցանից և ոչ մինը կենդանի թողնում էր. Ձեզանից ամենապզտիկը նրանից մեծ է. Նոցանից մի մի հազար կորան. Նոցանից իւրաքանչիւրն մի մի հատ ուսին առաւ. Ձեզանից ո՞վ է ուզում ինձ հետ գալ. Ցանցաւորներից որո՞նց բռնեցիք. Նոցանից երկուքը միայն բռնեցինք, ուրիշները լեռներ փախ-

չելով ազատեցան։

Բազմութիւն, ամբոխ
Առաջ եկան, մատեան յառաջ
Մինը, ոմն, մի ոմն
Մեր մօտը, առ մեզ
Կարողանալ, կարող եմ, կարեմ
(Գերութեան) տարուիլ, վարիմ (ի գերութիւն)
Պզտիկ, փոքր, ամենապզտիկը, փոքրիկն
Կորիմ, կորնչիմ, կտ. կորեայ
Մնացածները, մնացեալքն
Նետել, ընկենուլ
Բաւական մարդիկ, ոչ սակաւք
Պրնծիմ, զերծանիմ
Ոչ մինը, ոչ ոմն ոք
Մի մի հատ, մին մի
Բռնել, ունիմ կտ. կալայ
Միայն, լոկ
Ազատիմ, ապրիմ
Իւրաքանչիւր, իւրաքանչիւր

ԴԱՍ ԼԵ.

ՍՏՈՐՈԳԵԼԻ ՀԱՅՑԱԿԱՆ, Ի ՆԱԽԴՐԻ

Հ. Ի՞նչ հոլով գրուելու է ստորոգելին։

Պ. Ստորոգելին ուղղական է, երբ տէր բայիւն վերաբերում է, բայց անուանել, կոչել, առնել, դնել, կարգել, ուսուցանել բայերի ստորոգելին կը գրուի անորոշ (առանց զ ի) հայցական հոլով երբ վերաբերում է սեռի խնդրոյն, զոր օրինակ. կոչեցի զչեզ բարեկամս. Ձեզ բարեկամ կոչեցի։

Հ. Տէր բայիւն վերաբերեալ ստորոգելին ես չե՞ր կարող ուրիշ կերպ գործածուել։

Պ. Մի քանի տէր բայիւն վերաբերեալ ստորոգելին կարող է գրուիլ շատ անգամ ի նախդրիւ անորոշ հայցական, երբ գոյական անուն է. այսպէս կ'ասուի. Եղէց ձեզ ի հայր. Ձեզ հայր լինիմ. և դուք եղիջիք ինձ յորդիս. Դուք էլ ինձ որդի լինիք։

43. Հրահանգ

Մարդիկ մահկանացու են. Դու իմ բարեկամս ես. Սրանք հարուստ մարդու որդիներ են. Աստուծոյ որդիներ պէտք է կոչուին. Նրանք անարատ գտնուեցան. Նրան ինձ բարեկամ ընտրեցի (արի).



Մեզ իրանց որդիներին դատարկապորտ արին. Նրանց իւր տանը վերայ մատակարար դրաւ. Բանտին դռները փակուած գտաւ. Թագաւորը ձեզ վերատեսուչ դրա՞ւ միթէ. Նրանց արդար գտայ. Ձեզ ի՞նչ անուանեմ. Նրանց Որդիք որոտման անուն դրաւ. Այս տղայոց դատարկապորտ սովորեցրիք. Ձեր կնանոց տանտիկին սովորեցրէք, ձեր աղջիկները ժիր և համեստ. Այս լեռները դաշտ պէտք է լինեն. Ինձ որդի եղիր, ես էլ քեզ հայր լինիմ. Այդ շէն երկիրն անապատ չ'լինի. Նրանց ինձ խորհրդական և խրատատու ընտրեցի. Մեծամեծ ազգեր քանդուեցան և ոչինչ եղան. Այս պտուղները ձեզ կերակուր լինին։

Հարուստ, մեծատուն
Դնել, կացուցանել, կարգել, դնել
Փակուած, փակեալ
(Զգրա՞ւ) միթէ, ո՞չ ապաքէն
Վերատեսուչ, տեսուչ
Անուանեմ, կոչեմ
Դատարկապորտ, դատարկաշրջան, յոգ. դատարկաշրջանք
Սովորեցնել, ուսուցանել
Տանտիկին, տնարար, տանտիկն
Համեստ, պարկեշտ
Քանդուիմ, քակիմ
Պտուղ, միրգ

ԼՈՒԾՈՒՄՆ

Արարի զնա ինձ բարեկամ. Նրան ինձ բարեկամ շինեցի։ Արարի, բայ ներգ. կտ. եզ. ա. դէմք։—Ո՞վ է անողը, շինողը.—Ես, զօրութեամբ, էակ. դեր. եզ. ա. դէմք ուղղ. տէր բայի արարի ին։—Արարի, արի, ա. դէմք շինեցի. զո՞վ (ո՞ւմ)—զնա, Նրան, էակ. դեր. գ. դէմք եզ. հայց. սեռի խնդիր արարի ին. արարի զնա, ի՞նչ.—Բարեկամ. բարեկամ՝ գոյ. հայց. ստորոգելի զնա ին.—Արարի զնա բարեկամ, որ՞ւ, ո՞ւմ.—Ինձ, ինձ. էակ. դեր. ա. դէմք եզ. տրակ. բնութեան խնդիր Արարի ին։

ԴԱՍ ԼԶ.

ԲԱՑԱՑՏԻՉ, ԿՈՉԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է բացայայտիչ։

Պ. Բացայայտիչը մեկնութիւն է մի ուրիշ բառի որ բացայայտեալ է կոչւում։

Արմենակ, երեք որդին Հայկայ. այս խօսքին մէջ՝ երեք որդին Հայկայ, բացայայտիչ է Արմենակին։

Հ. Գրաբարում բացայայտիչը ի՞նչ հոլով է դրւում

Պ. Բացայայտիչը գրաբարում կը դրուի բացայայտեալին հոլովը։ Որդիքն Որոտման, Յակոբոս և Յովհաննէս, էին անուանի ի մէջ առաքելոց. Առ ընդ իւր զՊետրոս, և զորդիսն Որոտման, զՅակոբոս և զՅովհաննէս։

Հ. Ի՞նչպէս են գործածւում յատուկ անուանց տիտղոսները։

Պ. Յատուկ անուանց տիտղոսները, ինչպէս՝ մեծ, սուրբ, քաջ, երանելի, անունից թէ առաջ և թէ յետոյ գրուելով միատեղ հոլովւում են. եթէ անունից առաջ են գրւում, ն յօդն առնում են. եթէ յետոյ են գրըւում, յօդ չեն առնում։

| Առաջ դրուած | Յետոյ դրուած |
|---|---|
| Մեծն Սահակ | Սահակ մեծ |
| Մեծին Սահակայ | Սահակայ մեծի |
| Մեծաւն Սահակաւ | Սահակաւ մեծաւ |
| Սուրբն Գրիգոր | Գրիգոր սուրբ |
| Սրբոյն Գրիգորի | Գրիգորի սրբոյ |
| Սրբովն Գրիգորիւ | Գրիգորիւ սրբով |
| Երանելին Տրդատ | Տրդատ երանելի |
| Երանելւոյն Տրդատայ | Տրդատայ երանելւոյ |
| Երանելեաւն Տրդատաւ | Տրդատաւ երանելեաւ |
| Քաջն Վարդան | Վարդան քաջ |
| Քաջին Վարդանայ | Վարդանայ քաջի |
| Քաջիւն Վարդանաւ | Վարդանաւ քաջիւ |

## ԿՈՉԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է կոչական։

Պ. Կոչական կ'ասուի մի անձն կամ մի իր առ որ(որին) ուղղւում է խօսքը։ Լուարո՛ւք Աթենացիք. Լսեցէք, Աթենացիներ. այս խօսքին մէջ՝ Աթենացիք կոչական է։



Հ. Շատ անգամ ի՞նչ բառ է դրւում կոչականից առաջ կամ յետոյ։

Պ. Կոչականից անմիջապէս առաջ շատ անգամ ո՛վ կամ ո՛ բառը դրւում է. իսկ անմիջապէս յետոյ՝ երբեմն դու բառը կը դրուի, եթէ կոչականն եզակի է. զոր օրինակ. Լուարուք, ո՛ կամ ո՛վ Աթենացիք. Լսեցէք ո՛վ Աթենացիներ։ Ե՛կ այսր, Մանուկ դու. այստեղ արի, տղա՛յ։

Հ. Եթէ կոչականից առաջ մի ածական կամ յետոյ մի յարակացուցիչ կայ ի՞նչ կը լինի։

Պ. Եթէ կոչականից առաջ մի ածական կայ, ածականին վերայ կը դրուի դ գիրը. իսկ եթէ կոչականից յետոյ մի յարակացուցիչ կայ, կոչականին վերայ կը դրուի դ գիրը, զոր օրինակ.

Լո՛ւր, սուրբդ Գրիգոր Լսէ՛, սուրբ Գրիգոր
Ե՛կ, արքայդ Պարսից Ե՛կ, Պարսից Թագաւոր

44. Հրահանգ

## ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

Միհրդատ մեծ, Պարսից թագաւորը, շատ անգամ կռուեցաւ Հռովմայեցւոց հետ և յաղթեց նըրանց. Դաւիթը իւր թագաւորութիւնը թողեց իւր Սողոմոն որդուն. Դաւիթ սպաննել տուեց Ուրիային որ նրա կնոջ Բերսաբէին, առնէ. Սողոմոնի որդւոյ Ռոբովամի, ժամանակը, Իսրայէլի թագաւորութիւնը երկուքի բաժանուեցաւ. Մեծ գետից (տես Դաս ԻԳ.), Եփրատից անցաւ. Անդրէաս իւր եղբայրը, Պետրոսին, ասաց. Ի՞նչ ես ուզում ինձանից մի խեղճ մարդից. Իւր հայրենիքը, Յունաստան, եկաւ. Մեծն Աղէքսանդր, Մակեդոնացւոց թագաւորը,, Պարսից տէրութեանը նուաճեց. Այս եղաւ Պարսից թագաւորին, Դարեհի Կոդոմանոսի ժամանակումը. Յիսուս խաչուեցաւ Հռովմայեցի դատաւորին, Պոնտացի Պիղատոսին, հրամանաւ. Աստուած Աբրահամին հրա-

մայեց զոհել իւր մէկ հատիկ որդուն, Իսահակին. Մեր երկրորդ անգամ քրիստոնէութեան դառնալը Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռքով եղաւ. Տրդատայ հրամանաւ սպաննուեցան Հռիփսիմեանք, Վաղարշապատ քաղաքում. Աբրահամ իւր ծառայ, Եղիազարին ասաց. Յակոբ եկաւ Եգիպտոս, իւր որդի Յովսէփի մօտ. Կայէն իւր եղբօրն, Աբէլին նախանձեցաւ, և սպաննեց նրան. Նշանաւոր քաղաքներ կային Երասխ գետի եզերքում, Երանելին Սահակ և Մեսրովպ սուրբ գրքերը թարգմանեցին իրենց Եզնիկ, Արձան, Յովսէփ, Յովհան և Կորիւն աշակերտներով ի միասին։

| | |
|---|---|
| Խեղճ մարդ, այր տառապեալ | Մէկհատիկ, միածին |
| Ուզել, խնդրել | Դառնալը, դարձ |
| Այս, այս | Ձեռքով, ի ձեռն |
| (Դարեհի) ժամանակումը, | Միատեղ, համօրէն |

առ (Դարեհիւ) (տես Դաս ԻԲ.)

45. Հրաման

ԿՈՉԱԿԱՆ

Որդեակ հօրդ խրատին մտիկ արա. Ձո՛վ, որբին ես փնտռում, ո՛վ կին. Ծառանե՛ր, ձեր տէրերին հնազանդ եղէք. Ինչո՞ւ ես տանջում ինձ, ո՛վ մարդ. Գեղեցիկ Արիադնէ քեզ ո՛վ բերաւ այստեղ. Զէնքդ ա՛ռ, քաջ Յեսու. Ե՛լ կանգնէ, ո՛վ տղայ. Քեզ եմ ասում ո՛վ աղջիկ. Ի՞նչ ես ննջում, արթնացի՛ր, ո՛վ վատ. Տեա՛րք, ի՞նչ էք ուզում որ անեմ. Քեզ գիտեմ, Աստուծոյ սուրբ. Քեզանից շնորհակալ եմ, քաջ Փելիքս. Իսրայէլի թագաւորը, խաչից իջի՛ր. Հեռի կացէք ինձանից, անիրաւ մշակներ. Ամաչի՛ր, ո՛վ խաղաղութեան թշնամի. Վարձքդ մեծ է, ո՛վ աղքատներին հայրը։

| | |
|---|---|
| Մտիկ անել, լսել | Տղայ, մանուկ |
| Փնտռել, խնդրել | Քնանալ, ննջել |
| Բերել, ածել | Արթնանալ, զարթնուլ |
| Կանգնել, կալ | Անել, առնել |



| | |
|---|---|
| Ուզել, կամիլ | Հեռի կենալ, ի բաց կալ |
| Քեզանից, ի քէն | Ամաչել, յամօթ լինել |
| Իջնել, իջանել | Անիրաւ (մշակներ), (մշակք) անիրաւութեան |

ԼՈԾՈՒՄՆ

Աղեքսանդր Մեծ, արքայ Մակեդոնացւոց, նուաճեաց զթագաւորութիւնն Պարսից։ Մեծ Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը Պարսից տէրութեանը նուաճեց։— Նուաճեաց, բայ ներգ. կատ. գ. դէմք։ — Նուաճեաց, ո՞վ.— Աղեքսանդր Մեծ։ Աղեքսանդր, յատ. անուն ուղղ. տէր բայի նուաճեաց ին. Մեծ՝ ածական. Աղեքսանդրի տխտղան է։—Աղեքսանդր մեծ ո՞վ էր։—Արքայ Մակեդոնացւոց, Մակեդոնացւոց թագաւորը. բացայայտիչ Աղեքսանդր ին։ Աղեքսանդր մեծ նուաճեաց, ի՞նչ բան.— Զթագաւորութիւն Պարսից. Տէրութիւն՝ գոյ. հայցական խնդիր նուաճեաց ին, Պարսից, յատ. ան. յոգ. սեռակ. յատկացուցիչ՝ թագաւորութեանն ին։

ԴԱՍ ԼԷ.

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Հ. Ի՞նչ է միջարկութիւն։

Պ. Միջարկութիւն կամ չյարաբերութիւն կոչւում են այն բառերն որ յայտնում են հոգու այլևայլ շարժումներին զոր օրինակ. Բարկութիւն, իղձ, ուրախութիւն և լն։ Եղո՜ւկ ինձ, որդեակ իմ։ Վայ ինձ որդեակ.

Վայ քեզ, քաղաք արեան։ Վայ քեզ արեան քաղաք

Բա՜րէ, որպիսի զօրութիւն։ Ո՜վ, ինչպիսի զօրութիւն

Ո՛ն, արիք գնասցուք աստի։ Ո՛ն, ելէք գնանք այստեղից

Երանի թէ աստ լեալ էիր։ Երանի թէ այստեղ լինէիր

Քաւ լիցի քեզ առնել զայդ։ Աստուած չանէ որ այդպէս անես

Հ. Ո՞յք են գլխաւոր միջարկութիւնք։

Պ. Գլխաւոր միջարկութիւնք են։

Աստուծո՜յ, աստուծո՜յ (է՜յ), ով, բարկութիւն կամ թշնամանք յայտնելու.

Աւա՜ղ, Եղո՜ւկ — աւա՛ղ, ցաւ յայտնելու.

Բա՜բէ, բա՜բէ, ա՜հ, ա՜հ, զարմանք կամ ցաւ յայտնելու

Երանի՜, երանի՜, երանութիւն տալու

Երանի՜ թէ, Իցի՜ւ, Ցանկա՜րծ, Ո՜ տայր, Օ՜չ թէ — ուր էր, երանի թէ, աստուած տայ որ. իղձ յայտնելու.

Ո՛վ, ո՛, Ո՛հ, Է՛ — ով, ձայն տալու կամ կոչելու. նաև զար-մանք յայտնելու.

Աղէ, Օն, Հապա — հա՛պա, է, (դէհ) յորդորելու, խրախոյս տալու.

Վա՜հ, Վա՜յ — վայ քեզ որ, արհամարհանաց համար.

Վա՜շ, վա՜շ (օ՜խ), հաճութիւն, հեշտութիւն ցոյց տալու համար.

Ո՜ն անդր, Քա՛ւ լիցի, Փարգաստ — Աստուած չանէ, սոսկում, չկամել ցոյց տալու համար:

46. Հրահանգ

Ո՜վ, ինչ մարդասիրութիւն, որչափ խնամք. Վայ ձեզ, դպիրներիդ և Փարիսեցիներիդ. Վա՜յ յղի-ներին և կաթ տուողներին այն օրերում. Վա՜յ ինձ, աղջիկս. Ապրի՜ս, բարի և հաւատարիմ ծառայ. Ապ-րի՜ս, լաւ ասացիր. Ա՜հ, փառք քի Աստուծոյ հրեշ-



Ով դու, քեզ եմ ասում. Ո՛վ սուտ և չարագործ. Վա՜յ քեզ, նինուէ, Վա՜յ քեզ չարչարողը. Վա՜յ ինձ, ողոր-մելի եմ: Ո՜հ, կորաւ մարդը. Բա՜բէ, ինչ փառաց հասուց մեզ. Ուր էր որ թագաւորէիք. Երանի թէ նրա հետ գայիր. Ո՜ւր էր որ դու էլ իմ որդիս լինէ-իր. Ո՛վ անհաւատ և թիւր ազգ. Ո՜վ սքանչելիք. Ո՜հ, կը մեռնիմ. Վա՜յ քեզ որ քակում էիր տաճարը, և երեք օրից շինում էիր. Երանի թէ նոցա հետ գը-նացած էի. Վա՜շ (օխ), տաքացայ և կրակ տեսայ. Հա՜, գործեցէք. Հա՜պա, եկէք մենք էլ նրա հետ մեռ-նենք. Հապա, աղէ, տուր ինչ որ պարտական ես. Ո՜ւր էր որ տէրս գնար Աստուծոյ մարգարէին մօտ. Աստ-ուած չանէ որ այդ արին մատնէք. Աղէ, խորհեցէք. Ո՜հ, յանցանքս մեծ է. Վա՜յ այնպիսի խօսքերին:

| | |
|---|---|
| Կաթ տուող, ստնտու | Վայ քեզ որ, վա՜հ որ |
| Աղջիկս, դուստր իմ | Երանի թէ, օ՛չ թէ |
| Ապրի՜ս, միջ. աֆէրին | Վաշ (օխ), վա՛շ |
| Լաւ, բարւոք | Տաքանալ, ջերմանալ |
| Ո՛վ դու, ո՛վ դու կամ ա՛յ դու | Հա՛, հա՛պա, օ՛ն, աղէ՛ |
| Ով սուտ, ով կամ ա՛յ սուտ | Պարապ, ընփուր |
| Զարչարողը (քեզ), որ չար-չարէն կար. որ չարչարեցին | Աստուած չանէ, ո՛ն, անդր, փարգաստ, քաւ լիցի |
| | Օ՛ն, օ՛ն |
| Ողորմելի, եղո՜ւկ | Ինչ որ պարտական ես, զոր պարտիս |
| Ի՜նչ, որպիսի՜ | |
| Ո՜հ, ոհ, բա՜բէ | Ուր էր որ, ցանկա՜րծ |
| Ո՜ւր էր որ, երանի թէ | Աղէ, աղէ՜ |
| Երանի թէ, իցի՜ւ | Մտածել, ի մտաւ ածել |
| Ո՛վ, ով, բա՜բէ | |

Վա՜յ, վա՜յ, եղո՜ւկ

## ԴԱՍ ԼԲ.

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է և ինչ նշանակում է յարաբերական դերանուն:

Պ. Յարաբերական դերանունն է որ բառը, և նըշանակում է որ, որն որ:

Հ. Աշխարհաբարի ո՞ր տեսակ խօսքերն են որ գըրաբարում որ յարաբերականով և դիմաւոր բայով կասուին:

Պ. Աշխարհաբար ող և ած բառերով շինուած խօսքեր գրաբարում ընդհանրապէս կասուին որ յարաբերականով և դիմաւոր բայով. զոր օրինակ·

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Այդ գիրքը քեզ տուող | Այն որ ետ քեզ զմատեանդ |
| Մարդն իմ բարեկամս է | Բարեկամ իմ է |
| Զիս սիրողը, | Որ սիրէն զիս |
| Տեսած մարդդ իմ բարեկամս է | Այրն զոր տեսանես բարեկամ իմ է |
| Լսածդ պատմիր | Պատմեա զոր լսարն |

Հ, Որ սիրէն զոր լսարն խօսքերի մէջ ն յօդն ինչու համար դրուած է:

Պ. Երբ որ յարաբերականին յարաբերեալը զօրութեամբ իմացւում է, յարաբերականից անմիջապէս յետոյ եկող բառին վերայ դրւում են ս, դ, ն յօդերը:
Որ սիրէն զիս, նշանակում է նա որ սիրէ զիս. Զոր լսարն նշանակում է այն կամ զայն զոր լսար:

Հ. Ո՞ր բառին կասուի յարաբերեալ:

Պ. Յարաբերեալ կասուի այն բառին որի տեղ դըրւում է յարաբերականը. ուստի՝ այրն զոր տեսեր, կամ այրն որ խօսի, խօսքերի մէջ՝ այրն յարաբերեալ է

Հ. Ասացիր թէ, երբ յարաբերեալը զօրութեամբ է, յարաբերականից անմիջապէս յետոյ եկող բառին վերայ ս, դ, ն գրերը դրւում են. կարո՞ղ ես ասել նաև թէ այս գրերին ո՞րը ե՞րբ գործածւում է:

Պ. Եթէ զօրութեամբ իմացուած յարաբերեալն այս, սա կամ այս և սրանց յոգնակին է, ս գիրը գործածւում է. Եթէ դոյն, դա կամ այդ և սրանց յոգ-



նակին է, դ. Եթէ նա կամ այն և սրանց յոգնակին է, ն. զոր օրինակ.

| | | |
|---|---|---|
| Որ խօսիմս ընդ քեզ | Փոխ. | Ես որ խօսիմ |
| որ կարողքս եմք | » | Մեք որ կարող եմք |
| որ աստս է | » | Սա որ աստ է |
| որ խօսինս | » | Սոքա որ խօսին |
| զոր ասեմս | » | Այս զոր ասեմ |
| որ ձիթենիդ վայրենի էիր | » | Դու որ ձիթենի էիր վայրենի |
| որ ի գէթդ | » | Դոքա որ և այլն |
| որ ի քէնդ առաքեցաւ | » | Դա որ առաքեցաւ են. |
| որ իբրև զքեզդ իցեն | » | Դոքա որ և այլն |
| զոր դուդ առնես | » | Այդ զոր դու առնես |
| ընդ որս դուքդ զարմանայք | » | Այդոքիկ ընդ որս և այլն |
| որուն դուն վկայեցիր | » | Նա որում և այլն |
| զոր մեքն կարող եմք | » | Այն զոր մեք կարող եմք |

Հ. Ինչ ժամանակ է դրւում յարաբերականին բայը

Պ. Յարաբերականին բայը, խօսքի իմաստին նայելով, ներկայ, անցեալ, [illegible] և այլն կը դրուի. Ուստի՝ այրն որ խօսի նշանակում է մարդը որ խօսում է, կամ, հիմա խօսող մարդը

| | | |
|---|---|---|
| Այրն որ խօսէր | » | Մարդը որ խօսում էր, կամ առաջ խօսող մարդը |
| Այրն որ խօսեցաւ | » | Մարդը որ խօսեցաւ, կամ, արդէն խօսող մարդը |
| Այրն որ խօսեսցի<br>Այրն որ խօսելոց է<br>նոյնպէս | » | Մարդը որ պիտի խօսի |
| Որ խօսին | » | Այն որ խօսում է կամ, հիմա խօսողը |
| Որ խօսէրն | » | Այն որ խօսում էր, կամ, առաջ խօսողը |

| | |
|---|---|
| Որ խօսեցաւն | նշանակում է այն որ խօսեցաւ կամ, արդէն խօսողը |
| Որ խօսեսցին<br>Որ խօսելոցն է | այն որ պէտք է խօսի |

47. Հրահանգ

(*) Սովորող աշակերտը. Կռուող զինուորը. Եկող մարդիկը. Արածող անասունները. Փախչին թշնամիք։ Տեսած գիրքս. Առած փողդ. Մեր տուած պարգևները. Հօրդ շինած տունը. Նրանց մատուցած զոհերը. Խօսողը. Տեսնողը. Լսողը. Նստողը. Երգողները. Ուղարկողները. Պարտողները։
Տեսածս. Առածդ. Առածը. Նորա գրածը. Մեր խմացածը. Ձեր սովորածները։

| | |
|---|---|
| Սովորել, ուսանել | Ուղարկել, առաքել |
| Կռուել, մարտնչել | Պարտել, յաղթել |

Հ. Ի՞նչ անել պարտ է որ յարաբերականով և դիմաւոր բայով շինուած մի խօսքը հոլովելու համար։

Պ. Որ յարաբերականով և դիմաւոր բայով շինուած մի խօսքը հոլովելու համար՝ պարտ է յարաբերականը, զոր օրինակ. որ խնդրէ, ուզողը. որոյ խնդրէ, ուզողին (սեռ.). որում խնդրէ, ուզողին (տրական). զոր խնդրէ, ուզողը (հայց.). յորմէ խնդրէ ուզողից։ Որք խնդրեն, ուզողները. որոց խնդրեն, ուզողներին (սեռ. տր.). զորս խնդրեն, ուզողներից։

Հ. Պէտք է միշտ այսպէս հոլովել յարաբերականը մի հոլով ցոյց տալու համար։

Պ. Երբեմն յարաբերականն անփոփոխ կը պահուի, և պահանջուած հոլովին տեղ՝ նոյն հոլով դե-

(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը յարաբերականով դիմաւոր բայի վերածեն գրաբար բայը, ...



րանուն խօսքի միջին աւելացնում է, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Քեզանից խնդրողին տուր | Որ խնդրէ ի քէն՝ տուր նմա. փոխանակ ասելու, որում խնդրէ ի քէն տուր։ |
| Քեզանից փոխ ուզողից երեսդ մի դարձնի | Որ կամիցի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս. փոխանակ՝ յորմէ կամիցի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս։ |
| Այս լսողներին երկու ականջները պէտք է խօսին | Որ լսիցենն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք նոցա, փոխանակ՝ որոց լսիցենն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք |
| Խօսել ուզողներին արգելում էր | Որ խօսելն կամէին՝ արգելոյր զնոսա, փոխանակ՝ զորս խօսելն կամէին՝ արգելոյր |

Հ. Միշտ յարաբերեալից յետոյ դրւում է յարաբերականով դիմաւոր բայը։

Պ. Յարաբերականով դիմաւոր բայը երբեմն ըստ բնական, աշխարհաբարի պէս, յարաբերեալից առաջ կը դրուի, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ներսն եղող մարդիկը | Որ ի ներքս էին արք. փոխանակ՝ արքն որ ի ներքս էին |
| Զիս ուղարկող Հայրը | Որ առաքեաց զիս Հայր. փոխ. Հայրն որ առաքեաց զիս |
| Լաւ վերակացութիւն անող երէցները | Որ բարւոք վերակացու լինին երիցունք փոխ. երիցունք որ, և այլն |

48. Հրահանգ

(*) Եղբայրդ սպաննող մարդն այստեղ է. Քեզ հետ խօսող կնողջը տեսայ. Նրանից առած խօսքը չիմացան. Քաղաքին խռովող մարդկանցը գիտէք. Այստեղ

(*) Այս դասում առածները լաւ իմանալուց յետոյ, աշակերտք գրաբար դարձնեն նշանակեալ հրահանգները

եկող մարդիկն ուր են. Հօրս ուղարկած գիրքը կարդացի՞ք. Քո պատմածներիդ տեղեակ չենք. Ինձ մատուցած ծաղիկներդ գեղեցիկ են. Այդ ծառերին հասցրած պտուղները քաղցր են. Անցկացած ժամանակն՝ էլ չի դառնայ. Նրա խորհուրդներին մի գիտցող չկայ. Ձեզ ճանաչողները շատ են. Մարդիկը որոնցից այդ ընծաները ընդունեցիք՝ մեր բարեկամներն են. Ուստի՞ լսեցիր այդ բոլոր գրածներդ. Քո շինած գրերից շատերին կարդացի. Ծովը խեղդուած տղաք. Ազնուականների որդիք էին. Նամակը բերող պատանին թագաւորի սպասաւորներից մինն է. Այդ զինուորներին պսակուած դափնիները յաղթութեան նշան են. Տուած հրամաններդ կատարեցի. Սպաննուած մարդիկն անմեղ էին. Գիշերն երևացող աստղերից ոմանք անշարժ են, և ոմանք քայլող. Մեր տեսած մարդն այստեղ է. Ձեր ընդունած ընծաները տեսայ. Գրած գիրքդ շատ ընտիր է. Ուղարկած սպասաւորդ ինձ եկաւ. Այս գիշեր պատահած հրդեհին տեղեակ չե՞ս. Եթէ տուած վատ լուրդ ճշմարիտ է, իրաւ պէտք է տրտմել. Եթէ ասած խօսքերս արդար են, ինչո՞ւ բարկանում ես։

| | |
|---|---|
| Այստեղ, աստ, այսր | Նամակ, թուղթ |
| Իմանալ, հասկանալ, իմանալ | Անմեղ, անպարտ |
| Գիտենալ, ճանաչել | Ոմանք, ոմանք, անշունչ բաների համար՝ կէսք, այլք |
| Ուղարկել, առաքել | |
| Կարդալ, ընթեռնուլ | Քայլող, գնացող |
| Էլ չ... ոչ ևս | Մին չկայ, չիք ոք որ... |
| Բոլոր այդ, այդ ամենայն | Ծնել (գիրք), յօրինել |
| Խեղդուիլ (ջրում), հեղձնուլ | Վատ լուր, գոյժ |
| | Արդարև, իրաւ |

ԼՈՒԾՄԱՆ ԿԱՆՈՆ

Հ. Միշտ միմիայն նախադասութիւնի՞ց է բաղ-



Պ. Մի խօսքը կարող է բաղկանալ երկու կամ աւելի նախադասութիւնից, զոր օրինակ. սա խօսքը, աստ է այրն որ սպան զեղբայր քո. Այստեղ է մարդը որ սպաննեց քո եղբօրդ. երկու նախադասութիւնից է բաղկանում. Աստ է այրն, մի նախադասութիւն. որ սպան զեղբայր քո, երկրորդ նախադասութիւն։

Հ. Ի՞նչպէս են կոչւում այս երկու նախադասութիւնք։

Պ. Առաջին նախադասութիւնը կոչւում է գլխաւոր. երկրորդը որ կախումն ունի գլխաւոր նախադասութիւնից՝ կոչւում է միջանկեալ նախադասութիւն։

Հ. Ի՞նչպէս է հասկացւում թէ մի նախադասութիւնը միջանկեալ է։

Պ. Միջանկեալ նախադասութիւնը սկսւում է միշտ յարաբերականով կամ շաղկապով։

Հ. Ի՞նչպէս է իմացւում թէ խօսքի միջին քանի նախադասութիւն կայ։

Պ. Մի խօսքի մէջ որքան դիմաւոր բայ կայ, այնչափ նախադասութիւն կայ։

---

ԼՈՒԾՈՒՄՆ

Աստ է այրն որ սպան զեղբայր քո. այստեղ է մարդը որ սպաննեց եղբօրդ։ Այս խօսքը բաղկանում է երկու նախադասութիւնից, քանզի երկու դիմաւոր բայ կայ։ Աստ է այրն նախադասութիւն գլխաւոր։ Է, բայ չէզ. սհմ. ներկ. գ. դէմք. այստեղ նշանակում է, կայ գտանի ներկայ է։ — Ո՞վ է. — Այրն. այր՝ գոյ. անուն. եզ. ուղղ. տէր բայի է ին. ն յօդ է։ Այրն է (գտնւում է, ներկայ է) ո՞ւր. — Աստ, այստեղ, աստ՝ մակբայ է ին։

Որ սպան զեղբայր քո. որ քո եղբայրդ սպաննեց, նախադասութիւն միջանկեալ։ Սպան, բայ ներգ. սահմ. կատար. եզ. գ. դէմք. սպանանել իցէ։ — Ո՞վ սպան. — որ. որ յարաբերական դեր. եզ. ուղղ. կը յարաբերէ այրը,

տէր բայի է [illegible]. որ (այրն) սպան զոմ։—[illegible] գոյ. ան. եզ. հայց. սեռի խնդիր [illegible]. քո ստաց. ած. [illegible]։

49. Հրահանգ

Այս անողը ձեր բարեկամն է. Ձիս տեսնողն այստեղ է. Քեզ մատնողը քո որդին է. Մեզ հետ խօսողները վկայեցին. Տեսնողները և լսողներն երանելի են. Չգործողը թող չուտէ. Ուտողները հինգ հոգի էին. Կարդացողը թող հասկանայ. Ձիս ուղարկողը ինձ պատուէր տուաւ. Այս գրքի գրողները ձեզ ճանաչում են. Այնտեղ եղողները զարմացան. Մըտնողներն և ելնողները տեսնում էին. Չգործողները պէտք է պատուհասել. Այնտեղ գտնուողներին բըռնեցինք. Հետը խօսածս ձեր քոյրն է. Այդ տեսածդ իմ եղբայրս է. Քեզանից խնդրողին տուր. Այս անողը տեսայ. Բռնածնին սրից անցկացրին. Ինձ տուածդ քեզ տամ. Լսածնիս քեզ պատմենք. Գրածը կարդացի. Ուղարկածդ ընդունեցի. Ասածդ ճշմարիտ է. Ձեր ասածներից մի բան չգիտեմ. Պարծեցածդ սուտ է. Անելիքդ շուտով արա. Այս խնդրածս ինձ տուր. Այդ ուղարկածդ ընդունեցի. Ինձ տուածներիցդ մի բան չկորցրի. Քո կասկածդ գիտեմ. Մեր վախեցածներից մի բան չպատահեցաւ. Առածդ իմն է. Կորածներն ինչ էին։

| | |
|---|---|
| Անել, [illegible] | Մի բան չ՛ . . . . . [illegible] |
| Հասկանալ, [illegible] | Շուտով, [illegible] |
| Բռնել, [illegible] | Վախենալ, [illegible] |
| Սրից անցկացնել, [illegible] | [illegible] |

ԼՈՒԾՈՒՄՆ

Որ [illegible] բարեկամ [illegible] է. Այս անողը ձեր բարեկամն է. Այս խօսքը բաղկանում է երկու նախադասութիւնից, քանզի երկու դիմաւոր բայ կայ։



բայ սահմ. ներկ. եզ. գ. դէմք։ Ո՞վ է.— [illegible] էակ. դեր. եզ. գ. դէմք. տէր բայի է ին, զօրութեամբ կիմացուի։ Նա է, ինչ.—[illegible] գոյ. ան. եզ. ուղղ. ստորոգելի է ին. ձեր՝ ստաց. ած. [illegible]։

Որ [illegible] նախադասութիւն [illegible]։ Արար, բայ ներգ. սահմ. կատ. եզ. գ. դէմք. [illegible] (անեմ) զարտուղի բայից. ն դիմ. յօդ զօրութեամբ իմացուած [illegible] յարաբերականին տեղ դրուած է։ Ո՞վ արար.—[illegible] յարաբ. դեր. յարաբերում է զօրութեամբ իմացուած [illegible]։ Որ (նա) արար զի՞նչ.—[illegible] ցուցուած [illegible] դեր. եզ. հայց. սեռի խնդիր [illegible]։

ԴԱՍ ԼԹ.

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Լծորդութեանց օրինակներում մինչև հիմա ցոյց տրուած ժամանակներից ուրիշ ժամանակներ կա՞ն

Պ. Մինչև հիմա ցոյց տրուած ժամանակներն են՝ [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] և [illegible]։ Սրանք պարզ ժամանակներ են. կան նաև [illegible] ժամանակներ, որ կազմւում են [illegible] էական բայի [illegible], [illegible] և [illegible], և որևիցէ բայի [illegible] և [illegible] [illegible], զոր օրինակ.

1. Յարակատար

Սիրեալ եմ, սիրեալ ես և լն. [illegible], [illegible], և լն.

2. Գերակատար

Սիրեալ էի, սիրեալ էիր, և լն. [illegible], [illegible], և լն.

3. Ստորադասական անցեալ

Սիրեալ լիցեմ, սիրեալ լիցես, և այլն — [illegible] կամ [illegible] և այլն

4. Ապառնի ներկայ

Սիրելոց եմ, սիրելոց ես, և լն. [illegible], և լն.

5. Ապառնի անկատար

Սիրելոց էի, սիրելոց էիր և այլն — Պէտք է սիրէի, պէտք է սիրէիր և այլն

6. Ապառնի ընդունելութիւն

Սիրելոց լիցեմ, սիրելոց լիցես, և այլն — Պիտի սիրեմ, պիտի սիրես, և լն.

## ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Հայերէն տէր բայի միշտ ուղղական հոլով է։

Պ. Երկու դէպքում կարող է տէր բային սեռական դրուիլ։

1. Երբ և շաղկապով կապուած երկու բայ ունին միևնոյն տէր բային, առաջին բայն կարող է փոխուիլ անցեալ ընդունելութեան, և շաղկապը զանց առնուիլ, և այն ժամանակ կարող է տէր բային սեռական դրուիլ։ Զոր օրինակ՝ սա խօսքը. լուաւ նա զայս և մեկնեցաւ. Նա լսեց այս և գնաց, կարող է այսպէս ևս ասուիլ. լուեալ նորա զայս՝ մեկնեցաւ, և աշխարհաբարի է դառնում սապէս. Նա այս լսելով գնաց։

2. Ցարակատարին, Գերակատարին և Ստորադասական անցելոյն (տես վերը) եզակի երրորդ դէմքը շատ անգամ գործածւում է թէ եզակի և թէ յոգնակի ամեն դէմքի տեղ, և այն ժամանակ բուն բային տէր բայն, թէ դերանուն և թէ գոյական, սեռական կը դրուի. զոր օրինակ՝ տեսեալ եմ զնա խօսքին մէջ՝ տեսեալ եմ առաջին դէմքը կարողանանք երրորդ դէմքի փոխել, տեսեալ է, և տէր բային որ է՝ ես, սեռականի փոխելով ասել. տեսեալ է իմ զնա։

Այսպէս միւս դէմքերը։

| | |
|---|---|
| Ես նրան տեսած եմ | Տեսեալ եմ ես զնա կամ տեսեալ է իմ զնա |
| Դու նրան տեսած ես | Տեսեալ ես դու զնա կամ տեսեալ է քո զնա |



| | |
|---|---|
| Նա, կամ եղբայրս նրան տեսած է | Տեսեալ է նա կամ եղբայր իմ զնա, և կամ տեսեալ է նորա կամ եղբօր իմոյ զնա |
| Մենք նրան տեսած ենք | Տեսեալ եմք մեք զնա կամ տեսեալ է մեր զնա |
| Դուք նրան տեսած էք | Տեսեալ էք դուք զնա, կամ տեսեալ է ձեր զնա |
| Նրանք, կմ. մեր եղբայրները նրան տեսած են | Տեսեալ են նոքա կամ եղբարք մեր զնա, և կամ տեսեալ է նոցա կամ եղբարց մերոց զնա |

Հ. Տէր բային կարո՞ղ է դրուիլ նաև տրական։

Պ. Երբ երկու նախադասութիւն զի, թէ շաղկապով կապուած են, այն շաղկապները կը թողուին, և երկրորդ բայն աներևոյթի կը փոխուի, և այն ժամանակ տէր բային տրական կը դրուի. ինչպէս, ոչ կամիմք զի թագաւորեսցէ նա ի վերայ մեր. Չենք ուզում որ նա մեր վրայ թագաւորէ. այս խօսքը կարող է ասուիլ այսպէս. Ոչ կամիմք թագաւորել նմա ի վերայ մեր։

50. Հրահանգ

Զինուորները վերայ հասնելով կապեցին նրան. Նա լեռը ելնելով նստաւ. Նրանք իմ խօսքերս պատգամաւորին պատմելով նորից եկան ինձ մօտ. Նրան լերան ծայրը բերելով ուզում էին վայր նետել (գձել). Օտարական մարդին ներսը մտցնելով դուռը փակեցին. Ցելուզակները լեռնից իջնելով դաշտում բանակեցան. Աստուծոյ հրեշտակը երկնքից իջնելով նստում էր գերեզմանին վերայ. Կիները շուտով պարտիզից ելնելով կը փութային աւաւինել գիւղում. Քո եղբայրդ մօտենալով նրանց հետ խօսեցաւ. Մատնիչը տեսնելով այս՝ զղջաց. Նրանք փողն առնելով սպասաւորներին տուին. Ծառաները մօտենալով նրան երկրպագութիւն անում էին. Նա այս ասելով [illegible]

ցաւ. իւր գլուխը ծռելով հոգին աւանդեց. Նրա ձեռքից բռնելով դուրս հանեց. Ներս մտնելով ոստիկանները նրան փնտռում էին. Մեսրոպը քնից զարթնելով մեր նշանագիրները ստեղծեց. Նա քաղաքից ելնելով մեզ եկաւ. Յովսէփը իւր եղբայրներին տեսնելով նրանց ճանաչեց. Նրա գլուխը կտրելով թագաւորին բերին. Իմ ձեռքիցս բռնելով ներս տարաւ. Ադամը նրա քայլի ձայնը լսելով թաք կացաւ. Մայրը որդուն մահուան լուրը լսելով սկսաւ լաց լինել. Իւր անկողինը ելնելով ննջում էր. Զեր եղբայրների կանչելով ուղարկեցի նրանց. Զինուորները գալով մեզ բռնել կամենում էին. Սողոմոնը իւր հօրը թագաւորութեան աթոռը ելնելով՝ բոլոր ազգերն իրեն հնազանդեցրեց. Ծառաներն իրեն մօտենալով աղաչում էին. Նրան մի կողմ առնելով հետը խօսում էր. Մեզ թողլով իրենց տները գնային. Աթոռ նստելով ժողովրդին դատում էր. Մենք շատ օրեր այնտեղ կենալով նրա գալուն էինք սպասում. Պատուհանից անցկենալով ներս մտաւ նրան տեսնելու. Տաճարին առաջը կենալով խօսում էր ձեր եղբօր հետ. Կրակ վառելով նստան, և տաքանում էին։

Նորից, անդրէն
Ծայր (լերան), արտեւան
Բերել, ածել
Վայր նետել (ձգել), ընկենուլ, արկանել ի վայր
Մտցնել, մուծանել
Փակել, փակել
Շուտով, վաղվաղակի
Ապաւինել (մի տեղ), ապաստանել ի
Մօտենալ, մատչել
Երկրպագութիւն անել, երկիրպագանել
Ծռել (գլուխը), խոնարհեցուցանել
Փնտռել, խնդրել
Զարթնել, զարթնուլ
Բռնել (ձեռքից), ունել (զձեռանէ)
Կորել, հատանել
Քայլել, գնալ
Լուր (մահուան), բօթ
Անկողին, մահիճք
Մի կողմ, մէկուսի
Պատուհանից, ընդ պատուհանն
Կրակ վառել, խարոյկ արկանել



51. Հրաման

Դուք նրանց համար լսել էք. Նրան շատ անգամ տեսել եմ. Նրանք մեր նամակները կարդացել էին. Կարդացած չէք. Մենք մի այնպիսի բան կարդացած չենք. Նրա վերայով շատ բան լսած եմ. Նա շատ չարիք գործած էր. Մենք այս թագաւորից պարգև առած ենք. Եթէ թագաւորին հաւատարիմ եղած լինէիք. Իմ առաջին վարմունքս լսած էք. Նա ճանապարհին տեղեկացած էր. Ոչ կերած ոչ էլ խմած ենք. Եթէ մենք նրա պատուիրանները պահած լինէինք. Նրանք գերութիւնից նոր դարձած էին. Կօշիկներ հագած էին. Զեմ թողնիլ որ դու այստեղից անցկենաս. Թագաւորին հրամանն այս է, որ դուք շուտով այս քաղաքից գնաք. Պատմում է թէ նրանք մի դաշտ հասան և այնտեղ մի քաղաք շինեցին. Պատուիրեցի սպասաւորներին որ այստեղ գան. Աղաչում էին նրան որ անձամբ կռուին մէջ չմտնէ. Ասում են թէ դու կայսեր թշնամի ես. Փափաքում են որ իրենց զօրավոր լինիս

Մի այնպիսի բան, այնպիսի ինչ
Նոր, այն ինչ
Հաւատարիմ թագաւորին, հաւատարիմ առ թագաւորն
Կօշիկ (չաքմա), մոյկ
Այստեղից, աստի
Վարմունք, գնացք
Գնալ (մի տեղից), մեկնել
Ուտել, ճաշակել
Սպասաւոր, ծառայ
Պատուիրեմ, պատուէր տամ
Փափաքել, ըղձանալ

Հ. Մի գիմաւոր բայ անցեալի կամ աներևութի փոխելն ինչ առաւելութիւն ունի։

Պ. Մի գիմաւոր բայ անցեալի կամ աներևութի փոխել և տէր բային սեռական կամ տրական դնելն է Հայերէնի առանձին յատկութիւններից մին։ Երբ աշակերտք լուծում են այս կերպով փոխուած կամ ամփոփուած մի խօսք, հեշտութեան համար կարող են խօսքը հասարակ կերպի դարձնել, և ապա լուծել, զոր օրինակ

Հասեալ ընծայաբերացն ի վերայ նորա՝ հայեցեալ ընդ. Լուեալ է չէր վասն նորա. Զատ Բոյլ անուանեալ չէր տայի։
Հասարակ կերպի դառնում են այսպէս.

Հասին ընծայաբերքն ի վերայ նորա եւ հայեցան ընդ. Լուեալ էր դուստ վասն նորա. Զատ Բոյլ զի անուանեցէր դուստ տայի.

Այսպիսի նախադասութիւնք այսպէս պարզուելուց յետոյ լուծւում են գիրքաւ։

---

## ԴԱՍ Խ.

## ԴԻՄԱՒՈՐ ԲԱՅԵՐԻՆ ՓՈԽԵԼ ՅԱՆԴԷՄ

Հ. Մի խօսքը կարճ և ազդու անելու համար ինչ պէտք է։

Պ. Մի խօսքը կարճ և ազդու անելու համար շատ անգամ կը փոխուի նրա մի դիմաւոր բայն անդէմի, այսինքն անցեալի կամ աներևոյթի։

Հ. Որոնք են այս տեսակ համառօտութեան կամ անփոփման գլխաւորները։

Պ. Այստեսակ համառօտութեան կամ անփոփման գլխաւորներն են.

1. Երբ երկու դիմաւոր բայ մի և նոյն տէր բային ունին, առաջինը անցեալի կը փոխուի (տես և Դաս ԼԹ)։

| | |
|---|---|
| Եղբայրդ զիս տեսաւ և կանչեց | Տեսեալ զիս եղբօր քո կոչեաց. փոխ. Եղբայր քո եպես և կոչեաց |
| Նրան առաւ և հետը տարաւ | Առեալ զնա՝ տարաւ ընդ իւր |
| Աստուած Ադամին ստեղծեց ու դրախտում դրաւ | Արարեալ Աստուծոյ զԱդամ եդ ի դրախտին |
| Կայէն Աբէլին նախանձեց և սպաննեց | Նախանձեալ Կայենի ընդ Աբէլ սպան զնա |

2. Մի խօսքի իբրեւ, երբ, շաղկապով կապուած մասին դիմաւոր բայն և այսպէս կարող է փոխուիլ անցեալի եթէ բային ժամանակը կատարեալ է. զոր օրինակ

| | |
|---|---|
| Երբ այս լսեց, ասաց | Լուեալ զայս՝ ասէ, փոխ. իբրեւ |



| | |
|---|---|
| Երբ այնտեղ հասանք, բանտում դրուեցանք | Հասեալ մեր անդր՝ արկաք ի բանտ |
| Երբ նա այս պատասխանը տուեց, | Նորա զայս պատասխանի տուեալ, |
| Դատաւորը մեծ ձայնով ասաց | Դատաւորն ի ձայն մեծ ասէ |
| Երբ թագաւորին առաջն ելանք մեզ հարցրեց | Յանդիման լեալ մեր թագաւորին եհարց զմեզ |

Իբրեւ շաղկապով կապուած բայը կարող է դրուիլ նաև ի նախդրիւ աներևոյթ. ինչպէս.

| | |
|---|---|
| Երբ այս կը լսէք, ասացէք | Ի լսել ձեր զայս՝ ասասջիք, փոխ. իբրեւ լուիջիք զայս, ասասջիք |
| Երբ այնտեղ հասնեն պիտի դրուին բանտում | Ի հասանել նոցա անդր՝ արկցին ի բանտ, փ. իբրեւ հասանիցեն ին. |
| Երբ թագաւորին առաջը կենանք, մեզ պիտի հարցնէ | Ի կալ մեր յանդիման թագաւորին՝ հարցանիցէ զմեզ, փոխ. իբրեւ կացցուք, և այլն |

3. Մինչ, մինչդեռ շաղկապով սկսուած մի խօսքի բայը կարող է փոխուիլ նոյնպէս ի նախդրիւ աներևոյթի. ինչպէս.

| | |
|---|---|
| Նա այս խորհած ժամանակում մի մարդ եկաւ | Յածել նորա զայս զմտաւ՝ եկն այր մի, փոխ. մինչդեռ նա զայս ածէր զմտաւ եկն այր մի |
| Նրանք անտառից անցած ժամանակը՝ աւազակները նրանց վերայ հասան | Յանցանել նոցա ընդ անտառն հասին ի վերայ նոցա աւազակք |
| Պատին տակը կեցած վեր նայելու ժամանակը՝ մի քար ընկաւ և գանկը ջարդեց | Ի կալ նորա առ որմովն և հայել ի վեր՝ վէմ մի անկեալ ջախջախեաց զգլխատակ նորա |

4. Զի կամ եթէ, թէ շաղկապով սկսուած մի խօսքի դիմաւոր բայի փոխւում է շատ անգամ ի, առ, ա- նախադրութիւններով կամ ամենևին առանց նախադրութեան աներևոյթի, (Տես և Դաս ԼԷ.)։

| | |
|---|---|
| Ջուր բերին որ նրանց ոտքերը լուան | Բերին ջուր լուանալ զոտս նոցա փոխ. բերին ջուր զի լուասցեն զոտս նոցա |
| Իրիկնադէմին ելնում էին, որ դաշտում զբօսնունք | Ելանէաք ընդ երեկս զբօսնուլ ի դաշտին |
| Դժուարաւ համոզեցին ժողովրդին որ չզարնեն նրան | Հազիւ իմն հաւանեցուցին զժողովուրդն չհարկանել զնա |
| Ձիերի բերանումը սանձ ենք դնում որ մեզ հնազանդեն | Ձիոց սանձս ի բերան դնեմք առ-հնազանդելոյ նոցա մեզ |
| Ոչ աչք ունէին որ տեսնեն, ոչ ականջ ունէին որ լսեն, ոչ քիթ որ օդ առնուն և ոչ մատներ որ շօշափեն | Ոչ աչս գոն նոցա ի տեսանելոյ, ոչ ականջս ի լսելոյ ոչ ռունգս առ ի ձգելոյ զօդ և ոչ մատունս ձե-ռաց առ ի շօշափելոյ |
| Պատասխան տուին թէ չգիտեն | Պատասխանի ետուն չգիտելոյ փոխ. պատասխանի ետուն ոչ գիտեն |
| Նրան սպասում էին թէ պիտի ուռէր կմ. ընկնէր ու յանկարծ պիտի մեռնէր | Նոքա ակն ունէին այտնելոյ նմա կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ |
| Մինը պատուհանը բաց չարեց որ դուրս նայէր | Ոչ ոք եբաց պատուհանն հայել արտաքս |
| Նրան պատուիրեցի որ այն խօսքը ոչ ոքի չյայտնէ | Պատուէր ետու նմա չհանել ումեք զբանն ի վեր |

5. Որպէս զի կամ այնպէս զի շաղկապով սկսուած մի խօսքի դիմաւոր բայը մինչև, մինչ զի շաղկապով աներևոյթի կը փոխուի, ինչպէս.

| | |
|---|---|
| Շատ հոգնած էինք, այնպէս որ չէինք կարող ոտքի վերայ կենալ | Վաստակեալ էաք յոյժ՝ մինչև չկարել մեզ կալ յոտին. փոխ. վաստակեալ էաք յոյժ, որպէս զի (այնպէս զի) ոչ կարէաք կալ յոտին |
| Ամենքը ջարդենք, այնպէս որ նրանցից մինը չազատի | Սատակեսցուք զամենեսին՝ մինչև չմնալ ի նոցանէ ապրեալ |



52. Հրաման

Դահիճն ուղարկեց և գլուխը կտրել տուաւ. Մեզ այնտուն եկաւ և եղածները մեզ պատմեց. Նրանց իւր տանը ընտեղ թող տուին և գնացին. Նրանց իւր տանը ըն-տեղ թող տուին և գնացին. Բոլոր ստացուածքունեց և նոցա կերակուր տուաւ. Երբ նրանց հարները ծախեց և հեռի երկիր գնաց. Երբ նրանց հարցրինք մեզ պատասխան տալ չկամեցան. Երբ նրան գտնում էք մեզ իմացրէք. Երբ այնտեղ հասանք, նրան այնտեղ չգտանք. Երբ ձեր երկիրը դառնաք, գիս ևս ձեր հետ տարէք. Երբ անձրևները կը տեղան, գետը յորդում է. Երբ լսեցինք այս զարմացանք. Մենք քաղաքում ման եկած ժամանակը՝ մեզ առաջնորդող մարդը մեր հետը չէր. Մենք ներսը եղած ժամանակ՝ դրան առաջ պահապաններ կենում էին. Նրան այսպէս սաստկութեամբ խօսած ժամանակ պատգամաւորը զարմացմամբ նրան նայում էր. Այն շուտով յառաջ կը գայ և ձեռքն ինձ կ'երկարացնի. Մենք նրանից հեռանալու աշխատած ժամանակը՝ մի սաստիկ հով մեր նաւին նաւահանգստում մօտեցրեց. Նա այս խօսքերն ասած ժամանակը՝ յանկարծ մեր աչքերը բացուեցան. Ձեզ հրամայում եմ որ այստեղից գնաք. Նրան խրատ տուի որ այնտեղ չըկենար. Կը բաղձայինք որ առաւօտ լինէր. Ասում էին թէ որտում կը լինի. Զէին ուզում որ իրենց հետ ընակէր. Եղբօրդ ասա որ պարտքը վճարէ. Թանձր մշուշ կար, այնպէս որ իրար չէին տեսնում. Տատ հեռացան այնպէս որ այլ ևս չէին տեսնւում. Ծովում մեծ շարժում եղաւ, այնպէս որ նաւն ալիքներից ծածկւում էր. Նրան անխնայ ծեծեցին, այնպէս որ հաց ուտելու անգամ չէին հասնում. Հիւանդացաւ և բժիշկը կանչեց. Մեզ այն մարդին յանձնեց և գնաց. Երբ կերակուրը կերաւ, զօրացաւ և հաստատեցաւ. Երբ տեսան որ նրան չէին կարող դանում նուաճել, նենգութեամբ բռնել խորհեցան.

Նրանք իրար հետ կռուած ժամանակը՝ մի ուրիշ ձին առաւ գնաց. Մանանխոյ հատը երբ մեծանում է ծառ է լինում, այնպէս որ երկնից թռչունները կը գան և նրա ճիւղերին վերայ կը հանգչին։

| | |
|---|---|
| Եղածները, [illegible] | Աւելի ուզել, ընտրել մանաւանդ |
| Ստացուած, ինչք | |
| Հեռի երկիր, օտար աշխարհ | Սաստիկ, ուժգին |
| Մշուշ, մէգ | Բարձալ, [illegible] |
| Այլ ևս չտեսնուիլ, [illegible] | Հասնել, ժամանել |
| [illegible] | Յանձնել, յանձն առնել |
| Ծեծել, գան հարկանել | Աշխատել, ջանալ |
| Իմացնել, ազդ առնել | Հով, հողմ |
| Երկարեցնել(ձեռք), ձգել | Հաստատուիմ, [illegible] |
| Յառաջ գալ, [illegible] | Նենգութեամբ, նենգաւ |
| Կերակուր ուտել, առնուլ կերակուր | Մեծանալ, աճել |
| | Ծիւղ, ոստ |

Դիտ. Ա. Երբ աշակերտք պիտի լուծեն համառօտեալ կամ. ամփոփեալ մի խօսքի, կարող են ամփոփեալ մասը բնական պարզ ձևին դարձնել, և այսպէս լուծել։ Զոր օրինակ, սա խօսքը՝ [illegible] կարող է այսպէս պարզուել. [illegible] այսպէս պարզուելուց յետոյ՝ ամփոփեալ մասն աւելի դիւրաւ կը լուծուի։ (Տես և ԼԹ.) Դասին վերջին դիտողութիւնը։

Դիտ. Բ. Երբ մի խօսք ամփոփւում է, պէտք է նայել որ երկդիմութիւն չծագի։ Միշտ այն ձևն ընտրելի է որ հոմ կամ երկդիմի իմաստ չէ տալիս։

## ԴԱՍ ԽԱ.

### ԱՐՄԱՏ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերն են արմատ։

Պ. Արմատ են այն բառերն որոնց սկիզբը կամ



վերջը գիր կամ վանկ աւելացնուած չէ. Ոսկի, [illegible], ծով, հայր, գետ, մահ, են արմատ բառեր։

Հ. Ո՞ր բառերն ածանցեալ են։

Պ. Ածանցեալ են այն բառերն որոց սկիզբը կամ վերջը մի գիր կամ վանկ աւելացուած է. ոսկեղէն, թագաւոր, Ծովային, հայրենի, ագեղ, անմահ, են ածանցեալ բառեր։

Հ. Ի՞նչ է կոչւում ածանցեալ բառերի վերայ աւելացուած գիրը կամ վանկը։

Պ. Ածանցեալ բառերին վերայ աւելացուած գիրը կամ վանկը կոչւում է ածանցական մասնիկ, ուստի վերևի բառերին մէջ էղէն, աւոր, ային, ենի, ա, ան, են ածանցական մասնիկ։

Հ. Որո՞նք են Հայերէն ածանցական մասնիկներին գլխաւորները։

Պ. Հայերէն ածանցական մասնիկներին գլխաւորներն են.

1. Ային, այն, որ ցոյց են տալիս վերաբերութիւն, ինչպէս՝ քաղաքային, քաղաքի վերաբերեալ. ծովային, ծովու վերաբերեալ։

2. Աւոր կամ ուոր, որ նշանակում է ունեցող կամ կրող ինչպէս՝ թագաւոր, զինուոր. թագ, զէնք կրող։

3. Աւէտ, որ ցոյց է տալիս առատութիւն. ինչպէս ծաղկաւէտ։

4. Ատ, որ ցոյց է տալիս թէ մարմնոյ անդամոց կամ մասերին մինը կտրուած կամ պակաս է. ինչպէս՝ լեզուատ. լեզուն կտրած։

5. Եղէն, որ ցոյց է տալիս թէ մի բան ինչ նիւթից է. զոր օրինակ ոսկեղէն, հողեղէն։

6. Եայ, որ ցոյց է տալիս բանուած կամ շինուած, ինչպէս ծաղկեայ, ծաղիկներով բանուած կամ շինուած։ Ցոյց է տալիս նաև թէ մի բան որչափ ժամանակուան է, ինչպէս՝ երեքօրեայ, հնգամեայ։

7. Եան, որ ցոյց է տալիս [illegible] կամ ծագում,

ինչպէս՝ Աբրահամեան, Պղատոնեան։ Նշանակում է նաև բաղկացեալ, զոր օրինակ՝ երեք գլխեան, իննակնեան, բաղկացեալ երեք գլխից, ինն ակունքից։

8. Եղ, որ ցոյց է տալիս բնակութիւն, ինչպէս՝ ընչեղ, ինչքը, ստացուածքը շատ։

9. Ենի, որ ցոյց է տալիս ծառ, հողը և միս, ինչպէս՝ խնձորենի, խնձորենի ծառ, առւծենի, առւծի մորթ, խոզենի, խոզի միս։ Ծառերի անունները երբեմն է գրով ևս ածանցւում է, ինչպէս՝ սերկևիլ, սերկևիլի, կաղնի։ Ենի, անի, ի մասնիկներն ուրիշ անունների ևս վերջում կցուելով, նրանց այլ և այլ նշանակութիւններ կը տան, ինչպէս՝ լեզուանի, շատ խօսող. քաղցուենի, անուշ. արծաթի, արծաթեղէն. ջրի, ջրոտ. այրի, մարդից զուրկ։

10. Իչ կամ ակ. որ նուազական մասնիկներ են. ինչպէս՝ խցիչ, գետակ, փոքրիկ խուց, փոքրիկ գետ։

11. Ուն, որ ունի ող մասնկան զօրութիւնը, ինչպէս՝ շարժուն, շարժող. մնայուն, մնացող. գընայուն, ընթացող։

12. Ուտ, որ ցոյց է տալիս յատկութիւն, ինչպէս՝ քարուտ։

13. Ոտ, որ նշանց է տալիս առատութիւն կամ ախտ, ինչպէս՝ երկչոտ, բորոտ։

14. Որդ, ցոյց է տալիս արհեստ, ինչպէս՝ որսորդ։

15. Ոց, անոց կամ արան, որ նշանց են տալիս ընդունարան, ինչպէս՝ դպրոց, որբանոց, գործարան. դըպիրների, որբերի, գործի տեղ։

16. Ցի, որ նշանց է տալիս հայրենիք կամ երկիր, ինչպէս՝ Ասիացի։

17. Ցու, որ նշանակում է մի պաշտօնի կամ ճիւղի յատկացեալ լինելը, ինչպէս՝ Քահանայացու, տիրացու։

18. Ան, ապ, ա, դժ, չ որ բառերի սկզբում դրուելով ժխտականութիւն են նշանց տալիս, ինչպէս՝ անմիտ, ապերախտ, ագէտ, դժգոհ, չգոյ։



53. Հրահանգ

(*) Ազնիւ, բարոյք, եկեղեցի, երեցէգ, լեառն, խուժ, ծով, կայսր, հովիւ, ձմեռն, մարմին, յաղթութիւն, շէն, պատիժ, սեպուհ, տրտում, քուրմ, Օրէնք։

---

(1) Ատենական, արքունական, բնական, ընտանեկան, լուսնական, խորհրդական, կուսական, կոնեկան, պատրաստական, յունական, նուիրական, շնական, պատուական, պատմական, սրբական, վանական, տնական, քննական։

---

(2) Աստղ, անտառ, գազան, դաշտ, երկինք, լեառն, ծով, հող, հուր, մաղձ, մարդիկ, նաւ, ջուր, տիղմ, տոհմ, տունկ, ցամաք, քաղաք, օդ։

54. Հրահանգ

(3) Ալիք, ահ, աղեղն, բուռն, գէս, գոյն, գոյք, գոտի, զէնք, զօրք, (զօրութիւն), թոյն, լոյս, խորհուրդ, կամք, հոգի, հովանի, մարմին, նշան, շահ, ջափ, պատիւ, սուսեր, վտանգ, տտուն, փառք։

---

(4) Գրաւոր, դաշնաւոր, եղջերաւոր, թագաւոր, թևաւոր, ճգնաւոր, մանեկաւոր, մտաւոր, պաւոր, ըսպաւոր, պարտաւոր, սգաւոր, վիրաւոր, տիգաւոր։

---

(*) Աշակերտք նշանակեալ անունների ածանցեալները շինեն ային մասնկամբ։

(1) Աշակերտք նշանակեալ ածանցներին արմատները գտնեն թող։

(2) Աշակերտք նշանակեալ բառերի ածանցներին շինեն ային մասնկամբ։

(3) Աշակերտք նշանակեալ անուններին ածանցները շինեն աւոր մասնկամբ։

(4) Աշակերտք նշանակեալ ածանցներին արմատները գտնեն։

(1) Այգի, գինի, երանութիւն, ինչք, խաշն, խոտ, ծաղիկ, միրգ, շահ, պտուղ, քրքում:

---

(2) Ազգ, ականջ, գոյն, լեզու, ծայր, կառափն, ձեռն, մէջք, շուրթն, ունչ, պինչ:

---

(3) Ապակի, ասր, արծաթ, բոց, գարի, լոյս, խոտ, հող, հուր, ձիւն, մազ, միս, նիւթ, ոգի, ոսկի, պղինձ, ջուր, վէմ, ծայր, փուշ, քար:

55. Հրահանգ

(4) Ադամանդ, աղիւս, ասեղն, բեհեզ, գմբէթ, եղէգն, ծաղիկ, կաշի, կուճ, ճախարակ, մագաղաթ, մաշկ, յախճապակի, նեարդ, պրտու, փղոսկր, փուշ:

---

(5) Ահ, ասր, գոյն, զօր (զօրութիւն), թիկն, ինչք, համ, հիւթ, մազ, մարմին, շուք, ուշ, ուժ:

---

(6) Աղուէս, այծ, առիւծ, գայլ, գառն, կուզ, ոչխար, սամոյր: Դեղձ, ընկոյզ, թութ, թուզ, խնձոր, ծիրան, կաղին, ձէթ, մուրտ, նուշ, նուռն, վարդ, տանձ: Խոզ, այր, ասր, արծաթ, բուռն, գալար, եր-

(1) Աշակերտք ՚նշանակեալ անուններին ածանցները շինեն աւէտ մասնկաւ:

(2) Աշակերտները ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն ատ մասնկաւ:

(3) Աշակերտները ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն եղէն մասնկաւ:

(4) Աշակերտները ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն եայ մասնկաւ:

(5) Աշակերտք ՚նշանակեալ անուններին ածանցները շինեն եղ մասնկաւ:

(6) Աշակերտք ՚նշանակեալ անուններին ածանցները շինեն ենի կամ ի մասնկաւ:



կաթ, լեզու, լիրբ, ծարաւ, կորով, հայր, ձայր, մայր, մեղ, մօրուք, յայտ, նախ, նման, նքթումն, պէտք, պղինձ, ջուր, վայր:

---

(1) Անասուն, գետ, գունդ, դուռն, զգեստ, լեզու, լիճ, խուղ, խուց, ծով, հայր, հաց, ձուկն, ձորձ, մանուկ, մասն, նաւ, շուն, որդի, պատանի, պատանեակ, վայր, տուն, քաղաք:

---

(2) Արթնութիւն, գնալ, եռանդն, երերալ, զգալ, զեղուլ, զեռալ, թռչիլ, իմանալ, կալ, կանգնել, հասանել, հաստատել, շարժել, սահել, սիրել, սողալ, տոկալ, ցածնուլ, փայլել:

---

(3) Ապառաժ, աւազ, աւազակ, թաւ, ծարաւ, մացառ, յորձանք, շամբ, ոսկր, ջիղ, վէմ, տիղմ, քար, օձ:

---

(4) Արիւն, բոր, դանդաղել, դեղ, (թոյն), եռանդըն, երկնչել, ժանգ, լուսին, խնամք, ծակ, կասկած, հիւանդ, մոռանալ, մուր, յաչաղել, նախանձել, նենգ, որքին, վազվազել, ցասնում, ցաւ, ցիխ (ցեխ,) քոս:

---

(5) Այգի, անցանել, աջ, բաժանել, ժառանգել,

(1) Աշակերտք ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն ել, ալ մասնկաւ:

(2) Աշակերտք ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն ուն մասնկաւ: Այս մասնկաւ ածանցները մեծաւ մասամբ բայերէ շինուած են:

(3) Աշակերտք ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն ուտ մասնկաւ:

(4) Աշակերտք ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն ոտ մասնկաւ:

(5) Աշակերտք ՚նշանակեալ անուններէ ածանցները շինեն որդ մասնկաւ:

լծել, լողալ, կցել, ճանապարհ, միջին, յետին, նախ, նախանձել, նաւել, որս, պահել, պարապ, սայլ,սեղան, ցանց, փոխանակել:

---

(1) Ազքատ, ամառն, ամուր, այրի, արգելուլ, արուեստ, գլուխ, գործ, դպիր, ծաղիկ, կանայք, կըրակ, հալել, հանգիստ, հանդարտ, հիւանդ, հիւր, հովանի, ձմեռն, մարգիկ, մեղու, մթերք, մրջիւն, որբ, ուս, վաճառք, վարել, վարդապետ, վարժել, օտար:

---

56. Հրահանգ

(2) Ամօթ, առակ, բան, բարբառ, գեղ, գէտ, գործ, գին, գոհ, գոյ, գոյն, երախտիք, երասան, լուր, կար, համազգի, հարկ, մարդ, յայտ, յոյս, շնորհ, ուշ, սուրբ, տոհմ, քուն, օրէնք:

---

ԴԱՍ ԽԲ.

ԲԱՐԴ ԱՆՈՒՆՆԵՐ

Հ. Ո՞ր անունները բարդ կասուին:

Պ. Բարդ կասուին երկու բառից շինուած անուններ. ինչպէս, աստուածասէր, զԱստուած սիրող. լուսատու, լոյս տուող: Առաջինը՝ Աստուած և սէր, երկրորդը՝ լոյս և տու (տալ) բառերից շինուած են:

Հ. Բարդ անուն կազմող բառերը միմեանց հետ ի՞նչպէս են կապւում:

Պ. Բարդ անուն կազմող բառերն իրարու հետ սովորաբար ա գրով են կապւում:

Հ. Երբ բարդ անունն երկու գոյականից է շինուած ի՞նչ է նշանակում:

---

(1) Աշակերտք նշանակելով անուններին ածանցները շինեն ոց, անոց, արան մասնիկներով:

(2) Աշակերտք նշանակելով անուններին ածանցները շինեն



Պ. Երբ բարդ մի անուն երկու գոյականից շին-
ուած է, ընդհանրապէս այն գոյականներից մինը
ունի յատկացուցչի գործութիւն, և միւսը՝ յատկացե-
լոյ, և բարդութեան մէջ յատկացուցչի գործութիւն
ունեցող գոյականն առաջ կը դրուի: Այս տեսակ
բարդ անուններն ընդհանրապէս գոյական են:

57. Հրահանգ

(*) Զօրքի գլուխ. Դրան փակ (փական). Գա-
զանի (հետ) կռիւ. Գանձի գլուխ. Գետի եզր. Ծովի
եզր. Գրքերի պահարան. Գայլի որդի. Դիւանի գլ-
լուխ. Դիւանի գրագիր. Բանակի տեղ. Եղևինի փայտ.
Աղբիւրի ակն. Լուսոյ մտնելու տեղը. Խաչի փայտ.
Խնկի աման. Ծերոց խումբ. Հարսի եղբայր. Հողի
բլուր, կոյտ. Ոտքի կապ. Ձնի ծաղիկ. Ջորի գաւառ.
Ճաշու ժամ. Մաղձի դեղ. Մարդոց մահ. Մարդու ար-
ձան. Մաքսի տուն. Մեհենի տեղ. Մոխրի կոյտ. Նաւի
խումբ. Քաղաքի մէջտեղում. Սանդղի ոտք. Վանքի
երէց. Վարագի ջիղ. Որթի տունկ. Քաղաքի պատ:

Հ. Որևիցէ բարդ բառ միշտ գոյականի՞ց է շինւում
Պ. Մի որ և իցէ բարդ բառ կարող է նաև գո-
յականից և ածականից շինուիլ. ինչպէս՝ մեծագանձ,
որ մեծ ածականից և գանձ գոյականից շինուած է,
և նշանակում է մեծ գանձ ունեցող կամ գանձը մեծ:

58. Հրահանգ

(*) Տունը մեծ. Զօրութիւնը մեծ. Ձայնը մեծ.
Թևը երկայն. Պրկունքը լայն. Ոտքը կարճ. Զգեստը
կարճ. Ջուրը խորունկ. Վիզը բարձր. Ձայնը բարձր.
Մարդը (բնակիչ) շատ. Բարքը լաւ. Հոտը վատ. Հա-
մըն անոյշ. Դէմքը գեղեցիկ. Գեղեցկութիւնը հազ-

---

(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բարդ
բառերի դարձնեն, յատկացուցիչը յատկացեալից առաջ դնելով:
(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բար-
դեն ածականը գոյականից առաջ դնելով:

ուագիւտ. Ոտքը շուտ (շուտ քայլող). Միտքը երկու (անհաստատ). Լեզուն թանձր. Բեռը ծանր. Քայլուածքը թեթեւ. Հաւատքը թերի (պակաս). Մորթը թոյլ (հեշտասէր, փափկասէր). Սիրտը վատ (վախկոտ). Բերանը լիքն. Պարանոցը խիստ (անհնազանդ, խեռ). Սիրտը հիւանդ. Խորհուրդը լաւ. Այտերը կարմիր. Գլուխը ծռած (ամօթով). Թելերը ոսկի. Պարիսպը կրկին. Պատիւը հաւասար. Բազուկները հաստատ. Կաշին հաստ. Զօրութիւնը հսկայական. Ջուրը շատ. Հանդերձը մաշկ. Սիրտը նեղ. Փետուրը նոր. Ձայնը բարակ. Պարիսպը ամուր. Անդամները ողջ (ամբողջ). Միտքը պակաս. Նիստը (տարածութիւն) քիչ. Աչքը սուր. Ականջը սուր. Անունը վատ. Ձայնը քաղցր. Սիրտը քաջ. Սանձը ոսկի. Ձեռքը պարապ. Միտքը թեթեւ. Հաւատքը ուղիղ. Աչքը չար (նախանձոտ). Բեռը թեթեւ. Մեղքը մեծ (շատ). Մեղքը քիչ. Անունը մեծ. Միտքը մեծ (հպարտ). Հասակը բարձր. Ականջը երկայն. Թեւը մաշկից. Միտքը թանձր (ապուշ). Սիրտը խիստ. Դէմքն երկու. Բերանը երկու. Մորթը լերկ. Միտքը երկայն (համբերող). Ջուրը յորդ. Մարմինը թանձր. Միտքը ցած (խոնարհ). Լեզուն ծանր. Ջուրը խոր։

## ԴԱՍ ԽԳ.
## ԲԱՅԱՆՈՒՆ, ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերը կասուին բայանուն։

Պ. Բայանուն կասուին այն անունները որ բարդ բառերի միջին ունին բայի զօրութիւն. այսինքն՝ ցոյց են տալիս մի գործի, զոր օրինակ՝ սա բառերի միջին, որդեսէր, հայրասպան, արեւակէզ, սէր, սպան, կէզ են բայանուն, այսինքն՝ սիրել, սպանանել, կիզուել, բայերի արմատներն են, և նշանակում են սիրող, սպանող, այրած։ Որդեսէր նշանակում է իւր որդին սիրող,



հայրասպան, նշանակում է հօրը սպաննող, արեւակէզ նշանակում է արեւից այրած։

Հ. Բայանունից և ուրիշ գոյականից կազմուած բառերի միջին բայանունը և գոյականը ի՞նչ բանի զօրութիւն ունին։

Պ. Բայանունից և ուրիշ գոյականից կազմուած բառերի մէջ բայանունն ունի բայի զօրութիւն, և միւս գոյականը՝ սեռի կամ բնութեան խնդրի զօրութիւն. զոր օրինակ՝ որդեսէր, հայրասպան բառերում՝ սէր, սպան բայ են. Նշանակում են սիրող, սպանող, որդի, հայր գոյականներն են սեռի խնդիր սէր և սպան բայանուանց։ Արեւակէզ բառի մէջ կէզ բայ է, նշանակում է այրած, իսկ արեւ գոյականն ունի զօրութիւն բացառական հոլովի, և բնութեան խնդիր է կէզ բայանուան և նշանակում է արեւից այրած։

Հ. Բայանունից և գոյականից կազմուած բառերում, այս երկուքից ո՞րն առաջ է դրւում։

Պ. Բայանունից և գոյականից բարդուած բառերում ընդհանրապէս առաջ դրւում է խնդիրը, յետոյ բայանունը։

Հ. Այս տեսակ բարդեր գոյակա՞ն են թէ ածական։

Պ. Այս տեսակ բարդեր թէ իբր գոյական և թէ իբր ածական գործածւում են։

59. Հրահանգ

(*) Ածեմ, աղամ, ամամ, ամոքեմ, այրիմ, ապաստանիմ, ապրիմ, առաքեմ, առնում, ասեմ, ատեմ, արածեմ, արգելում, արկանեմ։

Քուն, Պատիժ բերող (տուող). Խունկ աղացող. Մլոյ (ջաղացքի) մէջ աղացող. Ծովը թափուած. Կերակուր ամոքող (բարեխառնող). Անձկով (կարօտով) այրող. Կէս այրած. Իր անձին ապաւինող. Ինք զինք

(*) Աշակերտք այս և հետեւեալ հրահանգների բայանուններին գտնեն, և յետոյ դրուած աշխարհաբար խօսքերին բարդ բառերի դարձնեն։

ազատող. Երկնքից առաքուած. Փոխ, աւանդ, կաշառ, սպարգև, համար, վրէժ առնող. Երախտիք առնող (ընդունող). Բարի, չար (բան), ասող. Իր տէրն ատող. Ինչք ատող. Խաշինք (հօտ) արածող. Բանտի, պատի, քարերի մէջ արգելուած. Ահ արկանող (ձգող). Խունկ արկանող (ծխող)։

---

Բառնամ, բարձրանամ, բեկանեմ, բերեմ, բղխեմ, բնակիմ, բուիմ. Գիտեմ, գնամ, գնեմ, գովեմ, գործեմ, գտանեմ, գրեմ։

Բեռ վերցնող. Կական (լաց) վերցնող (պրծացնող). Մինչև երկինք բարձր ացած. Ահիւ բեկած (վախից լեղին պրծած). Ծանրութիւնից բեկած (կոտրած). Գազաններից բեկած (պատառոտուած). Պտուղ, փուշ, անձրև, բուք բերող. Երկրից բղխած. Հուր, ջուր բղխող. Գազաններից բնակուած. Անտառներում բնակող. Խոտով, ընդով բուող (կերակրուող). Ծածուկ (բաներ) գիտեցող. Ձեռքի (գործ) գիտեցող. Արծաճանապարհ գնացող. Ծովով, նաւով գնացող. Այգի, թով գնուած. Մարդ գնող. Ինքզինք գովող. Այգի, երկիր, հող, գործող (մշակող). Նաւ, հաց, իւղ, գործող (շինող). Պղինձ գործող (պղնձից բաներ շինող). Չար, բարի. Ժանտ (վատ), գազիր (զզուելի բան), ոճիր գործող. Մազից գործուած. Ձեռքով գործուած. Հնարք գտնող. Մատեան (գիրք) գրող. Պատմութիւն գրող. Ձեռքով գրուած.

60. Հրահանգ

Դարմանեմ, դաւեմ, դիեմ, դրժեմ. Եփեմ, երդնում. Զանցանեմ, զարդարեմ, զգածնում, զգենում. Ընկենում, ընտրեմ. Թափեմ. Իմանամ։ Խաշինք դարմանող. Մարդ դաւող. Ստինք դիեցող. Ուխտին դրժող (աւերող). Տիրոջը դրժող (մատնիչ). Իւղ (օծանելիք), հաց եփող. Երդումը, ուխտը, պատուիրանքը, օրէնքը զանց անող (չբռնող). Աստղերով, ծաղիկ-



ներով զարդարուած. Սևերով, մթով, քրձով զգածեալ (պատած). Իրը (եղելութիւնը) զգացող (իմացող). Խարազն, ծիրանի զգեցող (հագնող, հագած). Տերևները նետած (ձգած). Նետ, շանթ, քար, կրակ նետող. Զէնքը, լուծը նետող. Գետը նետուած. Իրաւունքն ընտրող (կտրող, որոշող). Տերևները թափած. Մարդից (բնակիչներից), յիշողութիւնից թափուր. Ոխը, նետ թափող. Հնարք (ճանապարհ, միջոց) իմացող (գտնող). Չար (բաներ) իմացող (հնարող)։

Լլկեմ, լնում. Խանձիմ, խառնեմ, խաբեմ, խրլեմ, խնդրեմ, խողխողեմ, խորհիմ, խօսիմ. Ծախեմ, ծեծեմ, ծնանիմ, ծփամ։

Սովից լլկուած. Ծաղկով, հացով, պտղով, որդերով, խնդութեամբ, գանիւ (ծեծով) լցուած (շատ ծեծուած). Արեան, գէշի (լաշ) խանձած (բորբոքած). Ծծմբով, ծխով խառնուած. Եղեմից խառնուած (այրած). Արմատից խլուած. Վրէժ, քէն խնդրող. Նախանձով (եռանդով) խնդրող. Սրով խողխողուած. Մտքում (ինքնիրան) խորհող. Իրաւունքը խորհող (իրաւունք կատարելով հաշտուող). Բարի խօսող (միջնորդ). չար խօսող (ամբաստանող). առակ խօսող. որովայնից խօսող. Ատեանում խօսող. Հնութեանց վերայ խօսող. Մարդ ծախող (սպառող). Բրով, ողորով (բարակ գաւազանով) ծեծուած. Անձրև ծնանող. Երկրից, ծովից, ջրից, հողից ծնած (յառաջ եկած). Ծովին մէջ ծփացող։

61. Հրահանգ

Կամիմ, կապեմ, կապտեմ, կատարեմ, կարեմ, կեամ, կերտեմ, կիզում, կլանեմ, կծանեմ, կոխեմ, կոծեմ, կորանամ, կորուսանեմ, կոփեմ, կռեմ, կռուիմ, կտրեմ, կրեմ, կրծեմ։

Բարի, չար, կամեցող. Կամար (գօտի) կապող. կամարներով կապուած (շինուած). ակունքով կապուած (զամուած). Դի, տաճար, սեղան կապտող (կո-

ղոպտող)․ կամք․ Հրաման կատարող․ Կօշիկ, խորան կարող․ Կամքը (անել) կարացող (անձնիշխան)․ Լեռը, շինի միջում (մարդ եղած տեղ) ապրող․ Վշտերի մէջ ապրող․ Կաւից, փայտից, քարից, կրկտից ([illegible])կերտուած (շինուած)․ Հրաշքով (զարմանալի կերպով) կերտուած․ Ձեռքով, նկարով կերտուած (գործուած)․ Տաքից, ցրտից կիզեալ․ Ծովից կլանուած․ Ջերմութեամբ կծանող (խայթող)․ Ոտքով կոխուած․ Ալիքներից, հովից կոծուած (ծեծուած)․ Աչքերը կորած (ամօթով)․ Պտուղը, յոյսը կորցնող․ Քար կոփող․ Կռանով (մուրճ) կռուած (տաշուած)․ քարից կռուած․ Բանիւ (խօսքով կռուող)․ Ծայրերից, կէսից, մէջտեղից, մօտից (տակից, արմատից) կտրուած․ քարից կտրուած (մէկ կտոր քարից․ Բեռ, ջուր, կրող (տանող)․ վիշտ կրող․ Կաշառք կրծող (ուտող)։

---

Համբերեմ, հայիմ, հանեմ, հասանեմ․ Հաստանեմ, հաստուցանեմ․ հարկանեմ․ հեղձնում․ հեղում․ հոսեմ․ հոտիմ․ ձգեմ․ ձուլեմ․ ճարակիմ։Խստութեան, վշտերի, համբերող․ Ծովի վերայ նայող․ երկինք նայող․ Ձուկ, ջուր հանող․ միս հանող (շերեփ)․ պատկեր հանող (նկարող)․ խաչը հանող․ հարկ հանող (առնող, ժողովող)․ քէն հանող (ոխ առնող)․ երազ հանող (մեկնող)․ Ձեռքով հասնող (կարացող)․ Քար, երկաթ կտրող (մետաղներից հանող)․ փայտ կտրող․ Յոյսը, քունը հատած․ թաթերը կտրած․ Երակը կտրող (արիւն առնող)․ Մսից կտրուած (միս չուտելու ուխտ անող)․ Վարձքը, երախտիքը, քէնը հատուցանող․ Սրինգ, քնար, փող զարնող (խփող)․ Դիւից, նետից․ շանթից, սրից, ցրտից, խորշակից զարնուած․ Ծովում խեղդուած․ Արիւն թափող․ Հուր, ջուր վազեցնող․ Ժանտ, չար, գէշ, հոտող․ Նետ, քար ձգող (նետող) Ակօս ձգող (քաշող)․ Արծաթից, ոսկուց, պղնձից․



62. Հրահանգ

Մածնում. մահանամ. մանեմ. մեծարեմ. մխեմ. մոռանամ. մտանեմ. յարգարեմ. յիշեմ. յուզեմ. յօդեմ. Նենգեմ. ներկեմ. նիւթեմ։ Տախտակով մածուած (վրան ծածկուած). Սրով, սովով, թոպուելով (ծեծուելով) մահացած (սպաննուած). խեղդուելով, հեղձնլով մահացած. Ոսկւով մանուած. Հիւրերը մեծարող. Խորը, մէջը մխուող. Ձեռքը մխող (ձեռք զարնող). Երախտիք մոռացող. Որջ, ծակ, խորը, մէջը մտնող. Տաճար, սեղան յարդարող (ուղղող). Չարիքը յիշող (ոխ պահող). Խորերը, ջրերը յուզող (փրնտռող). խռովութիւն, անձրեւ յուզող (հանող). Նախանձից յուզեալ (շարժեալ). Սուտ (բաներ) յօդող (շինող). Ուխտը, տէրը նենգող. Ծիրանի ներկող. Չարիք նիւթող։

---

Շարժիմ. շինեմ. շնչեմ. Ուտեմ. ուրանամ. Չափեմ. չուեմ. Պահեմ. պաշտեմ. պատեմ. պատճառեմ. պատմեմ. պարարեմ. պարտաւորեմ. պշնում. Հովից շարժած. Պատ. խորան շինող. տուն, աշխարհք շինող (շէնացնող). մարդով (բնակչօք շէնացած. Ծուխ, բոց, հուր, մահ շնչող. Աստուածանից, հոգուց շընչուած (ներշնչեալ). Խոտ ուտող. ցեցերից կերուած. Աստուած ուրացող. Երկիր չափող. Երկինք չուող. Ոգին (կեանքը) պահող. Ուխտ, պատուիրանք, ոխ, պահող, Աստուած, կուռք, դիք պաշտող. Արծաթով, սառոյցով, մթով պատած. Հիւանդութիւն պատճառող (հիւանդ ձեւացնող). Սուտ (բաներ) պատմող. դիւրին, դժուարին (աճով) պատմուած. Որովայնը պարարող. Մահու, պատժոյ պարտաւորուած. (դատապարտուած). դատաստանով պարտաւորուած. Երկինք պշնող. մարմնոյ, երկրի պշնող (մարմնաւոր, երկրաւոր բաների նայող)։

Սիրեմ. սնանիմ. սուզեմ. սպանանեմ. վաճառեմ. վարեմ. վարժեմ. վիժեմ. վիրամ. Տարածեմ. տեսանեմ.

Ցնորիմ. ցուցանեմ. Փորեմ. քաղեմ. քաղցնում. քար-
շեմ. քննեմ. Օծանեմ։

Հայրենիքին սիրող, Ջրի մէջ, կաթով սնած, տա-
նը (մէկին) ձեռքում սնած. գով տեղեր սնած. Ջրե-
միջին, խորը սուզած (ընկղմած). Տէրը, եղբայրն ըս-
պաննող (տիրոջ, եղբօր). Գինի, ցորեն, մարդ վաճա-
ռող. ժամանակը վաճառող (պարապ անցկացնող).
Կառք, նաւ վարող. գերի, մարդ վարող (յափշտա-
կող տանող). Ձի, մանուկ վարժող. մտօք վարժուած
(հնազանդ, հլու). Գահից, քարից (ժայռի վրայից)
նետուած (գձուած) գետի մէջ նետուած. Վարս (գլխի
մազ) վիրայող (կնտող). Ճանապարհ վիրայող (շիտկող).
Բազուկները տարածած. գետնի վերայ տարածուած.
Երազ տեսնող. Խելքը ցնորեցնող չափ ցնորած. Ճա-
նապարհ, երազ, ժամեր, տօներ ցոյց տուող. Գետնի
քարի մէջ փորուած. Ծաղիկ, պտուղ, հասկ, կրկուտ
քաղող (հաւաքող). Ծայրերից քաղուած (կտրուած).
Ինչքի (հարստութեան) քաղցած (անօթի, նօթի).
Գետնին քսուող. Խորունկ (բաներ) քննող. ոսկւով,
արծաթով օծուած։

---

## ԴԱՍ ԽԴ.

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ, ԲԱՅԱՆՈՒՆ ԵՒ ՄԱԿԲԱՅ

Հ. Բայանունները գոյականով միայն կազմւում են

Պ. Բայանունները շատ անգամ մակբայով կամ մակ-
բայօրէն առնուած ածականով էլ են կազմւում. զոր օրի-
նակ մշտաբողբոջ, շատախօս, քաղցրախօս, կազմուած են բողբոջ,
խօս, տես բայանուններից, և մշտ, շատ, քաղց մակբայներից։

63. Հրահանգ

(*) Ամբառնամ, ասեմ, աւերեմ. Բարձրանամ,
բեկանիմ, բղխեմ, բուսանիմ. Գանեմ. գիտեմ, գու-
շակեմ, գտանեմ. Դատիմ, դիմեմ. Եփիմ. Զարթնում.
Ընծայեմ, ընթանամ. Թռչիմ. Լկեմ. Խամ-
գինեմ.

(*) Աշակերտք նշանակեսցեն բայերի բայանուան արմատներին գտնելն։



րիմ, խօսիմ. Ծագեմ, ծաւալեմ. Կազմեմ կամ կարգեմ,
կեամ, կիզում, կշռեմ, կորովեմ. Հայիմ, հասանեմ,
հաւանիմ, հաւատամ, հեղուսեմ, հիմնեմ. Մահա-
նամ, մաղեմ, մարտնչիմ, մեռանիմ, մտանեմ. Յածիմ,
յառնեմ. Նուագեմ. Շարժիմ, շնչեմ. Պահեմ, պար-
ծիմ. Ջանամ, ջնջեմ, սնանիմ, ստեղծանեմ, վիրաւո-
րեմ. Տարածեմ. Ցասնում, ցնորիմ. Փլանիմ, փտիմ։

---

(*) Վեր ամբարձեալ (վերցնուած). Կանխաւ ա-
սող չափ ասուած. Վաղ (կանուխ, շուտ) աւերած. Ու-
ղիղ բարձրացած. Դիւրաւ բեկանող. Յանկարծ, ա-
ռատ, յորդ բղխող. Դիւրաւ, ինքնին բուսնող. Զա-
րաչար գանուած. Կանխաւ գիտեցող. Կանխաւ (ա-
ռաջուց) գուշակուած. Զքնաղ (քիչ), դիւրաւ, դըժ-
ուարաւ գտնուող. Յանկարծ, առաջ գտնուած. Ար-
դար, ուղիղ դատող. Յառաջ, տար (հեռի) դիմող.
Կէս եփած. Ծանր արթնացող. Իսպառ (բոլորովին)
գինեձալ. Նոր ընծայուած. Արագ, թեթև, խուռն (բազ-
մութեամբ), զոյգ (հաւասար) ընթացող (վազող). Բար-
ձրր թռչող. Զարաչար լլկուած. Արագ խամրող (թոռ-
մըշկող). Ունայն, արդար, ուղիղ խօսող. Յանկարծ
ծագող. Լայնաբար (ընդարձակ) ծաւալեալ. Պինդ (ու-
ժով) կազմուած. Առընթեր (մօտը), շուրջ (բոլոր-
տիքը), առաջի (առջևը) կացող (կանգնող), ինքնիրան
կացող, վրան կացող. Յառաջ կարգուած (դասուած).
Երկայն, միայն ապրող. Ողջ (ամբողջ) կիզելի (այրելի).
Արդար կշռուող. Արդար կորովով (գատող). Քաղցր,
առաջուց նայող. Երագ (շուտ), վաղ (կանուխ) հաս-
նող. Դիւրաւ հաւանող. Թերի, ուղիղ, Նոր հաւա-
տացող. Հաստատ հեղուսուած (գամուած), հաստատ
հիմնուած. Խայտառակաբար մահացած (սպաննուած).
Մանր մաղուած. Հակառակ, ընդդէմ մարտնչող. Կէս,

(*) Աշակերտք նշանակեսցեն աշխարհաբար խօսքերը բարդ
բառերի դարձնելն՝ մակբայներին առաջ դնելով։

վազ (կանուխ) մեռած. Կանխաւ (առաջից) մտած. Ընդվայր (դէս դէն), դատարկ յածող (պտտող). Վաղ յառնող (կանուխ ելնող). Քաղցր նուագող (երգող). Ծանր, արագ, միշտ շարժող. Դառն, քաղցր, սաստիկ շնչող. Գիշեր (գիշեր ժամանակ) պահող. Ունայն, սին (պարապ տեղ) պարծող. Ջուր, ժրութեամբ (աշխուժութեամբ) ջանացող. Համօրէն (ընդհանուր) ջընջուած. Դատարկ, ընտանեաց մէջ, ընդվայր, ընդարձակ, փափուկ սնած (մեծացած). Նախ, նոր ստեղծուած. Կարի (շատ) վիրաւորուած. Լայն, համօրէն տարածուած. Ծանր ցասնող (բարկացող). Ցայգ (գիշերը) ցնորող. Վաղ փլած, փտած:

—⁓—

## ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՍԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽԱՌՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

### 1. Հրահանգ

(*) Տունը նոր է. Եկեղեցին հին էր. Փայտն երկաթից թեթեւ է. Քացախը սաստիկ է. Աղը կծու է, բայց հոտելուց պահում է. Ոսկին ողջ մետաղներից ազնուագոյն է. Ադամանդը շատ մեծագին է, բայց երկաթից աւելի օգտակար եւ գործածական չէ. Կըտաւը կերպասից աւելի ցանցառ է. Այս գինին անջուր է. Այդ հովիտը ջրոտ է, նրա համար բարեբեր է. Անձրեւն ու կարկուտը ծանր են. Շոգին թեթեւ է. Մարդիկ եւ անասունները քայլող եւ շարժող են. Մարդ զգացող, իմացող եւ խօսող է. Ձին կրակոտ է. Եղբայրդ վախկոտ է. Դուն խիստ ես. Նրանք վկայ են. Մենք ականատես ենք. Նրանք ականջալուր են. Ձեր եղբայր տանը գործում է. Այս տղաքն իրանց հանդերձները պատառեցին. Նաւը ընկղմեցին ծովում. Մարդիկ խեղդուեցան ծովում. Կառավարը

(*) Ուսուցիչը կարող են հետեւեալ հրահանգներէն այլ եւ այլ դասերի բաժանել:



գետն ընկնելով կորաւ. Բերդն ապաւինեցաւ:

Սաստիկ, բուռն
Հոտել, նեխտաբերիլ, նեխել
Մեծագին, պատուական
Գործածական, պիտանի
Ցանցառ, անօսր
Անջուր (գինի), անապակ
Ջրոտ, ջրարբի
Բարեբեր, յուռթի
Քայլող, գնացող
Շարժող, շարժուն
Զգացող, զգայուն
Իմացող, իմաստուն
Խօսող, խօսուն
Կրակոտ, ջերմեռանդ
Պատառել, պատառոտել
Ծովում խեղդուել, ծովա-մոյն ըլլալ
Գետն ընկնելով կորել, գե-տամոյն ըլլալ
Ապաւինել, ապաստանել

### 2. Հրահանգ

Բարեկամս ձեր հօրը տեսաւ. Զինուորները կանչեցին իրենց զօրապետին. Այն քաղաքում մի կին կար. Այս կինն իւր աղջկան չի սիրում. Այս հայրն իւր որդկերանց անիծում է. Երկնքում աստղեր կան. Ջրհորներում օձեր կան. Մեծամեծ կէտեր կան ծովում. Երկրիս վերայ բարձր լեռներ կան. Լեռներում մեծամեծ անտառներ կան. Նրա գերեզմանն այն քաղաքումն է. Մեր բարեկամները այս տանն են. Նրանց ոսկրները այս գերեզմանումն են. Սպասաւորներն այն պալատումն են. Այն սրահում հիւրեր կան. Այս սենեկում վատ հոտ կայ. Այս կրակարանում կրակ կայ. Ձեր շտեմարանում շատ ցորեն կայ. Կառավարը ավարժ է. Վարժապետը հմուտ եւ փորձառու է. Աշակերտները կրթեալ են. Եղջերուն եւ նապաստակն արագընթաց են. Տղան տհաս է. Պատանին հասուն է. Ծովում ձկներ կան. Արեգական մէջ բիծեր կան. Աշխարհում շատ մարդիկ կան. Այնտեղ շատ բազմութիւն կար. Այն բանտում շատ կապեալներ կային. Քո եղբայրդ տեսնել եմ ուզում. Նստէ տանդ. Այս տունը մերն է. Դուք մեր սիրելիներն էք. Ձեր եղբայրները մեր բարեկամներն են:

Աղջիկ (զաւակ), դուստր
Անիծել, անիծանել

| | |
|---|---|
| Մեծ օձ, վիշապ | Փորձառու, փորձ |
| Պալատ, ապարանք | Կրթեալ, կիրթ |
| Վատ հոտ, ծանրահոտութիւն | Տհաս, խակ |
| Վարժապետ, վարդապետ | Բազմութիւն, ամբոխ |

3. Հրահանգ

Նրանց ծառաները մեր ծանօթն են. Այն մարդն
իմ վարպետն է. Նրան շատ խրատեցի. Այս խօսքերը
գրեցէք ձեր գրքերում. Գուռն ամրեցին (փակեցին).
Նրանցից ոմանք պատժեցինք. Այստեղից մինը չի
կարող անցկենալ. Ողջն էլ այստեղ են բնակւում.
Դուք հարուստ կնոջ եղբայր էք. Այն լեռնից իջ-
նում էին. Մեր երեսը չտեսաւ. Այդ տղան դուրս
հանէք. Ձեր գիւղը շատ գեղեցիկ է. Այս պարտէզը
մեծ աշխատութեամբ շինեցինք. Ձեզ շատ հոգնեց-
րի. Ինձ ներիր. Պատգամաւորներն իմ խօսքերս նը-
րանց պատմեցին. Խօսքը նրանց յայտնեց. Ես ձեզ
հանգչեցնում եմ. Նրանց հայրն այնտեղ չէ. Նրանց
ընկերները մեր բարեկամներն են. Քալերը փողո-
ցումն են. Զինուորները հրապարակումն են. Նաւերը
նաւահանգստումն են. Նաւաստիները նաւումն են.
Նրանց ամանները քրձումն էին. Նրա արծաթն իւր
ծոցումն է. Մեր սուրը նրա ձեռքումն է. Նրանցից
ոմանք նաւումն են. Ձեր բարեկամներից ուրիշները
քաղաքումն են. Ամենքն այս սրահումն են. Մեր
ցորենը շտեմարանումն է. Ամեն մինը իւր տանն է.
Տանը մինը չկայ. Ձեզանից շատերն աղքատ են. Նը-
րանցից քիչերն են այստեղ. Նրանցից հինգն իմաստուն
են. Ձեզանից մինը սատանայ է. Ձեր բարեկամներից
մինը այնտեղ էր. Մեզանից մինն այնտեղ չէր. Մե-
զանից ոչ մինը այնտեղ էր. Մի եղբայր ունիմ. Նա
մի որդի ունի. Եղբայրս մի պարտէզ ունի. Դուք շատ
բարեկամներ ունիք. Եօթն եղբայր ունինք. Նա մի
գեղեցիկ պարտէզ ունէր. Դուք շատ գիրք ունիք.



Հայրս շատ ստակ (փող) ունի. Նա շատ արջառներ
և ոչխարներ ունեցաւ. Իսահակ ունէր մի ջրհոր.
Մի որդի ունիմ. Մի մեծ տուն ունի. Մի պզտիկ
քաղաք ունիմ. Մեծ տներ ունենք. Նրանք շատ ստաց-
ուածք ունեն. Իմ խօսքերս լսեցէք. Այն լեռնից իջ-
նում էր. Այս քաղաքում բնակուեցաւ. Այն տանն
երթանք. Այն պարտէզում նոր գերեզման կար. Կե-
նաց ծառը դրախտի մէջտեղումն էր. Տասը տարի
ապրեցաւ. Ութ ժամ ձեզ սպասեցինք. Նրանք այս
աշխարհից են. Դուք այս աշխարհից չէք. Երբ այս
թագաւորից լսեցին. Նրա քայլելու ձայնը լսեց. Այդ
մարդն այս տունը մտցրէք. Նրան տարան օտար եր-
կիր. Այն հացից կերաք. Ջրից խմեցինք։

| | |
|---|---|
| Գիրք, մատեան | Ամեն մինը, իւրաքանչիւր |
| Այստեղից, (աստի) ընդ այս | Մինը, մին, ոմն, մի ոմն |
| Շինել, առնել | Ոչ մինը, ոչ ոք |
| Հոգնեցնել, աշխատ առնել | Մէջտեղումը, ի մէջ |
| Ներիր, հրամ. ներեսջիր | Քայլել, գնալ |
| Յայտնել, ի վեր հանել | Մտցնել, մուծանել |
| Հանգչեցնել, հանգուցանել | Խմել, ըմպել (կտր.) արբէ |

4. Հրահանգ

Ձեր եղբօրը տեսայ և ասացի նրան. Նրա ձայնը
լսեցի և կանչեցի. Նրա մահուան լուրն առաւ և
սկսեց լալ. Նրան երկու մղոն տարին. Նրանց հինգ
քառ յորեն տուին. Պատը երկու կանգուն բարձ-
րացրին. Զինուորների զէնքերն առաւ. Տան յարկը
քանդեցին. Նրա եղբայրներն այնտեղ էին. Իւր ծա-
ռայի աղջիկն սպաննեց. Սենեկին դռները բաց ա-
րին. Տաճարին վարագոյրը ճեղքուեցաւ. Եղբօրս ձայնը
լսեցի. Մեր բոլոր ստացուածքը քումն է. Այդ աշ-
տանակն իմս է. Այն պարտէզը գեղեցիկ է. Նրանց
ամանները լիքն են. Մեր տները բարձր են. Նրան
լերան գլխին հանեցի. Իւր մառանում շատ գինի

ունէր. Ութ տարի աշխատեցայ այս սովորելու համար. Դաշտին երկայնութիւնը տասներկու մղոն էր. Այն գըրում առիւծներ կային. Թագաւորը հզօր է. Այն մարդը բանսարկու է. Խօսելու ժամանակը անում էր. Արտաշիսի փեսայութեան ժամանակում էր տեղում, Սաթինկան հարսնութեան ժամանակում՝ մարգարիտ էր տեղում. Դուն Տարայի որկորն ունիս. Մենք Տիրակայ համբարները չունինք. Իմ գրքերս ո՞ւր են. Նրանց ո՞ւր դրիք։

Լուր (մահուան), գոյժ    Ծեղքեմ, ցէլում
Պատ, որմ    Աշխատիմ, աշխատ ըլնեմ

Սովորիլ, ուսանիլ

5. Հրահանգ

Նրանք տուի ձեր եղբօրը. Այդ գրքերն ով է շարադրած. Մի գիտուն մարդ նրանց շարադրել է. Այստեղ հինգ սափոր ջուր բերէք. Ես ձեզ ասելու շատ բան ունիմ. Երկու որդի ունիմ. Նա չորս աղջիկ ունէր. Տատ հարստութիւն ունէին. Համբերելու զօրութիւն չունիմ. Ներս մտաւ և սեղան նստաւ. Նրան ճաշը գրկումն առաւ և օրհնեց. Երկու օրուան ճանապարհ քայլեցինք. Գիշեր ու ցերեկ գնում էինք. Առէք այս մարդիկն ու իրենց տներում տարէք. Նրա բարեկամներն այս դռնիցն անցան և մեզ եկան. Այս պատմութիւնը լսած ժամանակը՝ զարմանում էր. Երկու օր առաջ ձեր ծառաները մեզ լուր տուին. Նրանց ընկերները մեր բարեկամներն են. Դուն իմ որդիս ես. Մենք ձեր բարեկամներն ենք. Եղբայրներս ձեր վրայով պատմեցին. Մենք նրանց հետ ձեզ եկանք. Նրանք ձեր եղբօրը հետ գնացին մեր տունը. Երեք օր ճանապարհորդութիւն անելով այնտեղ հասանք. Ձեր սիրոյն համար այս աշխատութիւնը յանձն եմ առնում. Առաւօտ երեկոյ ձեզ համար աշխատում էինք։

Տարադրեմ, յօրինեմ    Հարստութիւն, ճոխութիւն



Սեղան նստիմ, ճաշեմ    Ձեր վրայով, շնորհիւ
Քայլել, գնալ    Ճանապարհորդութիւն անեմ, ճանապարհորդեմ
Գիշեր ցերեկ, գիշեր և ցերեկ    Սիրոյն համար, առ սէր
Առաջ, յառաջ քան զ
(Նրանց) հետ, (նոցա) հանդերձ, ընդ. տրականով    Առաւօտ երեկոյ, ցայգ և ցերեկ

6. Հրահանգ

Ինձ հրաման տուր որ գնամ հօրս տեսնելու. Նրան պատուիրիր որ ինձ չնեղի. Նրա վախից լռեցինք. Այն մարդու որդին ճանաչում եմ, բայց ձեզ չեմ ճանաչում. Նրանց մտցրէք վրանում. Ինչու համար ողջ օրը պարապ էք մնացած. Այստեղ ինչպէս մտաք, պատմեցէք մեզ. Այս ճանապարհից մինը չի կարող անցկենալ. Նա լաւ մարդի որդի է. Սա հարուստ կնոջ աղջիկ էր. Արքայից արքային ծառաներն ենք. Այդ գերիներն այն բերդում տարէք, քաղաքում մի բերէք նրանց. Իւր եղբօրը մօտին բնակեցաւ չորս տարի, և մեր երեսը չտեսաւ. Իր հայրենիքից աքսորուեցաւ. Ձեր գեղն եկայ, շատ գեղեցիկ է. Խօսքին երկայնութիւնից ձանձրացաւ, և քունը տարաւ. Նրա այն խօսքերից իմացայ որ նրա եղբայրն էք. Բազմութիւնն այն եկեղեցումն էր դիմում. Նրան տաճարում տեսան իւր բարեկամներին հետ. Երկիրը մեծ է. Ծովը խոր է. Երկինքը բարձր է. Լուսինը յատուկ լոյս չունի. Նա վաթսուն տարի ապրեցաւ, և քառասուն օր թագաւորեց. Իմ տունս մտէք. Կնձնւոյն շուքում կը նստէր. Ձեռքիս տակումն է. Ձեր իշխանութեանը տակ շատերի ունիք. Եղբայրս երկու որդի ունի. Տասը սպասաւոր ունէր. Նրանք շատ ստակ (փող) ունին. Ստակ չունիմ, բայց ունեցածս տամ։

Վախից, առ ահի    Ի՞նչպէս, զիա՞րդ
Մտցնել, մուծանել    Մօտ, առ (տրականով)
Բոլոր օր, ողջ (օր), ողջոյն    Լաւ, ազնիւ, բարի

Բերդ, պըշտան  Խոր (խորունկ), խոր
Աքսորուիմ, սուրագիր չինիմ  Յատուկ, սատուկն
Քունը տանել, նիրհիմ  Տուք, հոլանի
Ունեցածս, պըր ունիմս

7. Հրահանգ

Մարիամն եկաւ գերեզմանում. Գնացէք, ասա-ցէք ձեր բարեկամներին որ գնան հրապարակում. Նրանք այնտեղ հաւաքուեցան, և սպասում էին նրա գալուն. Ստակը դարձրեց սեղանաւորին. Նա ստակն առնելով ասում է. Ջուր առաւ ու ձեռքերը լուաց. Այն տեղն եկան որ կոչւում էր աւերակ. Դուն իմ սիրելի որդիս ես. Ես քո հայրդ եմ. Թագաւորը տօնին ժամանակն այնտեղ էր. Աշակերտները հարսանիքումն էին. Ժամի իննի ժամանակներում խաւար եղաւ. Ութ մղոն քայլեցինք. Այն ժամանակներում սով կար. Կէս գիշերուան ժամանակներում յարձակուեցան նրբանց վերայ. Գիշերանց ելնելով գնում էին. Հարիւր լիտր իւղ բերին. Կարող եմ այս տաճարը քանդել, և երեք օրում շինել նրան. Այն երկրից կը գանք. Այս քաղաքն եկան. Այն քաղաքում մի աղքատ կար. Նրան տեսնելով կանչեց ու իւր մօտին նստացրեց. Մեզ բռնեց ու չարչարում էր. Պատուհանը բաց արեց ու նայում էր. Նրան բանտից արձակեց. Նրանց բանտարկեց. Ձեր եղբայրները մտցրին եկեղեցում. Այն եկեղեցում քարոզում էր:

Ձարչարեմ, չըչիմ
Գալը, գալը, գալուստ
Բանտարկեմ, պանեմ ի պիտա-հոջ
Ժամը իննին ժամանակ-ները, ըննու ժամու
Եղբայրներն, եղբարդն
Այն ժամանակները, պայ-նու ժամանակա

8. Հրահանգ

Այն բանտում շատ կապեալներ կային. Նրան նետեց (գձեց) ջրում. Նրա ձայնը լսելով ուրախա-[illegible] ծառայեց Լաբանին Ռա-



քէլին համար. Զորս ժամ ոտքով գնացինք. Եօթը տարի սով եղաւ. Երուսաղէմի տաճարը քառասուն տարուց շինուեցաւ. Ինձ հինգ քանքար արծաթ տուաւ. Եօթը սափոր ջուր բերին. Տասը փունջ ծաղիկ քաղեցինք. Այս տունը մերն է. Դուք մեր սիրելիներն էք. Եօթն օր աշխատեցան ու նրան դուրս հանեցին. Ութ մղոն քայլելուց յետոյ մի քաղաք հասանք. Քաղաքին դռնից ներս մտնելու ժամակ հինգ հոգի տեսանք. Այն գիրքը կարդացած չենք. Փոքրիկ քաղաք մի ունիմ, արի և այնտեղ բնակէ. Այս լեռներից շատ հեղեղներ իջնում են. Պատուհանից անցկացաւ և ներս մտաւ. Ինքն ու իւր որդիքը մեզ տեսնելու եկան. Եթէ ես եկած չլինէի. Ձեզ շատ օրեր փորձեցի. Մեր գործերը ձեզ պատմեցինք, բայց դուք մեզ չհաւատացիք. Նա հարուստ մարդու որդի էր:

Նետեմ (ձգեմ, գձեմ), ըն-չինում  Ոտքով, ոտով, հետի
Քայլել, գնալ
Ուրախանամ, ուրախ չինիմ  Հոգի, ոգի (անձն) այր (մարդ)

9. Հրահանգ

Նրան տարին Թագաւորին. Եղբօրը մօտ կացաւ շատ օրեր. Նրանց դահիճներին մատնեց. Նրա վրանի տակում ճաշեցին. Երկու օրուան ճանապարհ գնացինք. Իմ խօսքերս լսեցէք. Նրա տղերքն ու աղջկերքը մեզ եկան. Մի փոքր յետոյ նրանց տեսայ. Մեր աղաչանքը նրանց ընդունելի չեղաւ. Թագաւորին խորհուրդները ծածկել պէտք է. Աստուծոյ արածները ձեզ պատմեմ. Աստուծոյ և նրա զօրութեան հաւատում եմ. Հագիւ նա ոտքը դրած էր ցամաքում. Աստուած այս աշխարհը ստեղծած է. Վաղուան (էգուցուան) համար մի հոգաք. Մեզ նրանց վրայով պատմեցին. Մի բան էին պտրում որ նրա վերայ ամբաստանութիւն անեն. Նրան քաղաքից դուրս հանեցին. Նրանց ատեանը բերին. Շատերն այս քաղա-

քից ելան. Այդ տղաքն այն տունը տարէք. Այն քաղաքում կը բնակէր. Իմաստուն մարդոյ խօսքերին ականջ դրէք (մտիկ արէք). Այս մարդիկ քաջ թմագաւորի զինուորներ են. Այս տեղը չարագործ մարգերով լքցրէք. Դուրս ելէք և նրանց փնտռեցէք. Ցորենն իրենց ամաններում հաւաքեցին. Երբ բազմութեանը տեսաւ, նստեցաւ. Նրա դուրս ելնելու ժամանակ բազմութիւնը ներս էր մտնում. Նրանց մացրէք այդ եկեղեցում։

Մի փոքր յետոյ, չէր ուշ-հա- մըոյ — Ամբաստանութիւն անել, չարախօսել
Պէտք է, պարտ է — Տղերք, մանչերք
Արածները, ըրր արածն — Մտիկ, ականջ անել, լսել (տր)
Հազիւ, այն ե՞ւ — Փնտռել, խնդրել
Ստեղծեմ, առանեմ — Բազմութիւն, ամբոխ

10. Հրահանգ

Երկրիս շուրջն օդ է. Ժողովուրդ նրա շուրջը հաւաքուեցաւ. Այն քաղաքին շուրջը պատնէշներ շինեցին. Նրա վրայով ձեզ մի բան պէտք է ասեմ. Ձեր եղբօրը վրայով ամբաստանութիւն կանեն. Ձեր բարեկամներն իմ վրայովս տրտնջում են. Զինուորները պարտէզին դռնից մտան. Բազմութիւնը դաշտին երեսը տարածուեցաւ. Տասը ժամ բան չկերան. Տասներկու մղոն քայլելուց յետոյ քաղաքը հասանք. Մեզ տեսան ու սկսան փախչիլ. Փախան ու բերդն ապաւինեցան. Նրան մի կողմն առաւ ու հետը խօսում էր. Չգիտէի թէ ինչ է. Չկարողացան մեր խօսքերն իմանալ. Մեզ թողին ու իրենց տներում գնացին. Տասներկու եղբայր ենք. Այդ մարդիկն Աստուծոյ ծառաներ են. Շատ եղբայրներ ունիմ. Երկու տուն ունիք. Քսան ծառայ ունի. Գրքեր ունինք. Այն տունը մի մտնէք. Այս քաղաքում ծնանք (ծնուեցինք). Այս տեղից հեռի է. Այս տաճարից մացրէք նրանց. Իմ բարեկամիս գնանք։



Բոլորտիքը, շուրջ, շուրջ — Վրայով, դ... (բացառակ.)
դ... (գործ.) — Դռնից, ըստ դրան
Հաւաքուիլ, խմբուիլ — Երեսը, ըստ երես
Ամբաստանութիւն անել, ամբաստանել, ամբաստան լինել — Բան չուտել, չաղ ուտել
Մէկ կողմ, մէկուսի

11. Հրահանգ

Եղբօր տանը մտաւ. Բարեկամները նրան եկան. Թուղթ գրելու ժամանակում ծառաները նրան կանչեցին. Աթոռին վերայ նստելով ժողովրդին դատում էր. Երբ հիւանդին բժշկեց նրան իւր տունն ուղարկեց. Բարեկամները նրան կասեն. Մեզ հետ գալ ուգում էր. Շատ օրեր այնտեղ կացինք, ու նրա գալուն էինք սպասում. Բանտումն էր, ու եղբայրներին աղաչում էր գինքը ազատեն. Նրան լերան վերայ հանելուց յետոյ՝ եղածները նրան պատմեցին. Այն մարդին ձեզ ուղարկեցի որ իմ վրայով լուր տաք. Եթէ այդ մարդկանց սիրում էք, մի չարչարէք նրանց. Երբ նրան երկու մղոն տարան, շատ հոգնեցան. Պատուհանից անցկեցաւ ու ներս մտաւ նրանց տեսնելու. Նրա համբաւը տարածուեցաւ այն բոլոր երկրում. Երկու օր նրանց հետ քալելուց յետոյ մի գիւղ հասանք. Տաճարին առաջը կանգնելով ձեր եղբօրը հետ խօսում էի. Իմ որդիքս ձեր բարեկամներն են. Ես օտար չեմ։

Եղածները, ըլլածները — Հոգնիմ, վաստակիմ
Լուր, համբաւ — Տարածուիլ, տարածել ըստ...

12. Հրահանգ

Ես նրանց տեսած եմ. Դուք այն գիրքը կարդացած էք. Աստուած այս աշխարհս ստեղծած է. Եթէ նրանք այստեղ եկած լինէին. Դուն իմ վրայովս լսած ես. Մենք նրանցից երկու թուղթ ընդունած ենք. Ես այն մարդին տեսած չեմ. Նա այսպիսի մի բան ասած չէ. Մենք մինը սպանած չենք. Եթէ

ալն եկած չլինէր. Այն քաղաքից ելաւ ու մեզ եկաւ. Քո եղբայրդ ու քոյրդ մեզ եկան. Իմ հարսնիքիս եկէք. Իւր այգում մշակներ ուղարկեց. Նրանից տասներկու օր սովորացնում էր. Նոյ ու իւր որդիքը տապանը մտան. Հոգին ու մարմին դժոխքում կորցնելու կարող է. Ծերերին և երիտասարդներին սպաննեցին. Մանչեր (արու զաւակ) ու աղջիկներ ունեցաւ. Նրանք մեր որդիներն են. Այս տղաքն իմս են. Երբ նրան տեսան, նրա մօտ հաւաքուեցան. Հաւն իւր ձագերին թևերի տակն է ժողովում. Նրանք քահանայապետին սրահում մտան. Շատերն երբ լսեցին նրան հաւատացին. Քո որդիդ այստեղ բեր. Այնտեղ մարդ չ'կար. Մի բան չլսեցինք. Այնտեղից հեռացայ. Մեզ մօտեցաւ. Յովսէփին եղբայրներն Եգիպտոսում իջան ցորեն գնելու. Յովսէփն իւր եղբայրներին տեսաւ և ճանաչեց նրանց. Եգիպտոսում եօթը տարի առատութիւն եղաւ. Մեծ որդին սպաննուեցաւ. Պստիկը հօրն ասում է. Քո որդիդ լինելու արժան չեմ:

| | |
|---|---|
| Ստեղծել, առնել | Մանչ, (արու զաւակ) ուստր |
| Մի բան, ինչ | Մեծ, երէց |
| Դժոխք, գեհեան | Պստիկ, կրտսեր (որդի) |

13. Հրահանգ

Եղբայրներս քեզանից վախենում են. Աստուածանից չե՞ս վախենում. Աղաչում էին որ իրանց հետ գնար. Երեք տաղաւար շինենք. Նրա գլուխը կտրեցին և թագաւորին բերին. Երբ թագաւորը տեսաւ, շատ զարմացաւ. Նրա խօսքերին մտիկ չէր անում. Յակովբ իւր հայրերի գերեզմանում թաղուեցաւ. Պատերազմի լուրեր պէտք է լսէք. Մի անկիւնում քաշուեցաւ և նստում էր. Տէրն իմ օգնականս է. Իմ ձեռքիս տակ զինուորներ ունիմ. Շատ օրեր նեղութիւն կրեցի. Մենք նրանցից վախ չունենք. Յունաց բոլոր ուսումներին մէջ կրթուեցաւ. Մեզ



շատ ստակ հարկաւոր է. Մեզ հետ նրա պալատումն եկան. Իրեն աղաչում էին որ իրենց սահմաններից գնար. Մենք գրքերը սովորած չենք. Այն մարդին տեսած չեմ. Եթէ այս խօսքերն ասած չլինէի. Մի քար նետելու չափ տեղ հեռացաւ նրանցից. Քառասուն օր չկերաւ և չխմեց. Տասը տարի անկողին ընկած էր. Բերդն ապաւինեցան. Երկինք ելաւ և Աստուծոյ աջ կողմում նստեցաւ. Նրան տասը դահեկան տուաւ. Հնազանդ որդին իւր հօրն ուրախացնում է. Նրան խրատում էր որ իւր խօսքերին մտիկ անէր. Բազմութիւնը դաշտին վերայ ցրուեցաւ. Լեռներից ու ձորերից անցկեցանք:

| | |
|---|---|
| Շինել (տաղաւար), առնել | Նեղութիւն կրեմ, տառապիմ |
| Մտիկ անեմ, անսամ | Վախ, երկիւղ |
| Լուր, համբաւ | Կրթուիմ, վարժիմ |
| Քաշուիմ, առանձնանամ | Հարկաւոր, պիտոյ |
| Պալատ, ապարանք | Ապաւինել (մի տեղ), ապաստանիմ |
| Մի քար նետելու չափ տեղ քարընկէց մի | Ուրախացնեմ, ուրախ առնեմ |
| | Դաշտին վերայ, ընդ դաշտն |
| Ընկնիմ (անկողին) անկեալ դնիմ | Լեռներից, և այլն, ընդ լերինս, և այլն |

14. Հրահանգ

Եօթն օր մնաց բանտում. Ութ հոգու չափ ջրհեղեղից ազատուեցան. Ձիս մահուանից փրկե՛ր, Տէ՛ր. Այն տեղին մարդիկը նրան ճանաչեցին. Վայրենի ազգերի բնակարաններում մտաւ. Գետին մօտից էր գնում. Այս քո սիրոյդ համար արի. Ատելութիւնից հիւանդութիւնից նրան սպաննել տուաւ. Տրտմութիւնից հիւանդացաւ. Իրենց բարեկամներին թշնամիների ձեռքն են ուզում մատնել. Նրանցից ոմանք մեզ եկան. Նրա ծննդեան ժամանակը շատեր պէտք է խնդան. Նրա ներս մտնելու ժամանակն ամենքն էլ ոտքի ելան. Նրա ոտքն ընկաւ և աղաչում էր. Քաղաքը հասած ժամանակ բարեկամները նրան դիմաւորե-

ցին. Երբ այս ասաց, ամենքը լռեցին. Մեզ օգնիր, քանզի ահա կորչում ենք. Ամեն բան քոնն է. Այս ամենն իմն է. Երկինքը իմ աթոռն է. Դուք իմ որդիքս էք. Շատ բարեկամներ ունինք. Ուրախութիւնից գնաց ու իւր ստացուածքը ծախեց. Իմ զօրութիւնս դու ես. Դուք մեր պարծանքն էք. Եղբայրներս և քոյրերս այստեղ են. Քո ծառաներդ և աղախիններդ և անասունդ չգործեն. Ձեր բարի գործերը տեսնեն. Անուշ խօսքեր խօսեցաւ. Բարեբարոյ կնոջ որդի էր. Անզգամ և լեզուանի մարդու հանդիպեցանք. Նենգաւոր մարդոց հետ հաց մի ուտել. Քո բարեկամներիդ հետ ուրախ եղիր. Ձկնորսներն ուռկանը քաշում էին. Մեր վրայով շատ բան պատմում են. Ես երբէք նրա տունը գնացած չէի, բայց նա ստէպ գալիս էր իմ տունը. Զօրքը գետն անցկենալով քաղաքն առաւ. Քաղաքներ շինեցին և նրանց միջին բնակուեցան. Աբրահամ իւր ծերութեան ժամանակումը շատ հարուստ եղաւ. Իսահակ անունով մի որդի ունեցաւ, որի աչքերը կուրացան իւր ծերութեան ժամանակում. Հայկն իւր որդիներն ու թոռներն առնելով, իւր հայրենիքում եկաւ. Բէլին հետ կռուեցաւ և նրան յաղթեց։

Ութ հոգու չափ, իբրև — Դիմաւորեմ, ընդառաջ
Ազատիմ, ապրիմ — Լռեմ, լուռ լինիմ
Փրկեմ, ապրեցուցանեմ — Քաշեմ, ձգեմ
Բնակարան, բնակութիւն — Հարուստ լինել, մեծանալ
Ոտքի ելնեմ, յոտն կամ — Ստէպ, յաճախ
(Գետին) մօտից, առ (գե-տովն) — Գետն անցկենալ, անցանել ընդ գետն
Քո սիրոյդ համար, առ սէր քո — Կուրանալ, կափել (աչաց)

15. Հրահանգ

Այս մարդը հիւանդ է. Քո բարեկամդ աղքատ է. Այս տղան իմ որդիս է. Այս մարդը ձեր թագաւորն է. Սրանք մեր բարեկամներն են. Այս մարդիկը



ձեր ազգականներ չեն. Այս ծերունին այս քաղաքին դատաւորն է. Դրանք մեր թագաւորին զինուորներն են. Այս աղջիկը քո դուստրդ է. Ձեր թշնամին չենք. Հայրս այն քաղաքին իշխանն էր. Այս երկու մարդիկը Յունաց զօրավարներ են. Այնտեղ եղողներին բռնեցինք. Մտնողներին արգելում էին. Տեսնողներին ու լսողներին կանչեցինք. Այս անողին տեսայ. Ձեզ մատնողին սպաննեցին. Մեզ հետ խօսողին ճանաչո՞ւմ ես. Այս քաղաքը պզտիկ է, բայց շատ գեղեցիկ է. Այդ պարտէզը մեծ չէ, բայց նրանում շատ ծառեր կան. Մեր հանդերձը հին է, բայց մեր ոտից ամանները հին չեն. Այս լեռները բարձր են, բայց երկրին օդն առողջ չէ. Այն գետին ջրերը յստա՛կ են. Գետն էլ խո՞ր է. Քաղաքում կռիւ եղաւ և շատ վիրաւորներ եղան. Շատ օրեր նրա տունն եղայ, բայց եղբայրդ ինձ հետ չէր. Մենք ձեզանից գոհ ենք, դուք էլ մեզանից գո՞հ էք. Տեսած մարդդ գովութեան արժանի չէ. Այն այրի կինն աղքատ և աւուր հացի կարօտ է. Այդ տղան իմ եղբայրս է. Այդ աղջիկն աղքատ մօր միածնունդ աղջիկն է. Այդ տղաքն իմ որդիներս են. Քաջ եղի՛ք, ով մարդիկ. Որդեա՛կ, ինձ հետ ուրախ եղի՛ր. Եղբայր, ո՞ղջ ես. Ինձ մի ուլ չ'տուիր որ բարեկամներիս հետ ուրախ լինէի. Քո անունդ սուրբ լինի. Ձեզ ծառայ լինինք. Ձեր տներն աւերակ լինին. Միշտ ուրախանում էր. Քո ստակդ քեզ լինի. Ինձ մի որդի պիտի լինի. Ես ձեզանում մի սպասաւորի պէս եմ. Ձեզանից մեծը պզտիկին պէս լինի. Ո՛չ իմ կամքս, այլ քոնը լինի. Ամբարտաւան մի՛ լինիր. Լռեցէ՛ք։

Բռնել, ունիմ — Աւուր հաց, [illegible]
Ոտից աման, [illegible] — Պզտիկ, կրտսեր
Խոր, խոր — Լռել, լուռ լինել

16. Հրահանգ

Հայրս մի պարտէզ գնեց. Գրքեր գնեցինք. Քոյրդ

պզտիկ գիրքը գնեց. Գնած գիրքդ ընտիր է. Եղբորդ գնելու տունը գեղեցիկ է, բայց շատ պզտիկ է. Ես էլ մի տուն գնեցի որ շատ մեծ է. Թուղթը գնեցի՞ր. Հօրդ ինձ պարգևած ձին ծախեցի. Դուն էլ քոնը ծախեցի՞ր. Իշխանն իւր կառքն ու ձիերը ծախում է. Հօրեղբայրս իւր պզտիկ որդւոյն համար մի գեղեցիկ գլխարկ գնեց. Այս տղան մի երկայն նամակ գրեց իւր մօրը. Մեր հայրն այս պարտէզն և այս այգին քո հօրեղբօրից գնեց. Մի մարդ հարսանիք ունէր. Բոլոր իւր բարեկամներին կանչեց. Կինն իւր դրացիներին կանչում է. Հովիւներն ոչխարներին արածեցնում են. Դուն մի խիստ մարդ ես, չցանածդ հնձում ես. Արձակեցէք դրանց որ իրենց կերակուր գնեն. Մեր լապտերները հանգչում են. Ձեր այգիւղից մեզ ծախեցէք. Վաճառականներին գնացէք և գնեցէք ձեզ. Ինձ ի՞նչ ուզում էք տալ. Ես նրան ձեզ եմ բերում. Ձեռքդ պնակում մի՛ մտցրու. Ամենից լաւերն ամաններում ժողովեցին. Օտար էի և զիս ընդունեցիք. Քահանայապետն իւր հանդերձը պատառեց. Այս կինը իւր տղայոց սիրում է. Եղբայրներս և քոյրերս սիրում եմ. Բարեկամներիս և վարժապետներիս էլ սիրում եմ. Ծաղիկներիդ ջրեցի՞ր. Իմոնքն ու քոնոնքը ջրեցի. Քոյրս էլ իրենը ջրեց. Եղբայրներդ երկու շուն գնեցին որ շատ գեղեցիկ են. Կան կերակուրներ և խմելիքներ, որոնք եթէ շատ ուտուեն և խմուեն, հիւանդութիւններ են պատճառում. Արաստոն քարի տեսակ մի է որի վերայ երկաթ չի բանում. Մշակ նրանք են որ երկիրը գործում են. Վարժապետները ծոյլ տղայոց պարսաւում են, փութաջաններին գովում են։

| | |
|---|---|
| Ձի, երիվար | Շատ, բազում, յոյժ, շատ |
| Պզտիկ, փոքր, կրտսեր | Գլխարկ, խոյր |
| Ջրեմ, ոռոգեմ | Գնելու, զոր գնելոց է |
| Խմելիք, ըմպելի | Ցանել, սերմանել |



| | |
|---|---|
| Մտցնել, թաթախել, խոթել | Պատճառեմ, գործեմ |
| Պնակ, սկաւառակ | Հիւանդութիւն, ցաւ, հիւանդութիւն |
| Ամենից լաւերը, ընտիր ընտրելոց | Արաստոյ, ադամանդ, (քար ինչ) |
| Ընդունիմ, (տանը) ժողովեմ | Քար, վէմ |
| Էլ, եւս | Տեսակ, ազգ |
| Բանել, (ներգործել), գործեմ | Փութաջան, ժիր |

17. Հրաման

Տեսա՞ր մարդին որին քեզ ուղարկեցի. Այն մարդին չտեսայ, բայց էգուց կը տեսնեմ. Փնտռածդ գըտա՞ր. Փնտռածս չգտայ, չփնտռածս գտայ. Նրան գըտաւ ու հարցրեց նրան. Ներս չմտնես. Մտաւ պարտէզում. Ամենքն էլ մրափեցին ու քնացան. Փեսան եկաւ ու պատրաստները նրա հետ ներս մտան հարսանիքում. Ստակն առնողը գնաց, գետին (երկիր) փորեց, և ստակը գաղեց. Այդ տանը մտի՛ր ու տես. Այդ անպիտան ծառաներին դուրս հանեցէք. Նրան բռնեցին որ սպաննեն. Երբ խօսքը վերջացրեց, լեռն ելաւ. Դարձեալ գալով նրանց քնի մէջ գտաւ. Նրա հետ եղողներից մինը ձեռքն երկարեցրեց, սուրը հանեց և ծառային զարկաւ. Այն ժամանակ նրա երեսին թքեցին. Քեզ զարկողն ո՞վ է. Երբ դուրս ելաւ, մի ուրիշ կին տեսաւ նրան. Եղբայրներիս ու քոյրերիս տեսա՞ր. Տեսանք ձեր սպասաւորներին որ պարտէզում ծառերի շքի տակում շրջում էին. Մեր ճանապարհորդները հասան. Այս խօսքը թագաւորին ականջը հասաւ. Եթէ օդին տաքութիւնն անդաստաններին չտաքացնէ, պտուղները չեն հասնում. Սպասաւորը խօսքը յայտնեց. Այդ գործը կարող էք գլուխ հանել. Նրան թագաւորին առաջ բերին. Երբ չկարողացաւ համոզել, նրան անիծեց. Եղբայրդ ի՞նչ միտք ունի. Յունաստան գնալու միտք ունի. Այդ գրքերը սեղանին վերայ գտանք. Ուռկան էին նետել ծովում. Թակոյկներում ջուր դրին. Նրան կարմիր քղամիդ

հագցրին. Շորերը հագաւ. Սուրը կապէ մէջքումդ. Նաւին կարասիներից շատ բան նետեցին ծովում. Ունեցածը գործածեց։

| | |
|---|---|
| Մրափեմ, ննջեմ | Գաղեմ, ծածկեմ, ընդգրա-յանեմ |
| Քնանամ, ի քուն մտանեմ | |
| Դարձեալ, միւսանգամ | Վերջացնեմ, կատարել |
| Մինը, մի ոմն | Քնոյ մէջ, ի քուն |
| Երկարացնել, ձգել (զձեռն) | Միտք ունենամ, ի մտաւ ածեմ |
| Օդին տաքութիւնը, տօթ | Նետեմ, } արկանեմ (ուռկան, |
| Տաքացնեմ, ջերմացուցանեմ | Դնեմ, } ի ջուր) |
| Շուք, հովանի | Հագցնեմ, արկանեմ |
| Ցայտնել, ի վեր հանել | Շոր, ջորջ |
| Գլուխ հանել, ի գլուխ հանեմ | Մէջք, մէջ |
| Համոզեմ, ածեմ ի հաւան | Կապեմ, ածեմ (սուր և այլն) |

Գործածեմ, արկանեմ ի կիր

18. Հրահանգ

Ահա երկու քանքար շահեցայ. Շատ բան շահեցաւ. Ասելիքս լսել ուզո՞ւմ ես. Զուզեց գնալ նրա ագարակում. Դրա արածը խօսուի. Շատ տրտմեցան և լռեցին. Հրապարակներում խօսեցէք. Ինձ հետ ծածուկ մի՛ խօսիր. Բոլորը գայթակղելու էլ լինեն, ես չպէտք է գայթակղիմ. Ձեր քոյրերն ո՞ւր են. Մեր քոյրերը Հռոմումն են. Ձեր եղբայրներն ո՞ւր են. Նրանք Աթէնք գնալու համար ճանապարհ ելան. Շատ անգամ խորհեցաւ, բայց մի բան չկարողացաւ անել. Պարսկաստանից եկաւ և Սիւրիա բնակեցաւ. Այսպիսի մի բան Հնդկաստանում չերևեցաւ. Ինչո՞ւ համար նեղւում ես. Քեզ նեղողն ո՞վ է. Վարժապետը Տիգրանին պարսաւում է. Ասում է թէ չի աշխատում, ընկերներին հետ միշտ կռիւ է անում. Այդ գինին քեզ ի՞նչպէս է երևում. Ինձ երևում է որ շատ ընտիր է. Այս տղերքը պիտի լաց լինին, երբ իրենց մայրը բաժանուի. Եթէ չկատարես, պիտի ամբաստանեմ քեզ հօրդ մօտին. Եթէ Աստուծոյ չհնազանդիք,



խեղճ պիտի լինիք. Մեր ծնողներին հնազանդ էինք, և մեր վարժապետներին մտիկ կանէինք. Խոհական տղայք իրենց մեծերին միշտ հնազանդում են. Նստող մարդոց նայեցաւ. Գերանը նախ քո աչքիցդ հանի՛ր, ու յետոյ շիւղն եղբօրդ աչքից հանելու նայի՛ր. խոտերին արմատները տաքից չորանում են. Թևը չորացաւ. Լեզուս չորացաւ. Ծարաւից պապակւում եմ. Ջուր չլինելուց ծարաւած էինք. Աղքատներին պէտք է ողորմիլ. Աստուած նրան ողորմեցաւ. Ողորմողը ողորմութիւն պէտք է գտնէ. Իմ հանդերձներիս ո՞վ դպաւ. Բարկացաւ ու ներս մտնել չէր ուզում. Նրանց իրենց բարեկամ են համարում. Կարծեց որ մեռած է. Նստելով՝ վաստակած (շահած) ստակը համարում էր (հաշւում). Մեռնելու էլ լինիմ, քեզանից պէտք է չջոկուիմ։

| | |
|---|---|
| Վաստկիմ կամ վաստակիմ, շահիմ | Ամբաստանեմ, ամբաստան լինիմ (զքէն) |
| Լռեմ, լուռ լինիմ | Խեղճ, թշուառ |
| Ասելիքս, զոր ասելոց եմ | Բաժանուիմ, մեկնիմ |
| Ծածուկ, ի ծածուկ | Մտիկ անել, անսամ |
| Ճանապարհ ելնեմ, մեկնիմ | Խոհական, մտավարժ |
| Անեմ (մի բան), վճարեմ | Մեծ, աւագ |
| Պարսկաստան, Պարսք | Տաք, տապ, տօթ |
| Սիւրիա, Ասորիք | Չորանամ, ցամաքիմ գօսանամ չորանամ |
| Հնդկաստան, Հնդիկք | |
| Նեղուիմ, տառապիմ | Ծարուած լինիմ, պապակիմ |
| Նեղել, նեղել | Դպչիմ, մերձենամ |
| Կռիւ անում եմ, կռուիմ | Կարծեմ, համարիմ |
| Ի՞նչպէս, ո՞րպէս | Ջոկուիմ, մեկնիմ |

Երևամ, թուիմ

19. Հրահանգ

Եթէ չհոգնիս, եթէ շարունակ խաղաս, միշտ աղքատ պիտի լինիս. Քոյրերս միշտ իրենց վարժապետներին մտիկ էին անում. Շատ էին աշխատում.

և քիչ էին խաղում. Եթէ Աստուծոյ, ծնողացդ և վարժապետներիդ մտիկ չանես, երբէք երջանիկ պիտի չըլլինիս. Այս տղան լալիս է, հաց չունի. Նոյ տապանին պատուհանը բաց արեց. Երկու օր նրա մօտ կացանք. Տօրերս լուացի. Տապում էր Երուսաղէմ գնալու. Ինչո՞ւ կը հեղգաս, ել. Փութա՛ ել Երուսաղէմ. Նրան ծեծելու եկողները մի կողմ կային նրանից. Երբ այս լսեցին, շատ ուրախացան. Իւր արցունքովը նրա ոտերը թրջում էր. Երբ գինովութիւնից զարթնեցաւ, այն ժամանակ զգաց. Դեռ չէք զգում. Դառն կերպով լաց եղաւ. Երեսդ լուա՛. Իրենց շորերը լուացին

| | |
|---|---|
| Հոգնիմ, վաստակիմ | Ուրախանամ, խնդամ |
| Շարունակ, յանգ | Արցունք, արտասուք |
| Միշտ, հանապազ | Թրջեմ, թանամ |
| Շատ, (մակ.), բազում | Գինովութիւնից զարթնեմ |
| Քիչ, սակաւ | սթափիմ ի գինւոյ |
| Ծեծեմ, հարկանեմ | Դեռ, տակաւին |
| Մի կողմ կենամ, ի բաց կամ | Զգամ, զգամ, իմանամ |

Դառն կերպով, դառնապէս

20. Հրահանգ

Հաց առնելը մոռացան. Խոստանում էք և չէք կատարում. Այս ամենը հասկացա՞ք. Նրանք չհասկացան. Գերեզման վազեց. Խրամից այն կողմ ցատկեց. Ոտք ելաւ և ցատկռտում էր. Երբ ծեծին վեկեց. Ոտք ելաւ և ցատկռտում էր. Երբ ծեծին վերջացաւ, զգաց բայց լսեց, դուրս ցատկեց. Հագած պատմուճանը հանեց. Մարդը հիւանդացաւ և մեռնելու մօտ էր. Ձեր հանդերձները հանէք և քրձեր հագէք. Իւր անկողնում զօրացաւ. Ողբացէք և սգացէք. Հրամայեց որ մինչև երեք օր գերեզմանին պահպանութիւն անեն. Զլինի որ աշակերտները գիշերանց գալով նրան գողանան. Ամպը նրանցից վերացաւ. Լսողները զարմանում էին նրա խօսքերին. Գթալով ձեռքը երկայնացրեց, և նրան դպաւ. Ինձ մի՛ դպչիր. Ձեզանից ոչ մինի փողին կամ հանդերձին ցանկացայ. Նրանք



էլ իրանց տեղերը դարձան. Մի ագարակ ստացաւ. Ես շատ փողով ստացայ այս քինուորութիւնը. Երու՞անդ, ե՞րբ պէտք է լուացուիս. Փոքր ժամանակից պէտք է լուացուիմ. Եթէ մի անդամը ցաւ է կրում բոլոր անդամները նրա հետ կրում են. Հռովմայեցիք գան և մեր ազգին վերցնեն. Նրա աչքերը բացուեցան և նստում էր. Եթէ կանուխ իմանայինք, մի դարման կանէինք. Ձեռքերը լուաց. Զջանացողն երբէք հարուստ չի լինիր. Աստուած այս աշխարհը դեռ չստեղծած. Դեռ արևը չելած. Դեռ նրանք միմեանց չտեսած:

| | |
|---|---|
| Հասկանամ, իմանամ, ի միտ առնում | Ծեծ, գան |
| | Դուրս վազեմ, դիմեմ |
| (Խրամից) այն կողմը, ըստ | Մօտ, մերձ է |
| Ցատկիմ, վազեմ | Պահպանութիւն անեմ, ըզգուշանամ |
| Ոտք ելնեմ, յոտն կամ | |
| Ցատկռտեմ, վազվազեմ | Լինիմ, առնիմ |
| Զլինի որ, գուցէ | Ցաւ կրեմ, վշտանամ |
| Գիշերանց, գիշերի | Հռովմայեցի, հռոմ |
| Երկայնացնեմ, ձգեմ | Վերցնեմ, բառնամ |
| Շատ փողով, բազում գնոց | Կանուխ, վաղագոյն |
| (Քիչ) փոքր ժամանակից, ընդ հուպ | Դեռ չ . . . մինչչև, չև |

ՌՂԱՍԻ ԱԶԻԶՅԱՆ

21. Հրահանգ

Եղբայրդ ո՞ւր է. Երկու ամիս է ինչ որ (քանի որ) եղբայրս մեռաւ. Քեզ տեսնելու կարօտից մեռնում եմ. Վախից բղաւեցին. Գիտէր որ նրան նախանձից մատնեցին. Ցաւին սաստկութիւնից հանդերձները պատառում էր. Իրենք զիրենք ազատելու ճանապարհանքից աւարը թողուցին. Մեր սրտերի նեղութիւնից մեռնում ենք. Այդ տղերքը սովից պէտք է մեռնեն. Տարաւից մարել էինք. Ծիծաղելուց մաքրում էր. Հայրս երէկ թևերիս մէջ մեռաւ. Հայրդ մեռա՞ծ է. Մայրս փոքր ժամանակից պէտք է մեռնի.

Կրքաղձամ որ որդուս տեսնեմ, դեռ չմեռած. Դուն չմեռած պիտի մեռնիմ. Այդպէս շուտ ու՞ր ես վազում. Բժիշկ բերելու եմ գնում. Հայրս մեռնելու մօտ է. Ե՞րբ ծնած ես. Հազար ութ հարիւր տասնին ծնայ. Եթէ ես մի տարի առաջ ծնած լինէի, քո ունեցած տարիքդ կ'լինէի. Հօրեղբայրս իւր հօր մեռնելուց յետոյ ծնաւ. Պզտիկ քոյրս Մարտի ամսին ծնաւ. Այս օրերումս նրան մի որդի պիտի ծնանի. Երբ այն խօսելու սկսաւ, ամենքը լռեցին. Դրա ինձ արածը քեզ պատմելու սկսիմ. Նստէ, եթէ կը հաճիս. Ուր որ տեղ գտնեմ կը նստիմ. Այնտեղ մի ժամ նստայ. Դրան ասա՛ որ նստի. Այստեղ նստեցէք մինչև որ ես գամ. Քո մօտդ նստինք. Եթէ նստի էլ չի ելնում. Ինչու՞ չես նստում. Նստելու տեղ չկայ. Տեղ տուր որ այդ պարոնը նստի. Եկեղեցում ու՞ր նստած էիր. Քո մօրաքեռդ մօտին նստած էի. Ինչու՞ համար ոտի վերայ էք կենում, պարոններ, հիմա նստեցէք։

| | |
|---|---|
| Քանի որ, յորմէհետէ | Ծիծաղել, ծաղր |
| Բղաւեմ, աղաղակեմ | Ճուտ, ձագ |
| Կարօտից, առ անձկանս | Տարիք, տիք |
| Ինքզինք, զանձն յք. զանձինս | Հաճիմ, հաճոյ լինիմ (տրկ. ով) |
| Աճապարանք(շտապ), փոյթ | Ելնել (ոտք), յառնել |
| Սրտի նեղութիւն, տառապանք | Մօտը, առընթեր |
| | Պարոն, տէր |
| Մարիմ (ծարաւից, ևլն.) նուաղիմ | Ինչու՞ համար, զի՞ է զի |
| | Ոտքի վերայ կենամ, կամ յոտն |
| Մարիմ (ծիծաղելուց), թալանամ | Հիմա, արդ |

22. Հրահանգ

Նրա ոտքը ընկնում էր ու աղաչում էր. Նրա վզովն ընկաւ ու համբուրում էր նրան. Ծովումն ընկան ու խեղդուեցան. Նրանց վերայ ընկան ու նրանց ջարդեցին. Զգուշացի՛ր որ չ'ընկնիս. Եթէ ընկնիմ նորից կելնեմ. Մովսէս Փարաւոնի տանը մեծացաւ. Յունաստանի բարեօդ տեղերում մեծացած էր. Մարմինը բերուեցաւ և հօրը գերեզմանում թաղուեցաւ. Երբ թագաւորին առաջ բերուեցանք, մեզ հարցըրեց. Ուզում էր գնալ, բայց արգելեցինք նրան. Նրան թողին ու փախան. Ինչու՞ չէք թողնի որ այդ մարդը իւր տեղը գնայ. Քեզ բռնեցի, և չեմ թողնի. Անմեղ արիւն մի՛ թափիր. Նաւն իւր բեռները պարպեց. Նրան թողեց և գնաց. Ոչխարներ և արջառներ մորթում եմ. Փչելով ողջ ողջ նորանց մորթը հանեցին. Նաւին բոլոր գործիներին և կարասիներին ծովը նետեցին. Իրա հանդերձներին նետում և փախչում էր. Այդ բաժակներին գինուով լքցրէք. Մի տեղ մի՛ գնաք, մինչև որ ձեր ամանները լքցուին. Քեզ մի ասելիք ունիմ. Ինձ ի՞նչ ասել ես ուզում. Մի բան չեմ ասել. Միայն ասա՛. Յետոյ քեզ կասեմ. Քեզ պատմածներիցս հօրս մի բան չասես. Նրան մի՛ ասել որ քո անկողնումն եմ. Քեզ ի՞նչ ասաց. Ձեզ չասացի՞. Դեռ ինձ չասացիր. Ուզու՞մ ես որ քեզ ասեմ. Պէտք չէ որ մարդ ամեն լսածն ասի. Այս ինձ ականջիցս ասաց. Քեզ ասածն ի՞նչ է. Նրան ճշմարիտը միայն ասացի. Թո՛ղ ուզածն ասի. Զղջում եմ որ այդ ասի. Յօժարութեամբ կասէի, եթէ գիտենայի. Եթէ մի տարբեր բան ասէի, սուտ կը խօսէի. Երէկ եղբօրդ ասացի որ գիս տեսնէ. Շատ անգամ կասէր որ բարեկամին մահուանը վերայ կը ցաւի։



| | |
|---|---|
| Ոտքն ընկնիլ, անկանել առ ոտս | Մեծանամ, աճիմ |
| Վզովն ընկնիլ, անկանել ըզ-պարանոցաւ | Յունաստան, Յունաց աշխարհ |
| | Բարեօդ, հովասուն |
| Խեղդուիլ (ծովը), հեղձնուլ | Տեղ, վայր |
| Ջարդեմ, կոտորեմ | Թափեմ, հեղում |
| Զգուշանամ, զգոյշ լինիմ | Պարպեմ, թափեմ |
| Նորից, միւսանգամ | Մորթը հանեմ, մորթեմ |
| Ելնեմ (ոտք ևլն.), յառնեմ, կանգնիմ | Ողջ ողջ, կենդանւոյն |
| | Գործիք, կազմած, գործի |

| | |
|---|---|
| Մի տեղ, [illegible] | Ակնկալում լինել, [illegible] |
| Յետոյ, [illegible] | Յօժարութեամբ, [illegible] |
| Ականջից, [illegible] | Տարբեր, [illegible] |
| Միայն (մկ.), [illegible] | Ցաւիմ, [illegible] (տրականով) |

### 23. Հրահանգ

Կարդացածդ ի՞նչ է. Մի նոր գիրք կարդում եմ. Նոյնը մենք էլ կարդում ենք. Հայրս ժամանակաւ Յունաց հեղինակներին կարդում էր, հիմա էլ չի կարդում նրանց. Այսօր Հերոդոտոսին պատմութիւնը կարդացի. Հայրս երէկ Թուկիդիդէսին էր կարդում. Հիմա պէտք է կարդամ մի գեղեցիկ գիրք զոր մինը ինձ փոխ է տուել. Աւելի ստէպ կը կարդայինք, եթէ աւելի պարապ ժամանակ ունենայինք. Ուրեմն կարդալը կը սիրէք. Ուզո՞ւմ ես որ այս նամակը քեզ կարդամ. Լաւ չես կարդում. Ի՞նչպէս պէտք է կարդալ այս բառը. Կը բաղձայի քեզ պէս կարդալ գիտենալ. Կարդացածներդ թո՛ղ դան մտքումդ. Տղաքս գրեթէ բնաւ չեն կարդում. Կարդալ չեն ախորժում. Շատ անգամ կրկնում եմ նրանց թէ պէտք չէ կարդալուց ծուլանալ, սիրտն ու միտքը միանգամայն կուղղէ։

Այդ աթոռն իրա տեղը դի՛ր. Գլխարկս ո՞ւր դրիր. Զայն սեղանին վերայ դրի. Հանդերձս առաւօտանց դրի սնտուկում. Եթէ ուրիշ տեղ դնէի, չէի կարող երեկոյեան զայն գտնել. Ո՞ւր ես ուզում որ շորերդ դնեմ. Դի՛ր ուր որ կը հաճիս. Կարծում ես թէ անկողնու վերա՛յ դրի. Միտքը դրաւ երթալ. Գլխարկդ դի՛ր գլխիդ. Դնենք թէ այնտեղ է. Նրան գլխին վերեւը բարձի վերայ դնէ. Նրան դրին բանտում. Նոր գերեզմանում դրուեցաւ, որ քարի մէջ փորուած է։

| | |
|---|---|
| Ժամանակով, [illegible] | Ուրեմն, [illegible] |
| Հեղինակ (գրոյ), [illegible] | Կարդալը, [illegible] |
| Աւելի ստէպ, [illegible] | Լաւ (մակ.), [illegible] |
| Պարապ ժամանակ, [illegible] | Միտքը գալ, [illegible] |
| | Կրկնեմ (շատ անգամ ասել) |



| | |
|---|---|
| Ծուլանալ, [illegible] | Իրիկունը, [illegible] |
| Ուղղեմ, [illegible] | Կարծեմ, [illegible] |
| Առաւօտանց, [illegible] | Միտքը դնել, [illegible] |
| Ուրիշ տեղ, [illegible] | Գլխի վերեւը, [illegible] |
| Կարենալ, [illegible] (տրականով) | |

### 24. Հրահանգ

Այդ ինձ համար առնեմ. Որչափ բան կամենում ես առնել. Կէսն առնեմ. Եղբայրներս մնացածները թո՛ղ առնեն. Ուզո՞ւմ ես կանգ առնել. Ուզածդ ա՛ռ. Ի՞նչ ուզում ես որ առնեմ. Աղախինը տղային թո՛ղ գիրկն առնէ. Այդ դիպակից կառնէինք, եթէ եղբայրս բոլորն առած չլինէր. Այս ամենը հասկացա՞ր. Ինձ երեւում է որ բոլոր աշակերտներս այս պատուէրը չհասկացան. Զայն նրանց ձեռքից առի. Նաւերն առին ու գնացին. Ինձ մի ձի բերէք. Երկու մոմ էր վառում, մինը գլխի վերեւում, միւսը ոտքին կողմը. Ի՞նչ ես անում. Ինձ պատուիրածդ կանեմ. Անում ենք ինչ որ պարտական ենք անելու. Այդ տղաք մի բան չեն անում. Ի՞նչ էիր անում իմ ներս մտնելու ժամանակս. Կրակ էի վառում. Իրիկունն ի՞նչ կանէք. Քո առաւօտեան արածդ ես երեկոյեան պիտի անեմ. Ուզածդ արա՛. Միշտ պիտի անենք ինչ որ պարտական ենք. Մինի վատութիւն չի անում. Եթէ քեզ պէս հարուստ լինէի, շատ բան կանէի. Այս մարդիկն ուրիշ բան չեն անել, բայց ուտել և խմել. Զայն ինձ բարեկամ արի. Դատաւորներն իրաւունք չարին. Այս տղան իւր հօրը կամքը կանէ։

| | |
|---|---|
| Մնացած, [illegible] | Ոտքին կողմ, [illegible] |
| Կանգ առնել, [illegible] | Պարտական եմ, [illegible] |
| Հասկանամ, [illegible] | Վառեմ, [illegible] |
| Բերեմ, [illegible], բերէք ինձ, [illegible] | Իրիկունը, [illegible] |
| | Առաւօտեան, [illegible] |
| Գլխին վերեւումը, [illegible] | Վատութիւն, [illegible] |

25. Հրահանգ

Հիմա քեզ ճանաչում եմ. Դու էլ զիս ճանաչում ես. Այստեղ մինի չեմ ճանաչում. Այստեղ շատ ծանօթներ ունենք. Քրոջդ չէի ճանաչում. Հօրեղբայրդ ինձ շատ ծանօթ է. Էլ ձեզ չպէտք է ճանաչի. Հարցրէք նրան թէ զիս դեռ ճանաչո՞ւմ է. Ուզում են որ այն մարդին ճանաչեմ. Ես դեռ նրան չճանաչած՝ ինձ մօտ եկաւ. Ինքզինք նրան չճանաչեցրեց. Քեզ տեսայ քո ծանօթներից մինի հետ, որի հետ ես ծանօթ չէի. Նրան ձայնից ճանաչեցի. Ցանցանքդ ճանաչի՛ր։

Ո՞ւր ես գնում. Գնում եմ տանը. Եղբայրս դըպրոցն է գնում. Առաւօտեան ո՞ւր էիր գնում, երբ ես ներս մտայ. Գնում էի մեր պարտէզը. Առաւօտներն այնտեղ էք գնում. Յօժարութեամբ կը գնայի պտըտելու, եթէ եղբայրս այստեղ լինէր. Եթէ կը հաճիս, ես էլ քեզ հետ գամ. Ի միասին գնանք. Այնպէս շուտ մի՛ գնար, կամաց գնա՛. Այդ տղաքն ո՞ւր են գնում. Մեր գնացած ճանապարհից են գնում. Ո՞ւր է քոյրդ. Հօրը տեսնելու գնաց, էգուց պէտք է դառնայ. Նրան դիմաւորենք. Էգուց խնճոյքին գնալ ուզո՞ւմ ես. Հայրս չ'թողուր որ այնտեղ գնամ. Քիչ ժամանակից այնտեղ կը գնամ. Մի քիչ էլ կեցի՛ր որ միատեղ գընանք. Պէտք է որ գնամ. Երթալ չեն ուզում. Այդ մարդիկն ի՞նչ բանի են գնում. Ջրի են գնում։

| | |
|---|---|
| Լաւ, աղէկ | Պտըտել, ճեմել |
| Ծանօթ, ծանօթ | Կամաց, մեղմով |
| Ինքզինք ճանաչեցնել, տալ ծանօթնալ | Դիմաւորել, ելնել ընդ առաջ |
| Ո՞ւր (շարժում), ու՞ր | Ճանապարհից գնալ, երթալ ճամբայէն |
| Յօժարութեամբ, սիրով | Առաւօտեան, ընդ առաւօտս |
| Մի բան բերելու գնալ, երթալ ք (բացառակ.) | Առաւօտները, ընդ առաւօտս |

26. Հրահանգ

Այդ տղային ո՞ւր էք տանում. Նրան դպրոցն



ենք տանում. Ուզո՞ւմ էք նրան տանել տանը. Մեր քոյրերին թատրոնն ենք տանում. Ո՞ւր ես ուզում որ քեզ տանիմ. Զիս ձեր պարտէզը տա՛ր. Յօժարութեամբ ձեզ այն տեղ եմ տանում. Քեզ կը տանէի եթէ պարապ ժամանակ ունենայի. Չափից աւելի ուշանում ենք, եթէ ձեզ այն տեղ տանենք. Ե՞րբ պէտք է գաս եղբայրդ տանելու. Գիրքս ո՞ւր տարաք. Չըգիտեմ ուր տարայ. Տանելը չտեսանք. Այդ պատանին հազարապետին տա՛ր. Սպասաւորներին պատուիրեց որ նրան ներս սրահում տանեն. Այս պտուղներից մի քիչ ուտենք. Հիմա չեմ ուտում, քանզի սոված չեմ. Երբեմն շատ բան էինք ուտում, հիմա քիչ ենք ուտում. Երբ այն հացից կերաւ, և գինուց խմեց, հոգի առաւ ու սկսաւ խօսիլ. Ինչո՞ւ չէք ուտում, պարոններ, և չէք խմում. Կերէք և խմեցէք. Մի բան չկերան և չխմեցին. Ո՞վ է որ ոչխար ունի և նրա կաթից չի խմում, կամ միսը չի ուտում. Կան անասուններ, որոնց միսը չի ուտւում, բայց եթէ մէկին սիրտն առնէր և նրանց մսից ուտէր, նրա մի վնաս չէր լինում. Այդ դրախտում եղած բոլոր ծառերից կերէք, բայց այս ծառից մի՛ ուտէք. Այստեղ խմելու բան չկայ. Ահա՛ գինի. խմեցէք, եթէ կը հաճիք. Ես բնաւ գինի չեմ խմում. Միայն ջուր ենք խմում. Թագաւորին կենացը խմենք. Երէկ մի բաժակ գինի խմեցի, այլ այսօր չեմ խմում. Միատեղ խմենք. Դու բաւական կերար, և այն չափից աւելի խմեց. Մեր խմածը բաւական է. Երէկ մեր խմած գինին այնպէս լաւ էր, որ մեզանից ամեն մինը մի շիշ խմեց։

Այսպէս ուշ ուստի՞ ես գալիս. Մանգալուց կըգամ. Առաւօտեանն ուստի՞ էիր գալիս, երբ քեզ հանդիպեցի. Ամարանոցից էի գալիս. Երէկ չափազանց ուշ եկայ, բայց առաւօտեան շատ կանուխ եկայ. Շուտ կը գանք, եթէ ժամանակ լինի. Ուզում է որ

ժամի ութին գանք. Յարմար ժամանակ եկաք. Ձեզ մի ասելիք ունիմ. Քիչ ժամանակից կը գամ. Եկէք, պարոններ. Որդիդ եկաւ և քեզ ուզեց. Բարեկամ, այստեղ արի:

| | |
|---|---|
| Պտուղ, մէրգ | Հոգի առնուլ, ոգի առնուլ հանգուցանել |
| Պարապ ժամանակ, ժամ պարապոյ | Շուտ (մի ժամ առաջ), վաղ ընդ հուպ |
| Մէկին կենացը, յարէն | |
| Բաւական, շատ | Ժամի ութին, յութերորդ ժամու |
| Լաւ, աղէկ | |
| Մի մի, մէն մի | Յարմար ժամանակ, դիպող ժամ |
| Ուշ, անագան | |
| Զափազանց, չափից աւելի չափէ | Ուզել (պահանջել), խնդրել հայցել |

27. Հրահանգ

Ձեռքդ ի՞նչ ունիս. Ձեռքումս մի գիրք ունիմ. Կարծում էք թէ եղբօրս կորցրած մատանին ունի. Ա՛ռ, ահա մի դահեկան դրանը կանգնող աղքատին համար. Սովորածդ լաւ պահի՛ր մտքումդ. Այդ տունն ո՞վ վարձու է բռնում. Հօրեղբայրս գայն վարձու բռնեց. Երեք մշակ վարձու բռնի՛ր որ այգումս գործեն. Այդ մարդկանցը բռնեցէք, և մի՛ թողուք նըրանց. Ընդունածդ ի՞նչ է. Թագաւորից պարգև ընդունեցի. Կարծում ես թէ մենք էլ պէտք է առնե՞նք. Պէտք է առնէք, եթէ արժանի լինիք. Մէկը ձեզ իւր տանը պէտք չընդունի. Մարդիկը մեզ շատ պատուով ընդունեցին. Այս գիրքը քեզ կը տամ. Այս արծաթն այդ աղքատ կնոջ տո՛ւր. Այս հիւանդին մի քիչ գինի տուէք Մայրը նրան պտուղ տուեց, խընձոր, տանձ և նուռն. Պանդոկապետին ասա, որ սրան մի պատառ միս, մի բաժակ գինի և մանանեխ տայ. Քո դրացւոյդ վեց գրիչ, թուղթ և մելան տուինք. Այս ամենը քեզ կը տամ, եթէ քեզ ասելիքս անես. Որբ տանք այդ գիրքը. Ձեր հօրը տուէք. Եթէ աղքատի



ողորմութիւն տաս, գաղտնի տո՛ւր. Հանդերձներդ ո՞ւր են. Նրանք ինձ տուողին տուի. Գիտե՞ս երբ պէտք է հայրս գայ. Չգիտեմ. Ասա՛ որ գիտենամ. Գիտեցի՛ր որ մենք քո սպառնալիքից չենք վախենում. Կարո՞ղ ես այդ անել մեզ. Այո՛, կարող եմ. Ո՞ւր ես գնում. Հրապարակում. Կարո՞ղ ենք մենք էլ գալ. Դուք այն տեղ չէք կարող գալ. Ասաց թէ կարող եմ անել և չկարողացաւ անել. Երէկ և առաջի օրում չկարողացայ անկողնից ելնել. Էգուց կարելի է կարողանամ ելնել:

| | |
|---|---|
| Առ (բռնէ), կալ | Մելան, թանաք մելան |
| Միտք պահել, ունել ի մտի | Կարողանամ, կարող եմ |
| Թուղթ, քարտէս, քարտ | Կարելի է, թերեւս |

# ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

## 1

### ՅՈՎՍԷՓ ԻՐԵՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՑ ԾԱԽՈՒՈՒՄ Է

Ցակոբ Յովսէփին սիրում էր իւր միւս որդի-
ներից աւելի, վասնզի նրան ծերութեան ժամանա-
կումն ունեցած էր: Յակոբն այլ և այլ ծաղկեայ
գոյներից մի կապայ շինելով՝ նրան հագցրեց. բայց
Յովսէփին եղբայրներն ատում էին նրան. Հօրը ա-
ւելի սիրելուն համար գնա ու երկու երազներին հա-
մար, զորս Յովսէփն իրենց պատմած էր: «Ինձ երևում
էր թէ», ասաց Յովսէփ մի օր եղբայրներին, «արտում
ձեզ հետ որայ կապում էի, և ահա իմ որաս կանգ-
նեցաւ որ ձեր որաներ ելնելով իմ որայիս երկրպա-
գութիւն էին անում: Դարձեալ՝ ինձ երևում էր թէ
արեգակը, լուսինը և տասներկու աստղեր տեսնում
էի որ ինձ երկրպագութիւն կանէին:

Յակոբին որդիքը Սիւքէմ կոչուած մի տեղ գնա-
ցած էին իրենց ոչխարներին արածելու: Յովսէփն
իրենց հետ չէր, հայրն էլ նրան ուղարկեց որ նրանց
վրայով լուր բերէ: Երբ եղբայրները նրան հեռուից
տեսան, իրար ասացին. «Ահա մեր երազ տեսնողը,
եկէք նրան մեռցնենք և ասենք թէ գազաններից
փարատուելով կորաւ»: Բայց Ռուբէն, այն եղբայր-
ներից մինը, որ նրան ուզում էր ազատել, խրատ տուեց
նրանց որ պատանուն չմեռցնեն. նրանք էլ մտիկ ա-
նելով Յովսէփին մի անջուր գբի մէջ նետեցին: Յետոյ
իրենց եղբայր Յուդայի խրատի հետևելով գբից հա-
նեցին նրան և ծախեցին քսան դահեկանի Իսմայէ-
լացի վաճառականներին որոնք ուղտերով անուշահոտ
խունկ էին տանում Եգիպտոս: Յետոյ Յովսէփի ծաղ-
կեայ կապան առնելով և այծի ձագի արեան մէջ թա-
թախելով ուղարկեցին իրենց հօրը որ ասաց. «Այս կա-
պան իմ որդւոյս Յովսէփինն է, մի գէշ կենդանի կերաւ
Յովսէփին».Խեղճ հայրը շորերը հանելով քուրձ հագաւ
և իւր որդւոյն վերայ սուգ արաւ երկայն ժամանակ:

Աւելի, [illegible]
Ունենալ, [illegible]
Կապայ, [illegible]
Ծաղկեայ (ծաղիկներով բանուած), [illegible]
Շինել (զգեստ, և լն.) [illegible]
Հագցնել, [illegible]
Երևել, [illegible]
Արտ, [illegible]
Կանգնել, [illegible]
Ելնել, [illegible]
Երկրպագութիւն անել, [illegible]
Տասներկու, [illegible]
Տեսնում էի... [illegible]
Սիւքեմ կոչուած, [illegible]
Ոչխարներ, [illegible]
Լուր բերել, [illegible]
Նրանց վերայով, [illegible]
Հեռուից, [illegible]
Երբ, [illegible]
Երազ տեսնող, [illegible]
Մեռցնել, [illegible]
Գազաններից փարատուիլ, [illegible]
Կորչել, [illegible]
Ազատել, [illegible]
Մտիկ անել, [illegible]
Անջուր, [illegible]
Նետել, [illegible]
Հետևել, [illegible]
Ծախել, [illegible]
Անուշահոտ խունկ, [illegible]
Յետոյ, [illegible]
Թաթախել, [illegible]
Այծի ձագ, [illegible]
Գէշ կենդանի, [illegible]
Խեղճ, [illegible]
Հանել, [illegible]
Շոր, [illegible]
Հագնել, [illegible]
Սուգ անել, [illegible]
Երկայն ժամանակ, [illegible]

## 2

### ՅՈՎՍԷՓ ՊԵՏԱՓՐԻՍԻ ՏԱՆ ՄԷՋ

Իսմայէլացի վաճառականները Յովսէփին Եգիպ-
տոս տանելով Փարաւոն թագաւորի սպարապետ Պե-

տափրէսին ծախեցին: Յովսէփը սիրելի եղաւ իւր տիրոջ որ նրան գործակալ դրաւ իւր բոլոր տանը և բոլոր ստացուածների վերայ: Բայց որովհետեւ դիւրահաւան էր մարդը, մտիկ անելով իւր կնոջը խօսքին որ զրպարտութիւն էր անում Յովսէփի վերայ՝ իւր հաւատարիմ ծառային դրաւ բանտում:

Տանել, ածել
Սպարապետ, իշխան զօրաց
Սիրելի լինել, գտանել շնորհս առաջի
Դնել, կացուցանել
Գործակալ, հազարապետ
Բոլոր, ամենայն

Ստացուած, ինչք
Բայց որովհետեւ, Իսկ զի
Խօսք, բան
Զրպարտութիւն անել, զրպարտել
Բանտ դնել, արգելուլ ի բանտ կամ դնել ի բանտ

## 3

### ԹԱԳԱՒՈՐԻ, ՄԱՏՌՈՒԱԿԻ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԵՐԱԶՆԵՐԸ

Փարաւոնի երկու պաշտօնեաները, մատռուակն ու մատակարարը (ծախսարարը), Յովսէփի եղած բանտումն էին: Երկուքն էլ մի գիշերուան մէջ երազ տեսնելով աղաչեցին Յովսէփին որ երազն իրենց մեկնէ: «Տեսնում էի» ասաց առաջինը, «որթ մի որ երեք ճիւղ ունէր խաղողի ողկոյզներով ծանրացած, որոնք առնելով ճմլում էի Փարաւոնի բաժակում և նրան էի տալիս»: «Երեք օրից», ասաց Յովսէփ, «քո պաշտօնումդ պէտք է հաստատուիս, և այն ժամանակ յիշէ զիս, և աղաչէ թագաւորին որ զիս այստեղից հանէ, վասնզի անիրաւ տեղ եմ կենում այս բանտում»: Մատակարարն էլ իւր երազը պատմելով ասաց. «Գլխիս վերայ երեք կողով էի կրում, և ամենից վերեւի կողովում կային երեք օրաններ որոնց երկնքի թռչուններն ուտում էին»: Յովսէփ նրան … Փարաւոն քո գլուխդ պէտք է



կտրել տայ ու փայտից կախել տայ, և այնտեղ երկնից թռչուններին կերակուր պէտք է լինիս»: Ինչպէս որ Յովսէփ գուշակեց՝ այնպէս եղաւ. բայց մատռուակն իւր պաշտօնում հաստատուելով՝ խոստացածը մոռացաւ:

Եղած բանտում, ի բանտի անդ ուր էր
Ճիւղ, բարունակ
Բաժակ, բաժակ
Տալ (հրամցնել), մատուցանել
Պաշտօն, պաշտօն, պաշտաման
Թագաւոր, արքայ
Այստեղից, աստի
Անիրաւ տեղը, յանիրաւի

Կենամ, կամ
Կրել, տանել
Ամենից վերեւ, որ ի վերոյ քան զայլս էր
Կային, էին
Կտրել, հատանել
Փայտից կախել, կախել զփայտէ
Կերակուր (թռչնոց), կե՛ր
Խոստացածը, զոր խոստացաւ

## 4

### ՓԱՐԱՒՈՆԻ ԵՐԱԶՆ ԵՒ ՅՈՎՍԷՓԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Երկու տարի յետոյ նոյն իսկ Փարաւոն երկու երազ տեսաւ. նրան երեւում էր թէ կենում էր Նեղոս գետի եզերքում, որից ելնում էին եօթը չաղ (գէր) արածկովեր, որոնք սկսում էին ջրերին մօտերքն արածուիլ: Յետոյ նոյն գետից ելնում էին ուրիշ եօթը նիհար կովեր որոնք առաջիններին կուլ էին տալիս: Երկրորդ երազին մէջ թագաւորը տեսնում էր եօթը մի կոթից ելած լիք հասկեր, և նոյնպէս մի կոթից ելած ուրիշ եօթը դատարկ հասկեր որոնք լիք հասկերին կուլ էին տալիս: Թագաւորը զարթնելուն պէս վախենալով՝ Եգիպտացւոց բոլոր իղձերին (ֆալբաց անող) հարցրեց. բայց իզուր: Այն ժամանակ մատռուակը Յովսէփին յիշելով՝ նրա համար խօսեցաւ թագաւորին, որ անմիջապէս նրան իւր առաջ բերել տուեց որ երազը մեկնէ: Յովսէփ Փարաւոնին երազները լսելով՝ նրան ասաց. առատութեան եօթը

տարիներ պէտք է լինին, և յետոյ պակասութիւն պէտք է լինի եօթը տարի, որոնք իբրև թէ առաջին առատութեան տարիներին պէտք է կուլ տան: Թո՛ղ, թագաւորը ասաց բոլոր Եգիպտոսի երկրին վերայ մի խելացի մարդ դնէ, որ առատութեան տարիներին հունձքին հինգերորդ մասը պահէ սովի ժամանակին համար»: Այս խրատը Փարաւոնի և նրա բոլոր մեծամեծներին հաճելի երևեցաւ: «Ո՞ւր գտնեմ», ասաց թագաւորն, «սրանից աւելի խելացի և հնարագէտ մէկը». և յետոյ Յովսէփին դառնալով ասաց. «Ահա քեզ այսօր բոլոր Եգիպտացւոց երկրին վերայ դրի»: Յետոյ մատանին հանելով Յովսէփին մատը դրաւ, նրա քթանից կապայ հագցրեց, վզին մի մանեակ կախ տուեց, և նրան կառքերից մինի վերայ հանելով՝ քարոզ կանչել տուեց թէ բոլոր ժողովուրդը Յովսէփին առաջ ծնկի վերայ գայ, և գիտենայ թէ նա Եգիպտացւոց բոլոր երկրին վերայ իշխան դրուեցաւ: Այնուհետև Փարաւոն Յովսէփին որ երեսուն տարեկան էր՝ Պետափրէսի, Արեգ քաղաքի քրմի, Ասանէթ աղջկանը կին տուեց, որից նրան երկու որդիք եղան, Մանասէ և Եփրեմ:

| | |
|---|---|
| Տարի, ամ | Խելացի, իմաստուն |
| Նոյն իսկ, նոյն | Հինգերորդ, հնգերորդ |
| Նիհար, ժուժա | Կոթ, յօղուն |
| Կուլ տալ, կլանել | Լիք, ատոք |
| Եզերքը, առ եզերբ | Ուրիշ, այլ եւս |
| Կով, երինջ | Պահել, ունել ի պահեստի |
| Ջրին մօտիկ, ի խոտս գետոյն | Հաճելի, հաճոյ |
| Դատարկ, սին | Մեծամեծներ, աւագք |
| Վախենալ, զահի հարկանել | Հնարագէտ, հանճարեղ |
| Զարթնել, զարթնուլ | Դնել (մատին), արկանել ի մատն |
| Անմիջապես, անդէն | Քթանից, բեհեզեայ |
| Պակասութիւն, նուաղութիւն | Վիզ, պարանոց |
| Ծնկան վերայ, կրկնել ծունր | |



5

ՅԱԿՈՎԲ ԻՒՐ ՈՐԴԻՈՑ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԵԳԻՊՏՈՍ

Յովսէփի ասածին պէս, եօթն առատութեան տարիներ եկան, և նրանից յետոյ ուրիշ եօթը տարի պակասութեան: Այն ժամանակ սով եղաւ բոլոր Եգիպտացւոց երկրում, և բոլոր աշխարհի վերայ. և ամեն կողմերից կը գային Եգիպտոս ցորեն գնելու, զոր Յովսէփ ժողովելով պահած էր շտեմարաններում: Յակոբն իմանալով թէ Եգիպտոսում ցորեն կայ՝ ուղարկեց այնտեղ իւր որդիքը որոնք տասն էին, քանզի պզտիկին Բենիամինին իրեն մօտ պահեց: Յովսէփ ճանաչեց իւր եղբայրներին՝ առանց զինքը նրանց ճանաչեցնելու, և ձևացնելով թէ լրտես են՝ նրանց ասաց. «Դուք Եգիպտոսի ելնելու և մտնելու տեղերը գիտելո՞ւ եկած էք»: «Ոչ, տէ՛ր,» ասացին եղբայրները, այլ մենք ցորեն գնելու եկանք: Տասներկու եղբայրներ ենք, մէկ մարդու որդիք, որ Քանանացւոց երկրում կը բնակի: Մեզանից ամենապզտիկը մեր հօրը մօտն է, մինն էլ մէջտեղ չէ: Յովսէփ նրանց ասաց. «Ձեզ այստեղից բաց չեմ թողնել, մինչև որ ձեր պզտիկ եղբայրը գայ. ուղարկեցէք ձեզանից մինը որ նրան բերէ այստեղ»: Այս ասելով նրանց բանտում դրեց. յետոյ երրորդ օրում նրանց այնտեղից հանելով ասաց. «Ձեզանից մինն այստեղ իմ մօտին պատանդ մնայ, միւսները ցորենով ի միասին երթան, և երբ կը դառնաք, ձեր պզտիկ եղբօրը բերէք, որպէս զի գիտենամ թէ ձեր խօսքերը ճշմարիտ են»: Նրանք իրար ասում էին. «Իրաւամբ կրում ենք այս նեղութիւնները, վասնզի վնասեցինք նրան, և չողորմեցանք, երբ մեզ աղաչում էր» և չգիտէին թէ Յովսէփն իրենց խօսքերը հասկանում էր, վասնզի թարգմանով էր խօսում: Բայց մի փոքր առանձնանալով լաց եղաւ: Յետոյ նորից գալով հրամայեց ծառանե-

րին որ Շմաւոնին վայր դնեն (թողնեն), և նրանց քրձերը ցորենով լցնելով՝ ամեն մինչն տակին նրա քրձին բերանը դնեն, և յետոյ նրանց արձակեց։ Նրանք Քանանացւոց երկիրն հասնելով՝ իրենց բոլոր պատահածները իրենց հօրը պատմեցին, և Յակոբն ասաց նրանց. «անզաւակ արիք ինձ. Շմաւոն գերի է, Յովսէփ չկայ, Բենիամինն էլ ինձանից առնել ուզում էք. ոչ այդպէս, չեմ ուզում թողուլ որ նա ձեզ հետ երթայ»։

Աստծին պէս, ըստ Աստուծոյն — Իրաւամբ, յիրաւի
(Բոլոր աշխարհի վերայ ըստ ամենայն — Նեղութիւն, վիշտ
Վնասել, մեղանչել
Ժողովել, հաւաքել — Հասկանալ, իմանալ
Կայ, գոյ — Մի փոքր (ժամանակ), վայր մի
(Իւր մօտ) պահեց, ունէր (առ իւր) — Ձեւացնել (կեղծել) պատճառել
Ելնելու և մտնելու տեղերը, ելք և մուտ
Պզտիկ, կրտսեր
Զինք ճանաչեցնել, ծանօթս տալ — Ձեմ ուզում, չառնում յանձն
Նորից, միւսանգամ
Ամենապզտիկը, կրտսերը, կրտսերագոյն — Վայր դնել, ունել
Պատահել, դիպել
Մէջտեղ, ի մէջ — Անզաւակ, անորդի
Յետոյ, ապա

---

## 6

### ՅԱԿՈԲԻ ՈՐԴԻՔ ԵԳԻՊՏՈՍ ԵՆ ԴԱՌՆՈՒՄ

Երբ սովը բոլոր երկրի վերայ սաստկացաւ, Յակոբն ասաց իւր որդիներին. «Նորից Եգիպտոս գնացէք»։ Յուդան ասաց իւր հօրը. «Եթէ ուզում ես որ երթանք, Բենիամինին մեզ հետ ուղարկիր. ես երաշխաւոր կը լինիմ տղային, նրան ինձանից ուզէ»։ «Եթէ այնպէս,» ասաց Յակոբ, «արէք ինչպէս որ ձեզ հաճոյ է, բայց երկրիս ամենաընտիր պտուղներից առէք որ ընծայ տաք տիրող մարդուն. առաջինին կրկինն էլ արծաթ առէք (սակ). ձեր քրձերում գտ-



նուածն էլ տարէք, չլինի որ մի դաւաճանութիւն լինի»։ Եւ թողուց որ երթան՝ յանձնելով նրանց Աստուծոյ խնամքին։ Յովսէփ լսեց որ եղբայրներն եկան, և թէ Բենիամինն էլ նրանց հետ է, հրաման տուաւ իւր գործակալին որ ճաշ պատրաստէ։ Երբ եղբայրները նրան ներկայացան, իրենց ընծաները նրան տուին, և մինչև գետին ծռելով բարև տուին։ Յովսէփն էլ նրանց մեծ քաղցրութեամբ բարև տուաւ, և հարցրեց նրանց. «Ո՞ղջ է ձեր ծերունի հայրն որին համար ասում էիք թէ Քանանացւոց երկրումն է»։ Յետոյ նայելով Բենիամինին որ իրան մէկ մօրից եղբայրն էր, ասաց. «Ա՞յդ է ձեր պզտիկ եղբայրը. Աստուած քեզ ողորմի տղաս, և քեզ պահէ», և փութալով դուրս ելաւ, քանզի սիրտն ելաւ, և էլ չէր դիմանում արցունքը բռնելու։ Երեսը լուանալուց յետոյ դարձեալ եկաւ՝ ինքզինք բռնելով, և երբ կերակուրը պատրաստուեցաւ, իւր եղբայրներին հետ սեղան նստաւ։

Նորից, անդրէն — Էլ, և ևս
Ուզել, խնդրել — Առաջինին կրկինը, կրկին քան զառաջինն
Տիրող, որ տիրէ
Գտնուածը, որ գտաւ — Տղա՛ս, որդեա՛կ
Փութալ, աճապարել — Չլինի որ, գուցէ
Դաւաճանութիւն, դաւ — Դիմանալ, հանդուրժել
Յանձնել, յանձն առնել — Բռնել, ունել
Լսեց, լուաւ (տրականով) — Արցունք, արտասուք
Ներկայանալ, յանդիման լինել — Ինքզինք բռնել, բռնաւոր առնել, անել
Ծռել, խոնարհել
Բարև տալ, տալ ողջոյն — Դարձեալ, միւսանգամ
Ամենից ընտիրները, գլխաւոր ընտիր — Պատրաստուիլ, պատրաստ լինել
Մէկ մօրից, համամայր

---

## 7

### ՅՈՎՍԷՓ ԶԻՆՔԸ ՃԱՆԱՉԵՑՆՈՒՄ Է ԻՒՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Կերակուրից յետոյ պատուիրեց Յովսէփ իւր գոր-

ծակալին հիւրերի քրձերը ցորենով լցնէ. Նրանց բերած փողն էլ այնտեղ դնէ, իւր բաժակն էլ Բենիամինի քրձում. Նրանք հազիւ թէ քաղաքից դուրս էին ելել, գործակալն նրանց վերայ հասնելով՝ արգելեց նրանց, և իւր տիրոջ բաժակն էր ուզում նրանցից։ Քրձերը բացուեցան, և բաժակը Բենիամինի քրձում գտնուեցաւ։ Այն ժամանակ նրանք զարմանալով և զարհուրելով՝ իրենց շորերը պատառելով քաղաք դարձան։ Յովսէփ նրանց ասաց. «Ինչո՞ւ համար բաժակս գողացաք. չգիտէ՞ք որ չկայ մինն որ կորուստը գտնենայ ինձ պէս։ Հիմա բաժակը գողացող ինձ ծառայ լինի, և դուք խաղաղութեամբ ձեր հօրը գնացէք»։ Այն ժամանակ Յուդան պատասխան տալով ասաց. «Քո ծառադ մեր հայրը, պիտի մեռնի, եթէ այդ պատանին նրան չդարձնեն, քանզի ես մինչև ցմահ երաշխաւոր եղած եմ դրա համար, ես ծառայ լինիմ քեզ տիրոջս, և այդ պատանին թող երթայ իւր եղբայրներին հետ։ Յովսէփն այլ ևս չկարողանալով համբերել, բոլոր Եգիպտացիները դուրս հանել տուեց, և մեծ ձայնիւ լալով՝ ասաց իւր եղբայրներին». «Ես Յովսէփն եմ. հայրս դեռ ո՞ղջ է»։ Եւ որովհետև նրանք վախից սառած և թմրած էին, կրկին ասաց նրանց քաղցրութեամբ. «Ինձ մօտ եկէ՛ք. ես Յովսէփն եմ, ձեր եղբայրը, զոր դուք ծախեցիք. բայց մի՛ վախենաք Աստուած գիս Եգիպտոս ուղարկեց որ ձեզ կերակրեմ։ Գնացէք հօրս և պատմեցէք նրան ձեր տեսածը, և աճապարեցէք ինձ գալու։ Գեսեմում պէտք է բնակիք, և ես ձեզ կը կերակրեմ, վասնզի այդ սովը տակաւին հինգ տարի պիտի տևէ»։ Եւ Բենիամինի վզովն ընկնելով՝ համբուրեց նրան լաց լինելով. Նոյնպէս միւս եղբայրներին էլ մեծ գորովով, և նրանք հաւատացին նրան։

Զինք ճանաչեցնել, տալ ծանօթս
Պատուիրել, պատուէր տալ
Դեռ, տակաւին



Դեռ, տակաւին
Սառած և թմրած, պա- ղած եւ ընդարմացեալ
Հազիւ թէ, այն ինչ
Քաղաքից դուրս, ելած քաղաքէն
Զարհուրել, զահի հարկանել
Կորուստ գտնենալ, հնայել
Գողացողը, որ գողացաւ
Պատանի, պատանեակ
Մինչև ցմահ, կենաց չափ
Համբերել, ժոյժ ունիլ
Լաց լինել, յորդառատ հար- կանել
Կրկին ասաց, յաւել ասել
Մօտ գալ, մօտենալ
Ձեր տեսածը, զոր տեսէք
Աճապարել, փութալ
Վզովն ընկնել, անկանել ըզ- պարանոցաւն
Միւս եղբայրներն էլ, զայլս եւս յեղբարց իւրոց
Գորով, խանդաղատանք
Մեծ ձայնիւ, մեծաձայն

---

## 8

### ՅԱԿՈԲ ԳԱԼԻՍ Է ԲՆԱԿՎԵԼՈՒ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Յովսէփ հրաման տուաւ որ իւր եղբայրներից ամեն մինին երկերկու հանդերձ շինուի. իսկ Բենիամինի համար հինգ, շատ գեղեցիկ հանդերձներ շինել տուաւ, և երեք հարիւր արծաթի դահեկան տուաւ նրան։ Նոյնչափ դահեկան և ուրիշ շատ բաներ ուղարկեց իւր հօրը։ Նոյն իսկ թագաւորը կառքեր տանել տուաւ որ Յակոբին բերեն իրեններովն ու բոլոր ունեցածովն։ Յակոբ իւր որդկերանց բերանից լսելով եղած դէպքերը, թագաւորին կառքերն ու Յովսէփին ընծաներն էլ տեսնելով՝ գոչեց. «Այսուհետև մի բանի չեմ փափաքում, վասն զի որդիս Յովսէփը կենդանի է. դեռ չմեռած գնամ նրան տեսնելու»։ Ճանապարհ ելաւ Յակոբն իւր ընտանիքովն և բոլոր կարասիներովը, որ Եգիպտոսը գնայ։ Յովսէփ գրկեց իւր հօրը, ու նրա վզովն ընկնելով, արցունքովը թրջում էր նրան։ Յետոյ նրան ներկայացրեց Փարաւոնին, որ հարցրեց Յակոբին թէ քանի՞ տարեկան էր.

պանդխտութեան տարիների թիւը հարիւր և երեսուն է. իմ հայրերիս տարիներին թուից քիչ, և ցաւով ու հեծութեամբ լցուն»։ Յովսէփ Փարաւոնին հրամանաւը Գեսեմի, բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ ամենապտղաբեր երկիրն, իւր հօրը և եղբայրներին տուաւ իբրև ստացուածք։

Շինել, առնել (Հանդերձ) յօրինել
Ամեն մինին, միոյ միոյ
Շատ, յոյժ
Նոյն իսկ, գլխովին
Ունեցած, ինչք
Կարասի, կահ և կարասիք
Դիմաւորել, ելանել ընդ առաջ
Թրջել, թանալ

Եղած դէպքերը, գործք որ անցին
Փափաքել, ցանկալ
Դեռ չմեռած, մինչչև մեռեալ իցէ
Ճանապարհ ելնել, ելանել ի ճանապարհ
Ներկայացնել, հանել առաջի
Ստացուածք, ժառանգութիւն
Ամենապտղաբեր, պտղաբեր յոյժ

9

ՅԱԿՈԲ ԻՒՐ ՈՐԴԻՆԵՐԸ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՒ ՄԵՌՆՈՒՄ

Յակոբ Եգիպտոսում տասնեօթն տարի էլ ապրեցաւ։ Այն ժամանակ տեսնելով որ պիտի մեռնէր՝ երդումն անել տուաւ Յովսէփին որ իրան իւր հայրերի գերեզմանը թաղէ. յետոյ օրհնեց Յովսէփի երկու որդկերանց Եփրեմին և Մանասէին։ Յետոյ իւր բոլոր որդւոցն անկողնի շուրջը կանչելով՝ նրանց ամեն մինին խօսեցաւ և օրհնեց նրանց։ Ռուբէն որդուն յանդիմանեց նրա գործած մի յանցանքին համար. Շմաւոնին և Ղևինն էլ նրանց Սիւքեմացիներից առած անօրէն վրէժխնդրութեանը համար։ Երբ Յուդային եկաւ, ասաց նրան. «Դուն գովուիս քո եղբայրներից, և ձեռքդ քո թշնամիներիդ լծի տակ

---



հայրը մեռաւ, ընկաւ նրա վերայ և արցունքով համբուրեց նրան. Յետոյ Եգիպտացի դի պատողներին պատուիրելով որ նրա մարմինը մոմեայ անեն երկրին սովորութեանը համեմատ, նրան անձամբ եղբայրներին հետ Քանանու երկիրը տարաւ, ու մեծ պատուով դրաւ նրան Մակփելայ քարայր կոչուած գերեզմանում, Քեբրոնի մօտ։

Տասն և եօթն, եօթն և տասն
Ապրել, կեալ
Երդում անել, երդնուցուցանել
Յետոյ, յետ այնորիկ
Անկողնին շուրջը, շուրջ մահճօք խորովք
Ամեն մինին, մի մի
Գործած մեծ յանցանքին համար, վասն չարին մեծի զոր գործեալ էր

Նրանց առած վրէժխնդրութեան համար, վասն վրիժուցն զոր խնդրեալ էր նոցա
Դի պատող, դիապատիկ, դիէ, դիւոց
Լծի տակ դնել, արկանել ընդ լծով
Պատիւ, շուք
Մոմեա անել, պատել
Համեմատ, ըստ
Մեռնել, վախճանել
Գերեզման, շիրիմ

10

ՅՈՎՍԷՓԱՅ ՄԱՀԸ

Յակոբի մահուանից յետոյ Յովսէփի եղբայրները վախենալով թէ չլինի որ Յովսէփն իրենց արած վատութիւնը յիշէ, աղաչեցին նրան որ իրենց ներէ. Նա էլ նրանց քաղցրութեամբ և սիրով հանդարտեցրեց։ Յովսէփն այն ժամանակ յիսուն և վեց տարեկան էր, և յիսուն և չորս տարի էլ ապրեցաւ՝ միշտ սիրելի և յարգելի լինելով Եգիպտացւոց առաջ որոց փրկիչ եղած էր։ Իւր մեռնելուց առաջ ասաց իւր եղբայրներին. «Աստուած մի օր ձեզ նայելով պէտք է այստեղից մեր հայրերին տուած երկրումը տանի։ Երդումն արէք ինձ որ ոսկրներս ձեզ հետ կը տանէք»։

Նրանք էլ նրան երգումն արին։ Երբ Յովսէփն հարիւր տասը տարեկան վախճանեցաւ, նրա մարմինը զմռսուեցաւ (մոմեայ եղաւ) ու դագաղում դրուեցաւ՝ մինչև Իսրայէլի որդւոց Եգիպտոսից ելնելը Քանանացւոց երկիրն երթալու համար։

| | |
|---|---|
| Վախենալ, երկնչել, երկիւղել | Յարգելի, [illegible] |
| Զլինի որ, գուցէ | Առաջ, [illegible] |
| Առաջ, յառաջ քան զ... | Այստեղից, ասկէ |
| Նայել, այց առնել | Տուած երկիրը, երկիրն զոր ետ |
| Յիշել, յուշ ընել (տրակնվ.) | Երգումն անել, երդնուլ |
| Վատութիւն, չարիք | Հարիւր տասը տարեկան |
| Իրենց արած վատութիւնը, չարիքն զոր արարին | հարիւր և տասնամենի |
| | Դագաղ, տապանակ |
| | Ելնելը, ելք |

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ա.

### ՇՆԻԿ

Օրին մինը՝ մի տղայ մի առուի մօտ պտըրտելու է գնում, և հանդիպում է այնտեղ մի քանի չար տղայոց որ մի պզտիկ շուն առուի ջրերում ուզում էին խեղդել։ Տղան խեղճ պզտիկ անասունին գթում է, նրան գնում է և իրեն հետ տանն է բերում։ Շունը շուտով իւր բարերարին այնպէս է վարժւում, որ նա ուր որ գնար՝ նրա յետևից պտտում էր նրա հետ խաղալու և վրան ընկնելու։ Մի գիշեր երբ տղան ուզում էր անկողինը մտնել, շունը սկսաւ հաչել, և չէր թողնում նրան որ քնանայ։ Պատանին շանը ինչու համար հաչելը գիտենալ ուզելով՝ մի ճրագ առաւ, և երբ այս կողմ այն կողմ պտտում էր մի բան տեսնելու, յանկարծ անկողնին տակ ահռելի տեսքով մի մարդ տեսաւ, և հասկացաւ որ գող էր։



Վախից բղաւելուն պէս, բոլոր տանը մէջ եղողները եկան գլուխ ժողովուեցան, և գողին բռնելով դատաւորին մատնեցին։ Երբ հարց ու փորձ եղաւ, խոստովանեցաւ մարդը թէ միտք դրած էր մի մի սպանել՝ տանը մէջ եղողներին պատանուց սկսելով, յետոյ տունը կողոպտել։

Այն ժամանակ շնորհակալ եղաւ տղան Աստուծոյ որ այնպէս անվնաս ազատեց նրան, և ասաց. ով երբէք կարող էր երևակայել թէ մի շան ձագ (լակոտ) որին ես կեանքը փրկեցի՝ նա էլ պիտի փրկէր իմ կեանքս։

| | |
|---|---|
| (Մի առուի) մօտ, առ եզերբ | Խեղճ, հէգ |
| Խեղդել (ջրի միջին), հեղձուցանել | Վարժել մէկին, ընտելանալ |
| Յետևից, զկնի | Պտրտել, շրջել |
| Վրան ընկնել, ըստ անձին անկանել | Վախից, առ ահին |
| | Բոլոր տան մէջ եղողները, ամենեքեան որ ի տանն էին |
| Սկսել, սկիզբն առնուլ (չէզ) | Գլխին ժողովուեցան, խռնեցան զնովաւ |
| Քնանալ, ի քուն լինել | |
| Գիտենալ ինչու համար հաչելը, գիտել թէ ինչ էր վասն որոյ հաչէր | Միտքը դնել, դնել ի միտ |
| | Մի մի, մի ըստ միոջէ |
| Այս կողմ այն կողմ պտրտել, յածել այսր անդր | Սկսել, սկիզբն առնել (ներգ.) |
| | Կողոպտել, յաւարի առնուլ |
| Յանկարծ, յանկարծ | Շնորհակալ լինել, գոհանալ |
| Ահռելի տեսքով, ի կերպարանս ահաւորս | Անվնաս, [illegible] |
| | Ազատել, փրկել |
| Հասկացաւ, գիտաց | Երևակայել, մտաւ ածել |
| Բղաւելուն պէս, ի բառնալ նորա ձայն | Շան ձագ (լակոտ), կորիւն |

## Բ.

### ԼԱՒ ԴՐԱՑԻՆԵՐ

Մի ջրաղացպան ունէր մի պզտիկ տղայ, որ մի

առուի եզերքին մօտ խաղալու ժամանակը՝ ջուրն ընկաւ։ Մի ատաղձագործ որ առուին այն միւս կողմումն էր բնակւում՝ եղածը տեսաւ, և իսկոյն ջրի մէջ նետուելով տղային ողջ հանեց ու հօրը ներկայացրեց։ Մի տարի անցնելուց յետոյ՝ յանկարծ մի գիշեր ատաղձագործին տանը մէջ կրակ (ընկաւ) պատահեցաւ։ Բոցը տունը բռնելուց յետոյ ատաղձագործը իմացաւ, և հազիւ ազատեց զինքը, կինը և որդիքը։ Բայց ազատելու աճապարանքից մոռացան առնուլ ամենապզտիկ տղան որ իբր երկու տարեկան մի աղջիկ էր։ Տղային աղաղակը բորբոքած կրակի միջից լսւում էր. Հայրն ու մայրը դառը կերպով լալիս էին, բայց չկար մինը որ մտնելու և տղան ազատելու համարձակէր։ Այն ժամանակ ջրաղացպանը աճապարելով և կրակին մէջ դիմելով առնում բերում է տղային անարատ. և հօրը կը տայ ասելով. «Օրհնեալ լինի տէրը որ ինձ պատեհութիւն տուաւ քո ինձ արած երախտիքդ հատուցանելու. դուն իմ մանչս ջրից հանեցիր, ես էլ Աստուծոյ օգնութեամբը քո աղջիկդ կրակից ազատեցի»։ Երբ երկու տղերքն էլ չափահաս եղան, ջրից հանուողը կրակից հանուածը իրեն կին արաւ։

| | |
|---|---|
| Ջրաղացպան, ջաղացպան | Ամենապզտիկը, կրտսերագոյն |
| Այն միւս կողմը, յայնկոյս | Երկու տարեկան, ամաց երկուց |
| Եղածը, որ ինչ եղեւն | Լսուիլ, լսելի լինել |
| Իսկոյն, խոյս ի խոյս | Դառն կերպով, դառնապէս |
| Նետուիլ, արկանել զանձն | Համարձակել, իշխել |
| Ներկայացրեց, ած առաջի | Կրակի մէջ դիմելով, արշաւել ի հրդէհ անդր |
| Կրակ, հրդէհ | |
| (Բոցը) բռնել, ճարակել (բոցն) | Անարատ, անապական |
| Ազատել, զերծանել | Պատեհութիւն, ժամ դիպող |
| Զինքը, զանձն | Ինձ արած երախտիքդ, զե- րախտիսն զոր ինչ արարեր |
| Ազատելու աճապարելուց, առ փութոյ զերծուցանելոյ | Մանչ (զաւակ), ուստր |



| | |
|---|---|
| Աղջիկ (զաւակ), դուստր | Կին առնել, առնել կին |
| Չափահաս լինել, յարբունս հասանել | Ջրից հանուողը, որ հանեալ էր ջրոյ |

---

Գ.

ՎԱՐԴԻ ԾԱՌԸ

Մի աղքատ կին ունէր մի աղջիկ, որ մի վարդի մատաղ տունկ տնկեց հողէ ամանում, և բնակած խցին պատուհանին առջևը դրեց։ Գարնան օրեր էին, և տունկը վարդի կոկոններով (խօնչա) լեցուն էր. Օդը լաւ եղած ժամանակներ՝ աղջիկը վարդին ծառը պատուհանից դուրս էր թողնում, և իրիկնադէմին, երբ արևը մայր մտնելու վերայ լինէր, ներս էր առնում։ Պատահեցաւ որ մի երեկոյ փոյթ չարաւ տունկը պահելու, ինչպէս որ սովոր էր անել, քանզի ասաց թէ հարկ չէ, վասնզի օդը տաք և մեղմ է։ Բայց երբ առաւօտեան ելաւ, վարդին տունկը ցրտից չորացած տեսաւ։ Լալիս էր, երբ տունկին էր նայում, ու տրտմութիւնից ասում էր. ահա մի անմտութիւնն այնչափ աշխատութեանս արդիւնքը ջնջեց։ Այն ժամանակ մայրը պատասխան տուաւ նրան ասելով. այդ պզտիկ դիպուածը որ քեզ այնչափ ցաւ է պատճառում՝ կարող է քեզ մեծ երջանկութեան պատճառ լինել։ Սրանից սովորէ թէ ինչ որ ցուրտը ծաղկած վարդի տնկին արաւ՝ նոյնը անում է վարուց ապականութիւնն անմեղութեան, և թէ ինքզինք մոլութենէ զերծ պահելու համար շարունակ փոյթ և միշտ զգուշութիւն պէտք է։

| | |
|---|---|
| Հողէ աման, անօթ խեցեղէն | Իրիկնադէմ, ընդ երեկս |
| Բնակած խցին, խուցն յոր բնակէր | Արևը մարը մտնելու վերայ կլինէր, որժամ ի մուտս լինէր |
| Կոկոններ (վարդի), բողբոջ վարդից | Տրտմութիւնից, առ տրտմութեան |
| Օդը լաւ եղած ժամանակ [illegible] | Ջնջել, եղծանել |

| | |
|---|---|
| Աշխատութիւն, վաստակ | Զօրանալ, զօրանալ |
| Դիպուած, արկած, պատահար | Ցրտից, ի սառնամանեաց |
| Ցաւ, վիշտ | Երջանկութիւն, երանութիւն |
| Պատճառել, գործել | Սրանից, աստի |
| Կարող է, կրնայ | Սովորել, ուսանել |
| Պատահեցաւ, դէպ եղեւ | Ցուրտ, սառնամանիք |
| Փոյթ տանել, տանիլ փոյթ | Ծաղկած վարդ, վարդ որ ի ծաղկի է |
| Պահել, պահել ի պահեստի | Բարք, բարոյք, բարք |
| Հարկ չէ, չէ ինչ պիտոյ | Մոլութիւնից զերծ, սուրբ յախտից |
| Մեղմ, քաղցր | Տարունակ, յաճախ |
| Ելնել, յառնել | Միշտ, հանապազորդ |
| Առաւօտեան, ընդ առաւօտն | |

Դ.

## ԸՆԿՈՒԶԻ ԿԵՂԵՒՆԵՐԸ

Ծեր կոմսը Ա.. ճշմարտութիւնն ու արդարութիւնը շատ էր սիրում: Մի քանի չար մարդիկ այս բանիս համար նրան բարկացած էին, այնպէս որ միատեղ երդւում արին և նրան կորցնելու հնարք էին փնտռում: Եւ արդարև շատ սատկ տուին մի չարագործ մարդի որ նրան հետևեալ օրում գիշերանց սպաննել խոստացաւ: Անուշական կոմսը վերահաս վտանգին ամենևին չէր սպասում: Նրա քեռորդիները, սիրուն տղայք, իրիկնադէմին նրան եկան: Կոմսը նրանց գալուն վերայ ուրախանալով, հանեց պտուղ՝ խնձոր, տանձ և ընկոյզ: Երբ տղաքը մեկնեցան, կոմսն ուզեց քնել, և ինքզինքը Աստուծոյ պաշտպանութեանը յանձնելով՝ անկասկած քնեցաւ:

Բայց կէս գիշերուան պահերին չարագործը որ գաղտուկ տանը մտած էր՝ կամացուկ կոմսին սենեակը մտաւ, մինչ նա մի լաւ քնոյ միջին էր, մի պստիկ լապտեր էլ անկողնին մօտ վառւում էր: Չա-



րագործը դանակը հանելով և ձեռքը վեր վերցրած նրան էր մօտենում: Բայց յանկարծ սենեկին մէջ այնպէս մի շառաչիւն լսուեցաւ որ կոմսը քնից զարթնեց: Երբ ելնելով տեսաւ մարդը դանակը ձեռքում, շուտով առաւ զէնքերը որ անկողնի գլխի վերևը պատից կախ տրուած էին, և սպառնացաւ նրան սպաննել: Մարդը սարսափելով դանակը ձգեց ու թողութիւն էր խնդրում: Յետոյ բանտ մտնելու սպառնալով՝ իրեն խրատ տուողներին յայտնեց: Կոմսը մըտածում էր թէ այն շառաչիւն պատճառողն ինչ էր որ նրան քնից զարթնեցրեց: Աչքերն այս կողմ այն կողմ պտըտեցրած ժամանակը՝ տեսաւ որ տղերքը գետինը ձգած էին մի ընկուզի կեղև. որի վերայ կոխած էր չարագործը: Կոմսը զարմանալով ասաց. Աստուծոյ խնամքով մի ընկուզի կեղև ինձ ազատեց, և անզգամներն արդարութեան սրին մատնեց:

| | |
|---|---|
| Բարկանալ, զայրանալ | Կէս գիշերուան պահերին, ի հասարակ գիշերոյ |
| Ետևից ընկնել (հնարք փնտռել), ի խնդիր լինել | Գաղտուկ, գաղտ |
| Հետևեալ օրը, ի վաղիւ անդր | Կամացուկ մտնել, սպրդել մեղմով |
| Մօտենալ, մերձենալ | Մի լաւ, քաջ |
| Յանկարծ, յանկարծ | Անկողնին մօտ, առ անկողնոյն |
| Լսուիլ, լսելի լինել | Հանել (դանակը), մերկանալ |
| Շառաչիւն, դղրդիւն | Դանակ (սպաննելու համար), դաշոյն |
| Գիշերանց, գիշերոյն | Ձեռքը վեր վերցնել, ամբառնալ զբազուկ |
| Սպասել, ակն ունել | Այս կողմ այն կողմ պտըտցընել, յածել (զաչս) շուրջանակի |
| Վերահաս վտանգին, վըտանգին որ ի վերայ հասեր | Այնպէս ... որ ... մինչև |
| Իրիկնադէմ, ընդ երեկս | Զարթնել, զարթնուլ |
| Գալը, գալուստ | Ելնել, յառնել |
| Պտուղ, միրգ | |
| Ինքզինք յանձնել, յանձն լինել ի ... | |

Տուտով առաւ, ածապարէայ ա
Պատից կախ տրուիլ, չախխեալ
Գլխին վերևը, ի վերէյ
Սպաննել, հարջանել
Ձգել (դանակը), ընկէնուլ
Թողութիւն, չնորհէ
Ստիպուիլ, բռնադատուել(իլ)
Յայտնել, ի վէր հանել
Իրեն խրատ տուողները, ըն-
բըր ընելու
Պատճառել, գործել

---

Ե.

ՍԱԻՈՒՂԻ ԷՇԵՐԸ

Երեք հոգի Ամստերդամ քաղաքից ճանապարհ ելնելով մի գործի համար գնում էին միատեղ մի գիւղ։ Ճանապարհին վերայ տեսնում են մի ինչ—որ գիւղացու որ շտապով նրանց էր գալիս, և դէմքին տեսքից երևում էր որ վերջին աստիճանի տգէտ և ապուշ էր։ Երեք հոգին միմեանց ասում են. Եկէք սրան ծաղր անենք։ Այս ասում են և հեռանալով՝ իբր մի քարընկեց միմեանցից ջոկ ճանապարհի վերայ կենում են։ Երբ գիւղացին առաջինին մօտենում է, նրանից սա խօսքը կը լսէ. բարև հայր Աբրահամ, այս խօսքը լսելով գիւղացին նրան բարև կը տայ գլխով, և կանգնէ. Բարև։ Նրանից մի քիչ հեռու տեսնում է առաջինին միւս ընկերը, որ նրան ասում է. Բարև, հայր Իսահակ։ Սրան էլ գիւղացին նոյն բարև նոյն պատասխանը կը տայ։ Յետոյ այնտեղից յառաջ գնալով գտնում է երրորդին որ ասում է։ Բարև, հայր Յակոբ։ Այն ժամանակ գիւղացին նրանց միտքը հասկանալով, նրան ասում է. Կը խաբուիք պարոններ, ես Աբրահամ չեմ, ոչ Իսահակ, ոչ էլ Յակոբ, այլ Կիսեայ որդին Սաւուղն եմ, որ ելած եմ հօրս էշերը փնտռելու. բայց զարմանք, մերոնք էգ էին, իմ գտածներս արու են։

Հոգի, այր
Ճանապարհ ելնել, յուղի անկանել
Ճանապարհին վերայ, ընդ ճանապարհայն



Գիւղացի, շինական
Դէմքին տեսքից, յերեսաց տեսլենէ
Միմեանցից ջոկ, բաժագոյն
Շտապով, շտապա
Տգէտ և ապուշ, տխմար և պանդայր
Վերջին աստիճան, ծան
ըստ մեծագոյն չափու
Ծաղր անել, ծաղր առնել
դ... (գործ)
Յառաջ գնալ, յառաջ մատչել
Բարև, ողջ լեր
Այս խօսքը լսելով, առ այն բան
Բարև տալ, տալ ողջոյն
Գլխով, նշանաւ գլխոյն
Միւս, միւս եւս
Հասկանալ, ի վերայ հասանել
Միտք, խորհուրդ
Պարոն, տէր
Զարմանք, բան է
Էգ, մատակ
Իմ գտածներս, զոր ես գը-
տանեմ

---

Զ.

ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐ

Յովսէփ երկրորդ, Գերմանացւոց կայսրը, իբր մի անծանօթ արած առաջին ճանապարհորդութեան ժամանակ սուրհանդակների մի կայան հասնելով՝ ձիերը փոխելու համար սպասում ձի չգտաւ։ Սուրհանդակապետն անծանօթ անձին ասաց որ մի փոքր սպասիր. խոստովանելով որ ձիերը ուղարկած էր իւր որդւոյն կնունքին հրաւիրուած ազգականներն ու բարեկամները բերելու։ Կայսրը մարդուն հետ խօսակցութիւն սկսելով, և նրան ողջամիտ և հայրենասէր գտնելով՝ յայտնեց նրան թէ կը բաղձայ որդւոյն լինել կնքահայր։ Սուրհանդակապետը նրա առաջարկութեան վերայ զարմացաւ, բայց և այնպէս անծանօթ մարդին նախամեծար համարելով իւր եղբօրորդուց որ երկրագործ էր՝ հաճելով յանձն առաւ։ Երբ եկեղեցին գնացին, պաշտօնը սկսաւ։ Մկրտող երէցը կայսեր հարցրեց. անունդ ի՞նչ է. անունս՝ Յովսէփ է անունս։ Մականունդ (ազգանունդ) ինչ է, կրկնեց երէցը։ Ի՞նչ պէտք է քեզ այդ

տսաց կայսրը, ինձ երևում է որ Յովսէփ անունը բաւական է։ Ոչ, պարոն ասաց երէցը. ուզում ենք ընտանիքիդ մականունն էլ գիտենալ։ Եթէ այնպէս է, ասաց այն ժամանակ կայսրը, մականունս է Յովսէփ երկրորդ, կայսր Գերմանիոյ։ Երէցն ու այնտեղ եղողները ապշեցան, սուրհանդակապետն էլ թագաւորին ոտքն ընկաւ, որ նրան վերցրեց մարդասիրաբար, և նրան շատ պարգևներ տալով խոստացաւ որ իւր սանիկին յիշատակը չմոռանալ։

| | |
|---|---|
| Իբրև մի անծանօթ արած, իբր օտար յանծանօթս | Բաղձալ, յանկալ |
| Ախոռ, ախտապան | Երկրագործ, հողագործ |
| Ձի, ձի, երիվար, նժոյգ | Հաճել, հաւանել |
| Մի փոքր, սակաւիկ մի | Մկրտող, կնքաւոր (երէցն) |
| Ուղարկել, յուղարկել | Մականուն, (ամէնի անուն,) անուն յորջորջանաց |
| Կնունք, կնիք | Բաւական, շատ |
| Խօսակցութեան սկսել, ըն- բանիւ առնանել | Ընտանիք, ազգատոհմ |
| Յայտնել, յայտ առնել | Այնտեղ եղողները, որ անդ կային |
| Նախամեծար համարել, նախամեծար առնել | Ապշել, յապուշ կրթել |
| Հօրեղբօր որդի, հօրեղբօր ուստր | Վերցնել, յարուցանել |
| | Շատ պարգևներ, ձեռնար- գել ձեռարել |

## Է.

### ԱՆՑԵԱԼ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Դիոն աքսորուելով ապերախտ Սիրակուսացիներից ապաւինեցաւ Մեգարացւոց քաղաքը, ուր Պրոդոտոս անունով մէկը իշխում էր։

Երբ պատահեցաւ որ սա մի օր մինի կողմից իրեն եղած մի անիրաւութեան համար իրաւունք էր պահանջում, իշխանին պալատն երթալով նրան ներկայանալ կամեցաւ, բայց մէկի հոգը չեղաւ այս երեւելի անձին առաջին մեծութեան արժանի պա-



տիւ անել նրան։ Ձիգ ժամանակ նրան սպասել տալուց յետոյ՝ պատասխան տուեցաւ թէ Պրոդոտոս կարևոր գործերով զբաղած լինելով չէ կարող այն օրում նրան ընդունելութիւն անել։

Դիոնի բարեկամները որ նրա հետն էին, զայրանում էին որ իբրև անարգ մէկի հետ վարուեցան այն սքանչելի անձին հետ, որ իշխանութեան մէջ եղած ժամանակը միշտ մարդասիրաբար վարւում էր իրեն դիմողներին հետ։

Բայց Դիոն առանց տրտնջելու ասաց նրանց հանդարտութեամբ. բարեկամներ, թերևս ես էլ նոյնն արած եմ Սիրակուսայի մէջ իշխան եղած ժամանակս։ Ժամանակ անցնելուց յետոյ այս մեծ անձն իւր հայրենիքն ազատեց Դիոնէսիոս բռնաւորից որ երկիրը հարստահարում էր, և խաղաղութիւնն ու արդարութիւնը նորից հաստատեց. բայց սպանուեցաւ Աթենացի Կալիպպոսից որ նրա հիւրն ու բարեկամն էր։ Իսկ Դիոնէսիոս բռնաւորը Սիրակուսայից աքսորուելով եկաւ բնակեցաւ Կորնթոս, ուր վարժապետ լինելով աղքատութեան մէջ մեռաւ։

| | |
|---|---|
| Աքսորուել, տարագիր լինել | Պատիւ առնել, տալ մեծա- րանս երեսաց |
| Ապերախտ, ապաշնորհ | Մեծութեանն արժանի, արժանի լալ մեծութեան (նորա) |
| Ապաւինել, ապաստան լինել | Իրեն դիմողներին հետ, ընդ որս դիմեցին առ նա |
| Ձիգ ժամանակ, հարուստ մի | Իշխան եղած ժամանակս, մինչդեռ էի իշխան |
| Ջայրանալ, զայրել | Ժամանակ անցնելուց յետոյ, յետ ժամանակաց |
| Եղած ժամանակը, մինչ- դեռ էր | Անձն, այր |
| Վարուել, գնալ | Նորից, միւս անգամ |
| Իշխել, վարել զիշխանութիւն | Վարժապետ, դաստիարակ |
| Պատահել, դէպ լինել | |
| Պալատ, ապարանք | |
| Ներկայանալ, յանդիման լինել | |
| Հոգը լինել, լինել փոյթ (որ.) | |

## Ը.

### ԳՈՂՆ ՈՒ ԽՈԶԸ

Երկու մարդ ու մի արջ էին պտըտացնում՝ մի օր իրիկնադէմին շատ ուշ մի գիւղ հասնելով իջան մի իջևանում ուր ուզում էին այն գիշերն անցկացնել։ Պանդոկապետը որ իւր պարարեալ խոզը նոր ծախած էր՝ արջն այն ախոռում դրաւ ուր առաջ խոզը կապում էր։ Կէս գիշերուան ժամանակները մի գող որ ցերեկը եղածին տեղեակ չէր՝ գաղտ պանդոկում մտնելով ուզում էր պարարած խոզը տանել։ Կամացուկ ախոռին դուռը բանալով մթան մէջ խարխափելով ներս է մտնում, և փոխանակ խոզին զոր գտնել կարծում էր՝ բռնում է արջին, որ ոտք ելնելով ահռելի ձայնով երկու թաթերը մարդուն վերայ նետում է, և այնպէս ուժով պնդում (պրկում) է նրան, որ մարդը չէր կարող շարժել։ Վախն ու տագնապն նրա ողբալի աղաղակներ հանել են տալիս, այնպէս որ պանդոկում բոլոր քնացողները նրա բղաւելուց ցատկելով զարթնում են, և դժուարաւ կարողանում են արւէն լընում են, և դժուարաւ կարողանում են արւէն լը-
նում են, և դժուարաւ կարողանում են արւէն լը-

Պտըտեցնել, շըրջեցուցանել
Իրիկնադէմին, ընդ երեկս
Շատ ուշ, խորին անագան
Գեղ, շէն
Իջնել (ճանապարհորդի), լուծանիմ
Իջևան, պանդոկ
(Գիշեր) անցնել, անագանել
Ցերեկը եղածին, որում տեղեկացեալ ցերեկ
Գաղտ մտնել, սպրդել
Կամացուկ, մեղմով իմն

Խարխափելով, առ խարխափ
Բռնել, բուռն հարկանել զ(ըզ.)
Ոտք ելնել, յոտն կալ
Ահռելի, ահագին
Ձայն, աղաղակ
Թաթ, ճանկուլ
Նետել, արկանել
Ուժով պնդում է նրան, խիստ բուռն արկեալ էր զնմանէ
Վախ, ահ
Պարարեալ, պարարակ
Նոր, այն ինչ



Գտնել (ախոռը), գտանել
Խոզ, խոզ, խոճկոր
Ախոռ (եզան, ոչխարի ևլն), գոմ
Առաջ, յառաջագոյն
Կէս գիշերուան ժամանակները, ընդ մէջ գիշերաւ
Աղաղակ հանել, բառնալ աղաղակ
Ողբալի (ձայն) (աղաղակ) գուժի և ողբոց

Ցատկելով զարթնել, զարթնուցեալ ընդոստ
Բղաւելու ձայն, աղմուկ
Պանդոկում բոլոր քնացողները, ամենեքեան որ ննջէին ի պանդոկին
Դժուարաւ, հազիւ ուրեմն
Կարողացան, հասանէր նոցա (Թափել)
Ազատուելուն պէս, այն ինչ զերծեալ

---

## Թ.

### ԵՐԽՍԻՑ ԸՆԿԱԾ ՊԱՇՏՕՆԵԱՆ

Պարսից թագաւորներից մինը իւր պաշտօնեանների գլխաւորին բարկանալով՝ նրան իշխանութիւնից ձգեց և նրա տեղ մի ուրիշի է դնում։ Բայց մի շնորհք անելու համար՝ թոյլ է տալիս նրան որ բոլոր ընտանեօքը խաղաղութեամբ բնակելու համար իրեն մի տեղ ընտրէ, բոլոր ստացուածն էլ նրան է շնորհում։ Բայց պաշտօնեան թագաւորին ասում է. Ի՞նչ պէտք են ինձ սրանից յետոյ այն ստացուածները զոր ինձ ուզում է շնորհել ձեր վեհափառութիւնը. աղաչում եմ, հրաման տուէք որ ամենն էլ ինձանից առնուի. բայց հաճի ձեր վեհափառութիւնը խնդրածս կատարել. ցոյց տուի ինձ ձեր տէրութեանը մէջ անպիտան և ամայի մի գիւղ կամ մի աւան զոր խնամելով շէնացնեմ։ Այն ժամանակ պաշ-
Հրաման տուեց թագաւորը որ մարդ հանուի՝ պաշտօնէին փափաքածին պէս մի տեղ փնտռելու. բայց թագաւորից ուղարկուածները գալով լուր տուին թէ բոլոր տէրութեան մէջ գիւղ կամ աւան և կամ բնակութեան մի տեղ չ'կար որ անշէն և անմշակ լինէր։ Այն ժամանակ պաշտօնեան թագաւորին ասում է.

Լաւ գիտէի, արքայ, որ ինձ կառավարելու յանձնուած բոլոր երկրում չ՚կայ բնաւ աւերուանընակ մի տեղ խնդրած ժամանակս՝ նպատակս էր առիթ տալ որ անձամբ հասկանաք թէ ինչպէս շէն և ծաղկած ձեզ եմ դարձնում երկիրը։ Երանի թէ ձեր վեհափառութիւնը գտնէր մի ուրիշ պաշտօնեայ որ կարող լինէր յետոյ նոյն վկայութիւնը տալ իւր վերայ։

Մինը, [illegible]
Բարկանալ, [illegible]
Զգել (իշխանութիւնից), [illegible]
Գնել, [illegible]
Թոյլ տալ, [illegible]
Տեղ, [illegible]
Բնակելու համար տեղ, [illegible]
Պէտք, [illegible]
Ինչ, [illegible]
Ստացուած, [illegible]
Ձեր վեհափառութիւն, [illegible]
Հաճել, [illegible]
Խնդրածս, [illegible]
Կատարել, [illegible]
Անպիտան, [illegible]
Շէնացնել, [illegible]
Մարդ հանել, [illegible]

Ուղարկուածները, [illegible]
Լուր, [illegible]
Անշէն, [illegible]
Լաւ (գիտենալ), [illegible] (գիտել)
Անբնակ, [illegible]
Ինձ կառավարելու յանձնուած երկրում, [illegible]
Խնդրած ժամանակս, [illegible]
Նպատակ, [illegible]
Առիթ տալ, [illegible]
Հասկանալ, [illegible]
Ծաղկած, [illegible]
Դարձնել, [illegible]
Կարող լինել, [illegible]
Երանի թէ, [illegible]
Յետոյ, [illegible]
Փափաքածին պէս, [illegible]

---

## Ժ.

### ՄԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ

Կարոլոս ԺԲ. Պետրոս մեծից Բուլդաւայի մօտ



յաղթուելուց յետոյ՝ երեք Սուետացի գիւղականք հայրենասիրութեան մի զարմանալի օրինակ տուին։ Սրանք իմանալուն պէս որ Սուէտի թագաւորն յաղթուեցաւ և մեծ կարօտութեան մէջ էր, իրենց բոլոր աւելորդ բաները՝ կարասի, հանդերձ, զարդ, չոր խոտ և անասուն հաւաքելով, նրանք մօտ քաղաքներից մէկում ծախելու գնացին, և նրանցից մինը ծախուածի գինն առնելով և մի ձի հեծնելով՝ աճապարանօք Սուէտի բանակն հասաւ։ Ո՞ւր է թագաւորը գոչում էր պահապաններին հեռուից, գիս նրան տարէք, նրան մի բան պէտք է ասեմ։ Պաշտօնակալներից մինը նրան մտիկ անելով՝ նրան Կարոլոսին առջևը տարաւ։ Երբ գիւղային թագաւորին մօտ մտաւ՝ մէկից ծնկան վերայ գալով ծոցից երկու քսակ ոսկի հանեց, և թագաւորին տուաւ՝ յայտնելով նրան թէ ինչպէս մի տեղ բերած էր այն գումարը երկու ընկերներովը։ Կասուի թէ Կարոլոս մարդուն պատմուածքը լսելով արտասուքով շարժեցաւ, և ասաց. Ազնուականներից և ոչ մինը մի այսպիսի հաւատարմութեան ապացոյց տուաւ։ Յետոյ խոստացաւ գիւղացուն նրա հայրենասիրութեանն իբր վարձ՝ նրան ազնուականութեան աստիճանի բարձրացնել, բայց երբ նա յանձն չառաւ և ընտրեց յաւէտ իւր վաղեմի բարեկամներին հետ իւր աստիճանին մէջ մնալ, թագաւորն իւր առջև գրել տուաւ մի հրովարտակ որով այն ազնուամիտ գիւղային և նրա երկու ընկերները բոլորովին հարկէ ազատ էր անում, և իւր շնորհակալութիւնը ցոյց տալու համար՝ մօրուքից մի քանի թել պոկելով կնքած հրովարտակի կնքամամին տակ դրաւ։

Յաղթուիլ, [illegible]
Գիւղական, [illegible]
Մէկից, [illegible]
Յայտնել, [illegible]

Սրանք իմանալուն պէս, [illegible]
Յաղթուիմ, [illegible]

Իրենց բոլոր աւելորդ բաները, զամենայն ինչ որ աւելորդ էր նոցա
Չոր խոտ, խոտ
Ծախուածին գինը, զգին վաճառուցն
Աճապարանօք հասաւ, աճապարեալ հասանէր
Պահապան (զօրք), պահապանք
Հեռուից, ի հեռաստ
Ձեռս նրան տարէք, կալէ՛ք զնա
Մի բան պէտք է ասեմ, ունիմ ինչ ասել
Մտիկ անել, անսալ
Ծնկան վերայ գալով, ի ծունր անկեալ
Պոկել, խլել
Մի տեղ բերել, ածել ի մի վայր
Յարտօսր շարժեցաւ, յարտասուս հարաւ
Ապացոյց տալ, ցուցանել ընդ հանդէս
Վարձ, հատուցումն
Բարձրացուցանել, ամբառնալ
Յաւէտ, մշտնջենաւոր
Վաղեմի, վաղնջուց
Ազնուամիտ, բարեկիրթ
Հարկից ազատ անել, առնել ապահարկ
Իւր շնորհակալութիւնը ցոյց տալու համար, ի հանդէս շնորհակալութեան իւրոյ
Մի քանի թել, սակաւ ինչ
Կնքած հրովարտակի կնքամոմին տակ, ընդ մոմով կնքոյն որով կնքէր զհրովարտակն

---

## ԺԱ.

### ԱՂԷՔՍԱՆԴՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ

Փարոսի աշտարակը որ Պտղոմէոս եղբայրասիրի հրամանաւ շինուեցաւ՝ աշխարհիս եօթը հրաշալեաց մինն էր, և ուրիշ նրա նման աշակերտներ որ նաւավարների առաջնորդութեան համար յետոյ շինուեցան՝ նոյն անունն առին։ Այն քառանկիւնի, ճերմակ մարմարէ, բազմայարկ մեծ մի շինութիւն էր, և ունէր կատար որի վերայ ամեն գիշեր մեծ կրակ էր վառւում, զոր նաւավարներ շատ հեռուից կարող էին տեսնել։ Շինութեան ձեռ հանող և գործը լրացնող ճարտարապետը կոչւում էր Սոստրատոս։



Սա իւր ճարտարութեան համբաւը յետնոց թողնել փափաքելով, և իւր անունը թագաւորին անուան հետ դնել չհամարձակելով՝ մի այսպիսի միջոց խորհեցաւ։ Շինութեան ճակատը կրով ծեփելով վրան թագաւորին համար գովեստի խօսքեր գրեց, իսկ ծեփին տակը քարին վերայ մի ուրիշ գրուած փորագրեց։ Իբր մի դար յետոյ ծեփը թափելով՝ Պտղոմէոսի վերայ գրուածը ջնջուելով կորաւ, տակում փորագրուածը միայն երեւում էր մեծամեծ նշանագիրներով այսպէս. «Սոստրատոս Կնիդացի, փրկիչ աստուածներին՝ նաւարկութեան օգտին համար»։

Հրաշալիք, հրաշալիքս
(Հրաշալեաց) մինն էր, էր ի մին հրաշալեաց
Շինութիւն, շինուած
Քառանկիւնի, չորեքանկիւնի
Մարմար, կիճ, կճի, կճէ
Կրակ, խարոյկ
Շատ հեռուից, բացուստ, ի բաց
Տակը, ի ներքոյ
Ուրիշ գրուած, այլ ինչ գիր
Փորագրել, դրոշմել
Թափել, թօթափել
Ձեռ հանող, որ ար չէ
Լրացնել, ի գլուխ հանել
Յետնոց թողնել, թողուլ յետոյ
Համարձակել, իշխել
Անուանը հետ դնել, կցել անուան
Միջոց, հնարք
Կիր, բոռ
Ծեփ, ծեփած
Կորաւ, անհետ եղև
Պտղոմէոսի վերայ գրուածը, որ ինչ զՊտղոմէոսն գրեալ էր
Տակը փորագրուածը, որ ի ներքոյն դրոշմեալ էր
Փրկիչ, կենարար

---

## ԺԲ.

### ԴՐՕՇ

Մի գերձակ մեռնելու հիւանդութեան մէջ ընկնելով՝ երազում մի զարմանալի բան է տեսնում։ Նրան երեւում էր թէ վերջին ատեանում կենում էր, մահուան հրեշտակն էլ կեցած բաց էր անում նրա

առաջ մի շատ մեծ դրօշ, տեսակ տեսակ կերպասների կտորներից շինուած, զորոնք նա ժամանակ ժամանակ իւր յաճախորդներից գողացած էր։ Նոյն վայրկենում նրան երևում էր թէ դժոխքն էր մտնում։ Մարդն այն տեսարանից վախենալով քնից զարթնելով ելաւ՝ բոլորովին սառն քրտնքում։ Այս երազն Աստուածանից իրեն մի ազգարարութիւն համարելով, ուխտ արեց որ էլ չ'գողանար, եթէ ողջանար հիւանդութիւնից։ Փոքր ժամանակից յետոյ իւր հիւանդութիւնից առողջանում է, և որովհետև իւր առաքինութեանը վստահ չէր, պատուիրում է իւր գործաւորներից մինին որ դրօշն իրեն յիշեցնէ, երբ մի շոր կտրելու լինի։ Մարդը մի ժամանակ հաւատարիմ մնալով յետոյ իւր ուխտում՝ մի օր թանգագին կերպասից մի շոր կտրած ժամանակը ագահութեան հոգուց փորձուելով ջիջանում է ընչասիրութեան, և կտաւից մի մասը գողանում է։ Յիշեցնող մարդը պարապ տեղ նրա այդ ազգարարութիւն անում է որ դրօշն յիշէ։ «Դու էլ դրօշովդ չափազանց ձանձրացնում ես ականջներս, ասում է նրան դերձակը. երազում տեսած դրօշիս միջին այս տեսակ կերպաս չ'կար»։

Մեռնելու հիւանդութիւն, ախտ մահացու
Մի բան, ինչ
Երազում, յանուրջս
Կեցած բաց էր անում, կայր և պարզէր
Հիւանդութիւնք, ցաւք
Ու որովհետև, և զի
Պատուիրել, պատուէր տալ
Յիշեցնել, յուշ առնել
Կոտր, ջոկոր
Տեսակ տեսակ, ազգի ազգի
Ժամանակ ժամանակ, ըստ ժամանակս ժամանակս
Գողանալ, կորզել
Նոյն վայրկենում, ի նմին ժամու
Մտնել, մտել
Տեսարան, տեսիլ
Վախենալ, զարհուրել
Քնից զարթնելով ելաւ, յառ-



Բոլորովին սառն քրտնքում, համակ ի քրտան ցուրտ
Ազգարարութիւն, ազդ
Ուխտ անել, դնել ուխտ
Էլ, այլ ևս
Ողջանալ, առողջանալ ողջանալ
Փոքր ժամանակից, յետ սակաւ միոյ
Իրաւ, արդարև
Կորելու լինի, դէպ լինէր ... հանդիպել
Մի ժամանակ, առժամանակ մի
Հաւատարիմ մնալ, կալ հաւատարմութեամբ
Կորած ժամանակը, ի հատանել նորա
Նոր, հանդէպ
Թանգագին, մեծագին
Ջիջանել, ջնջել զօղ
Ընչասիրութիւն, ընչաքաղցութիւն
Ազգարարութիւն անել, ազդ առնել
Պարապ տեղ, ի զուր
Յիշեցնող մարդը, այն յուշարար
Յիշել, զմտաւ ածել (միտքը բերել)
Ջափազանց, չափէ ի դուրս
Ականջ, ունկն
Երազումս տեսած դրօշիս միջին, ի դրօշն զոր տեսի յերազի
Այս տեսակ, այս գունակ
Ջկար, չգոյր

---

ԺԳ.

ՍԱՓՐԻՉՔ

Մի սափրիչ որի գործն էր մօրուք ածելել և մազ կտրել՝ շատ յաճախորդներ իրեն ձգելու համար խանութի դուրսը որմին վերայ նկարել տուեց մի մարդ որ ծովն ընկնելով խեղդուելու մօտ էր, և մի ուրիշ նրա վերայ գթալով՝ լողալով գալիս էր ջրից հանելու համար նրան, բայց բռնելու ժամանակ մազերից որ ճշմարիտ չէին՝ սուտ մազը միայն մնում է ձեռքում, և ազատել ուզած մարդը ընկղմելով խեղդւում է։ Այս պատկերին վերայ մեծ տառերով արձանագրուած էր այսպէս. Վայ նրանց որ կեղծ մազ ունին։ Սրա գրուած էր այսպէս. Վ․․․ նրանց որ կեղծ մազ ունին։ Սրանով ուզում էր իմացնել թէ կեղծ մազերը վնասակար են։

նել, երբ տեսաւ որ շատերն իւր արուեստակցին օրինակից համոզուելով կեղծ մազ գործածելուց յետ էին կենում, իրեն եղած վնասին առաջն առնելու համար սա հնարքը խորհեցաւ: Նոյնպէս իւր խանութին ճակատը նկարել տուաւ Աբիսողոմը՝ մազերով կախուած ծառից և տակը գրեց այսպէս. Երանի՜ թէ մազերը կեղծ լինէին: Պատմութիւնն այս զարմանալի մրցման ինչ վախճան ունենալուն վերայ մի բան չի ասում, բայց այժմեան սովորութիւնը ցոյց է տալիս թէ կեղծ մազերը խափանուեցան, այլ անշուշտ նորից ելնում են. պէտք է համբերել: Սրա պէս շատ հրաշքներ գործած է նորաձևութիւնը:

Սափրիչ, վարսավիրայ
Ածիլել, գերծուլ
Մազ կտրել, հերս քերթել
Խեղդուիլ, հեղձնուլ
Մօտ, մերձ
Լողալով, ի լող
Բռնել, բուռն հարկանել
զ (բաց.)
Սուտ մազ, գիսակ
Միայն, [illegible]
Ընկղմելով խեղդւում է, ընկղմեալ լինէր ծովամոյն
Տառ, նշանագիր
Իրեն ձգել, յինքն քարշել
Խանութ, [illegible]
Առաջն առնուլ, առնուլ զառաջն
Սա հնարքը խորհեցաւ, հնարեցաւ այսպիսի ինչ
Մազից, ի հերացն

Ծառից (կախուած), կախեալ ի ծառոյ
Տակը, ի ներքոյ
Երանի թէ, իցէ՜ թէ
Կեղծ մազ, պիտակ հերք, [illegible] վարսք
Իմացնել, յայտ առնել
Գործ, արուեստ
Համոզուիլ, հաւանել
Յետ կենալ, ի բաց կալ
Գործածել, արկանել ի կիր
Նորից ելնել, յառնել միւսանգամ
Համբերել, երկայնամիտ լինել
Մրցում, [illegible]
Զարմանալի, նորանշան
Մի բան վախճան ունենալ, ելք [illegible]
Այժմեան, այժմու
Անշուշտ, ապաքէն
Հրաշք, նշան



## ԺԴ.

### ՄԻ ՀԱՆՃԱՐԵՂ ԽՐԱՏ

Մեծ զօրութեան տէր մի երիտասարդ իշխան Հնդկաստանում թագաւորում էր, և որովհետև շատ ինքնահաւան և հպարտ էր, իրեն և իւր հպատակներին շատ վնաս էր անում: Նրա հաւատարիմ ծառաները պարապ տեղ իմացնում էին նրան թէ մի թագաւորի ամենամեծ զօրութիւնն՝ իւր հպատակների սէրը շահելն է: Նրա այս խրատ տուողներից շատերն աչքից ընկան և պատժոյ ենթակայ եղան: Մի իմաստուն մարդ ուզելով թագաւորին համոզել նրան առանց բարկութեան շահելու, նարդի խաղը հնարեց, ուր թագաւորը, թէպէտ ուրիշ անձինքներից երևելի է, առանց հպատակներին և զինուորներին օգնութեանը մի բան չէ կարող անել: Երիտասարդ թագաւորը, բնականից հանճարեղ լինելով, խրատին զօրութիւնը հասկացաւ ու վարքը փոխեց, և այնպէս վերահաս չարեաց առջևն առաւ:

Խաղը հնարողին երախտեացը հատուցումն անել ուզելով, նրա հարցրեց թէ ինչ փոխարէն խնդրում էր. այն էլ խնդրեց որ իրեն այնչափ հատ ցորեն տայ որչափ որ նարդին տախտակի վերայ խորշեր կային, սա պայմանաւ որ ցորենի հատերին թիւը միշտ կրկնուէր՝ առաջին խորշից մինչև վերջինը որ վաթսուն և եօթներորդ է: Թագաւորն անմիջապէս նրա խնդիրքը շնորհեց դեռ չքննած. բայց յետոյ հաշիւ անելով գտաւ որ Հնդկաստանի բոլոր հունձքը բաւական չէին խոստացածը կատարելու: Սրանից առիթ առնելով իմաստունը ցոյց տուեց երիտասարդ թագաւորին թէ որչափ հարկաւոր է որ մի թագաւոր իւր շուրջն եղողներից զգոյշ լինի, և նրանց չթողու՝ որ իրենց արած բարերարութիւնները վատի գործածեն:

Երիտասարդ, մանուկ
Մեծ զօրութեան տէր, մեծազօր

Հնդկաստան, Հնդիկք
Եւ որովհետեւ, և զի
Ինքնահաւան, սէգ
Հպարտ, ամբարտաւան
Տատ, մամ
Անել, գործել (վնաս)
Իրեն անձին, անձին իւրում
Հաւատարիմ ծառայք, բա-
րեկիրք
Նարտի խաղ, խաղ ճատրակի
Երեւելի, նշանաւոր
Մի բան չի կարող անել, չէ
ինչ հնարաւոր
Բնականից, ի բնէ
Հասկանալ, ի միտ առնուլ
Զարիք, աղէտք
Վերահաս, որ մօտ առ դրունս
կայցէ
Հնարող, որ գտանէ հնար
Երախտեացը հատուցում
անել, երախտահատոյց լինել
Փոխարէն, ի փոխ
Բազմապատկել, կրկնել
Անմիջապէս, առժամայն

Իմացնել, ազդ առնել
Ամենամեծ, քան զամենայն մեծ
Այս խրատը տուողներից
շատերը, բազումք որք
զայս խրատ ետուն
Աչքից ընկան, յաչաց ելանել
Պատժոյ ենթակայ եղան,
անկան ընդ պատժովք
Համոզել, հաւանեցուցանել
Բարկութեան շարժել, գրգ-
ռել ի ցասումն
Դեռ չքնած, մինչ չեւ ննջեալ
Հաշիւ անել, ի հաշիւ արկանել
Բոլոր, համօրէն
Հնդկաստան, աշխարհն Հնդկաց
Առիթ առնել, պատճառս առ-
նուլ
Խոստացածը, զոր խոստացան
Հարկաւոր, կարեւոր
Զգոյշ լինել, զգոյշ կալ
Շուրջն եղողները, որ շուրջն
կան
Զթողուլ, չտալ
Վատի գործածել, եղծանել
(գործիականով)

---

## ԺԴ.

## ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ուէստմինստէրի մեծ դպրոցին աշակերտներին երկու դասերի մէջտեղում մի վարագոյր կար նրանց միմեանցից բաժանելու համար: Պզտիկ աշակերտներից մինը մի օր չգիտենալով (առանց գիտման) [illegible] և որովհետեւ տղան բնու-



թէ պատիժ ընդունէր վեհակացուից որ մի խիստ մարդ էր: Տղայի աշակերտակիցներից մինը որ նրանից մեծ էր տարիքով՝ նրան հանդարտեցրեց խոստանալով նրան թէ յանցանքն իւր վերայ առնում է և ինք կրում է պատիժը: Բաւական տարիներ յետոյ ընտանի պատերազմ եղաւ Անգղիայում, և այս երկու տղայոց որ արդէն չափահաս էին՝ ամեն մինը մի կուսակցութեան կողմնակից եղաւ. մինը ռամկապետաց կողմից էր, միւսն էլ թագաւորական կողմից: Երբեմն մի կուսակցութիւնը, երբեմն միւսը յաղթելուց յետոյ, ռամկապետականք յաջողելով թագաւորի զօրքին բոլոր վերին պաշտօնակալները բռնեցին: Նրանց համար դատաւորներ դրուեցան, այն վախկոտ աշակերտն էլ որ արդարադատութեան հետեւած էր՝ այն դատաւորներից մինն եղաւ: Դատուելու համար ատեան բերուողների անունների միջին լսելով իւր աշակերտակցին և բարեկամին անունը, զոր դպրոցից ելնելուց ի վեր տեսած չէր, սիրտը շարժեցաւ. ուշադրութեամբ նրան նայեցաւ և իրեն այնպէս երեւեցաւ որ այն էր, և նրան մի քանի բան հարցնելով ստուգեց որ իրօք այն է եղել, և առանց ինքզինքը յայտնելու նրան շուտով ճանապարհ ելաւ Լոնտրա գնալու: Այնտեղ պէտք եղած անձանց մօտ բանեցրած ազդեցութեամբն ու ջանքովը յաջողեցաւ իւր բարերարն ազատելու այն պատժից որից նրա ընկերներից մինը չկարողացաւ ազատել:

Մէջտեղ, ի մէջ
Միմեանցից, բաժանելու
համար անջրպետ
Զգիտենալով, յանգէտս
Բնութեամբ, ի բնէ
Վախկոտ, երկչոտ
Չլինի թէ, գուցէ
Պատիժ, պատուհաս

Տարիք, տիք, տիոց
Ինք կրում է, անձամբ կրել
Բաւական տարիներ յետոյ,
յետ ոչ սակաւ ամաց
Ելնելուց ի վեր, յորմէ հետէ
Պէտք եղած անձանց մօտ,
առ որս անկ է
Ուշադրութեամբ, ուշի ուշով

Մի քանի բան, ինչ ինչ — Դնել, կօյմէք (դատաւոր)
Իրօք, տօղրուսու — Հետևիլ, ըրնէ էրմէք
Շուտով, խօչ ու խօչ — Ստեանում բերել, ածել յա-տէտն
Եղաւ (պատահեցաւ), յարէտա (տաճ.) — Ճանապարհ ելնել, անձանէլ ի ճանապարհ
Զափահաս, հասուն — Սիրտը շարժել, խանդաղատելով ոգի նորա
Ամեն մինը մի կուսակցութիւն, մէն մէկ կողման — Բանեցրած, ազդեցութեամբ
Ռամկապետք, ընկերահաշտ — ազդեցութեամբ դեր առնել ի կեր
Կողմ, կոյս, ներ — Յաջողեցաւ, յաջողեցաւ նմա
Թագաւորական, արքունի — Ազատել, ապրեցուցանել
Կուսակցութիւն, կողմ — Ազատիլ, զերծանիլ
Բռնել, չերբակալ առնել

---

## ՃԶ.

### ՄԻ ԳԱՄ (ՄԵԽ)

Մի գիւղացի քաղաք գնալու համար իւր ձին համետելով, տեսաւ որ ձիուն ոտքի գամերից մինը պակաս էր. և որովհետև գնալու շտապում էր, ինքն իրեն ասաց. ինչ վնաս կամ օգուտ կայ ինձ. եթէ ձիուն ոտքի մի գամ աւելի կամ պակաս է։ Այս ասելով ճանապարհ ելաւ։ Ճանապարհին ձիուն մի ոտից պայտը (նալ) խախտելով ընկաւ։ «Եթէ այստեղ մի պայտառ լինէր», ասաց «կարող էի պայտը տեղը գնել տալ. բայց որովհետև այստեղ մի այնպիսի մէկը չկայ, ձին կարող է միւս երեքով ճանապարհը գլուխ հանել»։ Բայց ճանապարհին վերայ քարերը վիրաւորեցին կենդանու ոտքը, որ սկսաւ քայլելու ժամանակը կաղալ, և այսպէս կաղն ի կաղը ծանր կերպով գնացած ժամանակը՝ յանկարծ երկու գող ելան մացառներից դուրս մարդին կողոպտելու, որ ձիուն կաղալուց չկարողանալով շուտով պրծել, ա-



ւազակներին ձեռքն ընկաւ, որոնք նրա մախաղին մէջին եղածներին հետ միատեղ ձին էլ առնելով, թողին մարդին որ երթայ։ Նա ամեն բանից զուրկ տանը դառնալու ստիպուելով, տրտմած ասաց ինքն իրեն. «Ի՞նչպէս կարող էի խորհել որ մի գամ պակաս լինելուն համար ձիս պէտք է կորցնէի»։

Ձի, ձի
Գամ, մեխ
Փուլթալ, անճարակել
Ինքն իրեն ասաց, ասէ ընդ միտս իւր
Օգուտ, շահ
Ճանապարհ ելնել, անձանէլ յուղի
Պայտառ, պայտար
Այստեղ, աստ
Եթէ լինէր, եթէ գոյր
Կարող էի, կարէի էր (տրկ.)
Ճանապարհին վերայի քարերը, քարինքն որ ի վերայ ճանապարհին
Վիրաւորել, վէրս դնել
Կաղալ, խեղալ
Կաղն ի կաղը, կաղ ի կաղ
Ծանր կերպով, յամրագնաց
Մացառներից, ընդ մացառոտն
Կողոպտել, աւարառել առնել
(Ձիուն) կաղալուց, առ կաղալ
Շուտով, արագ
Ձեռքն (ընկաւ), (անկաւ), ի բուռն
Մախաղ, պայուսակ
Միջին եղածը, որ ինչ էրն ի նմա
Առնել (բռնի), հանել յաւելեալ
Զուրկ, նախատ
Ինքն իրեն, ի միտս իւր
Խորհել, ածել զմտաւ
Կարող էի, կարէի էր ինչ
Պակաս լինելուն համար, առ ի չգոյէ

---

## ՃԷ.

### ԽՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ մեծամեծներից մինը՝ տէրութեան գաւառներից մինի իշխանութիւնն է առնում, և գաւառում այցելութեամբ շրջած ժամանակում, տեսնում է ճերմակ մազերով մի մարդ որ գիւղից մի փոքր հեռուն եղող մի տնակի դրան նստած լալիս էր, և նրան ասում է. «Ի՞նչ ունիս, մարդ, ինչու

համար տրտմած ես և կը լաս»։ «Տէր», ասում է ծերը հառաչելով, «լալիս եմ,վասնզիհայրս գխս ծեծելով դուրս արեց»․ Իշխանը զարմանալով այս խօսքին, և շուտով ձիուց իջնելով ներս է մտնում։ Ոտքը տանը բակում դրածին պէս՝ այնտեղ սպիտակ մազերով առաջինից աւելի ծեր մի այլ մարդ է տեսնում, որ բարկացած էլ երևում էր։ «Ինչու համար խռոված ես», ասում է նրան գաւառապետը։ «Մի՛ հարցնիր, տէ՛ր», ասում է ծերը․ «որդիս որ դրանն է՝ անզգուշութեամբ գետինը ձգեց ծերունի հօրս, որ քամակին ոսկը կոտրելով նստած է»։ Գաւառապետն ասուածները կատակ կարծեց․ բայց շուտով հասկացաւ որ կատակ չէր խօսքը, քանզի մի սենեակ տարուելով՝ այնտեղ կրակարանին մօտ մի մեծ աթոռի վերայ մի այլ մարդ տեսաւ շատ ծեր, որին քամակը թեքուած էր ծերութիւնից, բայց դեռ աշխոյժ և ուժով էր․ «Իրաւ», ասաց գաւառապետն ինքն իրեն, «այս մարդիկը նահապետներին ցեղից են»։

| | |
|---|---|
| Մեծամեծք, աւագք | Բակ, գաւիթ |
| Գաւառում (շրջել), ընդ գաւառան | Ուրիշ, միւս եւս |
| Ծերմակ մազերով, ալեւոր | Ծեր, հնաւուրց |
| Տնակ, խղիկ, խղճան | Բարկացած, սրտմտեալ |
| Մի փոքր հեռուին եղող, որ սակաւ ինչ հեռի էր | Անզգուշութեամբ, առ անհոգաբանեամբ |
| Լալ, յարտասուս հարկանել | Քամակին ոսկը կոտրել, բեկանել զողն |
| Ի՞նչ ունիս, զի՞ է քեզ | Կատակ կարծեց, ընդ խաղն համարեցաւ |
| Ինչու համար, վասն է՞ր | Հասկացաւ, ծանեաւ |
| Հառաչել, հոգւոց հանել | Կատակ չէր, չէին ինչ ծաղու բանքն |
| Ծեծել, գան հարկանել | Տարուել, նուաճանիլ |
| Դուրս անել, հանել արտաքս | Մեծ աթոռ, գահոյք |
| Շուտով, վաղվաղակի | |
| Դրածին պէս, այն ինչ եդեալ | |



| | |
|---|---|
| Շատ ծեր, անցեալ յոյժ զաւուրբք | Դեռ, տակաւին |
| Քամակ, թիկունք | Աշխոյժ և ուժով, առոյգ և ուժեղ |
| Թեքուել, կորանալ | Իրաւ, արդարև |
| Ծերութիւնից, առ ծերութեանն | Ցեղ, տոհմ |
| | Այս մարդիկը, որեարս |

---

## ԺԸ.

## ՄԻ ՁՈՐԻ

Մի բժիշկ ձորին հեծնելով կոկորդում մի խաղաւարտ ունեցող հիւանդի տեսնելու էր գնում։ Երթալու տեղը հասնելով և ձորուց վայր իջնելով, այնտեղ դրան առաջին հանդիպեցաւ իւր ծանօթներից մինին որի հետ սկսաւ խօսել։ Երբ խօսքները կարեցաւ, սանձը թողեց, ձորին էլ տանը դուռը բաց գտնելով, ներս մտաւ։ Հիւանդին խուցը ասում է պատմութիւնը, բակին վերայ էր և մի կէս բաց թողուած էր, որպէս զի ներսում օդ բանէր։ Կենդանին դէս դէն նայելով, գուցէ մի ուտելու բան գտնելու համար, և բաց դուռը տեսնելով սանձովը և համետովը մտնում է հիւանդին խուցը, որ ոտքին ձայնը լսելով կարծելով թէ բժիշկն է, առանց այս կողմ դառնալու՝ թևը նրան է երկարեցնում որպէս զի զննէ։ Ձորին առանց պատճառն իմանալու՝ իւր առաջից երկարացած մի թև տեսնելով կեռիքներով (ատամն) դաստակից բռնում է։ Հիւանդը սարսափած այս կողմն է դառնում, և ձորուն տեսնելով՝ անկողնից ցատկելով իջնում է որ կենդանուն դուրս անէ, բայց սաստիկ ծիծաղելուց կոկորդում խաւարտը պատառւում է։ Այն միջոցին բժիշկը վերայ հասնելով ուզում էր ձորուն մտրակով ծեծել․ հիւան-

դը ձայն հանելով ասում է. «Այդ անասնոյն վնաս մի արա, պարոն բժիշկ, այդ դէպքը զարմանալի է. այդ ջորին առողջացրեց մի այնպիսի հիւանդութիւն, որին գուցէ արուեստը մի ճար չկարողանար անել. եթէ նորից այսպիսի հիւանդութեան մէջ ընկնիմ, այդ ջորին ուղարկէ, և դուն անձամբ ինձ գալու մի հոգնիլ»:

Հեծնել, ելանել
Տեսնել, այց առնել
Ունեցող, որոյ էր
Գնալու (երթալու) տեղը, ուր դէմ եդեալ էր
Ծանօթ, ծանօթ
Երբ (խօսքը) երկարեցաւ, յերկարել բանիցն
Մտնել (ներս), դիմել ի ներքս
Մի կէս, կիսով չափ
Որպէս զի ներսում օդ բանէր, առ ի տալ մուտ օդոյն ի ներքս
Կենդանին, գրաստ
Գուցէ, թերեւս
Համեստ, [illegible]
Խուց, խուց, սենեակ
Ոսկի ձայն, ոսկեձայն
Կարծել, համարել
Այս կողմ, յայսկոյս
Թև, բազուկ
Երկարեցնել, ձգել
Երկարացրած, ձգձգեալ

Բռնել, ունել
Կռիւք, [illegible]
Սարսափած, զահի հարեալ
Ցատկելով իջնել, իջանել ընդոստ
Դուրս անել, հանել արտաքս
Ծիծաղելուց, ի ծաղուէն
Կոկորդում, որ ի կոկորդին
Պատառել (խաղաւարտ), պատռել
Այն միջոցին, մինչ այս մինչ այն
Մտրակ, խարազան
Ծեծել, հարկանել
Ձայն հանել, ձայն բառնալ
Վնաս անել, առնել վնաս կամ մեղանչել
Դէպք, պատահար
Առողջացնել, բժշկել
Ճար անել, առնել դարման
Եթէ ընկնիմ, եթէ դէպ լինի ինձ անկանել
Հիւանդութիւն, ախտ
Հոգնել, աշխատ լինել

---



ՃԹ.

ԱՂՍԱՐ ԱԶԻԶԵԱՆ

## ՄԻ ԹԱՂՈՒԱԾ ԳԱՆՁ

Պատմուում է թէ մի երկրագործ որ աշխատութիւնը շատ էր յարգում՝ ուզելով իւր մահուանը մօտ գործքով ցոյց տալ իւր որդւոյն թէ որչափ օգտակար է աշխատութիւնը. նրան կանչում է իւր մօտ, և մի գաղտնիք յայտնելու պէս նրան ասում է. «Տղաս, մեր արտում որ գործում ենք՝ մի թաղուած գանձ կայ, բայց թէ ո՛ր տեղն է՝ չգիտեմ»: Այս ասելով՝ նրան խրատ է տալիս, որ առանց մինին յայտնելու ինքն անձամբ փորէ արտը: «Այսպէս անելով», ասում էր, «ստուգիւ պէտք է գտնես գանձը»: Մարդը մեռնում է, և որդին խոստուած գանձը գտնելու յուսով, առնում է բահ և բրիչ՝ և շատ օրեր աշխատելով արտը ծայրից ծայր փորում է, և գանձին չպատահելով՝ տրտմեալ և յուսահատ գնում է:

Բայց երկիրն այնպէս գործուելով և ցանուելով, հունձքին ժամանակը կը տայ առատ բերք, որ երիտասարդ երկրագործը ժողովելով և շտեմարաններում դնելով՝ շատ է հարստանում: Այն ժամանակ կը հասկանայ թէ հօրն ասած գանձը նոյն աշխատութիւնն էր:

Երկրագործ, հողագործ
Յարգել, պատուական համարել
Գործքով, արդեամբ
Որչափ, քանի՛ն
Գործել, մշակել
Որտեղ, յորում վայրի
Յայտնել (մինին), ի վեր հանել ումեք

Ինքն անձամբ, անձամբ անձին
Յայտնելու պէս, որպէս ընդ յայտնելն
Տղա՛ս, ո՛րդեակ
Արտ, անդ
Տրտմեալ և յուսահատ, [illegible] և յուսաբեկ
Գործել (երկիրը), վարել

Ժամանակը, ի ժամանակի
Բերք, արդիւնք
Ժողովել, ժողվել
Փորել, բրել
Ծայրից ծայր, ծագէ ի ծագ
Պատահել, հանդիպել
Երթալ, մեկնիմ
Դնել (շտեմարանում), համբարել
Հարստանալ, մեծանալ
Խիստ, յոյժ
Հասկանալ, ի միտ առնուլ
Հօրն ասած գանձը, գանձն զորմէ ասէր հայրն

---

# Վ Ե Ր Ջ



3000

ՀՀ Ազգային գրադարան

NL0804009

1
697